

# ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ



ՏԵՂԵԿԱԳԻՐ

1  
2011

Հիմնադիր՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆ

Խմբագրական  
խորհուրդ՝

Գագիկ Նարոպետյան  
Երմեն Նարոպետյան  
Վահե Սյրեփանյան  
Վորդյա Նովիաննիսյան  
Վալերի Պողոսյան  
Առուշան Նակոբյան

Խմբագրության հասցեն՝  
Երևան, Բաղրամյան 10  
Հեռախոս՝ 58-81-71

**ՏԵՂԵԿԱԳԻՐ**



1(58)  
2011

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

* ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 15-ԱՍՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ Գ.Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ - ՀՀ ՍԳ ՆԱԽԱԳԱՀ .....	5
* ՀԱՂՈՐԴՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2010 թ. ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	15
* ՍԳՈ-871. ԲԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՎ ԿԱՐԱՊԵՏ ՈՒՌԲԻՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 35-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 67-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	61
* ՍԳՈ-872. ԲԱՂԱՔԱՑԻ ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 309.1-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	71
* ՍԳՈ-873. ԲԱՂԱՔԱՑԻ ԱՆՈՒՇԱԿԱՆ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 118 ԵՎ 118.6-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	86
* ՍԳՈ-874. 1980 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 9-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՓՈԽԱԳՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	96
* ՍԳՈ-875. 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԵՐԵՎԱՆԻՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԱՏՎԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՋԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	98
* ՍԳՈ-876. 2001 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ՍՏՐԱՍԲՈՒՐԳՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԶՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՓՈԽԱԳՐԱԶ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ /ԿԻՑ ՀԱՅՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ/ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	101
* ՍԳՈ-877. 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԵՐԵՎԱՆԻՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԱՏՎԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՇԽԱՏՎՈՐՈՒԹՅԱՆ, ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՐԱՍՄԻՋՈՅՆԵՐԻ, ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՈՒ ԳՐԱՆՅ ԲԱՂԱԳՐԱՏԱՐԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՋԱՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՋԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	106
* ՍԳՈ-878. 2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-ԻՆ ԶՈՒՎԵՅԹՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԶՈՒՎԵՅԹԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՅԱՆՇԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՄԱԾԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՋԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	109
* ՍԳՈ-879. 2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-ԻՆ ԶՈՒՎԵՅԹՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԶՈՒՎԵՅԹԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԱՐՎԵՍԻ ԲՆԱԳԱՎԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՋԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	113
* ՍԳՈ-880. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԸՆՏՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 10 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի ԹԻՎ 17-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՎԻՃԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	115
* ՍԳՈ-881. ԲԱՂԱՔԱՑԻ ՎԱՐԴԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 55-ՐԴ	

Հնդ-վաճճի 13-րդ ՄԱՍԻ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ ԳՐՈՒՅԹԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	131
* ՄԳՈ-882. ՀՀ ՎՃՈՎՔԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՈՐՔ-ՄԱՐԱԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԶԻԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 177-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 268-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	139
* ՄԳՈ-883. 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2009-2010 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	150
* ՄԳՈ-884. 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 5-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՋԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ (ԼՐԱՅՈՒՑԻՉ ԳԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	153
* ՄԳՈ-885. 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 5-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՋԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ (ԵՐԿՐՈՐԴ ԼՐԱՅՈՒՑԻՉ ԳԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԳՐՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆԱԳՐԱՄԻ 3-ՐԴ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	156
* ՄԳՈ-886. 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԲԻՇԿԵԿՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԱՆԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՆԱՉԱՆՑ ԱՆՎԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ (ԿԻՑ ԱՌԱՐԿՈՒԹՅԱՄԲ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	159
* ՄԳՈ-887. 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ԳՈՒՇԱՆԲԵՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԱՆԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՈՒՇԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՆԱԿԱԶՋՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԹԻԿՈՒՆՔԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	163
* ՄԳՈ-888. 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՋԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ (ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՅՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳՐԻ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	166
* ՄԳՈ-889. 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՋԱՐԳԱՅՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ (ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	169
* ՄԳՈ-890. ԶԱՂԱՔԱՅԻՆԵՐ ԱՐԱՐԱՏ ԾՈՎՅԱՆԻ ԵՎ ՍՎԵՏԼԱՆԱ ՀԱԿՈՔՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 9-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 8-ՐԴ ԿԵՏԻ «Ա» ԵՎ «Բ» ԵՆԹԱԿԵՏԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	172
* ՄԳՈ-891. ԶԱՂԱՔԱՅԻՆԵՐ ԱՆԱՍՏԱՍ ԳԻՇՅԱՆԻ, ՆՈՐԱՅՐ ԵՂԻԿՅԱՆԻ, ԱՐՏԱԿ ՄՈՒՐԱԳՅԱՆԻ, ՍՈՒՐԵՆ ԹՎԻՇՎՈՍՅԱՆԻ, ՍՐՔՈՒՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԵՎ ՀՈՎՀԱՆ- ՆԵՍ ԴԵՐՁԱԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 113-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 113-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ ԵՐՈՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	181

* ՍԳՈ-892. 2010 թվականի սեպտեմբերի 27-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԼԻՆՍԻ» ՀԻՄՆԱԴԻՐԱՄԻ ՄԻՋԵՎ ՎԵՐԱՋԵՎԱԿԵՐՊՎԱԾ ԵՐԿՐՈՐԳ ՓՈԽԸՄԲՈՆՍՄԱՆ ՀՈՒՇԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	189
* ՍԳՈ-893. 2006 թվականի դեկտեմբերի 20-ին ՆՅՈՒ ՅՈՐՔՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ ԲՈՆՈՒԹՅԱՄԲ ԱՆՀԵՏԱՅԱԾ ԲՈՒՆՈՐ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	192
* ՍԳՈ-894. 2010 թվականի սեպտեմբերի 18-ին ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԼՈՎԱԿԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՕԳԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՋԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	195
* ՍԳՈ-895. 2010 թվականի սեպտեմբերի 23-ին ԴԱՄԱՍԿՈՍՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԶԵՆՈՒՄ ԳՈՐԾԵՐՈՎ ՓՈԽԱԴԱՐՁ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՋԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	199
* ՍԳՈ-896. ԶԵՆՈՒՄ ԵՎ ԱՐՈՒՄՅԱԿ ԱԹՄԵՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 221-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ ԵՐԿՐՈՐԳ ՄԱՍԻ 3-ՐԳ ԿԵՏԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԵՆՈՒՄ ԿԱՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 221-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	202
* ՍԳՈ-897. 2010 թվականի հոկտեմբերի 11-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՈՎԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱՊԱՏԱՐԱՍՄԱՆ ՀԱՄԱՐ» P457-AM ԿԱՆԱՎԱԿՈՒՄ ԿԱՆԱՎԱԿՈՒՄ ՀԱՄԱՋԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	210
* ՍԳՈ-898. 2010 թվականի սեպտեմբերի 23-ին ԴԱՄԱՍԿՈՍՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԶԵՆՈՒՄ ԶԵՆՈՒՄ ԿԱՆԱՎԱԿՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	214
* ՍԳՈ-899. 2010 թվականի սեպտեմբերի 23-ին ԴԱՄԱՍԿՈՍՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՄԱՋԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	217
* ՍԳՈ-900. 2009 թվականի նոյեմբերի 10-ին ԲՈՒԿԱՊԵՇՏՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՅԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՄԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՋԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	220
* ՍԳՈ-901. «ԴԻԴԻ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓՈՍԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԵՆՈՒՄ ԿԱՆԱՎԱԿՈՒՄ ՕՐԵՆՍԳՐՔԻ 210-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ 216-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԳ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	224
* ՍԳՈ-902. ԶԵՆՈՒՄ ԵՎ ԱՐՈՒՄՅԱԿ ԿԱՆԱՎԱԿՈՒՄ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 265-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԳ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	235

**Գ. Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*ՀՀ ՄԴ նախագահ*

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ  
ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 15-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ**

ՀՀ սահմանադրական դատարանի կազմավորման նախադրյալներն ամրագրվեցին ՀՀ Սահմանադրության մեջ 1995 թվականին: Արեւելյան Եվրոպայի ու նախկին ԽՍՀՄ երկրները, այդ թվում՝ Հայաստանը, երկրում սահմանադրական զարգացումների անկյունաքարային արժեք համարեցին սահմանադրական արդարադատության նոր համակարգի արմատավորումը: Դա մի շրջան էր, երբ Արեւմտյան Եվրոպայի երկրներն այս ոլորտում թեւակոխել էին զարգացման հարաբերականորեն նոր փուլ՝ կազմավորվում էին լայն լիազորություններով օժտված սահմանադրական դատարաններ, որոնք կոչված էին լուծելու երեք խումբ խնդիրներ՝

նախ. երաշխավորել իրավական ակտերի համապատասխանությունը երկրի Մայր օրենքին,

երկրորդ՝ ապահովել ու պաշտպանել մարդու սահմանադրական իրավունքներն ու ազատությունները որպէս անմիջականորեն գործող իրավունք,

երրորդ՝ լուծել սահմանադրական լիազորությունների հարցով իշխանության մարմինների միջեւ առաջացած վեճերը:

Եվրոպական սահմանադրական զարգացումներն այս եռամիասնության մեջ էին դիտարկում Սահմանադրության գերակայության երաշխավորման հիմնախնդրի լուծումը:

Հայաստանի Հանրապետությունը, ի տարբերություն եվրոպական ու երիտասարդ ժողովրդավարության շատ երկրների, որդեգրեց սահմանադրական արդարադատության արմատավորման առավել զգուշավոր ու համեմատաբար անկատար մոդել, որը դատարան դիմող սուբյեկտների նեղ շրջանակի ու գործառնական լիազորությունների սահմանափակման առումով գրեթե եզակի օրինակ էր: Միայն այն փաստը, որ գործունեության առաջին **տասը տարիների ընթացքում** իրավական ակտերի սահմանադրականության հարցերով սահմանադրական դատարանն ստացավ ընդամենն **ութեղիմում**, ակնհայտ վկայությունն է այն բանի, որ մեծ վերապահումներով կարելի է խոսել Սահմանադրության գերակայության անհրաժեշտ սահմանադրական երաշխիքների ստեղծման մասին: Նման վիճակն անասելի մեծ ջանքեր էր պահանջում

դատարանի կայացումը երաշխավորելու եւ այն միջազգայնորեն ճանաչելի դարձնելու գործում:

ՀՀ սահմանադրական դատարանը որդեգրեց առկա հնարավորությունները լիարժեք իրացնելու եւ հանրային կյանքում սահմանադրական մշակույթի որոշակի որակ ապահովելու ռազմավարությունը, որն իր նպաստը բերեց նաեւ երկրում հետագա սահմանադրական զարգացումների գործին:

ՀՀ սահմանադրական դատարանը դարձավ երկրում սահմանադրական նոր մտածողության ձեւավորման ու զարգացման առաջամարտիկը, կյանքի կոչեց սահմանադրագիտության իրավափիլիսոփայական հայեցակարգային նոր մոտեցումներ, դրեց սահմանադրական դատավարության հիմնաքարը:

ՀՀ սահմանադրական դատարանի եւ ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի նախաձեռնությամբ պարբերաբար կազմակերպվող թեմատիկ քննարկումները, ավանդական դարձած «Սահմանադրություն եւ իրավունք» ուսանողական ու աշակերտական օլիմպիադաները, դրանց տասնյակ հազարավոր երեխաների մասնակցությունը, տարածաշրջանային (մարզային) սեմինարների կազմակերպումը հիմնարար նշանակություն ունեցան հատկապես երիտասարդության շրջանում իրավական նոր մտածողության ձեւավորման ու զարգացման գործում: Իր տեսակի մեջ եզակի է նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի նորաստեղծ գրադարանը՝ հագեցված իրավական ժամանակակից գրականությամբ ու պարբերական հրատարակություններով:

1996-2010թթ. ընթացքում ՀՀ սահմանադրական դատարանը դատաքննության վերջնական արդյունքներով ընդունել է 931 որոշում: Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով), Սահմանադրական իրավունքի միջազգային ընկերակցության, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Երիտասարդ ժողովրդավարության երկրների սահմանադրական դատարանների միջազգային կոնֆերանսի հետ համատեղ ՀՀ սահմանադրական դատարանը Երեւանում կազմակերպել է 22 միջազգային խորհրդածողով՝ նվիրված սահմանադրական արդարադատության ամենահրատապ հիմնախնդիրներին:

Միջազգային փորձը վկայում է, որ սահմանադրական դատարանների գործունեությունը գտնվում է թե՛ գիտության եւ թե՛ պրակտիկայի տիրույթում՝ առանց գիտատեսական խոր վերլուծության անհնարին է բացահայտել իրավանորմների սահմանադրաիրավական բովանդակությունը եւ գնահատել ստեղծված իրավակիրառական պրակտիկան: Մեծ է ՀՀ սահմանադրական դատարանի ավանդը սահմանադրական արդարադատության գիտամեթոդաբանական հիմնախնդիրների լուծման գործում: Սահմանադրական դատարանի անդամների կողմից հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներով հրատարակվել է 53 մենագրություն, շուրջ 350 գիտական հոդված, գիտական զեկույցներ են ներկայացվել 60-ից ավելի միջազգային գիտաժո-

ղովներում: Սահմանադրական դատարանի նախաձեռնությամբ 2010 թվականին հրատարակվեց ՀՀ Սահմանադրության գիտագործնական մեկնաբանությունների ժողովածուն՝ 1086 էջ ընդհանուր ծավալով:

ՀՀ սահմանադրական դատարանը դարձել է Եվրոպական սահմանադրական դատարանների միջազգային ընկերակցության անդամ, 1997 թվականից համակարգում է «Երիտասարդ ժողովրդավարության երկրների սահմանադրական դատարանների կոնֆերանս» միջազգային կազմակերպության գործունեությունը, Սահմանադրական դատարանների միջազգային կոնգրեսի (անդամ են 125 երկրներ) բյուրոյի անդամ է, 2008 թվականից Ֆրանկոֆոնիայի երկրների սահմանադրական վերահսկողության մարմինների միջազգային կոնֆերանսի անդամ է, հրատարակում է միջազգային երկու հանդես՝ «Конституционное правосудие» և քառալեզու «Տարեգիրք», որոնք առաքվում են հարյուրից ավելի երկրներ:

Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի կողմից 2010թ. դեկտեմբերին ընդունվեց սահմանադրական արդարադատության մարմինների կողմից մարդու իրավունքների պաշտպանության միջազգային փորձին ու եվրոպական զարգացումների միտումներին նվիրված ընդարձակ զեկույց, որի համահեղինակն է ՀՀ սահմանադրական դատարանի նախագահը:

ՀՀ սահմանադրական դատարանի համար շրջադարձային եղան 2005թ. սահմանադրական բարեփոխումները, որոնց նախապատրաստման առաջին փուլում ծանրակշիռ դերակատարություն է ունեցել ՀՀ սահմանադրական դատարանը: Չնայած վերջնական փոփոխություններում տեղ գտած թերացումներին, այդուհանդերձ, սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների ցանկի էական ընդլայնումը հնարավորություն տվեց առավել մեծ գործնական դերակատարություն ունենալ երկրում հասարակական հարաբերությունների սահմանադրականացման գործում: Սահմանադրական դատարանի որոշումներն առավել մեծ նշանակություն ձեռք բերեցին սուբյեկտիվ եւ օբյեկտիվ իրավունքների պաշտպանության գործում, դարձան իրավունքի ծանրակշիռ դեր ունեցող աղբյուր: Միայն վերջին չորս տարիների ընթացքում վերացական վերահսկողության կարգով ՀՀ սահմանադրական դատարանն ստացել է 208, կոնկրետ վերահսկողության կարգով՝ 1327 դիմում: ՀՀ սահմանադրական դատարան խորհրդատվության համար դիմել է 2265 քաղաքացի: 2006թ. հուլիսի 1-ից մինչև 2011թ. հունվարի 1-ը կոնկրետ վերահսկողության կարգով սահմանադրական դատարան ներկայացված դիմումների 7.6 տոկոսն ընդունվել է քննության (միջին եվրոպական ցուցանիշը 3-5 տոկոս է): Միաժամանակ, միայն վերջին չորս տարում 88 անհատական դիմումների հիման վրա 37 գործերով օրենքների վիճարկվող դրույթները ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր, որը կազմում է կոնկրետ վերահսկողության կարգով վերջնական դատաքննության առարկա դարձած գործերի ավելի քան 40 տոկոսը: **Ներկայումս ՀՀ սահմանադրական դատարանի կող-**



**միջ երկու ամիսների ընթացքում օրենքի սահմանադրականության հարցով ավելի շատ գործեր է քննվում, քան դատարանի կազմավորման առաջին տասը տարիների ընթացքում:**

ՀՀ սահմանադրական դատարանի տարեկան հաղորդումները դարձել են երկրում սահմանադրական օրինականության վիճակի համակարգային ամփոփում, որը կարելի է նշանակություն ունի թե՛ իրավաստեղծ գործունեության եւ թե՛ իրավակիրառ պրակտիկայի համար:

Սահմանադրական դատարանը տարբեր գործերով արտահայտած իրավական դիրքորոշումների ու տարեկան հաղորդումների շրջանակներում անդրադարձել է նաեւ երկրում սահմանադրական եւ օրենսդրական անկատարությունների ու ձեւախեղումների հաղթահարման հիմնախնդիրներին: Ինչպես նորանկախ մյուս երկրներում, Հայաստանում նույնպես առկա են սահմանադրական հիմնարար արժեքների որոշ ձեւախեղման միտումներ: Դա առաջին հերթին գալիս է սահմանադրական լուծումների անկատարությունից: Սահմանադրության ինքնաբավության սկզբունքը ճանաչելով հանդերձ, ակնհայտ է, որ ՀՀ Սահմանադրությունը մասնավորապես հետետղականություն չի դրսևորել իշխանությունների բաժանման ու հավասարակշռության սկզբունքի արմատավորման հարցում: Սահմանադրության հենց կառուցվածքը գործառնական ու կառուցակարգային լուծումների շփոթ է ստեղծում: Այլ թերություններից գատ, համակարգային առումով, անկատար է Սահմանադրության գերակայության երաշխավորման գործող կարգը: Չեն նախատեսված Սահմանադրության պաշտոնական վերացական մեկնաբանման եւ սահմանադրական լիազորությունների հարցով պետական իշխանության մարմինների միջեւ առաջացած վեճերի լուծման գործառույթների իրացման երաշխիքներ, ինչն սովորաբար հարաբերությունների խթանման լուրջ վտանգ է բովանդակում: Նման պայմաններում մեծանում է իրավական հիմնախնդիրները քաղաքական դաշտում լուծելու վտանգը, որն անհարիր է իրավական պետության հիմնարար սկզբունքներին:

ՀՀ սահմանադրական բարեփոխումներից հետո չնչակվեց ու չիրացվեց գործող ողջ օրենսդրությունը սահմանադրական փոփոխություններին համապատասխանեցնելու համալիր ծրագիր, ինչի արդյունքում լիարժեք չիրացվեց տվյալ հարցի առնչությամբ ՀՀ Սահմանադրության անցումային դրույթների պահանջը (117-րդ հոդված, 1-ին կետ):

Միաժամանակ, օրենսդրական քաղաքականության մեջ հայեցակարգային մոտեցումների պակասը, հատվածական լուծումներն ստեղծել են այնպիսի վիճակ, երբ օրենքի բացի խնդիրը Հայաստանում մտահոգիչ ծավալների է հասել: Նման վիճակը նաեւ հսկայական կոռուպցիոն ռիսկեր է բովանդակում:

Սահմանադրության գերակայության երաշխավորումը, սահմանադրական վերահսկողության շարունակական իրականացումը միայն սահմանադրական դատարանի խնդիրը չէ: Դա պետք է երաշխավորվի ողջ պետական համակարգի ամենօրյա գործունեությամբ: Դատարանը միջամտում է միայն

իրավական վեճի դեպքում՝ համապատասխան դիմումի առկայության պայմաններում: Իսկ իրավական դաշտի անկատարության ներկա պայմաններում սահմանադրական դատարան դիմելը ոչ միայն դրա իրավասությունն ունեցող սուբյեկտների հայեցողական իրավունքն է, այլև գործառնական պարտականությունը:

Երկրում իրավական պետության կայացման գերագույն խնդիրը սահմանադրականության հաստատումն է ու իրավունքի գերակայության երաշխավորումը: Այս խնդրի համակարգային ու հետետողական լուծումը պահանջում է հանրային հարաբերությունների սահմանադրականացման եւ սահմանադրական մշակույթի անհրաժեշտ ու բավարար մակարդակ, որի ապահովման կարեւոր երաշխիքներից է Սահմանադրություն – օրենք – իրավակիրառական պրակտիկա եռամիասնության մեջ ներքին հակասությունների ու տարաբնույթ ձեւախեղումների հաղթահարումը: Վերջինս վերափոխվող հասարակական համակարգերի համար պետական քաղաքականության գերակա առաջնահերթություն է: Այս համատեքստում չափազանց մտահոգիչ է, որ վերջին չորս տարիների ընթացքում ՀՀ Ազգային ժողովի պատգամավորները, ՀՀ կառավարությունը, տեղական ինքնակառավարման մարմիններն օրենքների եւ այլ իրավական ակտերի սահմանադրականության հարցով ՀՀ սահմանադրական դատարան չեն դիմել, աննշան է դատարանների կողմից ներկայացված դիմումների քանակը, այն դեպքում, երբ նույն ժամանակահատվածում քաղաքացիների դիմումների հիման վրա մոտ չորս տասնյակ օրենքների նորմեր ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր:

Միջազգային փորձը միարժեքորեն վկայում է, որ Հայաստանում թերի է լուծված նաեւ մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման խնդիրը: Քաղաքացին սահմանադրական դատարան կարող է դիմել միայն իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցով, մինչդեռ եվրոպական ու նախկին ԽՍՀՄ երկրների զգալի մասում այդ իրավունքը ճանաչվում է ոչ միայն բոլոր նորմատիվ ակտերի առնչությամբ, այլև քաղաքացին սահմանադրական դատարանում կարող է բարձրացնել իր սահմանադրական իրավունքների պաշտպանության հարցը՝ եթե սպառել է ներպետական բոլոր մյուս միջոցները: Նման պարագաներում համակարգային ամբողջականության մեջ է լուծվում նաեւ դատական սահմանադրական վերահսկողության օբյեկտների հարցը, որից դուրս չեն մնում նաեւ դատական ակտերը: Մարդու սահմանադրական իրավունքներն անմիջականորեն գործող իրավունքներ են, եւ պետությունը սահմանափակված է այդ իրավունքներով: Սա սահմանադրական հիմնարար սկզբունք է՝ ամրագրված երկրի Մայր օրենքի սահմանադրական կարգի հիմունքներում: Եթե սահմանադրական արդարադատության կողմից այդ իրավունքների անմիջական գործողությունը չի երաշխավորվում, ապա Սահմանադրության գերակայության մասին խոսելը գործնականում իմաստազրկվում է:

Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին լուրջ քայլեր արվեցին սահմանադրական դատարանի որոշումների կատարումն ապահովելու ուղղությամբ: Միջազգային դրական արձագանքի արժանացավ ՀՀ Ազգային ժողովում հատուկ աշխատանքային խմբի ստեղծումը, որը սահմանադրական դատարանի յուրաքանչյուր որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները հաշվի առնելով՝ օրենսդրական նախաձեռնությունների փաթեթ է մշակում՝ օրենքի բացի ու սահմանադրական անհամապատասխանությունների հաղթահարման համար: Վերջին երեք տարիների ընթացքում այդ նախաձեռնությունների հիման վրա չորս տասնյակից ավելի օրենսդրական փոփոխություններ են կատարվել:

Շոշափելի ու միջազգային ուշադրության արժանացած փորձ է կուտակվել նաև ՀՀ սահմանադրական դատարանի ու ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործառնական փոխհարաբերություններում: Վերջին չորս տարիների ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումների հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներով վերականգնվել են մոտ չորս հազար քաղաքացիների իրավունքներ:

ՀՀ սահմանադրական դատարանի եւ ՀՀ փաստաբանների պալատի ակտիվ համագործակցության արդյունքում էապես բարելավվել է սահմանադրական դատարան ներկայացվող դիմումների որակը, որն իր հերթին նպաստում է ընդունվող որոշումների որակի բարձրացմանը:

ՀՀ սահմանադրական դատարանը մեծ կարեւորություն է տալիս նաև սահմանադրական արդարադատության միջազգային փորձի ուսումնասիրմանը: Այդ նպատակով պաշտոնական այցելություններ են եղել ԱՄՆ գերագույն դատարան, Գերմանիայի, Պորտուգալիայի, Իսպանիայի, Բելգիայի, Ավստրիայի, Ռուսաստանի Դաշնության, Ռումինիայի, Չեխիայի, Սերբիայի, Լատվիայի, Լիտվայի, Մոլդովայի, Վրաստանի եւ մի շարք այլ երկրների սահմանադրական դատարաններ, Ֆրանսիայի սահմանադրական խորհուրդ, Լեհաստանի սահմանադրական տրիբունալ: Երկկողմ պաշտոնական այցերով Հայաստան են ժամանել Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի, Գերմանիայի, Պորտուգալիայի, Իսպանիայի, Ռումինիայի, Մոլդովայի, Լատվիայի, Լիտվայի, Խորվաթիայի, Սլովենիայի, Ուկրաինայի սահմանադրական դատարանների, Լեհաստանի սահմանադրական տրիբունալի, Իրանի Իսլամական Հանրապետության պահապան խորհրդի պատվիրակությունները:

ՀՀ սահմանադրական դատարանն ակտիվ համագործակցել է նաև մի շարք միջազգային կազմակերպությունների երեսանյան գրասենյակների հետ (ԵԱՀԿ, USAID, GTZ):

Ընդունելով, որ Գերմանիայի Դաշնությունում ձեւավորվել է սահմանադրական արդարադատության մայրցամաքային իրավական համակարգի դասական մոդել, ՀՀ սահմանադրական դատարանը գերմանացի մասնագետների մասնակցությամբ Երեսնում հրավիրել է մոտ մեկ տասնյակ հատուկ սե-

մինար, որոնց արդյունքներով գործնական քայլեր են արվել սահմանադրական դատավարության ընթացակարգերի կատարելագործման ու դատավարական վարչարարության բարելավման ուղղությամբ:

Միջազգային փորձը միարժեքորեն վկայում է, որ սահմանադրական արդարադատության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է դատարանի իրավական դիրքորոշումների իրացման աստիճանով: ՀՀ սահմանադրական դատարանը բազմիցս արձանագրել է, որ դատարանի որոշումները միայն որոշման եզրափակիչ մասով չեն սահմանափակվում: Բացառիկ կարեւոր է սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները խորությամբ հաշվի առնելը՝ թե՛ սուբյեկտիվ իրավունքի, թե՛ օբյեկտիվ իրավունքի պաշտպանության հարցերում եւ թե՛ որպես իրավունքի աղբյուր: Այս առումով անհրաժեշտ է, որ բոլոր այն դեպքերում, երբ սահմանադրական դատարանն օրենքի նորմը սահմանադրական է ճանաչում տվյալ որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում, այդ որոշումը նույնպես նոր հանգամանք կհանդիսանա սահմանադրական դատարանի հիմնած սուբյեկտի համար՝ դրանով պայմանավորված բոլոր հետեւանքներով: Այս խնդիրը լրացուցիչ օրենսդրական կանոնակարգման անհրաժեշտություն ունի:

Կարեւոր է նաեւ ներպետական օրենսդրության հիման վրա լուծել նյութական փոխհատուցման խնդիրը բոլոր այն դեպքերում, երբ անձի նկատմամբ հակասահմանադրական նորմ է կիրառվել ու դրա հետեւանքով նրան վնաս է պատճառվել:

ՀՀ սահմանադրական դատարանի անցած տարիների փորձառությունը վկայում է, որ ՀՀ օրենսդրությունը լուրջ շտկման անհրաժեշտություն ունի նաեւ մարդու սահմանադրական իրավունքների սահմանափակման չափանիշների հստակեցման ու դրանց հետեւողական կիրառման առումով: Այս հիմնախնդիրն ի հայտ է գալիս գրեթե քննության առարկա յուրաքանչյուր երկրորդ գործով: Եթե ՀՀ Սահմանադրությունը հստակ սահմանել է, որ իրավունքի սահմանափակումը կարող է տեղի ունենալ միայն օրենքով, ապա իրավունքների սահմանափակման համաչափության ապահովման ու իրավունքի էությունը չաղավաղելու պահանջների իրացման առումով անորոշություններն ու բացերը շատ են, որոնք իրենց հերթին իրավունքների ոտնահարման պարարտ հող են ստեղծում:

Սահմանադրական դատարանը բազմիցս իրավական դիրքորոշումներ է արտահայտել նաեւ ՀՀ ընտրական համակարգի արմատական բարեփոխումների վերաբերյալ: Ընտրական ողջ համակարգը պետք է կառուցված լինի ժողովրդի կամքի ճիշտ բացահայտման, այլ ոչ թե քաղաքական անհանդուրժողականության խորացման, չարափառության արմատավորման վրա: Օրենսդրությունը պետք է բացառի ընտրական ողջ գործընթացում ծրագրային մոտեցումների առաջադրման ու պաշտպանման նենգափոխումը քաղաքական աղանդավորության տարաբնույթ դրսեւորումների: Չեն


հաղթահարվել նաև ընտրական իրավունքի դատական պաշտպանության իրավական կարգավորման բացերը: Ընտրությունները չպետք է դառնան նաև տարաբնույթ օտար ուժերի ներագրեցության թիրախ, սպառնան երկրի իրավական անվտանգությանը: Գործող օրենսդրությունն այս հարցերում համակարգային անկատարություններ է բովանդակում, որոնց վերաբերյալ երկու տասնյակից ավելի որոշումներում կոնկրետ իրավական դիրքորոշումներ է արտահայտել ՀՀ սահմանադրական դատարանը:

Անցած 15 տարիները դարձան նորանկախ Հայաստանի Հանրապետության պետական իշխանության նախադեպը չունեցող ինստիտուտներից մեկի՝ ՀՀ սահմանադրական դատարանի ձեւավորման ու կայացման, միջազգայնորեն մեծ հեղինակության ձեռքբերման, երկրի սահմանադրական կյանքում ծանրակշիռ ներդրման, սահմանադրական նոր մշակույթի ձեւավորման գործում առանցքային դերակատարության իրականացման տարիներ: Այդ տարիների դասերը միաժամանակ վկայում են, որ երկրում սահմանադրական ժողովրդավարության հաստատումն ու զարգացումը շարունակական, լուրջ ու հետեւողական քայլեր են պահանջում: Դա վերաբերում է նաև սահմանադրական վերահսկողության եւ սահմանադրական արդարադատության համակարգային հետագա կատարելագործմանը, սահմանադրական ախտաբանության այնպիսի համակարգի ներդրմանը, որը կդառնա իրավական պետության կայացման, քաղաքացիական հասարակության ձեւավորման, երկրի կայունության ու զարգացման հուսալի երաշխիք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

## **ՀԱՂՈՐԴՈՒՄ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2010 թ.  
ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ  
ԿԱՏԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**



*Հաստատվել է ՀՀ սահմանադրական դատարանի 24 հունվարի 2011թ.  
ՄԴԱՌ-2 աշխատակարգային որոշմամբ*

**ԳԱՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
2010 ԹՎԱԿԱՆԻՆ**

2010 թվականին ՀՀ սահմանադրական դատարանում մուտքագրվել են օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների 357 դիմում, ինչպես նաև այդպիսի իրավասություն չունեցող անձանց 804 դիմում:

Սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների կողմից դիմումների փաստացի պատկերն այսպիսին է.

1. ՀՀ Նախագահ - 43 դիմում,
2. ՀՀ Ազգային ժողով - 0 դիմում,
3. պատգամավորների առնվազն մեկ հինգերորդ - 0 դիմում,
4. ՀՀ կառավարություն - 0 դիմում,
5. տեղական ինքնակառավարման մարմիններ - 0 դիմում,
6. ֆիզիկական անձինք - 285 դիմում,
7. իրավաբանական անձինք - 14 դիմում,
8. ՀՀ դատարաններ - 7 դիմում,
9. ՀՀ գլխավոր դատախազ - 2 դիմում,
10. ՀՀ մարդու իրավունքների պաշտպան - 6 դիմում,
11. Հանրապետության Նախագահի թեկնածուներ - 0 դիմում,
12. կուսակցություններ (կուսակցությունների դաշինքներ) եւ պատգամավորության թեկնածուներ - 1 դիմում:

Թվով 299 անհատական դիմումներից 205-ը չեն համապատասխանել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 եւ 28-րդ, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 21 եւ 22-րդ հոդվածներով սահմանված՝ դիմումին ներկայացվող պահանջներին եւ աշխատակազմի կողմից վերադարձվել են դիմողներին:

Գատական կազմերի կողմից քննության է առնվել 94 անհատական դիմում (93 անհատական դիմում մուտքագրվել է 2010 թվականին, **իսկ 1-ը՝ 2009 թվականի վերջին, սակայն դատական կազմի կողմից քննության է առնվել 2010 թվականին**): Դրանցից քննության է ընդունվել 40 դիմում, մերժվել՝ 49-ը, 5-ը տեղափոխվել է դատարանի լիազումար նիստ:

Սահմանադրական դատարանի լիազումար նիստում քննարկվել է 5 անհատական դիմումի քննության ընդունման հարց: Դատարանի աշխատակարգային որոշմամբ քննության է ընդունվել 4 անհատական դիմում, մերժվել՝ 1-ը:



**ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԳՐԱՆՑ ԿԱՏԱՐՈՒՄԸ**

**ՀՀ Նախագահի դիմումների հիման վրա ընդունված սահմանադրական դատարանի որոշումները եւ դրանց կատարումը**

2010 թվականին ՀՀ Նախագահի կողմից ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված բոլոր դիմումները վերաբերել են բացառապես միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշմանը: 2010թ. ՀՀ սահմանադրական դատարանի կողմից քննված 48 միջազգային պայմանագրերի թվում են 16 բազմակողմ (8 ունիվերսալ եւ 8 տարածաշրջանային) ու 32 երկկողմ (20-ը՝ օտարերկրյա պետությունների եւ 12-ը՝ միջազգային կազմակերպությունների հետ) համաձայնագրեր: Զննության առարկա դարձած պայմանագրերից 31-ը՝ միջպետական եւ 17-ը միջկառավարական են:

ՀՀ սահմանադրական դատարանի կողմից քննության առնված 48 միջազգային պայմանագրերից 39-ն արդեն իսկ վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից, թվով 8 պայմանագրեր դեռեւս չեն ներկայացվել ՀՀ Ազգային ժողով՝ ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետին համապատասխան, կամ դրանց վերաբերյալ ՀՀ Ազգային ժողովը, ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածի առաջին մասի համաձայն, դեռեւս որոշում չի կայացրել, եւս երկու միջազգային պայմանագրերի կնքման ընթացակարգը, «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 39.1-րդ հոդվածի համաձայն կասեցվել է ՀՀ Նախագահի հրամանագրով: Դա վերաբերում է «Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության միջեւ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» ու «Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության միջեւ հարաբերությունների զարգացման մասին» արձանագրությունների վավերացման գործընթացին:

Անդրադառնալով 2010 թվականի ընթացքում քննության առնված ՀՀ միջազգային պայմանագրերի առնչությամբ իրավակիրառական պրակտիկային՝ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ներկայացված մի շարք միջազգային պայմանագրերի հայերեն պաշտոնական տարբերակներն էական բովանդակային շեղումներ են ունեցել բնագրերից: Նախորդ տարիների օրինակով, սահմանադրական դատարանի պահանջով այդ թերացումները շտկվել են: Այդուհանդերձ, նման փաստերը վկայում են միջազգային պայմանագրերի, հատկապես ֆինանսավարկային համաձայնագրերի համապատասխան ներպետական ընթացակարգերի եւ, մասնավորապես, վավերացման նախապատրաստման որակի բարձրացման անհրաժեշտության մասին: Բացի դրանից, ՀՀ միջազգային պայմանագրերում ՀՀ Սահմանադրության համապատասխան դրույթների էությունն արտացոլող միասնական եզրութաբանության բացակայությունը գործնականում եւս խոչընդոտներ է ստեղծում ոչ միայն դրանցում ամրագրված պարտավորությունների ծավալն ու բովանդակությունը պարզելու եւ ՀՀ Սահմանադրությանը դրանց համապատասխանությունը որոշելու, այլեւ դրանց հստակ կիրառման տեսանկյունից:

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 1(58)2011

Նախորդ տարիների իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը հիմք է տալիս ենթադրելու, որ այդպես էլ չի ձեռավորվել միջազգային պայմանագրերի կապակցությամբ արված վերապահումների եւ հայտարարությունների իրավաբանական բնույթի ու նշանակության միատեսակ իրավական ընկալում: Բազմակողմ պայմանագրերի վերաբերյալ կատարված վերապահումների նկատմամբ շատ հաճախ ցուցաբերվում է անկանխատեսելի մոտեցում, փորձ չի արվում պարզելու դրանց կատարման պատճառները, չի հիմնավորվում նման վերապահումների առնչությամբ առարկություններ ներկայացնելու անհրաժեշտությունը, ինչի արդյունքում Հայաստանի Հանրապետությունն այս կամ այն պայմանագրով ստանձնում է առավել մեծ ծավալի միջազգային պարտավորություններ, քան տվյալ պայմանագրի՝ վերապահում կատարած այլ մասնակիցները:

ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների կատարման տեսանկյունից ուշադրության է արժանի նաեւ ֆինանսավարկային պայմանագրերով ֆինանսավորվող ծրագրերի մանրամասնեցվածության պատշաճ մակարդակի հիմնախնդիրը: Անցյալ տարիների ընթացքում քննության առնված ֆինանսավարկային պայմանագրերում եւ դրանց հավելվածներում ներկայացված ֆինանսավորման ծրագրերի նկարագրությունը վկայում է, որ անհրաժեշտ չափով մանրամասնեցված չեն տրամադրվող վարկային միջոցներով ֆինանսավորվող կոնկրետ ծախսերի ուղղությունները: Հաճախ համաձայնագրերում նկարագրված ծրագրերը ձեռնկերպված են անորոշ եւ վերացական կերպով: Սահմանադրական դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր ֆինանսական համաձայնագրի հիմքում պետք է դրված լինի ՀՀ կառավարության կողմից հաստատված հստակ ծրագիր՝ ներառելով այդ ծրագրի համար վարկային միջոցների ներգրավման համակողմանի հիմնավորումներ:

Ֆինանսավարկային պայմանագրերով ստանձնած միջազգային իրավական պարտավորությունների բարեխիղճ կատարումը, վարկային միջոցների նպատակային օգտագործումը եւ դրա նկատմամբ արդյունավետ վերահսկողության անհրաժեշտությունը պահանջում են նշված պայմանագրերի դրույթների որոշակիության եւ հստակության ապահովում: «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքով ՀՀ արտաքին գործերի նախարարությունը մեծ պարտականություն ունի այդ պայմանագրերի նախապատրաստման եւ կնքման հարցերում: Անհրաժեշտ է, որպեսզի նախարարությունը շարունակական ուշադրություն դարձնի հատկապես հիշյալ օրենքի 3-րդ գլխի պահանջների հստակ կատարման վրա:

**Անհատական (ֆիզիկական եւ իրավաբանական անձանց) դիմումների հիման վրա ընդունված սահմանադրական դատարանի որոշումներն ու դրանց կատարումը**

Սահմանադրական դատարանում մուտքագրված անհատական դիմումների 85.3 տոկոսը չի ընդունվել սահմանադրական դատարանի կողմից, քանի որ դրանք չեն համապատասխանել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ

օրենքի 27 եւ 28-րդ, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 21 եւ 22-րդ հոդվածներով սահմանված՝ դիմումին ներկայացվող պահանջներին, ճանաչվել են որպէս ակնհայտ անհիմն կամ վիճարկվող նորմը դիմողի նկատմամբ չի կիրառվել դատարանի կողմից: Նշված անհատական դիմումները հիմնականում վերաբերում են օրենքների կիրառմանն առնչվող հարցերին կամ ընդհանուր իրավասության ու մասնագիտացված դատարանների իրավագործությանը վերաբերող տարբեր այլ հարցերի:

Սահմանադրական դատարանի կողմից քննության ընդունված 13 գործերով որոշումները կայացվելու են 2011թ. հունվար - ապրիլ ամիսներին:

2010 թվականի ընթացքում 32 անհատական դիմումների հիման վրա քննված գործերից 12-ը, որոնցով օրենքների վիճարկվող դրույթները **ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր (37.5%)**, վերաբերում են հետեւյալներին.

1. «Քաղաքացի Սամվել Հովհաննիսյանի դիմումի հիման վրա՝ «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6 եւ 8-րդ հոդվածների, «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի երրորդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 10.02.2010թ. ՄԴՈ-865 որոշմամբ անդրադառնալով «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածին՝ այն ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող: «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի եւ 9-րդ հոդվածի երրորդ մասի առնչությամբ սահմանադրական դատարանը որոշել է.

«2. «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակության մասով, որով սահմանափակվում է անձի իրավունքը կենսաթոշակը նշանակելուց հետո կատարել վերընտրություն, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31 եւ 83.5-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

3. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի երրորդ մասը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակության մասով, որով սահմանափակվում է անձի իրավունքը կենսաթոշակը նշանակելուց հետո կատարել վերընտրություն, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31 եւ 83.5-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր»:

Խնդիրը կարեւորվում է նրանով, որ իրավակիրառական պրակտիկայում ձեւավորվել էր մի իրավիճակ, որի պայմաններում արգելափակվում էր կենսաթոշակ

նշանակելուց հետո պետական տարբեր կենսաթոշակներ ստանալու իրավունք ունեցող կենսաթոշակառուի կողմից տարբեր կենսաթոշակների միջև վերընտրություն կատարելու կամ որ նույնն է՝ պետական կենսաթոշակի տեսակը փոխելու հնարավորությունը:

Տվյալ գործով կայացված որոշման մեջ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ. «Կենսաթոշակային ապահովության վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը քաղաքացիներին վերապահելով կենսաթոշակի ընտրության իրավունք, միաժամանակ վերջիններիս վերապահել է նաև կենսաթոշակի տեսակը փոխելու իրավունք: Այդ իրավունքը սահմանված է, մասնավորապես, «Ջինժառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» եւ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքներով» (որոշման 7-րդ կետ):

Խնդրո առարկա իրավակարգավորումը՝ անձի սեփականության եւ սոցիալական ապահովության իրավունքների արդյունավետ իրացման տեսանկյունից գնահատելու նպատակով սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարել բացահայտել «Ջինժառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» եւ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքներով սահմանված՝ «կենսաթոշակի տեսակ փոխել» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը եւ գտել է, որ «կենսաթոշակի տեսակ փոխել» հասկացության մեջ «փոխել» բառի առկայությունից բխում է, որ կենսաթոշակի տեսակը փոխելու իրավունքն անձի մոտ ծագում է այն ժամանակ, երբ տվյալ անձի նկատմամբ արդեն իսկ նշանակվել է կենսաթոշակ» (որոշման 7-րդ կետ):

Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ. «Ի կատարումն «Ջինժառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 20 եւ 26-րդ հոդվածների, ՀՀ կառավարությունը 12.05.2005 թվականին ընդունել է «Կենսաթոշակ ստանալու համար դիմելու, կենսաթոշակ նշանակելու (վերահաշվարկելու), կենսաթոշակի տեսակ փոխելու, կենսաթոշակ վճարելու եւ կենսաթոշակի գործ (փաստաթղթեր) վարելու կարգը հաստատելու մասին» թիվ 930-Ն որոշումը, որը, ի թիվս այլոց, պետք է սահմաներ կենսաթոշակի տեսակը փոխելու կարգը» (որոշման 7-րդ կետ):

Սահմանադրական դատարանը նշված կարգի ուսումնասիրության արդյունքներով գտել է, որ. «...կառավարության տվյալ որոշումը լիարժեք չի իրացրել օրենքի պահանջը, քանի որ գործնականում հստակ չէ կենսաթոշակի տեսակը փոխելու կարգը: Նման վիճակը հետեւանք է նաև այն բանի, որ օրենքով հստակ սահմանված չեն «կենսաթոշակի ընտրության իրավունք», «կենսաթոշակի տեսակը փոխելու իրավունք», «կենսաթոշակի տեսակ», «կենսաթոշակի ենթատեսակ» հասկացությունները:

Սահմանադրական դատարանի 2010 թվականի փետրվարի 10-ի ՍԳՈ-865 որոշման ընդունումից հետո ՀՀ Ազգային ժողովը 2010 թվականի դեկտեմբերի 22-ին ընդունել է նոր խմբագրությամբ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը և սոցիալական բարեփոխումներին ուղղված մի շարք այլ օրենքների («Կուտակային կենսաթոշակների մասին», «Եկամտային հարկի մասին», «Ջինժառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրա-

ցում կատարելու մասին» եւ այլն) փաթեթը, որոնցով իրացվել են նաև սահմանադրական դատարանի հիշատակված որոշման պահանջները եւ այդ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Այսպես, օրինակ, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածը, որը վերնագրված է «Կենսաթոշակի տեսակը փոխելը», սահմանում է հետեւյալը.

«1. Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը, մինչեւ կենսաթոշակառուի տարիքային կենսաթոշակի իրավունք ձեռք բերելը, նրա ցանկությամբ փոխում է կենսաթոշակի տեսակը:

2. Սույն օրենքով սահմանված տարիքային կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու դեպքում արտոնյալ պայմաններով, մասնակի, երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակների փոխարեն, անկախ կենսաթոշակառուի դիմելուց, նշանակվում է տարիքային կենսաթոշակ, իսկ հաշմանդամության կամ կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակ ստանալու կամ այդ իրավունքը ձեռք բերելու դեպքում կենսաթոշակի տեսակը փոխվում է կենսաթոշակառուի գրավոր դիմումի հիման վրա:

3. Կենսաթոշակի տեսակը փոխվում է կենսաթոշակի տեսակ փոխելու հանգամանքներ առաջանալու ամսին հաջորդող ամսվա 1-ից:

4. Սույն հոդվածով նախատեսված դեպքերում կենսաթոշակի տեսակը փոխելիս կենսաթոշակի գործում առկա փաստաթղթերով մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված ստաժը հաշվառվում է նույնությամբ»:

2. «Քաղաքացիներ Արամ Սարգսյանի եւ Կարապետ Ռուբինյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 67-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 30.03.2010թ. ՍԳ-Ռ-871 որոշմամբ անդրադառնալով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասին՝ այն ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող: Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի առնչությամբ սահմանադրական դատարանը որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի «...**իսկ գործի վարույթը ենթակա է կարճման**» դրույթը՝ կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու առնչությամբ, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի (1-ին մաս) եւ 21-րդ հոդվածի պահանջներին հակասող եւ անվավեր»:

Խնդիրը կարելուովում էր նրանով, որ ի տարբերություն կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու ինստիտուտի, կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն

ապացուցված չլինելու հիմքով գործի վարույթը կարճելու դեպքում վտանգվում է անձի անմեղության կանխավարկածը:

Սահմանադրական դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի «...իսկ գործի վարույթը ենթակա է կարճման» դրույթի սահմանադրականությունը գնահատել է նույն մասի «քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման» դրույթի սահմանադրականության գնահատման համատեքստում:

Քրեական հետապնդումը դադարեցնելու առնչությամբ խնդրո առարկա իրավակարգավորման սահմանադրականությունը գնահատելու նպատակով սահմանադրական դատարանն արձանագրել է հետևյալը. «Նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասում տեղ գտած՝ **«...կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու արդյունքում...»** դրույթը կարող է մեկնաբանվել երկու առումով, առաջին՝ **«չմասնակցությունը, դա չապացուցված մասնակցությունն է»** կամ «հանցագործության կատարմանը անձի ապացուցված չմասնակցությունն է», սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առնվող 35-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականության հարցը պետք է գնահատվի հենց երկրորդ մեկնաբանման տեսանկյունից, քանի որ, ի թիվս այլնի, ՀՀ քր. դատ. օր-ի 6-րդ հոդվածի 42-րդ կետի համաձայն՝ արդարացվածն այն անձն է, որի նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ, կամ որի նկատմամբ **քրեական հետապնդումը դադարեցվել է անմեղության հիմքով**» (որոշման 6-րդ կետ):

Սահմանադրական դատարանը գտել է, որ. «անմեղության կանխավարկածն անձին պաշտպանում է ոչ թե քրեական հետապնդման այն հիմքից, որը կասկած է թողնում անձի՝ տվյալ հանցագործությանը մասնակցության առնչությամբ, այլ այնպիսի որոշումներից կամ դրանցում այնպիսի ձեռնարկումներից, որոնք կարող են կասկածի ենթարկել տվյալ անձի արդարացումը կամ անմեղությունը» (որոշման 7-րդ կետ):

Հաշվի առնելով, որ վիճարկվող հիմքով քրեական հետապնդման դադարեցման եւ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված արդարացնող այլ հիմքերով քրեական հետապնդման դադարեցման միջեւ իրավունքի տեսանկյունից որեւէ որակական տարբերություն օրենսդրությունը չի նախատեսում, ինչպես նաեւ նկատի ունենալով, որ օրենսդրությունը նախատեսում է պաշտպանություն ընդդեմ այն ակտերի, որոնք կարող են կասկածի ենթարկել վիճարկվող հիմքով անձի արդարացումը կամ նրա անմեղությունը՝ սահմանադրական դատարանը գտել է, որ. «քրեական հետապնդումը դադարեցնելու մասով վիճարկվող հիմքն իրավակիրառական պրակտիկայում համարժեք իրացման դեպքում չի կարող վտանգել անձի անմեղության կանխավարկածը»:

Հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի «քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման» դրույթի սահմանադրականության գնահատման նպատակով ամրագրված՝ վերը նշված դիրքորոշումները, ինչպես նաեւ հիմք ընդունելով «քրեական հետապնդումը դադարեցնել» եւ «գործի վարույթը կարճել» ինստիտուտների համեմատական վերլուծու-

թյան արդյունքները, սահմանադրական դատարանը գտել է, որ. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի «...իսկ գործի վարույթը ենթակա է կարճման» դրույթի գոյությունն ու կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու հիմքով դրա գործադրումը նախաքննության եւ դատաքննության փուլերում կվտանգի տուժողի շահերի պաշտպանությունը եւ կարող է արգելք հանդիսանալ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքի պաշտպանության համար, ինչպես նաեւ կասկածի տակ է մնում կասկածյալի կամ մեղադրյալի անմեղությունը՝ հանցագործությանը նրանց մասնակցությունն ապացուցված չլինելու պարագայում»:

ՀՀ Ազգային ժողովը սահմանադրական դատարանի 2010 թվականի մարտի 30-ի ՍԳՈ-871 որոշման ընդունումից հետո տվյալ օրենսգրքում փոփոխություն կատարելու հարցին դեռեւս չի անդրադարձել, սակայն անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի Հանրապետության Նախագահի 2009 թվականի ապրիլի 21-ի՝ «Դատաիրավական բարեփոխումների 2009-2011 թվականների ռազմավարական գործողությունների ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու, ինչպես նաև աշխատանքային խումբ ստեղծելու մասին» ՆԿ-59-Ն թվակիր կարգադրության 2-րդ հավելվածի 3.14-րդ կետով նախատեսվում է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի մշակում, որը, կարծում ենք, ուղղված կլինի նաեւ սահմանադրական դատարանի հիշատակված որոշման պահանջների կատարմանը եւ դրանում արտահայտված իրավական դիրքորոշումների իրացմանը:

3. «Քաղաքացի Աշոտ Մանուկյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի առաջին եւ երկրորդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 02.04.2010 թվականի ՍԳՈ-872 որոշմամբ անդրադառնալով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերին՝ նույն որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում դրանք ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող: Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 5-րդ մասի առնչությամբ սահմանադրական դատարանը որոշել է.

«2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի հիմքերով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19-րդ հոդվածին (1-ին մաս) հակասող եւ անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները»:

Խնդիրը կարեւորվում էր նրանով, որ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 5-րդ մասը հնարավորություն էր ընձեռում դատական պրակտիկայում քողարկված ձեռով կիրառել գործը լրացուցիչ քննության ուղարկելու ինստիտուտը՝ ի խախտումն ՀՀ սահմանադրական դատարանի 24.07.2007թ. ՍԳՈ-710 որոշման, որով սահմանադրական դա-

տարանը ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր էր ճանաչել քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտը կարգավորող նորմերը: Նման իրավիճակի հիմնական պատճառը եղել է այն, որ ՀՀ սահմանադրական դատարանի ՄԳՈ-710 որոշման հիման վրա օրենսդրական փոփոխությունները կատարվել էին սահմանադրական դատարանի՝ վերը նշված որոշման մեջ արտահայտած ոչ բոլոր իրավական դիրքորոշումների հաշվառմամբ: Դրա արդյունքում այդ մասով օրենսդրական լրացման ընդհանուր տրամաբանության մեջ նկատելի է դարձել դատարանի՝ մեղադրական գործառույթից ձերբազատված չլինելու հանգամանքը, որը չի բխում մրցակցային դատավարության եվրոպական արդի զարգացումների հիմնական միտումներից:

Վկայակոչելով ՀՀ վճռաբեկ դատարանի 2009թ. դեկտեմբերի 18-ի՝ Սուրեն Նալբանդյանի վերաբերյալ ՀՅԲԲ-2/0144/01/09 գործով նախադեպային որոշումը, որով վճռաբեկ դատարանը փորձել է քննության առարկայի շրջանակներում ապահովել օրենքի միատեսակ կիրառությունը եւ բացառել դատական պրակտիկայում քողարկված ձեռով գործը լրացուցիչ քննության ուղարկելու ինստիտուտի կիրառումը, սահմանադրական դատարանն արձանագրել է, որ. «իր կարեւորությամբ հանդերձ, հիշյալ նախադեպային որոշումն իրավակիրառական պրակտիկան լիարժեք չի կարող ուղղորդել այնպես, որ մեղադրողը, ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի հիմքերով՝ դատարանում մեղադրանքը պաշտպանելու իրավասության շրջանակներում, առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու եւ նոր մեղադրանք առաջադրելու համար դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ հիմնավոր միջնորդությունը դատարանի կողմից բավարարվելու դեպքում, անհրաժեշտ գործողություններ կատարի այն պայմանով, որ բացառվի ամբաստանյալի դատավարական կարգավիճակի որեւէ փոփոխություն եւ նրա շահերի ու իրավունքների ցանկացած ոտնահարում, որի գնահատողն ու երաշխավորողը տվյալ գործը քննող դատարանն է: Հետեւաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոնշյալ իրավապայմանների ապահովման դեպքում է հնարավոր դատաքննության փուլում երաշխավորել անձանց սահմանադրական իրավունքները» (որոշման 9-րդ կետ):

ՀՀ Ազգային ժողովը սահմանադրական դատարանի 2010 թվականի ապրիլի 2-ի ՄԳՈ-872 որոշման ընդունումից հետո ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու հարցին դեռեւս չի անդրադարձել, սակայն այս դեպքում եւս անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի Հանրապետության Նախագահի 2009 թվականի ապրիլի 21-ի՝ «Դատախիրավական բարեփոխումների 2009-2011 թվականների ռազմավարական գործողությունների ծրագիրը եւ ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու, ինչպես նաեւ աշխատանքային խումբ ստեղծելու մասին» ՆԿ-59-Ն թվակիր կարգադրության 2-րդ հավելվածի 3.14-րդ կետով նախատեսված ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի մշակմամբ նաեւ կկատարվեն սահմանադրական դատարանի հիշատակված որոշման պահանջները ու կիրացվեն դրանում արտահայտված իրավական դիրքորոշումները:



4. «Քաղաքացի Անուշավան Նիկողոսյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 118 եւ 118.6-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 13.04.2010 թվականի ՍԳ-Ո-873 որոշմամբ անդրադառնալով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածին՝ նույն որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում այն ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող: Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 118.6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի առնչությամբ սահմանադրական դատարանը որոշել է.

«2. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «առկա է» եւ «հանգեցրել է» բառակապակցությունները՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրանց տրված մեկնաբանության շրջանակներում ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19-րդ հոդվածին (1-ին մաս) հակասող եւ անվավեր»:

Խնդիրը կարելուովում էր նրանով, որ վարչական արդարադատության՝ **տվյալ պահին գոյություն ունեցող** երկաստիճան համակարգի պարագայում վարչական դատարանի ակտերի բողոքարկման ինստիտուտի լիարժեքությունն օրենսդրորեն ապահովված չէր: Դրա հետեւանքով իրավակիրառական պրակտիկայում ձեւավորվել էր մի իրավիճակ, որի պայմաններում սահմանափակվում էր վարչական ակտի դեմ վճռաբեկ բողոք ներկայացրած անձանց՝ արդար դատաքննության իրավունքը: Դրա հիմնական պատճառներն են եղել այն, որ ՀՀ սահմանադրական դատարանի 25.11.2008թ. ՍԳ-Ո-780 որոշման հիման վրա օրենսդրական փոփոխությունները կատարվել էին սահմանադրական դատարանի՝ վերը նշված որոշման մեջ արտահայտած ոչ բոլոր իրավական դիրքորոշումների հաշվառմամբ: Երկրորդ հիմնական պատճառը եղել է այն, որ իրավակիրառական պրակտիկայում **բողոքի թույլատրելիության հիմքը շփոթվում էր վարչական դատարանի ակտի բեկանման հիմքի հետ**: Դրանց հետեւանքով վարչական արդարադատության՝ **տվյալ պահին գոյություն ունեցող** երկաստիճան համակարգի պահպանման պարագայում առկա չէին կառուցակարգային այնպիսի լուծումներ, որ ՀՀ վճռաբեկ դատարանն ի վիճակի լիներ արդյունավետ իրականացնել վարչական դատարանի ակտերի վերաբերյալ բողոքների ընդունման ու դրանց դատաքննության արդարադատական պահանջները:

Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ. «Վարչական դատավարության օրենսգրքի 118.3-րդ հոդվածում ամրագրված՝ վճռաբեկ բողոք բերելու ընդհանուր հիմքում «կարող էր ազդել գործի ելքի վրա» բառակապակցության եւ 118.6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում ամրագրված՝ վճռաբեկ բողոքի ընդունելիության պայմանում «հանգեցրել է գործի սխալ լուծմանը» բառակապակցության համեմատական վերլուծությունը վկայում է, որ «կարող էր» բառակապակցությունն արտահայտում է հավանականություն եւ կրում է դիսպոզիտիվ բնույթ, իսկ 118.6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում ամրագրված՝ «հանգեցրել է» արտահայտությունը ենթադրում է փաստի հաստատում եւ կրում է իմպերատիվ բնույթ:

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒՄ ♦ 1(58)2011

Նման տարբերությունը բովանդակային առումով նշանակում է, որ եթե վճռաբեկ բողոք բերող անձն իր բողոքում պարտավոր է հիմնավորել դատական սխալի՝ գործի ելքի վրա ազդեցության վերաբերյալ իր ենթադրությունը, ապա վճռաբեկ դատարանը **դիմումի ընդունելիության հարցի քննության փուլում** պարտավոր է ոչ թե ստուգել դատական սխալի՝ գործի ելքի վրա ազդեցության վերաբերյալ վճռաբեկ բողոք բերող անձի ենթադրության հիմնավորված լինելու հանգամանքը, այլ հաստատել այն փաստը, որ դատական սխալը հանգեցրել է կամ չի հանգեցրել գործի սխալ լուծմանը» (որոշման 8-րդ կետ):

Սահմանադրական դատարանը գտել է, որ. «դատական սխալի՝ գործի սխալ լուծմանը հանգեցրած լինելու կամ չլինելու **փաստի հաստատումն** իր բնույթով չի վերաբերում դիմումի ընդունելիության պայմաններին, նման փաստի հաստատումը կարող է տեղի ունենալ դատաքննության փուլում՝ արդարության բոլոր պահանջների պահպանմամբ: Որպես վճռաբեկ բողոքի ընդունելիության պայման կարող է հանդես գալ գործի ելքի վրա ազդեցության վերաբերյալ վճռաբեկ բողոք բերող անձի **ենթադրության ներկայացված լինելու հանգամանքի ստուգումը**, այլ ոչ թե այն փաստի հաստատումը, որ դատական սխալը **հանգեցրել է կամ չի հանգեցրել** գործի սխալ լուծմանը: ... դատական սխալի՝ գործի սխալ լուծմանը հանգեցնելու փաստի հաստատումը հանդիսանալով վճռի բեկանման հիմք՝ չի հանդիսանում եւ չի կարող հանդիսանալ բողոքի ընդունելիության պայման: Հետևաբար, **այդ հարցը ենթակա է լուծման դատաքննության փուլում**, այլ ոչ թե դիմումի ընդունելիության հարցի քննության փուլում» (որոշման 8-րդ կետ):

Սահմանադրական դատարանը գտել է նաեւ, որ. « վճռաբեկ բողոքի ընդունելիության հարցի քննության փուլում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «առկա է» բառը չի կարող ընկալվել ու մեկնաբանվել որպես բողոքի ընդունման փուլում նյութական կամ դատավարական իրավունքի խախտումը հաստատելու վճռաբեկ դատարանի պարտավորվածություն՝ դրանով իսկ ընդունելիության հարցի լուծումը կախման մեջ դնելով գործի դատաքննության փուլում ըստ էության լուծման ենթակա հարցից, սահմանափակելով վճռաբեկ դատարանի մատչելիությունը՝ դատական պաշտպանության միջոցը դարձնելով անարդյունավետ: Վճռաբեկ բողոք բերող անձի պնդումը գործի ելքի վրա ազդող դատական սխալի **ենթադրյալ առկայության** մասին, եթե այդ պնդումն ակնհայտ անհիմն չէ, թույլատրելիության այլ նախադրյալների հետ մեկտեղ (ժամկետներ, բողոքի ձեռի ներկայացվող պահանջներ եւ այլն), բավարար է գործը քննության ընդունելու համար, եւ վճռաբեկ դատարանն իրավասու չէ այդ փուլում ստուգելու վճռաբեկ բողոքի **հիմնավորվածությունը**՝ այդպիսի սխալի իրական առկայությունը («առկա է», «հանգեցրել է գործի սխալ լուծմանը», ազդել է գործի լուծման վրա), քանի որ դրանով փոխարինվում կամ կանխորոշվում է դատաքննությունը, որը եւ պետք է ապահովի գործի արդարացի քննությունը՝ համապատասխան երաշխիքների պահպանմամբ» (որոշման 8-րդ կետ):

Նույն որոշմամբ սահմանադրական դատարանը, առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-17-րդ մասերի դրույթներով եւ հաշվի առնելով, որ վարչական արդարադատության առ-

կա երկաստիճան համակարգի գործունակության եւ արդյունավետության անհրաժեշտ մակարդակի ապահովումը կամ հիմնախնդրին համակարգային այլ լուծումներ տալը պահանջում են օրենսդրական համարժեք կարգավորումներ, սույն որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետով ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ է սահմանել 2010թ. դեկտեմբերի 1-ը»:

Սահմանադրական դատարանի 13.04.2010 թվականի ՍԳՈ-873 որոշման ընդունումից հետո ՀՀ Ազգային ժողովը սահմանադրական դատարանի նշած ժամկետներում 2010թ. հոկտեմբերի 28-ին ընդունել է ՀՕ-135-Ն եւ ՀՕ-136-Ն օրենքները, որոնցով փոփոխություններ եւ լրացումներ է կատարել համապատասխանաբար՝ Հայաստանի Հանրապետության դատական եւ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքերում:

ՀՕ-136-Ն ՀՀ օրենքի հիման վրա Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով նախատեսվեց եւ ստեղծվեց վարչական վերաքննիչ դատարան՝ վարչական արդարադատության երկաստիճան համակարգը փոխադրելով եռաստիճան համակարգի: Դրան համապատասխան՝ ՀՕ-135-Ն ՀՀ օրենքի հիման վրա համապատասխան փոփոխություններ են կատարվել Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում: Մասնավորապես, օրենսգիրքը լրացվել է «Վարույթը վերաքննիչ դատարանում» վերտառությամբ 19.1 գլխով: Իսկ օրենսգրքի՝ «Վարույթը վճռաբեկ դատարանում» վերտառությամբ 20-րդ գլուխը շարադրվել է նորովի՝ հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի ոչ միայն ՍԳՈ-873 որոշման, այլ նաեւ ՍԳՈ-780 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները:

5. «Զաղաքացի Արուսյակ Աթանեսյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետի եւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2010 թվականի հունիսի 15-ի ՍԳՈ-896 որոշման 1-ին կետով որոշել է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետը՝ «...ինչպես նաեւ կամայականություն դրսեւորելը» բառակապակցության մասով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1, 3, 14.1-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

Նույն որոշման 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետը՝ «...կամ պատճառաբանված չէ» բառակապակցության մասով նույնպես ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 18-րդ (1-ին մաս), 19-րդ (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

Միաժամանակ, սահմանադրական դատարանը նույն որոշման 3-րդ կետով եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի հիմքով որոշել է ՀՀ Սահմանադրության 1-ին, 18-րդ (1-ին մաս), 19-րդ (1-ին

մաս) հողվածների պահանջներին հակասող եւ անվավեր ճանաչել նաեւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հողվածի 1-ին մասի 1-ին կետը՝ «...կամ չպատճառաբանված է» եւ 6-րդ կետը՝ «...պատճառաբանված չէ» բառակապակցությունների մասով:

Նշված գործով խնդիրը կարելուվում էր նրանով, որ հաճախ իրավական ակտերում միեւնույն կամ նմանատիպ երևույթը բնութագրելու համար օգտագործվում են բառեր, բառակապակցություններ, հասկացություններ, որոնք ավելորդ են եւ անհարկի: Ավելորդ, անհարկի օգտագործված բառերն ինքնին սահմանադրականության խնդիր չեն առաջացնում: Դրանք սահմանադրականության խնդիր են առաջացնում այն դեպքում, երբ միեւնույն կամ այլ իրավական ակտում տվյալ երևույթը բնութագրելու համար արդեն իսկ օգտագործված են առավել բարձր կոնկրետության աստիճան ունեցող բառեր: Նման իրավիճակը հնարավորություն է ստեղծում, որպեսզի իրավակիրառական պրակտիկայում առավել ցածր կոնկրետության աստիճան ունեցող բառերին տրվի համապարփակ մեկնաբանություն, որը ոչ միայն շեղվում է տվյալ երևույթը բնութագրելու համար արդեն իսկ օգտագործված առավել բարձր կոնկրետության աստիճան ունեցող բառերի բովանդակային ծավալից, այլև հիմք է հանդիսանում սուբյեկտիվ իրավունքի խախտման համար:

Հիշատակված որոշման մեջ, հաշվի առնելով «կամայականություն» եզրույթի վերաբերյալ ՀՀ օրենսդրության մեջ եւ դատական պրակտիկայում, ըստ էության, միասնական նման բնորոշման առկայությունը, ինչպես նաեւ այն հանգամանքը, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող՝ 221-րդ հողվածի բոլոր դրույթները, ինչպես նաեւ երկրորդ մասի 3-րդ կետի դիսպոզիցիան որպես սպորինի վարքագծի դրսեւորման ձեւ են մատնանշում անօրինականության տարբեր տեսակներ, սահմանադրական դատարանը գտել է, որ. « նման պայմաններում ՀՀ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող՝ 221-րդ հողվածի երկրորդ մասի 3-րդ կետում «կամայականություն դրսեւորելը» բառակապակցությունն ինքնին ավելորդ է եւ կարող է «սպորինի» եզրույթի կամայական եւ հակասական մեկնաբանության տեղիք տալ» (որոշման 6-րդ կետ):

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաեւ այն հանգամանքը, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքը կամայականություն դրսեւորելը համարում է աշխատանքային կարգապահության կոպիտ խախտում, որը հիմք է հանդիսանում աշխատողին առանց կարգապահական առավել մեղմ տույժերի ենթարկելու աշխատանքից անհապաղ ազատելու համար, սահմանադրական դատարանը գտել է, որ. «ՀՀ աշխատանքային օրենսգրքի 221-րդ հողվածի երկրորդ մասի 3-րդ կետում օգտագործված՝ «կամայականություն դրսեւորելը» բառակապակցությունն սպորինի վարքագծի սուբյեկտիվ ընկալման ու տարածական մեկնաբանության եւ դրա արդյունքում՝ աշխատողին անհապաղ աշխատանքից ազատելու իրավականորեն չիմնավորված հնարավորություն է ստեղծում» (որոշման 6-րդ կետ):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հողվածի 1-ին մասի 1-ին կետի մասով խնդիրը կարելուվում է նրանով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հողվածի 1-ին մասի 1-ին կետը հնարավոր է համարում դատական ակտի պատճառաբանված չլինելու դեպքեր: Դրա հիմ-

նական պատճառն այն է, որ սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա օրենսդրական փոփոխություններ կատարելիս օրենսդիրը լիարժեքորեն չի իրացնում այդ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Սահմանադրական դատարանն արձանագրել է. «Այլ է վիճակը «...կամ պատճառաբանված չէ» բառակապակցության առնչությամբ: Նման ձեռակերպման առկայությունն ինքնաբերաբար ենթադրում է չպատճառաբանված դատական ակտի գոյություն: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2007 թվականի ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշման մեջ հստակ իրավական դիրքորոշումներ է արտահայտել դատական ակտի պատճառաբանված լինելու սահմանադրաիրավական անհրաժեշտության վերաբերյալ, եւ այդ դիրքորոշումներն ամբողջությամբ վերաբերելի են նաեւ քննության առարկա գործին» (որոշման 7-րդ կետ):

Սահմանադրական դատարանը գտել է, որ. «օրենսդրությունն ընդհանրապես պետք է բացառի չպատճառաբանված դատական ակտի գոյությունը, որովհետեւ նման ակտը չի կարող համապատասխանել իրավական պետության հիմնարար սկզբունքներին, չի կարող երաշխավորել մարդկանց իրավունքների արդյունավետ դատական պաշտպանություն, ինչպես նաեւ ապահովել խախտված իրավունքների արդյունավետ վերականգնում» (որոշման 7-րդ կետ):

Սահմանադրական դատարանի 2010 թվականի հունիսի 15-ի ՍԴՈ-896 որոշման ընդունումից հետո, նախ՝ ՀՀ Ազգային ժողովը 2010 թվականի հունիսի 24-ին ընդունել է «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-117-Ն օրենքը, ըստ որի՝ աշխատանքային օրենսդրության ընդհանուր բարեփոխումների շրջանակում ուժը կորցրած է ճանաչել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 221-րդ հոդվածը:

Այնուհետեւ, ի կատարումն սահմանադրական դատարանի հիշտակված որոշման պահանջների եւ դրանում արտահայտված իրավական դիրքորոշումների իրացման անհրաժեշտության, Ազգային ժողովի կողմից 2010 թվականի հոկտեմբերի 4-ին առաջին ընթերցմամբ ընդունվել են Ազգային ժողովի պատգամավորների՝ օրենսդրական նախաձեռնության կարգով հեղինակած «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» եւ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Պ-943-06.07.2010-ՊԻ-010/1 Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը, որոնցով, սահմանադրական դատարանի որոշմանը համապատասխան, նախատեսվում են համապատասխան փոփոխություններ կատարել հիշյալ օրենսգրքերում:

Մասնավորապես, օրենսդրական նախաձեռնության հեղինակների կողմից առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում եւ 240-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում եւ 6-րդ կետում «թերի պատճառաբանված, սխալ պատճառաբանված կամ չպատճառաբանված է» բառերը փոխարինել «թերի կամ սխալ պատճառաբանված» բառերով:

Նույն հիմնավորմամբ օրենսդրական նախաձեռնության հեղինակների կողմից առաջարկվում է համապատասխան փոփոխություններ կատարել նաեւ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության եւ Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքերում:

6. «Քաղաքացի Կարինե Պառավյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2010 թվականի հուլիսի 7-ի ՍԳՈ-902 որոշման 1-ին կետով որոշել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի երկրորդ մասը՝ առաջին նախադասության «կամ այլ» բառակապակցության մասով, ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի եւ 32-րդ հոդվածի պահանջներին հակասող եւ անվավեր»:

Տվյալ գործով որոշման մեջ սահմանադրական դատարանն արձանագրել է հետեւյալը. «ՀՀ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող նորմի վերլուծությունը վկայում է, որ այն չի նախատեսում անօրինականորեն ազատված անձի իրավունքի պաշտպանության արդյունավետությունը փոխհատուցման վճարմամբ ապահովելու հնարավորություն: Վիճարկվող դրույթը գործատուին միայն պարտավորեցնում է հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար աշխատողին վճարել հատուցում՝ միջին աշխատավարձի չափով, մինչեւ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, ինչը, սակայն, չի կարող որակվել որպես իրավունքի վերականգնմանն ուղղված փոխհատուցում, քանի որ հիշյալ գումարն անձն ստանում է այն պատճառով, որ նրա աշխատանքային պայմանագիրը լուծված է համարվում դատարանի ակտն ուժի մեջ մտնելու օրը, եւ, հետեւաբար, այդ գումարն ըստ էության հանդիսանում է աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետում վճարվող աշխատավարձ: Ավելին, հիշյալ գումարը չի կարող դիտարկվել որպես փոխհատուցում նաեւ այն պատճառով, որ անօրինականորեն աշխատանքից ազատված անձն այդ գումարն ստանում է նաեւ աշխատանքում վերականգնվելու դեպքում» (որոշման 6-րդ կետ):

Ելնելով նրանից, որ վիճարկվող նորմը, աշխատանքում վերականգնելու անհնարինության պայմաններում, չի նախատեսում աշխատանքի իրավունքի խախտման բացասական իրավական հետեւանքները վերացնելու որեւէ միջոց, այդ թվում խախտված իրավունքի դիմաց փոխհատուցման տրամադրում, սահմանադրական դատարանը գտել է, որ. «անձի համար չի ապահովվում իրավական պաշտպանության արդյունավետ միջոց» (որոշման 6-րդ կետ):

Նույն որոշմամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասի՝ իրավական օրենքին ներկայացվող պահանջներին, այն է՝ կանխատեսելիության, որոշակիության եւ հստակության պահանջներին համապատասխանությունը սահմանադրական դատարանը հարկ է համարել գնահատել նաեւ իրավակիրառական պրակտիկայի համատեքստում՝ հաշվի առնելով, մասնավորապես, այն բովանդակությունը, որն իրավակիրառական պրակտիկայում տրվել է «կամ այլ պատճառներով կամ գործատուի եւ աշխատողի հետագա աշխատանք»:

քային հարաբերությունների վերականգնման անհնարինության դեպքում» ձեռակերպմանը:

Վիճարկվող նորմի առնչությամբ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ձեռավորված իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրել է, որ իրավակիրառական պրակտիկայում որպես գործատուի եւ աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության պատճառ դիտարկվում են այնպիսի հանգամանքներ, որոնք որեւէ առնչակցություն չունեն տնտեսական, կազմակերպչական եւ տեխնոլոգիական պատճառների հետ: Այդ իրողությունը հաշվի առնելով՝ սահմանադրական դատարանը գտել է, որ. ««կամ այլ պատճառներ» հասկացությունը ենթադրում է այնպիսի հանգամանքներ, որոնք իրենց բնույթով պետք է սերտորեն առնչվեն տնտեսական, կազմակերպչական կամ տեխնոլոգիական պատճառներին բնորոշ օբյեկտիվ հիմքերին» (որոշման 7-րդ կետ):

Սահմանադրական դատարանի 2010 թվականի հուլիսի 7-ի ՍԳՈ-902 որոշման առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ 2010 թվականի օգոստոսի 7-ին ուժի մեջ է մտել ՀՀ Ազգային ժողովի կողմից 2010 թվականի հունիսի 24-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-117-Ն օրենքը, որի 108-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի երկրորդ մասի առաջին նախադասությունից հանվել է «կամ այլ» բառակապակցությունը:

7. «Քաղաքացի Սվետա Հարությունյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 18.09.2010 թվականի ՍԳՈ-917 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 72-րդ գլուխն այն մասով, որով բացառում է համամայր եւ համահայր քույրերի եւ եղբայրների՝ ժառանգատուի հետ իրենց ազգակցական փոխկապակցվածության աստիճանին համարժեք ժառանգման իրավունքը, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 3-րդ հոդվածներին եւ 14.1-րդ հոդվածի երկրորդ մասին հակասող եւ անվավեր»:

Խնդիրը կարելի էր նրանով, որ օրենսդրորեն երաշխավորված չէր հարազատ քույրերի և եղբայրների հետ մեկտեղ միեւնույն՝ երկրորդ աստիճանի կողային ազգականներ համարվող համամայր և համահայր քույրերի եւ եղբայրների՝ ժառանգություն ստանալու իրավունքի իրացման երաշխիքները: Այդ բացը փորձ է կատարվել լրացնել դատական պրակտիկայում: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը, առաջնորդվելով միասնական իրավակիրառական պրակտիկա ձեռավորելու իր սահմանադրական առաքելությամբ, իր նախադեպային որոշմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածում ամրագրված՝

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒՄ ♦ 1(58)/2011

«հարազատ քույրերը եւ եղբայրները» բառակապակցության բովանդակային ծավալում ընդգրկել է նաեւ համամայր և համահայր քույրերին ու եղբայրներին: Մինչդեռ, այդ իրողությունը չի կարող համարվել համահայր քույրերի եւ եղբայրների՝ ժառանգություն ստանալու իրավունքի իրացման երաշխիք հետեւյալ պատճառաբանությամբ. սահմանադրական դատարանը, ճշգրտելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածում ամրագրված՝ «հարազատ քույրերը եւ եղբայրները» բառակապակցության սահմանադրաիրավական բովանդակությունը, գտել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածում ամրագրված՝ «հարազատ քույրերը եւ եղբայրները» բառակապակցությունը վերաբերում է բացառապես հարազատ քույրերին եւ եղբայրներին, եւ չի ներառում համահայր կամ համամայր քույրերին եւ եղբայրներին: Այդ կապակցությամբ տվյալ գործով կայացված որոշման մեջ սահմանադրական դատարանը մատնանշել է ՀՀ վճռաբեկ դատարանի գործունեության թերության մասին:

Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ. «...օրենսդիրն իրավասու է հաշվի առնելու՝ հարազատ եւ համահայր կամ համամայր քույրերի եւ եղբայրների միջեւ առկա օբյեկտիվ տարբերությունը՝ համահայր կամ համամայր քույրերին եւ եղբայրներին դասել մեկ այլ՝ հաջորդ հերթի ժառանգների թվին /ինչն ընդունված է մի շարք երկրների ժառանգական իրավունքում/: Սակայն օրենսդիրն իրավասու չէ այդ տարբերությունն օգտագործել համահայր կամ համամայր քույրերին եւ եղբայրներին ժառանգությունից օրենքի ուժով ընդհանրապես բացառելու համար: Այդչափ լայն սահմանափակումն օրենսգրքի՝ ըստ օրենքի ժառանգությանը վերաբերող գլխում **բավարար չափով** հիմնավորված չէ առարկայական չափանիշներով: Այն ժառանգություն ստանալու սահմանադրական իրավունքի **ոչ համաչափ** սահմանափակումն է՝ ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածից (իրավական պետության սկզբունք) բխող համաչափության սկզբունքի եւ իրավահավասարության սկզբունքի (Սահմանադրության 14.1-րդ հոդվ.) տեսանկյունից (որոշման 8-րդ կետի վերջին պարբերություն)»:

Ի կատարումն սահմանադրական դատարանի հիշյալ որոշման պահանջների և դրանում արտահայտված իրավական դիրքորոշումների իրացման անհրաժեշտության, Ազգային ժողովի կողմից 2010 թվականի հոկտեմբերի 7-ին առաջին ընթերցմամբ ընդունվել է Ազգային ժողովի պատգամավորների՝ օրենսդրական նախաձեռնության կարգով հեղինակած «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Պ-938-30.06.2010-ՊԻ-010/0 Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որով, սահմանադրական դատարանի որոշմանը համահունչ, նախատեսվում է կատարել համապատասխան փոփոխություն հիշյալ օրենսգրքում:

Մասնավորապես, օրենսդրական նախաձեռնության հեղինակների կողմից առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածի առաջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ. «Երկրորդ հերթի ժառանգներն են ժառանգատուի հարազատ, համահայր կամ համամայր եղբայրները և քույրերը»:

Նախագիծը երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվելու դեպքում՝ իրացվելու են սահմանադրական դատարանի 18.09.2010թ. ՍԴՈ-917 որոշման



պահանջները և դրանում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ բացառելով համահայր կամ համամայր քույրերին եւ եղբայրներին օրենքի ուժով ժառանգություն ստանալու իրավունքից զրկելը:

8. «Քաղաքացի Ալբերտ Իսկանդարյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 21.12.2010 թվականի ՍԳ-Ո-930 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «Գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը մերժելու մասին դատախազի որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կարող է բողոքարկվել դատարան» դրույթը՝ նույն օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման հետ անհամապատասխանության պայմաններում եւ սույն գործով դատական պրակտիկայում դրան տրված բովանդակության շրջանակներում ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածին հակասող եւ անվավեր:

2. Հաշվի առնելով, որ տվյալ խնդրի իրավաչափ լուծումը եւ հակասական իրավակարգավորման հաղթահարումը նաեւ օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտություն է ենթադրում, ինչպես նաեւ նկատի ունենալով, որ սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետում ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմի անմիջական անվավերությունն անխուսափելիորեն կառաջացնի անբարենպաստ հետեւանքներ մարդու իրավունքների պաշտպանության առումով՝ ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիմքերով սույն որոշման մեջ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված իրավանորմի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2011թ. հունիսի 30-ը»:

Խնդիրը կարելի էր նրանով, որ հաճախ միեւնույն իրավահարաբերությունը կարգավորող, սակայն տարբեր իրավական ակտերում կամ միեւնույն իրավական ակտի տարբեր մասերում շարադրված նորմերը գտնվում են ներքին հակասության մեջ, ինչն առաջացնում է իրավական անորոշություն ոչ թե տվյալ իրավանորմի, այլ ողջ իրավակարգավորման հետ կապված: Տվյալ դեպքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ եւ 290-րդ հոդվածներով նույն բնույթի եւ նույն հատկանիշներով որոշումների բողոքարկման համար օրենսդրի կողմից սահմանված են երկու տարբեր ժամկետներ, որոնց մեջ չկողմնորոշվելու դեպքում անձը զրկվում է նյութական իրավունքի պաշտպանության հնարավորությունից:

21.12.2010թ. ՍԳ-Ո-930 որոշման 5-րդ կետում սահմանադրական դատարանը, մասնավորապես, արձանագրել է հետեւյալը. «Ինչ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 եւ 263-րդ հոդվածների հարաբերակցության խնդրին՝ **ժամկետային կարգի սահմանման առնչությամբ**, ապա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ եթե օրենսգիրքը նախատեսում է

290-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված ընդհանուր կարգից շեղում այլ իրավադրույթներում, ապա իրավական անորոշությունից խուսափելու համար անհրաժեշտ էր թեկուզ հավելել՝ «...եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ» բառակապակցությունը: Առկա խմբագրությունը եւ նշված երկու հոդվածներում ժամկետային կարգավորումները հստակ տարբերակված չեն, որը, ինչպես վկայում են քննության առարկա գործի նյութերը, մարդու իրավունքների խախտման իրական վտանգ է բովանդակում: Այդ անհամապատասխանությունը թերեւս առաջացել է այն պատճառով, որ 21.02.2007թ. ՀՕ-93-Ն օրենքով օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասը նոր խմբագրությամբ շարադրելու արդյունքում վերջինս համակարգային ամբողջականության մեջ չի դիտարկվել 290-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման հետ: Մինչեւ փոփոխությունն այդ դրույթը պարզապես սահմանել է, որ «Գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը բավարարելուց դատախազի հրաժարվելը կարող է բողոքարկվել դատարան»: Բնականաբար, մման ձեւակերպման պարագայում հիշյալ անհամապատասխանությունն առկա չի եղել»:

ՀՀ Ազգային ժողովը սահմանադրական դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի ՍԴՈ-930 որոշման ընդունումից հետո վերոնշյալ օրենսգրքում փոփոխություն կատարելու հարցին դեռեւս չի անդրադարձել:

Առանձին գործերով օրենքների տարբեր դրույթների սահմանադրականության հարցը քննության առնելիս ՀՀ սահմանադրական դատարանը բացահայտում է, որ հաճախ նորմի անորոշության կամ դատական պրակտիկայի կողմից ոչ միանշանակ մեկնաբանությունների պատճառով իրական վտանգ է առաջանում մարդկանց իրավունքների պաշտպանության առումով: Նման դեպքերում սահմանադրական դատարանը բացահայտելով տվյալ նորմի սահմանադրաիրավական բովանդակությունը՝ շեշտում է, որ այդ նորմը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը տվյալ որոշման մեջ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում: Նման մոտեցումը լայն կիրառում ունի սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկայում եւ նպատակ է հետապնդում առանց նորմն անվավեր ճանաչելու ապահովել դրա կիրառումը սահմանադրաիրավական հիմնարար սկզբունքների շրջանակներում:

Նման դիրքորոշումներ է արտահայտել ՀՀ սահմանադրական դատարանը, մասնավորապես՝ ՍԴՈ-852, ՍԴՈ-890, ՍԴՈ-903, ՍԴՈ-906, ՍԴՈ-931 որոշումներում:

Բացի վերոնշյալներից, մի շարք անհատական դիմումների հիման վրա քննված գործերով սահմանադրական դատարանն օրենքների վիճարկվող նորմերը ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող: Սակայն սահմանադրական դատարանն իր որոշումների պատճառաբանական մասում արձանագրել է նաեւ իրավասու մարմինների այնպիսի գործողություններ ու դրանց նպաստող օրենսդրական բացեր, որոնք խոչընդոտում են մարդկանց սահմանադրական իրավունքների լիարժեք երաշխավորմանն ու ապահովմանը: Սահմանադրական դատարանը կարելու է համարում, որ պետական իշխանության

**ՀԱՂՈՐԳՈՒՄ**

եւ տեղական ինքնակառավարման մարմիններն անհրաժեշտ ուշադրություն դարձնեն նաև այդ հանգամանքին: Գատարանը նշված որոշումների պատճառաբանական մասերում նաև արտահայտել է որոշակի իրավական դիրքորոշումներ եւ **միայն դրանց շրջանակներում է իրավական ակտի վիճարկվող նորմը** ճանաչել ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող:

Մասնավորապես.

**Ա/** «Քաղաքացի Գագիկ Չանգլյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 19.01.2010թ. ՍԳ-Ո-852 որոշման 7-րդ կետի վերջին պարբերության մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Միաժամանակ, հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 396-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 399-րդ հոդվածի 2-րդ մասի նորմատիվ դրույթները՝ կապված վերաքննիչ բողոքի հիման վրա առաջին ատյանի դատարանի դատավճռով նախատեսվածից ավելի խիստ պատիժ նշանակելու վերաքննիչ դատարանի լիազորության իրականացման առանձնահատկության հետ, ինչպես նաև փաստելով դատախազի, տուժողի իրավահաջորդի, նրա ներկայացուցչի եւ սույն գործով դիմողի վերաքննիչ բողոքների միաժամանակյա առկայության իրողությունը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեև դիմողը ձեւակնորեն իրացրել է ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված բողոքարկման իր իրավունքը, սակայն վերջինիս նկատմամբ կիրառվել է ավելի խիստ պատիժ, հետեւաբար՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ մասն դեպքերում կիրառելի է ՀՀ ՍԳ- 22.12.2009թ. ՍԳ-Ո-849 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը՝ նկատի ունենալով նաև, որ հիմնախնդիրը հետագա համալիր իրավակարգավորման անհրաժեշտություն ունի»:

**Բ/** «Քաղաքացի Աշոտ Մանուկյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի առաջին եւ երկրորդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 02.04.2010թ. ՍԳ-Ո-872 որոշման 6-րդ կետի 2-րդ պարբերությունում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«... օրենսդիրը մեղադրողի՝ առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու եւ նոր մեղադրանք առաջադրելու համար դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու իրավունքի իրացման համար սահմանել է մի շարք պարտադիր նախապայմաններ, որոնք կոչված են երաշխավորելու քրեական դատավարության մասնակիցների իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը եւ որոնք անվերապահորեն պետք է հաշվի առնվեն դատական պրակտիկայում: Դրանք են՝

ա) եթե ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել եւ չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում,

բ) եթե գործի փաստական հանգամանքները հնարավորություն չեն տալիս մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու առանց դատական քննությունը հետաձգելու,

գ) վերոհիշյալ հիմքերի առկայությունը պետք է գնահատի դատարանը,

դ) նիստը կարող է հետաձգվել բացառապես անհրաժեշտ քննչական եւ այլ դատավարական գործողություններ կատարելու եւ նոր մեղադրանք առաջադրելու համար,

ե) նիստը կարող է հետաձգվել ոչ ավելի, քան մեկ ամսով, բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ քննչական եւ այլ դատավարական գործողություններ կատարելու համար ողջամտորեն պահանջվում է ավելի երկար ժամկետ,

զ) հետաձգումը չի կարող նպատակ հետապնդել լրացնելու նախկինում կատարված թերի նախաքննությունը»:

Նույն որոշման 7-րդ կետի 2-6-րդ պարբերություններում սահմանադրական դատարանն արտահայտել է նաեւ հետևյալ իրավական դիրքորոշումը. «Վերլուծելով ՀՀ քր. դատ. օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի սահմանադրաիրավական բովանդակությունը՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատաքննության շրջանակներում լրացուցիչ ապացույցների ձեռքբերման եւ այլ դատավարական գործողությունների կատարմամբ մեղադրանքը փոխելու դեպքում օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերն իրավակարգավորման առումով դատարանին մեղադրական թեքումից ձերբազատվելու եւ անկողմնակալ արդարադատություն իրականացնելու բավարար երաշխիքներ պարունակում են՝ դրանց սահմանադրաիրավական իրենց բովանդակությանը համապատասխան ընկալման ու իրացման պարագաներում, համաձայն որի.

**նախ՝** դատական նիստի հետաձգումը դատարանի հայեցողական լիազորությունն է, իսկ միջնորդությունը՝ մեղադրողի խնդրանքը, որը դատարանը կարող է բավարարել միայն օրենքով սահմանված պայմանների պահպանման, անհրաժեշտ հիմնավորումների ու **մյուս կողմի կարծիքը լսելու արդյունքում:** Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ գործնականում ՀՀ քր. դատ. օր-ի 309.1-րդ հոդվածի վիճարկվող դրույթները խիստ հազվադեպ են կիրառվում դատական պրակտիկայում: Վերջին երկու տարիների դատական վիճակագրության ուսումնասիրությունը վկայում է, որ այն վերաբերում է քննված քրեական գործերի 0,6-0,7 տոկոսին:

**Երկրորդ՝** յուրաքանչյուր այդպիսի կոնկրետ միջնորդություն քննելիս դատարանը՝ հիմք ընդունելով օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի պահանջները, պետք է գնահատի, թե **ավյալ կոնկրետ քրեական գործով՝**

ա/ մեղադրանքի ծավալի վրա ազդող՝ դատարանում ի հայտ եկած հանգամանքները մինչդատական վարույթում հայտնի են եղել, թե՛ ոչ, եւ, միաժամանակ, դրանք կարող էին հայտնի լինել նախաքննության մարմնին, թե՛ ոչ,

բ/ գործի փաստական հանգամանքները հնարավորություն տալիս են, թե ոչ՝ մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու եւ նոր մեղադրանք առաջադրելու առանց դատական քննությունը հետաձգելու եւ քննչական գործողություններ կատարելու:

**Երրորդ՝** դատարանը պետք է հանգի այն համոզման, որ այդ գործողությունները կատարվում են դատաքննության շրջանակներում՝ առանց ամբաստանյալի կարգավիճակի փոփոխության, երաշխավորելով նաեւ պաշտպանական կողմի դատավարական իրավունքները:

**Չորրորդ՝** նկատի առնվի, որ նման կարգով ձեռք բերված ապացույցները չեն կարող օգտագործվել նախկինում առաջադրված մեղադրանքը հաստատելու համար»:

**Գ/** Քաղաքացիներ Արարատ Ծովյանի եւ Սվետլանա Հակոբյանի դիմումի հիման վրա՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի «ա» եւ «բ» ենթակետերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 25.05.2010թ. ՍԳՈ-890 որոշման 8-րդ եւ 9-րդ կետերում արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումները.

«Ինչ վերաբերում է վիճարկվող դրույթների բուն բովանդակությանը, ապա այն ոչ միայն չի պարտավորեցնում դատարաններում պետական տուրք վճարել, այսպես կոչված, **այլընտրանքային** գույքային պահանջներից յուրաքանչյուրի համար, այլ նաեւ **գործնականում բացառում է վերաքննիչ դատարան այլընտրանքային գույքային պահանջներ ներկայացնելու որեւէ հնարավորություն**: Վիճարկվող դրույթի պահանջը ոչ թե այլընտրանքային գույքային պահանջներից յուրաքանչյուրի համար պետական տուրքի միաժամանակյա վճարումն է, այլ այն վերաբերում է գույքային եւ ոչ գույքային պահանջներին: Իսկ գույքային եւ ոչ գույքային պահանջները, միմյանցից էապես տարբերվելով իրենց բնույթով եւ բովանդակությամբ, չեն կարող գործնականում հարաբերակցվել որպես այլընտրանքային հայցապահանջներ: Գույքային եւ ոչ գույքային պահանջները, որոնց հիմքում դրված են նյութական եւ ոչ նյութական կարիքների բավարարման, հետեւաբար՝ նաեւ բովանդակությամբ տարբեր խնդիրներ, չեն կարող միմյանց փոխարինել՝ միմյանց նկատմամբ հանդես գալով որպես այլընտրանքային պահանջներ: Այլընտրանքային պահանջները կարող են ներկայացվել բովանդակությամբ համասեռ խնդրի կամ՝ տվյալ դեպքում գույքային պահանջի շրջանակներում, որտեղ այդ պահանջները հանդես են գալիս որպես գույքային բնույթի եւ գործնականում միմյանց փոխարինող պահանջներ կամ ոչ գույքային պահանջի շրջանակներում հանդես գալով որպես ոչ գույքային բնույթի եւ գործնականում միմյանց փոխարինող պահանջներ (որոշման 8-րդ կետ):

ՀՀ դատական օրենսգրքի 39-րդ հոդվածի համաձայն՝ վերաքննիչ դատարանն իր իրավասության շրջանակներում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների դատական ակտերը վերանայող դատարան է, հետեւաբար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի համաձայն վերաքննիչ դատարանում բողոքարկման օբյեկտն առաջին ատյանի դատարանի դատական ակտն է: Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի հիման վրա վերահսկողություն է իրականացնում առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականության նկատմամբ՝ դրանում տեղ գտած հնարա-

վոր դատական սխալը վերացնելու նպատակով: Ուստի, եթե առաջին ատյանի դատարանում քննության առարկան մեկ կամ մի քանի պահանջ ներառող հայցապահանջն է, ապա վերաքննիչ դատարանում քննության առարկան ոչ թե առաջին ատյանի դատարան ներկայացված հայցապահանջում ներառված առանձին պահանջներն են, այլ առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված ենթադրյալ դատական սխալը: Հետևաբար, գույքային եւ ոչ գույքային պահանջների առնչությամբ կայացված՝ առաջին ատյանի դատական ակտը կարող է քննության առարկա դառնալ միաժամանակ գույքային եւ ոչ գույքային պահանջների առնչությամբ՝ իր ամբողջության մեջ» (որոշման 9-րդ կետ):

Անհրաժեշտ է նշել, որ սահմանադրական դատարանի՝ 2010 թվականի մայիսի 25-ի ՍԳՈ-890 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումների մասնակի իրացմանն է վերաբերում, մասնավորապես, Ազգային ժողովում շրջանառության մեջ գտնվող և ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնության կարգով հեղինակված «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Կ-1028.5-19.11.2010 - ՊԻ-010/0): Ըստ այդ նախագծի՝ առաջարկվում է «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ եւ 9-րդ կետերում «բողոքների համար» բառերից հետո լրացնել «, բացառությամբ միջանկյալ ակտերի դեմ բերված բողոքների» բառերով: Եվ արդյունքում՝ առաջ են քաշվում դատական ակտերի բողոքարկման դեպքում պետական տուրքի գանձման օրենսդրական հստակ ձևակերպումների միջոցով օրենքի նշված նորմերի կատարելագործմանն ուղղված հարցեր:

**Գ/ «Քաղաքացիներ Ռուբեն Ավագյանի, Հրաչիկ Հակոբջանյանի, Հրաչյա Ավետիսյանի, Արայիկ Ավետիսյանի դիմումի հիման վրա՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56, 57 եւ 58-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ»** գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 13.07.2010թ. ՍԳՈ-903 որոշման 10-րդ կետում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

«Սահմանադրական դատարանը միաժամանակ հարկ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի՝ «Ժողովի քվորումը» վերտառությամբ 77-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքի 68-րդ հոդվածի համաձայն՝ ժողովի կողմից բաժնետոմսերի համախմբման վերաբերյալ որոշման կայացման համար պահանջվում է ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերի ձայների պարզ մեծամասնությունը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործնականում հնարավոր է դառնում խնդրո առարկա որոշման կայացումն ընկերության բաժնետերերի գրեթե մեկ քառորդի կողմից: Ավելին, հաշվի առնելով նաեւ, որ

օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ժողովը չկայանալու դեպքում գումարվող նոր ժողովն իրավասու է, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 30-ից ավելի տոկոսին, ապա գործնականում հնարավոր է դառնում խնդրո առարկա որոշման կայացումը նույնիսկ ընկերության բաժնետերերի 15%-ից քիչ ավելի կողմից, որն էապես թուլացնում է նման որոշման լեգիտիմությունը:

Սահմանադրական դատարանը գտել է, որ նման ընթացակարգը ոչ միայն չի ապահովում ընկերության բաժնետերերի սեփականության իրավունքին առնչվող որոշումների կայացումը ձայների այնպիսի հարաբերակցությամբ, որը հնարավորություն կտա ապահովել նման որոշումների լեգիտիմության ավելի մեծ աստիճան, այլ նաեւ նման որոշման կայացումը բաժնետերերի փոքրամասնության կողմից ներդաշնակ չէ բաժնետոմսերի համախմբման՝ որպես բաժնետերերի մեծամասնության շահերից բխող գործընթացի էությանն ու տրամաբանությանը: Հաշվի առնելով բաժնետոմսերի համախմբման գործընթացի էությունը, առանձնահատկություններն ու տնտեսական նշանակությունը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 68-րդ եւ 77-րդ հոդվածներն ունեն բարեփոխման անհրաժեշտություն՝ այն առումով, որպեսզի հատկապես սեփականության իրավունքին առնչվող հարցերում ապահովվի որոշման կայացումը բաժնետերերի մեծամասնության կողմից»:

Ե/ «Հելվինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի՝ «խախտվել» բառից հետո «նրա» արտահայտության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 07.09.2010թ. ՄԴՈ-906 որոշման 7-րդ կետի վերջին պարբերությունում արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումը.

«Հաշվի առնելով հասարակական կազմակերպությունների դերը պետության եւ քաղաքացիական հասարակության կյանքում, առաջնորդվելով վերջիններիս գործունեության արդյունավետության բարձրացման նկատառումներով՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը շահագրգիռ (կանոնադրական համապատասխան իրավասությամբ օժտված) հասարակական կազմակերպությունների համար, որպես իրավաբանական անձ, կարող է սահմանել տվյալ ոլորտում անձանց խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքի իրացման դեպքերը եւ կարգը՝ հաշվի առնելով *actio popularis* բողոքների ինստիտուտի առնչությամբ եվրոպական ներկա զարգացումների միտումները: Նման իրավակարգավորումը կնպաստեր ոչ միայն խախտված իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության, այդ թվում դատական պաշտպանության արդյունավետությանը, այլեւ կբարձրացներ քաղաքացիական հասարակության բաղադրատարր հանդիսացող՝ հասարակա-

կան կազմակերպությունների դերը: Ընդ որում, ուրիշի խախտված իրավունքների համար դատարան կամ այլ մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմելու իրավունքի իրացման դեպքերը եւ կարգը սահմանելիս հարկ կլինի հաշվի առնել միայն այն հասարակական կազմակերպություններին, **որոնց նպատակներից են կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը**: Այս դիրքորոշումը համահունչ է նաեւ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին, որի համաձայն՝ կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրականացնելու համար իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր եւ իր անդամների իրավունքները եւ օրինական շահերն այլ կազմակերպություններում, **դատարանում**, պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններում»:

Չ/ «Հանրապետություն» կուսակցության եւ քաղաքացի Նարինե Սահակյանի դիմումների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21, 22 եւ 23-րդ հոդվածների՝ ինքնաբացարկ հայտնելու մասին միջնորդություն ներկայացնելու մասով, եւ ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 28.09.2010թ. ՍԳՈ-918 որոշման 6-րդ, նախավերջին եւ վերջին պարբերություններում արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումը.

**«... պարտադիր պետք է երաշխավորված լինի դատական ակտի բողոքարկման շրջանակներում դատավորի ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու մասին որոշման հետ կապված հանգամանքների համակողմանի քննությունը**: ՀՀ գործող օրենսդրությունն այս հարցում որեւէ արգելանք չի նախատեսում, եւ այս ուղղությամբ պետք է ընթանա նաեւ իրավակիրառական պրակտիկան: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ինքնաբացարկի վերաբերյալ կայացված որոշման բողոքարկման հնարավորության բացակայությունը եւ, միաժամանակ՝ ՀՀ դատական օրենսգրքում դատավորի ինքնաբացարկի որոշման բողոքարկման իրավունքի առկայությունն իրավակիրառական պրակտիկայում չեն կարող մեկնաբանվել այնպես, որ բացառվի այդպիսի որոշումների վիճարկման իրավունքը՝ **ինքնաբացարկի դեպքում՝ անմիջականորեն, ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու դեպքում՝ ըստ էության գործով կայացված դատական ակտի բողոքարկման շրջանակներում**»:

Նույն որոշման 7-րդ կետի վերջին պարբերությունում սահմանադրական դատարանն արտահայտել է նաեւ հետեւյալ իրավական դիրքորոշումը.

«ՀՀ սահմանադրական դատարանը նաեւ արձանագրում է, որ դատավորի բացարկի եւ ինքնաբացարկի ինստիտուտների իրավակարգավորման գործում անհրաժեշտ է միասնական ու համակարգային մոտեցում: Հարկ է նկատել, որ այս խնդիրն առավել հստակ է կարգավորված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում (հոդվածներ 88, 89, 90, 299, 322 եւ այլն), քան ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում, որտեղ ընդհուպ անհամաձայնություն գոյություն ունի 21-26-րդ հոդվածների եւ 28-րդ հոդվածի միջեւ»:



Անհրաժեշտ է նշել, որ սահմանադրական դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 28-ի ՍԴՈ-918 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների իրացմանն են ուղղված, մասնավորապես, Ազգային ժողովում շրջանառության մեջ գտնվող և ՀՀ կառավարության՝ օրենսդրական նախաձեռնության կարգով հեղինակած «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» եւ մի շարք այլ օրենքների նախագծեր (Կ-1028-19.11.2010-ՊԻ-010/0):

Մասնավորապես, օրենսդրական նախաձեռնության հեղինակի կողմից առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Դատավորն ինքնաբացարկ է հայտնում իր նախաձեռնությամբ կամ գործին մասնակցող անձի միջնորդությամբ: Միջնորդությունը կարող է ներկայացվել, կամ ինքնաբացարկը կարող է հայտնվել միայն մինչև դատաքննության ավարտը»: Միաժամանակ, նույն օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին կետով գործին մասնակցող անձանց մասով առաջարկվում է իրավունք վերապահել նրանց ներկայացնելու ինքնաբացարկի միջնորդություն:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենսդրական նախաձեռնությանը, ապա անհրաժեշտ է նշել, որ ՀՀ կառավարության կողմից ներկայացված օրինագծերի շրջանակում առաջարկվում է Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հիշատակված նախագծերով առաջ են քաշվում դատավորի բացարկի եւ ինքնաբացարկի ինստիտուտների իրավակարգավորման գործում միասնական ու համակարգային մոտեցումներ բովանդակող հարցեր:

Է/ «Քաղաքացի Արտաշես Անտոնյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 12.10.2010թ. ՍԴՈ-920 որոշման 8-րդ կետի 4-6-րդ պարբերություններում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«... սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմը կիրառելիս յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավակիրառողը պարտավոր է, ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից, պարզել լիազորված անձի, լիազորողի եւ տեղափոխողի մեղքի առկայությունը՝ ըստ այդմ որոշելով պատասխանատու սուբյեկտին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ լիազորված անձը գործում է տեղափոխողի անունից եւ ի շահ վերջինիս՝ համապատասխան ակտի հիման վրա

տրամադրված լիազորությունների շրջանակներում, եւ հայտարարագրումն իրականացնում է տեղափոխողի տրամադրած տեղեկատվության հիման վրա՝ այդ լիազորությունների շրջանակներում կատարած ցանկացած գործողության համար վիճարկվող դրույթով սահմանված պատասխանատվության սուբյեկտ պետք է հանդիսանա տեղափոխողը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ձեւավորված իրավակիրառական այն պրակտիկան, երբ չապահովելով իրավախախտման համար մեղավորի պատասխանատվությունը եւ բոլոր դեպքերում որպես պատասխանատվության սուբյեկտ դիտարկելով տեղափոխվող ապրանքների կամ տրանսպորտային միջոցի նկատմամբ որեւէ գույքային իրավունք չունեցող լիազորված անձին, թույլ չի տալիս արդյունավետորեն իրացնել վիճարկվող նորմով սահմանված պատասխանատվության իրավաչափ նպատակը, այն է՝ ապահովել տնտեսավարող սուբյեկտի կողմից՝ Սահմանադրության 45-րդ հոդվածով ամրագրված պարտականության իրական կատարումը: Այս խնդրի իրավակարգավորումը հետագա համակարգային բարեփոխման անհրաժեշտություն ունի»:

Այսպիսով, հիշյալ գործերով ընդունված որոշումների առնչությամբ սահմանադրական դատարանը կարելի է համարում, որ պետական իշխանության եւ տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց գործունեության մեջ էլնեն իրավանորմների այնպիսի ընկալումից, ինչպիսին սահմանված է սահմանադրական դատարանի՝ հիշատակված **իրավական դիրքորոշումներում**:

**Դատարանների դիմումների հիման վրա ընդունված սահմանադրական դատարանի որոշումները եւ դրանց կատարումը**

Սահմանադրական դատարանում մուտքագրված՝ ՀՀ դատարանների կողմից ներկայացված 5 դիմումներն էլ (4-ը ներկայացվել է ՀՀ վճռաբեկ դատարանի, հինգերորդը՝ Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Ավետիսյանի կողմից) սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշումներով ընդունվել են քննության: Դրանցից ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ներկայացված երկու դիմումներով (միավորվել են մեկ գործում) սահմանադրական դատարանի ըստ էության որոշմամբ գործի վարույթը կարճվել է, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանի եւ Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Ավետիսյանի կողմից ներկայացված մյուս երկու դիմումներով (միավորվել են մեկ գործում) սահմանադրական դատարանն իր՝ 11.05.2010թ. ՍԴՈ-882 որոշմամբ վիճարկվող նորմերը ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող:

1). «ՀՀ վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը

որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 14.12.2010 թվականի ՍԴՈ-929 որոշմամբ որոշել է.

«1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասը, այնքանով, որքանով չի սահմանում, այլ սուբյեկտներից բացի, արդարացվածին՝ իրավասու պետական մարմինների եւ պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների (անգործության) հետեւանքով պատճառված վնասի հատուցման հայցերով պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ արտոնություն նախատեսող դրույթ՝ արգելափակելով անձի սահմանադրական իրավունքի իրացումը, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասին եւ 20-րդ հոդվածի 5-րդ մասին հակասող եւ անվավեր:

2. Հաշվի առնելով, որ տվյալ խնդրի իրավաչափ լուծումը եւ օրենքի բացի հաղթահարումը նաեւ օրենսդրական փոփոխությունների եւ համալիր իրավակարգավորման անհրաժեշտություն է ենթադրում, ինչպես նաեւ նկատի ունենալով, որ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ վեճի առարկա հոդվածի անմիջական անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կառաջացնի ծանր հետեւանքներ այդ հոդվածի առկա՝ սահմանադրականության խնդիրներ չառաջացնող, դրույթների իրացման եւ մարդու իրավունքների պաշտպանության առումով՝ ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիմքերով սույն որոշման մեջ ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված իրավանորմի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2011թ. հունիսի 30-ը»:

Խնդիրը կարելի էր նրանով, որ պետական իրավասու մարմինների գործունեության հետեւանքով ապօրինի քրեական հետապնդման ենթարկվելու դեպքերում հասցված վնասի հատուցում պահանջելու համար անձն ստիպված է վճարել պետական տուրք, որի չափը կարող է ընդհուպ գերազանցել հատուցվելիք գումարը: Այսինքն՝ կիրառված միջոցի եւ հետապնդված նպատակի միջեւ չկա ողջամիտ համաչափություն՝ ստեղծվել է ոչ իրավաչափ հավասարակշռություն անձի խախտված իրավունքների վերականգնման եւ պետության շահերի պաշտպանության միջեւ, որն աղավաղում է պատճառված վնասի հատուցման սահմանադրական իրավունքի էությունը: Դա այն դեպքում, երբ օրենսդիրը մի շարք այլ փոխհատուցման հայցերով իրավունքի տարբեր սուբյեկտների ազատել է պետական տուրքի վճարումից:

Սահմանադրական դատարանը, հարկ համարելով պարզել ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասում եւ 20-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված՝ «օրենքով սահմանված կարգով» բառակապակցության բովանդակությունը, գտել է, որ. «Սահմանադրությունը հղում կատարելով օրենքին՝ միաժամանակ առաջադրում է տուժողին փոխհատուցելու այնպիսի կարգ սահմանելու պահանջ, որը պետք է երաշխավորի գործուն մեխանիզմ խնդրո առարկա իրավունքի արդյունավետ իրացման համար: Նման մեխանիզմի գոյությունը կարող է ապահովվել նաեւ այն դեպքում, երբ հատուցման իրավունքի իրացման՝ օրենքով սահմանված դատական կարգը պետական տուրքի վճարումից ազատելու արտո-

նության ձեռով արդարացի պայմաններ ստեղծի այդ իրավունքի իրացման համար, եւ այնպիսի դեպքերում, երբ փոխհատուցման իրավունքն անվիճելի է, այսինքն՝ օրենքով սահմանված կարգով նախօրոք հաստատված է պետական իրավասու մարմնի, պաշտոնատար անձի այն գործողության (անգործության) փաստը, որի արդյունքում անձին պատճառվել է վնաս» (որոշման 7-րդ կետ):

Վերոգրյալի հիման վրա սահմանադրական դատարանը կանխորոշել է տվյալ իրավակարգավորման՝ Սահմանադրությանը համահունչ ուղղությունը, ամրագրելով, որ. «... օրենսդիրը պետք է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասում եւ 20-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված իրավունքների արդյունավետ ու անարգել իրացման նպատակով **սահմանի արտադատական կամ դատական կարգով փոխհատուցման պահանջ ներկայացնելու արդյունավետ եւ գործուն համակարգ**» (որոշման 7-րդ կետ):

Ի կատարումն սահմանադրական դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 14-ի ՍԳՈ-929 որոշման պահանջների և դրանում արտահայտված իրավական դիրքորոշումների իրացման անհրաժեշտությունից ելնելով ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով շրջանառության մեջ դրված «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (Պ-1066-11.01.2011-ՊԻ-010/0, սահմանադրական դատարանի որոշմանը համահունչ, նախատեսվում է հիշյալ օրենքում կատարել համապատասխան փոփոխություն):

Մասնավորապես, օրենսդրական նախաձեռնության հեղինակների կողմից առաջարկվում է «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «էա» կետով. «էա) արդարացվածը՝ իրավասու պետական մարմինների եւ պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների (անգործության) հետևանքով պատճառված վնասի հայցերով.» բառերով:

Նախագիծն ընդունվելու դեպքում՝ իրացվելու են սահմանադրական դատարանի ՍԳՈ-929 որոշման պահանջները և դրանում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ նախատեսելով պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ արտոնություն արդարացվածին՝ իրավասու պետական մարմինների եւ պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների (անգործության) հետևանքով պատճառված վնասի հատուցման հայցերով:

2). ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով իր՝ 28.12.2010թ. ՍԳՈ-931 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել, որ «Արագացված կարգով դատական քննության բովանդակությունից ու էությունից բխում է, որ այս ինստիտուտի իրավակարգավորման շրջանակներում անհրաժեշտ է ապահովել հավասարակշռություն դատավարության կողմերի իրավունքների եւ օրինական շահերի միջեւ: Միաժամանակ, դատական քննու-

թյան արագացված կարգ կիրառելու դեմ դատախազի առարկությունը պետք է լինի փաստարկված եւ հիմնավորի, որ դատախազը տվյալ գործով նախընտրում է մեղադրանքի պաշտպանության սահմանադրական իր լիազորությունն իրականացնել ողջ ծավալով»: Սահմանադրական դատարանը որոշել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ «Եթե մեղադրողը մեղադրական եզրակացությունում չի առարկել արագացված կարգ կիրառելու դեմ...», ինչպես նաեւ «Մինչեւ դատաքննությունը սկսելը մեղադրողը դատարանի առաջարկությամբ կարող է իր դիրքորոշումը փոխել, թեպետ արագացված կարգ կիրառելու դեմ առարկել է մեղադրական եզրակացությունում» դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ տվյալ որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ներկայացված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

**ՀՀ գլխավոր դատախազի դիմումների հիման վրա ընդունված սահմանադրական դատարանի որոշումները եւ դրանց կատարումը**

Սահմանադրական դատարանում մուտքագրված՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից ներկայացված 2 դիմումներն էլ սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշումներով ընդունվել են քննության: Դատաքննությունը հետաձգվել է մինչեւ 2011թ. փետրվարի 4-ը:

**Մարդու իրավունքների պաշտպանի դիմումների հիման վրա ընդունված սահմանադրական դատարանի որոշումները եւ դրանց կատարումը**

Սահմանադրական դատարանում մուտքագրված՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված 6 դիմումներն էլ սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշումներով ընդունվել են քննության: Դրանցից մեկը դիմողի կողմից հետ է վերցվել: Հինգ դիմումներից մեկով սահմանադրական դատարանի ըստ էության որոշմամբ գործի վարույթը կարճվել է, իսկ մյուսով սահմանադրական դատարանն իր՝ 09.11.2010թ. ՍԴՈ-923 որոշմամբ վիճարկվող նորմերը ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող:

1). «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 343 հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 14.01.2010 թվականի ՍԴՈ-851 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասը՝ այնքանով, որքանով կիրառելի չէ նաեւ դատավարության այլ մասնակիցների նկատմամբ, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14.1-րդ հոդվածի 1-ին մասի եւ 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող եւ անվավեր»:

Խնդիրը կարելի էր նրանով, որ վիճարկվող նորմը որպես դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորող սուբյեկտ է դիտարկում միայն վկային, տուժողին եւ պաշտպանին: Քրեական դատավարության մյուս մասնակիցները եւ մասնակցող անձինք նշված հանցակազմի սուբյեկտներ չեն: Նման մոտեցման արդյունքում վիճարկվող նորմն անհավասար դրության մեջ է դնում դատավարության մի մասնակցին դատավարության մյուս մասնակիցների համեմատ, քանի որ նույնպիսի արարքի համար դատավարության մասնակիցներից մեկը կարող է ենթարկվել քրեական հետապնդման, իսկ մյուսները՝ ներառյալ մեղադրողը՝ ոչ:

«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 16.12.2005թ. ՀՕ-33-Ն ՀՀ օրենքի եւ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 16.12.2005թ. ՀՕ-32-Ն ՀՀ օրենքի ընդունման գործընթացի համեմատական վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրել է, որ. «... ՀՀ Ազգային ժողովում նման փոփոխության հիմնավորումն ու փաստացի փոփոխությունը համաչափելի չեն, չկա սուբյեկտների կազմի փոփոխության որեւէ հիմնավորում, չի ապահովվել միեւնույն հողվածի (343-րդ հողված) տարբեր մասերի համակարգային առումով փոխկապակցվածությունը: Այդ օրենքների նախագծերի քննարկումների եւ ընդունման անհրաժեշտության հիմնավորումների ուսումնասիրությունը վկայում է, որ այդ օրենքներով կատարված փոփոխությունները հիմնավորվել են բացառապես վարչական կալանքի ինստիտուտի վերացման անհրաժեշտությամբ՝ հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 16, 32-րդ հոդվածների պահանջները: Սակայն այդ եւ հետագայում կատարված փոփոխությունների համադրումից հետեւում է, որ վերոհիշյալ օրենսդրական լուծումները պարունակում են ներքին հակասություններ, քանի որ դրանց ընդունման արդյունքում՝ մի կողմից արարքը քրեականացվել է որոշակի սուբյեկտների նկատմամբ, մյուս կողմից՝ դադարել է, թեկուզ որոշ ժամանակահատվածում, հանրորեն վտանգավոր համարվել այլ սուբյեկտների առնչությամբ: Չի դրսևորվել նաեւ համակարգված մոտեցում, մասնավորապես՝ հաշվի առնելու, օրինակ, դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու դեպքում հարկադրանքի կիրառման հնարավորությունը, միեւնույն արարքը կրկնվելու դեպքում այլ սանկցիա կիրառելու անհրաժեշտությունը եւ այլն» (որոշման 6-րդ կետ):

Սահմանադրական դատարանը գտել է, որ. « ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ եւ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածներում նշված իրավախախտումների եւ վիճարկվող նորմում նշված հանցակազմի միջեւ էական տարբերությունների բացակայության պայմաններում անձը զրկվում է իր վարքագծի իրավական հետեւանքները կանխատեսելու հնարավորությունից, ինչը չի բխում օրենքի կանխատեսելիության եւ որոշակիության սկզբունքներից » (որոշման 7-րդ կետ):

Սահմանադրական դատարանն արձանագրել է հետևյալը. «... նման պայմաններում իրավակիրառողի կողմից դատական սանկցիաների եւ քրեաիրավական ներգործության միջոցի միջեւ ընտրության հարցում կամայական մոտեցման նախադրյալներ են ստեղծվում: Վերլուծությունը վկայում է, որ, մի կողմից,

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1 եւ 153-րդ (քերման ենթարկելը), ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 115-րդ (ինչպես նաեւ, օրինակ, 44-րդ հոդվածի 5-րդ մաս), ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածների, մյուս կողմից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերի առկայությունն իրավական առումով առնվազն խնդրահարույց են դարձնում ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի ներկայիս ձեւակերպման գոյությունն ընդհանրապես:

Ընդհանրապես տվյալ հիմնախնդրի իրավակարգավորման հարցում չկա հստակ համակարգային մոտեցում ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի, ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածի, ինչպես նաեւ տվյալ հարցով վարչական ու սահմանադրական դատավարության իրավակարգավորումների միջեւ» (որոշման 7-րդ կետ):

Հարկ համարելով պարզել վիճարկվող նորմում «դատավորի կարգադրությանը չենթարկվելով» ձեւակերպման սահմանադրաիրավական բովանդակությունը՝ սահմանադրական դատարանը գտել է, որ. «դատավորի կարգադրությանը չենթարկվելու հիմքով վիճարկվող նորմում նշված սուբյեկտները կարող են պատասխանատվության ենթարկվել, եթե չեն կատարում դատավորի այն կարգադրությունը, որն օրինական է եւ ուղղված այդ սուբյեկտների կողմից՝ օրենքով սահմանված իրենց դատավարական պարտականությունները կատարելու ապահովմանը: Այսուհանդերձ, «օրինական կարգադրություն» եզրույթն առավել հստակ է եւ խնդիր չի առաջացնում նաեւ կարգադրության օրինականությունը սահմանված կարգով վիճարկելու հնարավորության առումով» (որոշման 7-րդ կետ):

Ի կատարումն ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի հունվարի 14-ի ՍԳ-Ո-851 որոշման պահանջների և ելնելով դրանում արտահայտված իրավական դիրքորոշումների իրացման անհրաժեշտությունից, Ազգային ժողովի կողմից 2010 թվականի հոկտեմբերի 4-ին առաջին ընթերցմամբ ընդունվել են Ազգային ժողովի պատգամավորների՝ օրենսդրական նախաձեռնության կարգով հեղինակած «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» եւ «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» J-880-23.04.2010-J;-010/0 Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը, որոնցով՝ սահմանադրական դատարանի որոշմանը համահունչ, նախատեսվում են համապատասխան փոփոխություններ կատարել հիշյալ օրենսդրական ակտերում:

Մասնավորապես, օրենսդրական նախաձեռնության հեղինակների կողմից առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 343-րդ

հողվածի 1-ին մասն ուժը կորցրած ճանաչել, իսկ նույն հողվածի 2-րդ մասում «դատաքննության մասնակիցներին» բառերը փոխարինել «դատավարությանը մասնակցող անձանց» բառերով:

Այնուհետև, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածում հեղինակների կողմից առաջարկվում է՝

1) 1-ին մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու կամ դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու կամ դատավարական պարտականություններն անհարգելի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու միջոցով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքում դատարանն իրավունք ունի քրեական դատավարությանը մասնակցող անձանց եւ դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ կիրառելու հետևյալ սանկցիաները.»

2) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ երրորդ եւ չորրորդ պարբերություններով՝

«Քրեական դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ նիստերի դահլիճից հեռացումը կարող է կիրառվել ոչ ավելի, քան 36 ժամով, իսկ դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ՝ որոշակի ժամկետով կամ մինչեւ դատաքննության ավարտը:

Քրեական դատավարությանը մասնակցող՝ նիստերի դահլիճից հեռացված անձի փաստաբանի կամ այլ ներկայացուցչի հիմնավորված միջնորդությամբ դատարանն իրավունք ունի մինչեւ սանկցիայի կիրառման ժամկետը լրանալը վերականգնել հեռացված անձի մասնակցությունը դատական նիստին»:

3) 5-րդ մասում «դատավարության մասնակիցների եւ գործին» բառերը փոխարինել «քրեական դատավարությանը» բառերով.

4) 6-րդ մասի առաջին պարբերության առաջին եւ երկրորդ նախադասությունները «կարգադրությունները» բառերից առաջ լրացնել «օրինական» բառերով.

5) 6-րդ մասի առաջին պարբերության երրորդ նախադասությունը «կարգադրությունները» բառից առաջ լրացնել «օրինական» բառով, իսկ «ներկայությամբ» բառից հետո լրացնել «կամ հրապարակումից հետո անհապաղ հանձնվում է նրան» բառերով.

6) 6-րդ մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Եթե դատարանը գտնում է, որ ամբաստանյալը դատարանի նկատմամբ դրսևորել է անհարգալից վերաբերմունք, որն առաջացնում է քրեական պատասխանատվություն, ապա դատավորը սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված սանկցիան ամբաստանյալի նկատմամբ կիրառում է առանց նախազգուշացման եւ գործի քննությունը շարունակվում է ամբաստանյալի բացակայությամբ, սակայն դատավճիռը հրապարակվում է ամբաստանյալի ներկայությամբ կամ հրապարակումից հետո անհապաղ հանձնվում է նրան»:



- 7) 6-րդ մասի երրորդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել.
- 8) 7-րդ մասում «կիրառվում են բացառապես» բառերը փոխարինել «կարող են կիրառվել» բառերով.
- 9) 8-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Դատական տուգանք կիրառելու մասին առաջին ատյանի դատարանի եւ վերաքննիչ դատարանի որոշումները կարող են բողոքարկվել հրապարակվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:».

10) 9-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«9. Եթե դատարանը գտնում է, որ քրեական դատավարությանը մասնակցող կամ դատական նիստին ներկա գտնվող այլ անձը դատարանի նկատմամբ դրսեւորել է անհարգալից վերաբերմունք, որն առաջացնում է քրեական պատասխանատվություն, ապա դատավորը կարող է սույն հոդվածով սահմանված կարգով կարգազանց անձի նկատմամբ կիրառել դատական սանկցիա եւ պարտավոր է քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դիմել դատախազին:»:

Օրենսդրական նախաձեռնության հեղինակների կողմից նույնաբովանդակ փոփոխություններ են առաջարկվում կատարել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում, Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում եւ «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում:

2). «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 14.09.2010 թվականի ՄԴ-Ո-913 որոշմամբ որոշել է.

«1. «Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածն այն մասով, որով առնչվում է Հայաստանում չիրականացվող փոխպատվաստման հանգամանքներում դիակային դոնորից օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ վերցնելուն, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասին եւ 14-րդ հոդվածին հակասող եւ անվավեր»:

Խնդիրը կարելովում էր նրանով, որ վիճարկվող նորմերով չէր երաշխավորվում մարդու մահից հետո նրա մարմնի նկատմամբ արժանապատիվ վերաբերմունքը եւ մահացածի մարմնի իրավական պաշտպանությունը: Բացի դրանից, դիակային դոնորների հետ կապված նոր կարգը մինչեւ օրենսդրական փոփոխությունը գործող կարգի համեմատությամբ ավելի ռիսկային էր եւ հնարավոր բացասական դրսեւորումների կանխարգելման լրացուցիչ երաշխիքներ էր պահանջում:

Սահմանադրական դատարանն արձանագրել է հետեւյալը. « ՀՀ կառավարությունը չկատարելով ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 2-րդ մասի, «Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ

օրենքի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2004թ. ապրիլի 8-ի՝ «Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշման, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 541-Ն որոշման պահանջները, 2002 թվականի ապրիլի 16-ից մինչ օրս չի ընդունել քննության առարկա օրենքով իրեն պատվիրակված բոլոր որոշումները՝ օրենքի կիրարկումն ապահովելու համար: Անցած ութ տարիների ընթացքում տվյալ օրենքի գործողության համար անհրաժեշտ եւ բավարար ենթաօրենսդրական երաշխիքներ չեն ստեղծվել, մասնավորապես, ՀՀ կառավարության կողմից դեռեւս չեն սահմանվել.

- օրգանների եւ հյուսվածքների դոնորների եւ ռեցիպիենտների ռեեստրի գործունեության, տեղեկությունների գրանցման եւ օգտագործման կարգը (օրենքի 2.1-րդ հոդված), այդ թվում՝ ՀՀ վարչապետի 2009թ. մայիսի 18-ի թիվ 397-Ն որոշումից բխող,

- արհեստական եւ կենդանիներից վերցված օրգանների ու հյուսվածքների փոխպատվաստման կարգը, պայմանները եւ սահմանափակումները (**օրենքի 3-րդ հոդված**),

- փոխպատվաստման օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ վերցնելու, մշակելու կանոնները, ինչպես նաև փոխպատվաստումն իրականացնելու կարգը (**օրենքի 4-րդ հոդված**),

- դիակից օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ վերցնելու թույլտվության կարգը եւ պայմանները:

Օրենքով հստակեցված չեն նաև փոխպատվաստման օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ վերցնող, մշակող, փոխպատվաստում թույլատրող եւ իրականացնող բժշկական հաստատությունների **լիցենզավորման իրավական սկզբունքները**, ինչպես նաև փոխպատվաստման որպես բժշկական սպասարկման, **մատչելիության ապահովման տեսանկյունից** այդ գործընթացը ֆինանսավորելու (փոխպատվաստման դիմաց հատուցելու, պետական առողջապահական ծրագրերի շրջանակներում ֆինանսավորելու) հիմնական պայմանները, բացառությամբ այն դեպքերի, որոնք առնչվում են վիրահատության հետ կապված բարդություններին (օրենքի 12-րդ հոդվածի «բ» կետ),

«Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2009թ. մարտի 19-ին ընդունված օրենքով նախատեսվեցին լրացուցիչ իրավապայմաններ՝ արգելելու կենդանի կամ դիակային դոնորից վերցված օրգանների եւ հյուսվածքների առավաճառքը, ապահովելու փոխպատվաստման ոլորտում տեղեկատվական միասնական համակարգի ու դրա օգտագործման սկզբունքների ներդրումը, սակայն դրան համապատասխան իրավական եւ կառուցակարգային համակարգեր չստեղծվեցին ապահովելու անհրաժեշտ եւ երաշխավորված վերահսկողություն փոխպատվաստման՝ որպես բժշկական սպասարկման ոլորտում պետության սահմանադրական խնդիրների կատարման ապահովման նկատմամբ, որոնց լուծումն օրենքի վերոհիշյալ փոփոխությունների ընդունման կապակցությամբ չի արտացոլվել նաև առողջապահական պետական նպատակային ծրագրերում:

ՀՀ-ում փոխպատվաստման պրակտիկայի ուսումնասիրությունը նաև վկայում է, որ այդ բնագավառի իրավակարգավորումը, մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2007թ. ապրիլի 26-ի թիվ 502-Ն որոշմամբ հաստատված ցանկը, անհրաժեշտ է համապատասխանեցնել բժշկական կոնկրետ հաստատություններում փոխպատվաստման իրական գիտատեխնոլոգիական հնարավորություններին՝ ապահովելով այդ բնագավառում բնակչության բժշկական երաշխավորված սպասարկման կազմակերպումն այն ընդհանուր սկզբունքներով, որպիսիք, ի կատարումն ՀՀ Սահմանադրության 38-րդ, 48-րդ (4-րդ կետ) հոդվածների դրույթների, ամրագրված են «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» ՀՀ օրենքում: Կառավարության հիշյալ որոշումը համահունչ չէ քննության առարկա օրենքի պահանջին: Այն դեպքում, երբ օրենքով արգելվում է Հայաստանից դոնորական օրգանների ու հյուսվածքների արտահանումը, կառավարությունն իր այդ որոշմամբ սահմանել է թվով տասնչորս օրգանների ցանկ, երբ դրանցից միայն երկուսի գծով է Հայաստանում փոխպատվաստում իրականացվում: Այս առումով ՀՀ կառավարության 2007թ. ապրիլի 26-ի թիվ 502-Ն որոշմամբ հաստատված ցանկն օրենքի իրավակարգավորման սկզբունքներից չի բխում» (որոշման 7-րդ կետ):

Նկատի ունենալով, որ «Մարդու օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով նախատեսված՝ օրենքի հրապարակումից հարյուր ութսուն օր հետո դրա պաշտոնական ուժի մեջ մտնելու մասին դրույթը գործնականում որեւէ իրավական հետեւանք չի ունեցել եւ չի երաշխավորել օրենքի գործողության համար անհրաժեշտ իրավակարգավորում, սահմանադրական դատարանը, ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության հիմնարար սկզբունքներից ելնելով, գտել է, որ. «... օրենքը չի կարող կիրարկվել առանց դրանով իսկ նախատեսված ենթաօրենսդրական ակտերի ամբողջ փաթեթը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին ու սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներին համապատասխան մշակելու, նախկինում ընդունած որոշումները վերանայելու եւ գործողության մեջ դնելու» (որոշման 8-րդ կետ):

ՀՀ Ազգային ժողովը սահմանադրական դատարանի 14.09.2010թ. ՍԳՈ-913 որոշման ընդունումից հետո տվյալ օրենքում փոփոխություն կատարելու հարցին դեռևս չի անդրադարձել:

3). «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 23.11.2010 թվականի ՍԳՈ-926 որոշմամբ որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 23-րդ հոդվածի 1-ին եւ 5-րդ մասերին հակասող եւ անվավեր»:

Խնդիրը կարելուովում էր նրանով, որ վիճարկվող նորմը հնարավորություն էր

ստեղծում սահմանափակելու նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիության իրավունքն առանց դատարանի որոշման, հիմք ընդունելով միայն տվյալ միջոցառումն իրականացնող օպերատիվ-հետախուզական գործունեության մարմնի որոշումը եւ խոսակցության մասնակիցներից կամ հաղորդակցվողներից մեկի՝ նախապես դրանք լսելու կամ վերահսկելու համաձայնությունը: Եվ դա այն դեպքում, երբ ՀՀ Սահմանադրությունը նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման կարգից որեւէ բացառություն չի նախատեսում:

Անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքին, այն է՝ խոսակցության մասնակիցներից կամ հաղորդակցվողներից մեկի համաձայնությամբ նամակագրությունը, հեռախոսային խոսակցությունները, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումներն առանց դատարանի որոշման լսելու կամ վերահսկելու հնարավորությանը, սահմանադրական դատարանն արձանագրել է, որ. «... տվյալ դեպքում օրենսդիրը ղեկավարվել է այն տրամաբանությամբ, որ անձը կամովին է հրաժարվում իր՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքից: ... վերը նշված դեպքը նախատեսելիս օրենսդիրը հաշվի չի առել մի շարք հանգամանքներ:

**Նախ**, նկատի ունենալով, որ ՀՀ օրենսդրությամբ անձի համաձայնությամբ նրա հեռախոսային եւ այլ հաղորդումները լսելն իրականացվում է միայն պաշտպանվող անձի պարագայում, չի բացառվում, որ հիշյալ միջոցառումների արդյունքում ձեռք բերված տեղեկատվությունն օգտագործվելու է համաձայնություն տված անձի ընդդիմախոսի դեմ, որի՝ ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածով սահմանված իրավունքներն այս պարագայում կարող են խախտվել: Արդյունքում, միեւնույն իրավական գործիքը կարող է մի դեպքում օգտագործվել որպես իրավական պաշտպանության միջոց, մեկ այլ դեպքում հանդես գալ որպես մարդու իրավունքների խախտման կամ ոչ իրավաչափ սահմանափակման միջոց:

**Երկրորդ**, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «...4. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ, 12-րդ եւ 15-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները կարելի է անցկացնել միայն այն դեպքերում, երբ անձը, ում նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կասկածվում է ծանր եւ առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ, եւ եթե կան հիմնավոր ապացույցներ, որ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից սույն օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է»: Այս նորմը ենթադրում է, որ հիշյալ միջոցառումները պետք է կիրառվեն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում եւ միայն այն պարագայում, երբ պետական իշխանության մարմինների համար անհրաժեշտ տեղեկատվություն ձեռք բերելու այլընտրանքային տարբերակը բացակայում է: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասում նշված երկու նախապայմանների առկայության կամ բացակայության հարցը ենթակա է գնա-

հատման, ինչը կարող է կատարվել միայն դատական վերահսկողության շրջանակներում:

**Երրորդ, ՀՀ** Սահմանադրության 23-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների սահմանափակման համար անհրաժեշտ երեք նախապայմաններից, այն է՝ «օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով, դատարանի որոշմամբ», ՀՀ Սահմանադրությամբ որեւէ բացառություն չի նախատեսվում:

... վիճարկվող 284-րդ հոդվածի 1-ին մասը՝ խոսակցության մասնակիցներից կամ հաղորդակցվողներից մեկի համաձայնությամբ նամակագրությունը, հեռախոսային խոսակցությունները, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումներն առանց դատարանի որոշման լսելու կամ վերահսկելու իրավական հնարավորություն վերապահելու մասով, ներքին հակասության մեջ է գտնվում նույն օրենսգրքի 14, 241 եւ 281-րդ հոդվածների դրույթների հետ:

**Չորրորդ,** վիճարկվող նորմը դուրս է տվյալ հոդվածի իրավակարգավորման շրջանակներից: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածը սահմանում է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննարկման կարգը: Խոսքը վերաբերում է ներկայացված միջնորդության քննարկմանը, եւ տվյալ հոդվածի 2-7-րդ մասերով նախատեսվում է դատարանում դրա քննության կարգը, իսկ 8-րդ մասը սահմանում է հատուկ իրավիճակներում հրատապ գործողությունների կատարման եւ դրանց հետ կապված դատական վերահսկողության առանձնահատկությունները: Հոդվածի 1-ին մասը բացարձակապես չի առնչվում միջնորդության քննարկման կարգին եւ չի բխում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի պահանջներից» (որոշման 6-րդ կետ):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված իրավունքը ենթակա է սահմանափակման ոչ միայն Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով, այլ նաեւ Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով, սահմանադրական դատարանը հարկ համարելով անդրադառնալ սահմանափակում նախատեսող սահմանադրական այս երկու նորմերի հարաբերակցության հարցին, արձանագրել է. «Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասը հղում է կատարում օրենքին եւ չի բացառում, որ օրենքով նախատեսվի ոչ միայն կոնկրետ իրավունքի սահմանափակման թույլատրելիությունը, այլ նաեւ՝ սահմանափակման դեպքերը եւ կարգը: Ընդ որում, չի բացառվում, որ օրենքը կոնկրետ իրավունքի սահմանափակման համար որպես պարտադիր նախապայման սահմանի դատարանի որոշման առկայությունը: Այս վերջին պայմանի սահմանումը, տարբեր հնարավոր սահմանափակումների առնչությամբ, սահմանադիրը թողել է օրենսդրի հայեցողությանը: Սակայն ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված իրավունքի սահմանափակման պարագայում դատարանի որոշման առկայության պարտադիր նախապայմանը չի թողնվել օրենսդրի հայեցողությանը, այլ նախատեսվել է հենց Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասով: Հետեւաբար, Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված՝ իրավունքի սահմանափակմանը վերաբերող նորմն օրենսդրի կողմից պետք է ելակետ ընդունվի Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասի հիման

վրա իրականացվող հնարավոր իրավակարգավորման շրջանակներում» (որոշման 7-րդ կետ):

ՀՀ Ազգային ժողովը սահմանադրական դատարանի 2010 թվականի նոյեմբերի 23-ի ՍԳՈ-926 որոշման ընդունումից հետո տվյալ օրենսգրքում փոփոխություն կատարելու հարցին դեռեւս չի անդրադարձել, սակայն այս դեպքում եւս կարծում ենք, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի մշակմամբ նաեւ կկատարվեն սահմանադրական դատարանի հիշատակված որոշման պահանջները եւ կիրացվեն դրանում արտահայտված իրավական դիրքորոշումները:

**ՀՀ ԱԺ պատգամավորության թեկնածուների դիմումների հիման վրա ընդունված սահմանադրական դատարանի որոշումներն ու դրանց կատարումը**

Սահմանադրական դատարանում մուտքագրված միակ դիմումը վերաբերում է «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին» թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 17-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ» գործին: Դիմումը 21.01.2010թ. ներկայացրել էր Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով թիվ 10 ընտրատարածքի պատգամավորության թեկնածու Ն. Փաշինյանը: Տվյալ գործով սահմանադրական դատարանն իր՝ 23.04.2010թ. ՍԳՈ-880 որոշմամբ որոշել է.

«1. «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին» թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 17-Ա որոշումը թողնել ուժի մեջ»:

Տվյալ որոշման 7-րդ կետում սահմանադրական դատարանը գտել է, որ. «... ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքներով ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշման հետ կապված վեճի քննության շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանն իրավագոր չէ դատաքննության առարկա դարձնել ամբաստանյալի կարգավիճակում գտնվող պատգամավորության թեկնածուի նկատմամբ կիրառված խափանման միջոցի օրինականության շուրջ առաջացած վեճը եւ գնահատական տալ քրեական գործի քննության շրջանակներում դատարանի կայացրած որոշմանը, որն օրենքով սահմանված կարգով բողոքարկման առարկա կարող էր դառնալ միայն ընդհանուր իրավասության վերադաս դատարանում, ինչն իրականացվել է: ՀՀ սահմանադրական դատարանն ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարանների համար դատական նոր ատյան չէ: Իսկ ՀՀ Սահմանադրության համաձայն՝ դատական ակտերը սահմանադրական վերահսկողության օբյեկտ չեն հանդիսանում: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 8 մարտի 2008թ. ՍԳՈ-736 որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ սահմանադրական դատարանի՝ գործի փաստական հանգամանքները կողմերի դիրքորոշումներից անկախ բացահայտելու պարտա-

## ՀԱՂՈՐԳՈՒՄ

կանությունն ունի որոշակի հստակ սահմաններ, եւ այդ սկզբունքը չի լիազորում սահմանադրական դատարանին ստանձնելու իրավապահ այլ մարմինների (դատախազական կամ քննչական) լիազորություններ, փոխարինել արդարադատական կամ վարչական այլ մարմիններին: Սահմանադրական դատարանը սույն գործի քննության շրջանակներում հիմք է ընդունում այն իրողությունը, որ տվյալ կարգավիճակում դիմողն անարգել իրացրել է ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված իր իրավունքները»:

### ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ՆԱԽՈՐԳ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԸ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ

2010 թվականի ընթացքում եւս շարունակվել են ՀՀ իրավական դաշտի բարեփոխումները, որոնցով հաշվի են առնվել նաեւ սահմանադրական դատարանի՝ նախորդ տարիների ընթացքում ընդունած որոշումները: Մասնավորապես. ՀՀ սահմանադրական դատարանի՝ **2007** թվականի ապրիլի 11-ի ՍԳՈ-691, **2008** թվականի մայիսի 13-ի ՍԳՈ-753, **2008** թվականի սեպտեմբերի 9-ի ՍԳՈ-758, **2008** թվականի հոկտեմբերի 8-ի ՍԳՈ-765, **2008** թվականի հոկտեմբերի 21-ի ՍԳՈ-767, **2008** թվականի նոյեմբերի 25-ի ՍԳՈ-780, **2009** թվականի փետրվարի 24-ի ՍԳՈ-792, **2009** թվականի հուլիսի 28-ի ՍԳՈ-818, **2009** թվականի հոկտեմբերի 13-ի ՍԳՈ-833, **2009** թվականի հոկտեմբերի 27-ի ՍԳՈ-836, **2010** թվականի ապրիլի 13-ի ՍԳՈ-873, **2010** թվականի հունիսի 15-ի ՍԳՈ-896, **2010** թվականի հուլիսի 7-ի ՍԳՈ-902 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումներին համահունչ փոփոխություններ եւ լրացումներ են կատարվել ՀՀ դատական, քաղաքացիական դատավարության, քրեական դատավարության, վարչական դատավարության, աշխատանքային օրենսգրքերում, «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կազմակերպություններում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՀՀ օրենքում, ընդունվել է «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» նոր խմբագրությամբ օրենք:

Առանձին դեպքերում ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները լիարժեք չեն իրացվել: Մասնավորապես, դատական ակտի պատճառաբանվածության վերաբերյալ **2007** թվականի ապրիլի 11-ի ՍԳՈ-691 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում 2007 թվականի ընթացքում կատարվեցին փոփոխություններ, սակայն դրանք լիարժեքորեն չէին արտացոլում ՍԳՈ-691 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները: Նշված որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներն առավել ամբողջական կերպով արտացոլվեցին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում **2009** թվականի հուլիսի 28-ի ՍԳՈ-818 որոշման ընդունումից հետո, երբ սահմանադրական դատարանը կրկին անդրադարձավ դատական ակտի պատճառաբանվածության հարցին:

Դրանից հետո՝ 2010 թվականին նշված օրենսգրքում կատարվեցին համապատասխան փոփոխություններ:

Նույնը վերաբերում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքին, որտեղ սահմանադրական դատարանի 2007 թվականի ապրիլի 9-ի ՍԳՈ-690 որոշումից հետո կատարվեցին փոփոխություններ, սակայն նշված որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներն առավել ամբողջական կերպով արտացոլվեցին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում 2008 թվականի հոկտեմբերի 8-ի ՍԳՈ-765 որոշումից հետո, երբ սահմանադրական դատարանը կրկին անդրադարձավ դատական ակտի պատճառաբանվածության հարցին:

Նույնը վերաբերում է նաև ՀՀ դատական օրենսգրքին, որտեղ դատական ակտի պատճառաբանվածության պարտադիր պայմանի վերաբերյալ համապատասխան փոփոխությունները կատարվեցին միայն 2010 թվականին:

Մեկ այլ օրինակ՝ 24.07.2007թ. ՍԳՈ-710 որոշման հիման վրա ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչվեց լրացուցիչ նախաքննության ինստիտուտը: ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը 28.11.2007թ. ՀՕ-270-Ն ՀՀ օրենքով լրացվեց 309.1-րդ հոդվածով, սակայն օրենսդիրը, նշված հոդվածով օրենսգիրքը լրացնելիս ոչ ամբողջությամբ էր հաշվի առել 24.07.2007թ. ՍԳՈ-710 որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները: Դա առիթ հանդիսացավ, որպեսզի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի որոշ դրույթներ վիճարկվեն սահմանադրական դատարանում: Նոր դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը, 24.07.2007թ. ՍԳՈ-710 որոշման մեջ արտահայտած իր դիրքորոշումներին հարազատ, 02.04.2010թ. ՍԳՈ-872 որոշմամբ ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչեց ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 5-րդ մասը, որը թաքնված կերպով գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու եւ դատարանին մեղադրական թեքում տալու վտանգ էր պարունակում:

Սահմանադրական դատարանի հիշատակված որոշումների պահանջների կատարմանը եւ դրանցում արտահայտված իրավական դիրքորոշումների իրացմանը, կարծում ենք, ուղղված կլինեն նաև Հայաստանի Հանրապետության Նախագահի 2009 թվականի ապրիլի 21-ի՝ «Գատախրավական բարեփոխումների 2009-2011 թվականների ռազմավարական գործողությունների ծրագիրը եւ ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու, ինչպես նաև աշխատանքային խումբ ստեղծելու մասին» ՆԿ-59-Ն թվակիր կարգադրությամբ հաստատված այն միջոցառումների իրականացումը, որոնք նախատեսում են համապատասխան օրենսդրական ակտերի մշակում ու ընդունում կամ դրանցում անհրաժեշտ փոփոխությունների կատարում:

Սահմանադրական դատարանի որոշումների պահանջների կատարման եւ դրանցում արտահայտված իրավական դիրքորոշումների ոչ միատեսակ ընկալման օրինակ է հանդիսանում նաև այն, որ 2009 թվականի փետրվարի 24-ի ՍԳՈ-792 որոշման հիման վրա ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչվեց ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով ամրագրված դրույթը, որով նախատեսվում էր գործատուի նախաձեռնությամբ աշխա-



## ՀԱՂՈՐԳՈՒՄ

տանքային պայմանագրի լուծումն աշխատողի կենսաթոշակային տարիքը լրանալու հիմքով: Սակայն ՀՀ Ազգային ժողովը 2010 թվականի հունիսի 24-ին ընդունել է «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-117-Ն օրենքը, ըստ որի՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածը նոր խմբագրությամբ շարադրելիս ոչ ամբողջությամբ հաշվի առնվեց 2009 թվականի փետրվարի 24-ի ՍԳ-Ո-792 որոշման պահանջները եւ դրանում սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները: Դա առիթ հանդիսացավ, որպեսզի Ազգային ժողովի պատգամավորների եւ կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով կրկին անգամ ներկայացվի ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի խնդրո առարկա դրույթները վերանայելու մասին օրինագիծ՝ սահմանադրական դատարանի որոշմանն այն համահունչ դարձնելու նպատակով:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դատական սահմանադրական վերահսկողության բնագավառում տարվա արդյունքների ամփոփումից հետեւում է.

**I. Սահմանադրական դատարանի որոշումների պատշաճ կատարումը երաշխավորելու համար դատարանը հարկ է համարում կրկին շեշտել, որ անհրաժեշտ է օրենսդրորեն ապահովել, որպեսզի.**

ա) սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում հակասահմանադրական ճանաչված ակտն ընդունած պետական մարմինը հատուկ քննության առարկա դարձնի իր կողմից ընդունված ակտը՝ փոխկապակցված դրույթներով հանդերձ, ՀՀ Սահմանադրության պահանջներին համապատասխանեցնելու հարցը եւ ապահովի, որպեսզի իրավական վակուում չառաջանա:

Խնդրի հրատապությունն ավելի է ընդգծվում, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ սահմանադրական դատարանի՝ նախկինում ընդունած որոշումների մի մասը վերաբերում է մարդու դատական պաշտպանության, արդար դատաքննության, դատական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքների իրացմանը, եւ, այդքանով հանդերձ, առնչվում Հայաստանում իրականացվող դատաիրավական բարեփոխումներին: Որպես օրինակ կարող են ծառայել 2007 թվականի ապրիլի 11-ի ՍԳ-Ո-691, 2008 թվականի մայիսի 13-ի ՍԳ-Ո-753, 2008 թվականի սեպտեմբերի 9-ի ՍԳ-Ո-758, 2008 թվականի հոկտեմբերի 8-ի ՍԳ-Ո-765, 2008 թվականի հոկտեմբերի 21-ի ՍԳ-Ո-767, 2008 թվականի նոյեմբերի 25-ի ՍԳ-Ո-780, 2009 թվականի փետրվարի 24-ի ՍԳ-Ո-792, 2009 թվականի հուլիսի 28-ի ՍԳ-Ո-818, 2009 թվականի հոկտեմբերի 13-ի ՍԳ-Ո-833, 2009 թվականի հոկտեմբերի 27-ի ՍԳ-Ո-836 որոշումները, որոնց հիման վրա ՀՀ օրենքներում փո-

փոփոխությունները կատարվել են սահմանադրական դատարանի համապատասխան որոշումներն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկից երեք տարվա ընթացքում:

Միաժամանակ, սահմանադրական դատարանը ողջունելի է համարում այն իրողությունը, որ 2010 թվականի ընթացքում կայացված՝ ՍԳ-Ո-873, ՍԳ-Ո-896, ՍԳ-Ո-902 որոշումների հիման վրա համապատասխան օրենսդրական փոփոխությունները կատարվել են նույն 2010 թվականի ընթացքում: Խոսքը վերաբերում է ՀՀ դատական, վարչական դատավարության եւ աշխատանքային օրենսգրքերում կատարված փոփոխություններին:

բ) պետական մարմինները եւ պաշտոնատար անձինք սահմանադրական դատարանի որոշումների կատարումը երաշխավորեն՝ հատկապես հաշվի առնելով դատարանի իրավական դիրքորոշումները, որոնք արտահայտված են սահմանադրական դատարանի որոշումների պատճառաբանական մասերում եւ որոնք սահմանադրական իրավունքի աղբյուր են եւ իրենց բնույթով հանդիսանում են սահմանադրական դրույթների պաշտոնական մեկնաբանություն: Միջազգային սահմանադրական արդարադատության պրակտիկան միարժեքորեն վկայում է, որ սահմանադրական դատարանն իր որոշման մեջ Սահմանադրության նորմի իրավական բովանդակության բացահայտման կամ օրենքի նորմի սահմանադրական բովանդակության բացահայտման միջոցով ձեւակերպում է իր իրավական դիրքորոշումը, որը պարտադիր բնույթ ունի ինչպես իրավակիրառողների, այնպես էլ օրինաստեղծ մարմինների համար:

**II. Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները հաշվի չառնելը որոշ դեպքերում դրսեւորվում է ոչ թե անգործությամբ, այլ ավելին՝ գործողությամբ:** Խոսքը վերաբերում է այն դեպքերին, երբ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա օրենքներում կատարվում են չհամակարգված փոփոխություններ, այսինքն՝ դրանք տարածվում են օրենքով սահմանված դեպքերի միայն մի մասի վրա, իսկ մյուս մասի առնչությամբ կրկին ուղղակիորեն ամրագրվում է արդեն իսկ հակասահմանադրական ճանաչված իրավակարգավորումը: Օրինակ, սահմանադրական դատարանն իր 2007թ. ապրիլի 11-ի ՍԳ-Ո-691 որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանման պարտադիր պայման չնախատեսելու վերաբերյալ իրավակարգավորումը ճանաչել է հակասահմանադրական, սակայն այդ որոշման հիման վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում օրենսդիրը սահմանադրական դատարանի՝ որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումներին համապատասխանող նոր իրավակարգավորումը տարածել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 3-րդ կետերով սահմանված երկու դեպքերի վրա, իսկ 1 դեպքի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դեպքի համար, դարձյալ սահմանել է արդեն իսկ հակասահմանադրական ճանաչված նույն իրավակարգավորումը, որը վերջնականապես ուղղվեց 2010 թվականի ընթացքում՝ ՍԳ-Ո-818 որոշումից հետո: ՀՀ դատական օրենս-

գրքում համապատասխան փոփոխությունները եւս կատարվեցին 2010 թվականի ընթացքում:

Մյուս օրինակը վերաբերում է գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտին, որը հակասահմանադրական ճանաչվեց սահմանադրական դատարանի 02.04.2010թ. ՍԳՈ-872 որոշմամբ, սակայն, ինչպես նշվեց, քանի որ օրենսդիրը ոչ ամբողջությամբ էր հաշվի առել սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, այդ հանգամանքն առիթ հանդիսացավ, որպեսզի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարված լրացումը՝ 309.1-րդ հոդվածը, կրկին անգամ քննության առարկա դառնա սահմանադրական դատարանում:

**III.** Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների չկատարումը պայմանավորված է լինում նաեւ այն հանգամանքով, որ իրավակիրառողները միատեսակ չեն ընկալում դրանք, ինչի արդյունքում նշված իրավական դիրքորոշումների հիման վրա կատարված փոփոխությունները մասնակիորեն են ապահովում սահմանադրական դատարանի որոշումների կատարումը: Ուստի սահմանադրական դատարանը նույնպես ավելի մեծ ուշադրություն է հատկացնելու իրավական դիրքորոշումների առավել հստակ ձեւակերպումներին:

Միեւնույն ժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ այն ողջունելի իրողությունը, որ չնայած առանձին օրենքների նորմերի վերաբերյալ սահմանադրական դատարանը որոշում չի կայացրել, սակայն օրենսդրի կողմից տվյալ օրենքը փոփոխվել է՝ հաշվի առնելով մեկ այլ օրենքում տեղ գտած նույնաբովանդակ նորմի վերաբերյալ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները: Մասնավորապես, խոսքը վերաբերում է նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման ինստիտուտին. չնայած տվյալ հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումները կայացվել են ՀՀ քրեական եւ քաղաքացիական դատավարության օրենսգրքերի առնչությամբ, սակայն օրենսդիրը համապատասխան փոփոխություններ կատարել է նաեւ ՀՀ վարչական դատավարության եւ ՀՀ դատական օրենսգրքերում: Որպես օրինակ կարող են նշվել նաեւ վարչական գործերով վճռաբեկ դատարանի գործառույթներին, վարչական վերաքննիչ դատարան ստեղծելու անհրաժեշտության եւ դատական ակտի պատճառաբանվածության վերաբերյալ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, որոնք արտահայտվել են, մասնավորապես, ՍԳՈ-690, ՍԳՈ-691, ՍԳՈ-765, ՍԳՈ-780, ՍԳՈ-818, ՍԳՈ-873 որոշումներում: Չնայած տվյալ հարցերի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումները կայացվել են ՀՀ քրեական, քաղաքացիական եւ վարչական դատավարության օրենսգրքերի առնչությամբ, սակայն օրենսդիրը համապատասխան փոփոխություններ կատարել է նաեւ ՀՀ վարչական դատավարության (նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման ինստիտուտի առնչությամբ) եւ դատական օրենսգրքերում:

Սահմանադրական դատարանը ողջունելի է համարում Հայաստանի Հանրապետությունում վճռաբեկ դատարանի կողմից առաջին անգամ ձեւավորված

այն պրակտիկան, երբ վճռաբեկ դատարանը վարույթ է ընդունում մի բողոք, որը ներկայացվել է ոչ թե օրենքի նորմի՝ սահմանադրական դատարանի կողմից հակասահմանադրական ճանաչվելու արդյունքում, այլ պարզապես հաշվի առնելով տվյալ որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները: Խոսքը վերաբերում է ««Մելտեքս» ՍՊԸ-ի եւ քաղաքացիներ Սերինե Ֆլջյանի, Իրինա Օգանեզովայի, Աննա Բադրասարյանի եւ Ազնեսա Բադրասարյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.28-րդ հոդվածի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով 23.02.2010թ. կայացված ՍԳՈ-866 որոշմանը, որի եզրափակիչ մասի 1-ին կետի երկրորդ պարբերությունում սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «... նախ՝ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳՈ-758 որոշման 13-րդ կետում արտահայտած իրավական դիրքորոշման եւ եզրափակիչ մասի 5-րդ կետի հիմքով ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր է ճանաչվել նաեւ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված ՀՀ օրենքի (ՀՕ-277-Ն) 72-րդ հոդվածում ընդգրկված 204.28-րդ հոդվածը, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից 2008 թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված՝ ինչպես ՀՕ-233-Ն, այնպես էլ դրան հաջորդող որեւէ այլ օրենքով դեռեւս ՀՀ Սահմանադրությանը չի համապատասխանեցվել, երկրորդ՝ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2008 թվականի ապրիլի 15-ի ՍԳՈ-751 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի պահանջների հիմքով սպառված չպետք է համարվի սույն գործի առարկայի շրջանակներում նոր հանգամանքներով իրավասու դատարան դիմելու շահագրգիռ անձանց իրավունքը»:

**IV.** Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ինչպես նշվել է նախորդ հաղորդման մեջ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի պահանջների կատարումը՝ օրենքով սահմանված պատասխանատվության միջոցներ նախատեսելու առումով, շարունակում է ձեռնարկել կրել, քանի որ նշված պատասխանատվության միջոցները դեռեւս օրենքով հստակ սահմանված չեն: Նույնը վերաբերում է նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի պահանջներին: Ժամանակն է, որ այս հարցում օրենսդիրը դրսեւորի կոնկրետ մոտեցում:

**V.** Սահմանադրական դատարանում անհատական դիմումների հիման վրա գործերի քննությունը վկայում է, որ քիչ չեն այն դեպքերը, երբ դատական մարմինների կողմից խախտվում են մարդկանց՝ հատկապես ՀՀ Սահմանադրության 18-րդ եւ 19-րդ հոդվածներում ամրագրված իրավունքները: Այս վիճակը հիմնականում պայմանավորված է ոչ թե օրենքների նորմերի սահմանադրականության խնդրով, այլ օրենսդրական բացերով ու իրավական նորմի կիրառման հետ կապված խնդիրներով: Այդ մասին են վկայում նաեւ Հայաստանի Հանրապետության դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ընդունած վճիռները:

**ՀԱՂՈՐԳՈՒՄ**

Միջազգային պրակտիկան վկայում է, որ տվյալ իրավիճակներում լավագույն լուծումն այն է, երբ իր կոչմանը համապատասխան սահմանադրական դատարանն ապահովում է մարդու սահմանադրական իրավունքների անմիջական գործողությունը, վերականգնելով այն՝ ցանկացած իրավական ակտով այդ իրավունքները ոտնահարելու դեպքում: Ինչպես արձանագրվեց Վենետիկի հանձնաժողովի 2010թ. դեկտեմբերի 17-ի լիազումար նիստում, անհատական սահմանադրական գանգատի լիարժեք եւ ամբողջական ինստիտուտի ներդրումը ոչ միայն էապես բարձրացնում է իրավունքների դատական պաշտպանության ներպետական համակարգերի արդյունավետությունը, այլև նպաստում է վերպետական համակարգերի, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գործունակության ամրապնդմանը: Յավոք, վերջին սահմանադրական փոփոխություններով Հայաստանը որդեգրեց նախորդ դարի 80-ական թվականներին եվրոպական երկրներին բնորոշ՝ ոչ լիարժեք սահմանադրական վերահսկողության համակարգ: Այսուհանդերձ, մինչևի հետագա սահմանադրական բարեփոխումները, օրենսդիր մարմնի հատուկ ուշադրության առարկան պետք է լինեն հատկապես դատավարական ընթացակարգերի այնպիսի բարեփոխումները, որպեսզի առավելագույնս երաշխավորվեն մարդկանց համար դատարանի մատչելիության եւ արդար դատավարության սահմանադրական իրավունքները: Բացի դրանից, նման իրավիճակներում օրենսդրորեն անհրաժեշտ է նախատեսել նաեւ վնասի փոխհատուցման գործուն ինստիտուտ, ինչն առկա է եվրոպական մի շարք երկրներում (ուսանելի կարող է դիտվել հատկապես Սլովակիայի փորձը):

**VI.** Շարունակում է ձեւական բնույթ կրել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի եւ ՀՀ կառավարության պաշտոնական ներկայացուցիչների դերը ՀՀ սահմանադրական դատարանում, ինչը եւս բազմիցս հիշատակվել է սահմանադրական դատարանի ընդունած որոշումների կատարման վերաբերյալ տարեկան հաղորդումներում:

Սահմանադրական դատարանի նիստերին ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի եւ ՀՀ կառավարության պաշտոնական ներկայացուցիչների ներկա գտնվելու ինստիտուտն ինքնանպատակ չէ: Այն պակաս դեր չի կատարում սահմանադրական վերահսկողության համակարգում, եթե հաշվի առնենք, որ այդ համակարգը չի սահմանափակվում միայն սահմանադրական դատարանով: Սահմանադրական վերահսկողության համակարգը ներառում է նաեւ, ի թիվս այլոց, այնպիսի սահմանադրական ինստիտուտներ, ինչպիսիք են պետության գլուխը, օրենսդիր եւ գործադիր մարմինները:



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՎ ԿԱՐԱՊԵՏ ՌՈՒԲԵՆՅԱՆԻ  
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 35-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ  
67-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

30 մարտի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուգյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող կողմի ներկայացուցիչներ Ա. Զեյնալյանի, Ա. Դազարյանի, պատասխանող կողմի ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ Արամ Սարգսյանի եւ Կարապետ Ռուբինյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 67-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ Ա. Սարգսյանի եւ Կ. Ռուբինյանի՝ 15.12.2009թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց .**

**1.** Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հուլիսի 1-ին, Հայաստա-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

նի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածը, որը վերնագրված է «Քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքները», վիճարկվող 2-րդ մասում սահմանում է. «Քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, իսկ գործի վարույթը ենթակա է կարճման՝ կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու արդյունքում, եթե սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները»:

Վիճարկվող դրույթը փոփոխության է ենթարկվել 25.05.06թ. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-91-Ն ՀՀ օրենքով:

Օրենսգրքի՝ արդարացվածին պատճառված վնասի հատուցման կարգը սահմանող 67-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ վիճարկվող դրույթով սահմանված է. «Արդարացվածին պատճառված վնասը հատուցվում է քաղաքացիական դատավարության կարգով»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին: ՀՀ հատուկ քննչական ծառայության հատուկ կարեւորության գործերով ավագ քննիչի՝ 12.12.2008թ. եւ 13.12.2008թ. «Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» որոշումներով համապատասխանաբար՝ դիմողներ Ա. Սարգսյանի եւ Կ. Ռուբինյանի նկատմամբ դադարեցվել է քրեական հետապնդումը՝ հանցագործության կատարմանը նրանց մասնակցությունն ապացուցված չլինելու հիմքով: Դիմողները քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքի առնչությամբ բողոքարկել են նշված որոշումները ՀՀ գլխավոր դատախազին: Դիմողների բողոքները մերժվել են: Դիմողների անունից 17.01.2009թ. եւ 18.01.2009թ. բողոքներ են ներկայացվել Երեսան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան: Վերջինս իր՝ 16.02.2009թ. եւ 09.03.2009թ. որոշումներով մերժել է համապատասխանաբար՝ դիմողներ Ա. Սարգսյանի եւ Կ. Ռուբինյանի անունից ներկայացված բողոքները: Առաջին ատյանի դատարանի նշված որոշումները բողոքարկվել են ՀՀ քրեական վերաքննիչ դատարան: Վերաքննիչ դատարանը 19.04.2009թ. եւ 11.05.2009թ. կայացրել է որոշումներ, որոնցով մերժել է վերաքննիչ բողոքները: Վերաքննիչ դատարանի որոշումների դեմ ներկայացվել են վճռաբեկ բողոքներ: Վճռաբեկ դատարանը բողոքները վերադարձրել է:

3. Ըստ դիմողների՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի պահանջներին: Դիմողների պնդմամբ՝ այդ հակասությունը դրսևորվում է նրանում, որ վիճարկվող դրույթով նախատեսված՝ քրեական գործը կարճելու եւ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքի կիրառմամբ ընդունված ակտերն ընթերցողի մոտ չփարատված կասկածների մասին համոզմունք են ձեւավորում, ինչն անհամատեղելի է անմեղության կանխավարկածի սկզբունքի հետ: Դիմողները գտնում են, որ վիճարկվող դրույթում նշված հիմքով գործի կարճման դեպքում վարույթն իրականացնող մարմնի սուբյեկտիվ գիտակցու-

թյան մեջ շարունակում է պահպանվել հանցագործությանը մեղադրյալի մասնակցության փաստի վերաբերյալ կասկածը, որը հիմնավորող ապացույցները բավարար չեն:

Օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրականությունը դիմողները վիճարկում են հետևյալ տեսանկյունից.

ա/ վիճարկվող դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների առաջին մասերի պահանջներին, քանի որ բացառում է միեւնույն դատաքննության շրջանակներում միմյանց հետ կապված տարբեր պահանջների քննության ու լուծման հնարավորությունը: Իրենց այս պնդումը դիմողները հիմնավորում են՝ հղում կատարելով, ի թիվս այլնի, նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-787 որոշմանը,

բ/ ըստ դիմողների՝ վիճարկվող դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի առաջին մասի պահանջներին, քանի որ չի նախատեսում արդարացվածին պատճառված վնասի հատուցման արտադատարանական կարգ: Իրենց այս պնդումը դիմողները հիմնավորում են նրանով, որ Սահմանադրության 18-րդ հոդվածը թույլ է տալիս իրավունքների եւ ազատությունների իրավական պաշտպանության նպատակով դիմել ոչ միայն դատական, այլեւ պետական այլ մարմինների՝ տվյալ պարագայում արդարացվածին պատճառված վնասի հատուցման հարցն արտադատարանական կարգով լուծելու համար,

գ/ դիմողները գտնում են նաեւ, որ վիճարկվող դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների առաջին մասերի պահանջներին, քանի որ չի նախատեսում արդարացվածին պատճառված բարոյական վնասի նյութական եղանակով հատուցման ինստիտուտ:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողների փաստարկների դեմ, գտնում է, որ վիճարկման առարկա դրույթն ուղղակիորեն բխում է ՀՀ քրեական դատավարության մրցակցային բնույթից, երբ քրեական դատավարությունն իրականացվում է հստակ սահմանված դատավարական ընթացակարգով: Եթե տվյալ ընթացակարգի շրջանակներում օրենքով սահմանված կարգով անձի մեղավորությունը չի ապացուցվում, անձը պահպանում է անմեղի իր օբյեկտիվ կարգավիճակը: Դա է պատճառը, որ քրեական դատավարության օրենսգիրքը պարտավորեցնում է վարույթն իրականացնող մարմնին յուրաքանչյուր դեպքում դադարեցնել քրեական հետապնդումը, եթե անձի մեղավորությունը չի ապացուցվել:

Պատասխանողի կարծիքով, ինչպես քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով, այնպես էլ 2-րդ մասով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում գործի վարույթը կարճելը եւ քրեական հետապնդումը դադարեցնելը միշտ ենթադրում են մեղադրյալի լիովին արդարացում՝ դրանից բխող բոլոր իրավական հետեւանքներով: Ընդ որում, իրավական հետեւանքների տեսանկյունից որեւէ տարբերակում չի դրվում, թե քրեական հետապնդումը որ արդարացնող հիմքով է դադարեցվել, եւ անձն օգտվում է քր. դատ. օր-ի 66-րդ հոդվածով երաշխավորված՝ արդարացվածի բոլոր իրավունքներից:

Պատասխանողը փաստում է, որ քրեական հետապնդումը դադարեցվում է ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքերով, եթե պարզվում է, որ հանցագործության դեպքը տեղի է ունեցել եւ բովանդակում է հանցակազմի հատկա-



**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

նիշներ, բայց կատարել է ոչ թե մեղադրյալը, այլ մեկ այլ անձ: Ըստ պատասխանողի՝ դրանով է պայմանավորված, որ քրեադատավարական օրենսդրությամբ հանցակազմի բացակայության հիմքերի հետ նախատեսվեց եւս մեկ հիմք՝ հանցագործության կատարման անձի մասնակցությունն ապացուցված չլինելը:

ՀՀ քր. դատ. օր-ի 67-րդ հոդվածի 3-րդ մասի առնչությամբ պատասխանողը գտնում է, որ դիմողի կողմից ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳՈ-787 որոշման վկայակոչումն արդարացված չէ, քանի որ այնտեղ խոսքը վերաբերում է միմյանց հետ փոխկապակցված հարաբերությունների ընդդատության կանոններին: Միաժամանակ կարծիք է արտահայտում, որ դիմողի առաջարկած իրավակարգավորումն անհնարին կլինի իրականացնել այն պարագայում, երբ մեղադրյալն արդարացվածի կարգավիճակ է ձեռք բերում մինչդատական վարույթի ընթացքում:

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածում ամրագրված՝ անմեղության կանխավարկածի սկզբունքը պահանջում է հանցագործության կատարման մեջ մեղադրվողին համարել անմեղ այնքան ժամանակ, քանի դեռ նրա մեղավորությունը չի ապացուցվել օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Այս սկզբունքի էությունն անձի մեղքը բացառապես դատական կարգով հաստատելու երաշխավորումն է, այսինքն՝ այս սկզբունքի ուժով անձի մեղքը կարող է հաստատվել բացառապես քրեական դատավարության արդյունքում եւ միայն դատական ակտով: Անմեղության կանխավարկածի սկզբունքը պահանջում է նաեւ, որ անձի նկատմամբ կիրառվող դատավարական միջոցները պատժի տարրեր չպետք է պարունակեն, իսկ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Բարբերան, Մեսեգեն եւ Ջաբարդոն ընդդեմ Իսպանիայի գործով (Barbera, Messegue and Jabardo v. Spain 10590/83, կետ 77) 1988թ. դեկտեմբերի 6-ի 10590/83 վճռում անմեղության կանխավարկածին հաղորդել է հետևյալ բովանդակությունը. «...6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է անմեղության կանխավարկածի սկզբունքը: Այն պահանջում է, ի թիվս այլոց, որ իրենց պարտականությունները կատարելիս դատարանի անդամները չպետք է ունենան կանխակալ կարծիք առ այն, որ մեղադրյալը կատարել է մեղսագրվող արարքը, ապացուցման պարտականությունը պետք է կրի մեղադրանքի կողմը, եւ ցանկացած կասկած պետք է մեկնաբանվի հօգուտ մեղադրյալի»:

Ելնելով անմեղության կանխավարկածի սկզբունքի իրավաբանական բովանդակությունից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 21-րդ հոդվածում ամրագրված անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ նպատակ ունենալով պաշտպանել անձին հանիրավի մեղադրանքից, միաժամանակ չի կարող բացառել իրավասու մարմնի կողմից նրան քրեական հանցագործության մեջ կասկածելու հանգամանքը՝ մինչեւ այն պահը, երբ այդ կասկածներն այդ մարմնի իրավաչափ գործողությունների արդյունքում հնարավոր չի եղել հիմնավորվել:

6. Անմեղության կանխավարկածի առանձին դրսևորում է «չփարատված կասկածները հոգուտ մեղադրյալի մեկնաբանելու» պահանջը (ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասություն):

Սահմանադրական դատարանը՝ հաշվի առնելով նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները (մասնավորապես, տե՛ս Vassilios Stavropoulos v. Greece, 35522/04, 27.09.2007), գտնում է, որ որևէ որակական տարբերություն չպետք է դրվի ապացույցների բացակայության եւ անձի անմեղությունը կասկածի տակ չդնող արդարացման դատավճռի հիմքով քրեական գործի ավարտման միջե:

Քրեական հետապնդումը դադարեցնելու վիճարկվող հիմքը նույնպես կոչված է իրացնելու անմեղության կանխավարկածի սկզբունքի բաղադրատարր հանդիսացող՝ «չփարատված կասկածները հոգուտ մեղադրյալի մեկնաբանելու» սկզբունքը: Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ նշված տեսանկյունից խնդիր կարող է առաջանալ միայն այն դեպքում, եթե իրավական հետևանքի առումով տարբերություն դրվի՝ ապացույցների բացակայության հիմքով, եւ անձի անմեղությունը հաստատված լինելու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու միջե: Այս առնչությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ուսումնասիրությունը վկայում է, որ օրենսդիրը նման տարբերակում չի կատարել: Ավելին, ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-13-րդ կետերում ամրագրված՝ ոչ արդարացնող հիմքերով քրեական գործի կարճման, երբ մեղադրյալի կողմից հանցանքի կատարումը, որպես կանոն, մինչդատական կամ դատական վարույթներում ապացուցված է, եւ ըստ այդմ, օրենսդիրը մեղադրյալին արդարացվածի կարգավիճակ չի տրամադրում, վիճարկվող հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքում անձին վերապահվում է արդարացվածի կարգավիճակ:

Նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասում տեղ գտած՝ «...կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու արդյունքում...» դրույթը կարող է մեկնաբանվել երկու առումով, առաջին՝ «չմասնակցությունը, դա չապացուցված մասնակցությունն է» կամ «հանցագործության կատարման անձի ապացուցված չմասնակցությունն է», սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առնվող 35-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականության հարցը պետք է գնահատվի հենց երկրորդ մեկնաբանման տեսանկյունից, քանի որ, ի թիվս այլնի, ՀՀ քր. դատ. օր-ի 6-րդ հոդվածի 42-րդ կետի համաձայն՝ արդարացվածն այն անձն է, որի նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ, կամ որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է անմեղության հիմքով:

7. Սահմանադրական դատարանը գտնում է, որ անմեղության կանխավարկածն անձին պաշտպանում է ոչ թե քրեական հետապնդման այն հիմքից, որը կասկած է թողնում անձի՝ տվյալ հանցագործությանը մասնակցության առնչությամբ, այլ այնպիսի որոշումներից կամ դրանցում այնպիսի ձեւակերպումներից, որոնք կարող են կասկածի ենթարկել տվյալ անձի արդարացումը կամ անմեղությունը: Նշված հանգամանքը գործնականում կարող է ավելի մեծ չափով իրավա-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

բանական նշանակություն ունենալ արդարացված անձին պատճառված վնասի հատուցման իրավունքի կապակցությամբ ընդունվող որոշումների համար: Այս առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը վիճարկվող հիմքով արդարացվածին ոչ միայն պաշտպանում է նման հետագա ոչ իրավաչափ որոշումներից, այլ պաշտպանում է նաև հենց քրեական հետապնդումը դադարեցնելու որոշման մեջ այնպիսի ձեռնարկումներ նախատեսելուց, որոնք կարող են կասկածի ենթարկել անձի արդարացումը կամ անմեղությունը: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով եւ 2-րդ մասով նախատեսված հանգամանքների առկայությամբ քրեական հետապնդումը դադարեցնելիս չի թույլատրվում որոշման մեջ տալ ձեռնարկումներ, որոնք կասկածի տակ կդնեն այն անձի անմեղությունը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է:

Հաշվի առնելով, որ վիճարկվող հիմքով քրեական հետապնդման դադարեցման եւ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված արդարացնող այլ հիմքերով քրեական հետապնդման դադարեցման միջեւ իրավունքի տեսանկյունից որեւէ որակական տարբերություն օրենսդրությունը չի նախատեսում, ինչպես նաև նկատի ունենալով, որ օրենսդրությունը նախատեսում է պաշտպանություն ընդդեմ այն ակտերի, որոնք կարող են կասկածի ենթարկել վիճարկվող հիմքով անձի արդարացումը կամ նրա անմեղությունը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ քրեական հետապնդումը դադարեցնելու մասով վիճարկվող հիմքն իրավակիրառական պրակտիկայում համարժեք իրացման դեպքում չի կարող վտանգել անձի անմեղության կանխավարկածը:

8. Հայտնի է, որ քրեական իրավունքում «հանցակազմ» հասկացությունը բնորոշվում է որպես հանրորեն վտանգավոր արարքի՝ քրեական օրենսգրքով սահմանված հատկանիշների համակցություն: Այսինքն, որպեսզի անձը քրեական պատասխանատվության ենթարկվի, նրա արարքը պետք է որակվի հանրորեն վտանգավոր՝ որում առկա են քրեական օրենսգրքով նախատեսված կոնկրետ արարքի բոլոր հատկանիշները: «Հանցակազմի բացակայություն» եզրույթը նշանակում է արարքի առկայություն, սակայն այն չի բնորոշվում որպես քրեական օրենսգրքով նախատեսված հատկանիշներ պարունակող հանրորեն վտանգավոր արարք, այլ կերպ՝ հանցագործություն: Հետեւաբար, հանցագործության յուրաքանչյուր տեսակին համապատասխանում է իր կոնկրետ հանցակազմը, որի հիմնական տարրերն են օբյեկտը, օբյեկտիվ կողմը, սուբյեկտը եւ սուբյեկտիվ կողմը: Այս տարրերից թեկուզ մեկի բացակայությունը վկայում է հանցակազմի, հետեւաբար եւ՝ հանցագործության բացակայության մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, եթե.

- ա) առկա է հանցագործությունը,
- բ) կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չէ,
- գ) սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները: Այստեղ հիմնական հանգամանքն այն է, որ «առկա է հանցագործությունը» եզրույթն արդեն իսկ վկայում է հանցակազմի առկայության մասին, սակայն այն

առարկայացված չէ կոնկրետ սուբյեկտի առնչությամբ: Ըստ էության հանցակազմը հանցագործության իրավաբանական բնորոշումն է: Եթե առկա է հանցագործությունը՝ հանցակազմի բոլոր տարրերի առկայությամբ, ապա չի կարող հանցակազմի բացակայության հիմքով գործի վարույթը կարճվել, որովհետև դա ուղղակիորեն կխախտի տուժող կողմի իրավունքները: Իսկ քրեական հետապնդումը կարող է դադարեցվել կասկածյալի կամ մեղադրյալի անձի առնչությամբ:

ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ինստիտուտի գոյությունն առավելապես իմաստավորվում է մրցակցային դատավարության սկզբունքի կիրառման շրջանակներում՝ անձի իրավունքների պաշտպանության տեսանկյունից, քանի որ ապացուցման պարտականությունը կրողի կողմից հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցության չապացուցելը հավասարազոր է անձի անմեղության ճանաչմանը: Իսկ իրավակիրառական պրակտիկան հետետղականորեն պետք է իրացնի ՀՀ քր. դատ. օր-ի 261-րդ հոդվածի վերոհիշյալ պահանջը:

Մեղավորությունը հիմնավորելու համար ապացույցների բավարար համակցության բացակայության դեպքում է միայն դադարեցվում քրեական հետապնդումը՝ 35-րդ հոդվածի երկրորդ մասի հիմքով: Սինչդեռ ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 2-րդ մասի «...իսկ գործի վարույթը ենթակա է կարճման» դրույթը կարող է հանգեցնել իրավական կարգավորման ներքին հակասականության ու իրավական անորոշության: Ըստ էության նույն հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերում հստակ չեն առանձնացված գործի վարույթի կարճման եւ քրեական հետապնդման դադարեցման կամ այդ երկու ինստիտուտների համատեղ կիրառման հիմքերը: Հոդվածի երկու մասերի համադրված վերլուծությունը, ինչպես նաեւ միջազգային պրակտիկան վկայում են, որ ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 2-րդ մասն սկզբունքորեն վերաբերում է քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերին:

Միաժամանակ, ՀՀ քր. դատ. օր-ի 306-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ «Մեղադրանքից դատախազի հրաժարվելու դեպքում դատարանը կարճում է քրեական գործով վարույթը եւ դադարեցնում քրեական հետապնդումը, իսկ եթե դատախազը հրաժարվում է առանձին մեղադրյալի մասով՝ **դադարեցնում է քրեական հետապնդումն այդ մեղադրյալի նկատմամբ**»: Իսկ համաձայն նույն օրենսգրքի 366-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ եւ 4-րդ մասերի՝ «2. Դատարանը պարտավոր է սույն օրենսգրքի 35 հոդվածի առաջին մասի 1-3-րդ կետերով եւ երկրորդ մասով նախատեսված հիմքերից որեւէ մեկի առկայության դեպքում տվյալ դատական նիստում կայացնել արդարացման դատավճիռ:

3. Եթե արդարացման դատավճիռ կայացնելիս անհայտ է մնում այդ հանցանքը կատարած անձը, դատարանը, դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, գործն ուղարկում է դատախազին՝ լուծելու նոր անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու հարցը: 4. Դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազը մեղադրանքից հրաժարվելու դեպքում դատարանը մեղադրանքի այդ մասով կայացնում է արդարացնող դատավճիռ»:

Վկայակոչված դրույթների եւ քրեական դատավարության օրենսգրքի ընդհանուր հասկացությունների (մասնավորապես՝ 6-րդ հոդվածի 42-րդ կետ) համադրված վերլուծությունը վկայում է, որ ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով քրեական հետապնդումը կարող է դադարեցվել, ինչը հավասարա-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

գոր է անձի անմեղության փաստի հաստատման, իսկ դատաքննության փուլում ապացույցների անբավարարության հանգամանքը նաեւ արդարացման դատավճիռ կայացնելու հիմք է:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի «...իսկ գործի վարույթը ենթակա է կարճման» դրույթի գոյությունն ու կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու հիմքով դրա գործադրումը նախաքննության եւ դատաքննության փուլերում կվտանգի տուժողի շահերի պաշտպանությունը եւ կարող է արգելք հանդիսանալ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքի պաշտպանության համար, ինչպես նաեւ կասկածի տակ է մնում կասկածյալի կամ մեղադրյալի անմեղությունը՝ հանցագործությանը նրանց մասնակցությունն ապացուցված չլինելու պարագայում:

9. Հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի հակասահմանադրականության վերաբերյալ դիմողների ներկայացրած վերոհիշյալ փաստարկները՝ սահմանադրական դատարանը սույն գործի քննության շրջանակներում հարկ է համարում պարզել.

ա/ որքանո՞վ է իրավաչափ արդարացվածի հատուցման պահանջի լուծումը միայն քաղաքացիական դատավարության կարգով,

բ/ ՀՀ Սահմանադրության տեսանկյունից որքանո՞վ է իրավաչափ արդարացվածին պատճառված վնասի հատուցման արտադատարանական կարգ չնախատեսելը,

գ/ արդյո՞ք վիճարկվող դրույթի խնդիրն է նախատեսել արդարացվածին պատճառված բարոյական վնասի նյութական եղանակով հատուցման ինստիտուտ:

Արդարացվածն ըստ քր. դատ. օր-ի 66-րդ հոդվածի՝ ունի փոխհատուցում ստանալու իրավունք:

Մինչդատական վարույթում անձն արդարացվածի կարգավիճակ ձեռք է բերում քր. դատ. օր-ի՝ 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով եւ 2-րդ մասով նախատեսված հիմքերով քրեական հետապնդման դադարեցման դեպքում, իսկ դատական քննության փուլում՝ օրինական ուժի մեջ մտած արդարացման դատավճռի դեպքում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ մաս): Մինչ այդ, կասկածյալին կամ մեղադրյալին պատճառված վնասի հատուցման պահանջի իրավունք գոյություն չունի, որովհետեւ դեռեւս նա արդարացված չէ: Անձը կարող է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա հատուցման պահանջով դատարան դիմել միայն դրանում նշված հիմքերով արդարացվածի կարգավիճակ ձեռք բերելուց հետո:

Սահմանադրական դատարանը՝ վերահաստատելով իր՝ 2009թ. փետրվարի 3-ի ՍԳՈ-787 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ վերջիններս խնդրո առարկա դեպքի առնչությամբ կիրառելի չեն, չեն վերաբերում միմյանց հետ փոխկապակցված հարաբերություններով գործի քննության ընդատությանը, չեն խոչընդոտում դատարանին գործի քննության շրջանակներում ճշմարտությունը բացահայտելուն, ինչպես նաեւ մինչդատական վարույթում արդարացվածի կողմից արդարացման հիմքերի վերաբերյալ ներկայացված բողոքը քննելիս արդար որոշում կայացնելուն:

Քննության առնվող գործով արդարացվածին պատճառված վնասի հատուցման պահանջն իրավունք է, այլ ոչ թե խախտված իրավունքի պաշտպանություն: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Տոմազին ընդդեմ Ֆրանսիայի գործով վճռում (Tomas v. France, Judgement of 27 August 1992, Series A No. 241-A, parag. 121) նշել է, որ քրեական գործով հատուցում ստանալու իրավունքը՝ «չնայած գործը քրեական դատարանին ընդդատյա լինելուն, ունի քաղաքացիական բնույթ»:

Իսկ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի քննության իրավահարաբերություններին վերաբերող առանձին հարցերի կարգավորումը նախատեսված է ՀՀ քր. դատ. օր-ի 20-րդ գլխում:

Ելնելով վերոգրյալից՝ սահմանադրական դատարանն իրավաչափ է համարում առանձին քաղաքացիական գործի վարույթի շրջանակներում արդարացվածի հատուցման պահանջի քննության վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գործող կարգը:

**10. ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝** պետությունն ապահովում է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Միջազգային իրավունքի սկզբունքների եւ նորմերի իրավակարգավորման ուղղվածության ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ վերջիններս մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանության եղանակների առնչությամբ նախապատվությունը տալիս են իրավունքների եւ ազատությունների պաշտպանության դատական կարգին՝ որպես առավել արդյունավետ միջոցի, որոշ դեպքերում չբացառելով իրավունքների եւ ազատությունների պաշտպանության արտադատարանական կարգը:

Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի ուժով թե՛ դատական, թե՛ արտադատարանական կարգով իրավունքների եւ ազատությունների իրավական պաշտպանությունը պետք է լինի արդյունավետ:

Միաժամանակ, Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու եւ պաշտպանելու պայմանները եւ կարգը:

Վերոնշյալ սահմանադրական դրույթների պահանջներից ելնելով՝ օրենսդրի հայեցողությունն է սահմանելու իրավունքներն իրականացնելու եւ պաշտպանելու պայմաններն ու կարգը՝ ընտրություն կատարելով իրավունքների պաշտպանության դատական եւ արտադատարանական կարգերի իրացման ձեւերի միջեւ՝ այդ հայեցողությունն իրականացնելիս միաժամանակ պահպանելով վերոնշյալ սկզբունքները:

Վերոգրյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ արդարացվածին պատճառված վնասի հատուցման արտադատարանական կարգ չնախատեսելն այն դեպքում, երբ տվյալ իրավունքի իրացման եւ պաշտպանության համար նախատեսված է դատական կարգ, սահմանադրականության տեսանկյունից իրավաչափ է:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

11. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, մասնավորապես, 14-րդ հոդվածի 10-րդ կետը, 17, 18, 19, 1058, 1063, 1064, 1075-րդ հոդվածները սահմանում են քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակները եւ այդ եղանակների դրսեւորման ձեւերը, ինչպես նաեւ պետության պատասխանատվությունը: Նշված հոդվածների ուսումնասիրությունից բխում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը, որի խնդիրն է, ի թիվս այլնի, սահմանել քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակները, ինչպես նաեւ պատճառված վնասի դիմաց հատուցման եղանակներն ու միջոցները, բարոյական վնասի նյութական փոխհատուցման ինստիտուտ չի նախատեսել: Քրեական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի վիճարկվող 3-րդ մասի խնդիրը չէ նախատեսել արդարացվածին պատճառված բարոյական վնասի նյութական եղանակով հատուցման ինստիտուտ: Այն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի խնդիրն է, հետեւաբար՝ դուրս է տվյալ գործով քննության առարկայի շրջանակից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 6-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19, 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի «...**իսկ գործի վարույթը ենթակա է կարճման**» դրույթը՝ կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու առնչությամբ, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի (1-ին մաս) եւ 21-րդ հոդվածի պահանջներին հակասող եւ անվավեր:

2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**30 մարտի 2010 թվականի  
ՍԳՈ-871**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ  
309.1-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**2 ապրիլի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.  
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Հ. Դանիելյանի,  
Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապա-  
յանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչներ Ա. Չեյնայանի, Ա. Դազարյանի,

գործով որպես պատասխանող ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտո-  
նական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մել-  
քոնյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ  
հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական  
դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Աշոտ Մա-  
նուկյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դա-  
տավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի առաջին եւ երկրորդ մասերի՝ Հա-  
յաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության  
հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ա. Մանուկյանի՝ 18.12.2009թ. ՀՀ սահ-  
մանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատաս-  
խանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Հայաստանի  
Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա  
մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դա-  
տարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց.**

ՍԱՐՅԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 1(58)2011  
71



**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի՝ «Առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու սահմանները» վերտառությամբ 309.1-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերը սահմանում են.

«1. Եթե առաջին ատյանի դատարանում դատական քննության ընթացքում մեղադրողը գտնում է, որ առաջադրված մեղադրանքը խստացման կամ մեղմացման առումով ենթակա է լրացման կամ փոփոխման, քանի որ ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել եւ չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում, եւ եթե գործի փաստական հանգամանքները հնարավորություն չեն տալիս մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու առանց դատական քննությունը հետաձգելու, ապա դատարանին ներկայացնում է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու եւ նոր մեղադրանք առաջադրելու համար դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն: Մեղադրողը նման միջնորդությամբ կարող է հանդես գալ մինչեւ դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում դատարանը դատախազի միջնորդությամբ հետաձգում է նիստը՝ անհրաժեշտ քննչական եւ այլ դատավարական գործողություններ կատարելու եւ նոր մեղադրանք առաջադրելու համար: Նիստը կարող է հետաձգվել ոչ ավելի, քան մեկ ամսով, բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ քննչական եւ այլ դատավարական գործողություններ կատարելու համար ողջամտորեն պահանջվում է ավելի երկար ժամկետ:

Առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու դեպքում մեղադրողը կազմում է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու եւ նոր մեղադրանք առաջադրելու մասին որոշում, որը ձեռք բերված նյութերի հետ ներկայացնում է դատարան»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում 309.1-րդ հոդվածը լրացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2007թ. նոյեմբերի 28-ին ընդունված ՀՕ-270-Ն օրենքով: Նշված օրենքով 309.1-րդ հոդվածի լրացումը պայմանավորվել է ՀՀ սահմանադրական դատարանի 2007թ. հուլիսի 24-ի ՍԳ-Ո-710 որոշմամբ, որով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները ճանաչվեցին ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածին (1-ին մաս) հակասող եւ անվավեր: Նույն որոշմամբ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի հիմքերով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածին (1-ին մաս) հակասող եւ անվավեր ճանաչվեցին նաեւ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին կետի, ինչպես նաեւ 292-րդ հոդվածի 5-րդ կետի, 297-րդ հոդվածի, 363-րդ հոդվածի 2-րդ մասի, 394-րդ հոդվածի 5-րդ մասի, 398-րդ հոդվածի 6-րդ մասի, 421-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները եւ 419-րդ հոդվածի 2-րդ կետի՝ լրացուցիչ նախաքննություն նախատեսող դրույթը:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է նրան, որ թիվ 62202608 քրեական գործով 2008 թվականի մարտի 4-ին դի-

մողին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225.1-րդ հոդվածի 1-ին մասով եւ 316-րդ հոդվածի 2-րդ մասով: 2008 թվականի հունիսի 10-ին թիվ 62202608 քրեական գործից անջատվել են դիմողի վերաբերյալ գործի նյութերը, եւ անջատված մասով նախաքննությունը շարունակվել է թիվ 62212308 քրեական գործով: 2008 թվականի հունիսի 13-ի որոշմամբ դիմողը ներգրավվել է որպես մեղադրյալ, եւ նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225.1-րդ հոդվածի 1-ին մասով եւ 316-րդ հոդվածի 1-ին մասով: 2008 թվականի հունիսի 16-ին քրեական գործը՝ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան:

2008 թվականի հուլիսի 29-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը բավարարել է մեղադրողի նույն օրվա միջնորդությունը՝ անհրաժեշտ քննչական եւ դատավարական գործողություններ կատարելու եւ դիմողի նկատմամբ նոր մեղադրանք առաջադրելու համար դատաքննությունը մեկ ամսով հետաձգելու վերաբերյալ:

2008 թվականի հուլիսի 30-ին դիմողին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, եւ նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225.1-րդ հոդվածի 1-ին մասով եւ 316-րդ հոդվածի 2-րդ մասով:

Երեւանի քրեական դատարանի, որտեղ գործն ուղարկվել է ըստ առարկայական ընդդատության, 2008 թվականի դեկտեմբերի 12-ի դատավճռով դիմողը ՀՀ քրեական օրենսգրքի 225.1-րդ հոդվածի 1-ին մասով ճանաչվել է անպարտ եւ արդարացվել է: Դիմողը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով եւ դատապարտվել ազատազրկման հինգ տարի ժամկետով:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իր՝ 2009 թվականի մարտի 10-ի որոշմամբ օրինական ուժի մեջ է թողել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով դիմողի վերաբերյալ Երեւանի քրեական դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 12-ի դատավճիռը:

ՀՀ վճռաբեկ դատարանը՝ գտնելով, որ գործով ձեռք բերված ապացույցներով հիմնավորված է, որ դիմողը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքը, եւ վերաքննիչ դատարանը հանգել է ճիշտ եզրակացության, իր՝ 19.05.2009թ. որոշմամբ վերադարձրել է դիմողի պաշտպանի բերած վճռաբեկ բողոքը:

3. Դիմողը՝ որպես վիճարկվող օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի հակասահմանադրականության հիմնական փաստարկ, իր դիմումում վկայակոչում է ՀՀ սահմանադրական դատարանի 24.07.2007թ. ՍԳՈ-710 որոշումը, որով Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասին հակասող եւ անվավեր են ճանաչվել դատարանի որոշմամբ քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտը կարգավորող նորմերը:

Ըստ դիմողի՝ «ՀՀ «Քրեական դատավարության» օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերը քողարկված կերպով հնարավորություն են տալիս կիրառել «լրացուցիչ նախաքննության ուղարկելու» ընթացակարգ, ինչը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել է հակասահմանադրական: Որպես փաստարկ դիմողը ներկայացնում է դատական պրակտիկայից այնպիսի օրինակ, երբ ԵԿԿ/0192/01/09 գործով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդ-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

վածը կիրառվել է երեք անգամ, որից երկուսի դեպքում գրավոր ակտ չի կայացվել, «...որպեսզի բավարարի պատճառաբանված եւ հիմնավոր լինելու չափորոշիչին»:

Դիմողը գտնում է նաեւ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի կիրառման դեպքում չի երաշխավորվում անձի՝ իրեն առաջադրված մեղադրանքին ծանոթանալու իրավունքը, քննչական գործողությունների արձանագրությունների պատճեններին ծանոթանալու իրավունքը, մինչեւ մեղադրանքը դատարան ուղարկելը՝ մեղադրանքի էության վերաբերյալ բացատրություն ստանալու եւ պաշտպան ունենալու իրավունքները, մեղադրանքի վերաբերյալ ցուցմունք տալու իրավունքը, առերեսման եւ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխով սահմանված այլ իրավունքներ: Դիմողը գտնում է, որ քրեական գործով ապացույցներ կարող են ստացվել միայն համապատասխան քննչական գործողություններ եւ դրանցից բխող դատավարական գործողություններ կատարելու միջոցով՝ պայմանով, որպեսզի մեղադրյալի համար ապահովվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխի դատավարական երաշխիքները: Ըստ դիմողի՝ քրեական դատավարության սկզբունքների հետ անհամատեղելի է նախաքննության մարմնի քննչական եւ դատավարական գործողությունների կատարումը՝ առանց գործը վարույթ ընդունելու:

Դիմողը վիճարկում է նաեւ օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով քննչական գործողությունների կատարմամբ ձեռք բերված ապացույցների թույլատրելիությունն այն պատճառաբանությամբ, որ տվյալ դեպքում վարույթն իրականացնող մարմինը դատարանն է, ուստի քննիչն իրավունք չունի կատարելու քննչական գործողություններ: Ըստ դիմողի՝ «դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը հաստատվելուց եւ դատարան ուղարկելուց հետո վարույթն իրականացնող մարմինը դատավարական օրենսգրքով, ըստ էության ոչ մի իրավասություն չունի դատարանի վարույթում գտնվող քրեական գործի շրջանակներում որեւէ քննչական գործողություն կատարելու»:

Դիմողը գտնում է նաեւ, որ «...սույն գործով խնդրահարույց իրավակարգավորման ինստիտուտի բաղկացուցիչ մաս է» նաեւ վիճահարույց հոդվածի 5-րդ մասը, եւ միջնորդում է համակարգային փոխկապակցության մեջ անդրադառնալ նաեւ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 5-րդ մասի սահմանադրականությանը:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված՝ քրեական գործերի քննության վարույթային կարգը երաշխավորում է դատավարության բոլոր փուլերում գործի բացահայտմանն ուղղված անհրաժեշտ գործունեության իրականացում՝ դատական քննության փուլերում ապացույցների ողջ ծավալի հետազոտման արդյունքում: Դ-ա է պատճառը, որ քր. դատ. օր-ը (հոդված 354) պահանջում է կողմերից դատական վիճաբանությունների փուլում իրենց ճառերում հիմնվել միայն այնպիսի ապացույցների վրա, որոնք հետազոտվել են դատական քննության ընթացքում: Բացի այդ՝ քր. դատ. օր-ը ոչ միայն կողմերին օժտել է դատական քննության փուլում նոր ապացույցներ ներկայացնելու իրավունքով, այլեւ գործի հանգամանքները բացահայտելու իրավասությամբ օժտել է նաեւ դատարանին: Զր. դատ. օր-ի 23-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարանը կաշ-

կանդիլատ չէ կողմերի կարծիքներով եւ իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել քրեական գործով ճշմարտությունը բացահայտելու համար: Այս դրույթն ուղղակիորեն պայմանավորված է քրեական դատավարության մրցակցային բնույթով, որի համաձայն՝ դատարանը հանդես չգալով մեղադրանքի կամ պաշտպանության կողմում, այնուամենայնիվ, ներկայացնում է իրավունքի շահը: Ուստի դատական քննության ընթացքում դատավարության կողմերի եւ դատարանի ապացուցողական գործունեության արդյունքում կարող են ի հայտ գալ փաստական հանգամանքներ, որոնք հայտնի չէին եւ չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում:

Ըստ պատասխանողի՝ քր. դատ. օր-ի 309.1-րդ հոդվածի կարգավորման պարագայում դատարանն այլեւս իրավասու չէ քրեական գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության, այլ, հիմնվելով առկա ապացույցների վրա, պետք է գործը լուծի ըստ էության: Այս ամբողջ ընթացքում գործը շարունակում է մնալ դատարանի վարույթում, եւ դատարանն է սահմանում այն ժամանակահատվածը, որի ընթացքում պետք է կատարվեն համապատասխան գործողությունները (որպես կանոն՝ մեկ ամիս, իսկ բացառիկ դեպքերում դատարանի որոշմամբ՝ եւս մեկ ամիս):

Պատասխանողը գտնում է, որ հիմնավոր չէ նաեւ դիմողի այն պնդումը, որ վիճարկվող իրավակարգավորումը սահմանափակում է ամբաստանյալի պաշտպանության իրավունքը: Քր. դատ. օր-ի 309.1-րդ հոդվածում սահմանված իրավակարգավորումն ստեղծում է ամբաստանյալի իրավունքների պաշտպանության գործուն երաշխիքներ: Այդ հոդվածը կարգավորում է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու սահմանները: Դա պայմանավորված է նրանով, որ անգամ մեղմացման առումով մեղադրանքը փոփոխելիս, եթե փոփոխվել են փաստական հանգամանքները, եւ արարքը որակվել է նվազ խիստ պատիժ նախատեսող հոդվածով, անգամ այս պարագայում մեղադրյալն օգտվում է իր պաշտպանությունը պատշաճ ձեով իրականացնելու հնարավորությունից:

Պատասխանողի կարծիքով, թեեւ ՀՀ քր. դատ. օր-ի 309.1-րդ հոդվածն ամբողջապես նվիրված է դատական քննության ընթացքում մեղադրանքի լրացմանը կամ փոփոխմանը, սակայն հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերը եւ նույն հոդվածի 5-րդ մասն ուղղված են սկզբունքորեն միմյանցից տարբերվող իրավիճակների կարգավորմանը: Դրանից ելնելով՝ պատասխանողը գտնում է, որ ՀՀ քր. դատ. օր-ի 309.1-րդ հոդվածի 5-րդ մասը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի իմաստով վիճարկվող իրավադրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված չէ, կարգավորում է սկզբունքորեն տարբերվող իրավիճակ եւ սույն գործով վիճարկման առարկա չի կարող լինել:

5. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը կարելի է գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու վերաբերյալ նախկինում գործող եւ օրենսգրքի 309.1-րդ հոդվածով սահմանված ներկա օրենսդրական կարգավորման ինստիտուտների համադրված վերլուծության արդյունքներով դատարանի մեղադրական թերումից ձերբազատվելու երաշխիքների, դատարանի անկախության եւ անկողմնակալության, դատավարության կողմերի հավասարության ու մրցակցության սկզբունքների ու երաշխիքների ապահովման սահմանադրաիրավական գնահատումը:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Սահմանադրական դատարանը՝ իր ՍԳՈ-710 որոշմամբ ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելով քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտը կարգավորող նորմերը, արտահայտել է մի շարք սկզբունքային իրավական դիրքորոշումներ, որոնք էական նշանակություն ունեն մատուցելու գործի առնչությամբ, եւ որոնք, մասնավորապես, հանգել են հետեւյալին.

**Ուսումնասիրելով** քրեական գործով ապացույցները ձեռք են բերվել քրեադատավարական օրենքի էական խախտումներով, փոխանակ ՀՀ քր.դատ.օր-ի 105-րդ հոդվածի հիմքով, որը համահունչ է ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածին, որպես ապացույց չօգտագործի դրանք եւ մյուս ապացույցների գնահատմամբ լուծի գործի ելքը, գործը վերադարձնում է լրացուցիչ նախաքննության: Դրանով իսկ դատարանը նախաքննության մարմնին հնարավորություն է տալիս «վերակենդանացնել» ձախողված մեղադրանքը: Մյուս կողմից, խախտվում է քրեական դատավարության կարեւոր մի սկզբունք, ըստ որի՝ դատարանը չպետք է հանդես գա մեղադրանքի կամ պաշտպանության կողմում, այլ արտահայտի միայն իրավունքի շահերը (ՀՀ քր.դատ.օր-ի 23-րդ հոդված), սկզբունք, որը նպատակատուղված է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով նախատեսված՝ դատարանի անկախության եւ անկողմնակալության ապահովմանը:

**Երկրորդ՝** ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի պահանջն է, ի թիվս արդար դատաքննության այլ երաշխիքների, դատաքննության իրականացումը կողմերի հավասարության պայմաններում եւ անկողմնակալ դատարանի կողմից: ՀՀ քր.դատ.օր-ով նախատեսված կարգով գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելով՝ դատարանը դուրս է գալիս դատավարությունում անկողմնակալության սկզբունքի շրջանակներից եւ ուղղորդում է լրացուցիչ նախաքննության ընթացքը՝ իրականացնելով արդարադատության գործառույթի հետ անհամատեղելի գործողություններ: Դատարանը խախտում է մաքուր կողմերի միջեւ հավասարության սկզբունքն ի շահ մեղադրանքի կողմի, դրանով իսկ խախտելով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ անձի դատական եւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը:

**Երրորդ՝** քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտի կիրառումը պարունակում էր մաքուր արդար դատաքննության տարրերից մեկի՝ դատաքննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու պահանջի խախտման վտանգ, որի պարագայում սահմանադրական դատարանն արձանագրեց, որ դատարանի որոշմամբ քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու հետեւանքով անձն անազատության մեջ կարող է պահվել մեկ տարուց ավելի երկար ժամկետով:

**Չորրորդ՝** ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածում ամրագրված անմեղության կանխավարկածի սկզբունքի կարեւոր բաղադրատարրերից է չփարատված կասկածները հօգուտ մեղադրյալի մեկնաբանելու պահանջը: Նշված պահանջի կատարումը եւ քրեական գործը դատարանի որոշմամբ լրացուցիչ նախաքննության ուղարկելը գործնականում անհամատեղելի էին միմյանց հետ: Քրեական գործը նախկինում նախատեսված կարգով լրացուցիչ նախաքննության ուղարկելու դեպքում ըստ էության շրջանցվում էր նշված հոդվածում ամրագրված՝ չփարատված կասկածները հօգուտ մեղադրյալի մեկնաբանելու սահմանադրական պահանջը:

**Հինգերորդ**՝ սահմանադրական դատարանը գտել է նաև, որ դատարանի որոշմամբ քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելն անհամատեղելի է Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի այնպիսի տարրերի հետ, ինչպիսիք են դատաքննությունն անկողմնակալ դատարանի կողմից եւ այն հավասարության ու մրցակցության սկզբունքների հիման վրա իրականացնելու պահանջները:

**Վեցերորդ**՝ գործը դատարանից լրացուցիչ նախաքննության վերադարձնելու՝ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված նախկին կարգն անհամատեղելի էր նաև երկրում սահմանադրական փոփոխությունների արդյունքում կատարվող դատաիրավական բարեփոխումների տրամաբանության հետ, որոնք ուղղված են դատարանի անկախության եւ անկողմնակալության ապահովմանը, մեղադրական թեքումից նրա վերջնական ձերբազատմանը:

Թվարկված իրավական դիրքորոշումների շրջանակներում սահմանադրական դատարանը նկատի էր ունեցել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համակարգային վերափոխումները համահունչ կլինեն սահմանադրական բարեփոխումների ընդհանուր տրամաբանությանը եւ քրեական գործի դատաքննության հիմքում կողմի այն ելակետային սկզբունքի լիարժեք արմատավորումը, ըստ որի, երբ գործն ընդունվել է դատարանի վարույթ, ապա այն պետք է սկզբունքորեն լուծվի դատաքննության արդյունքում մեղադրանքի իրավական գնահատման վերաբերյալ դատարանի վերջնական որոշմամբ:

6. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացված 309.1-րդ հոդվածը, որի իրավակարգավորման առարկան առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու սահմանների որոշումն է, նախատեսում է դատարանում մեղադրանքի փոփոխման երկու իրավական ռեժիմ՝ մեղադրանքը փոխելը. ա) քննչական եւ այլ դատավարական գործողություններ կատարելու եւ բ) առանց լրացուցիչ քննչական եւ այլ դատավարական գործողություններ կատարելու միջոցով:

Միաժամանակ, օրենսդիրը մեղադրողի՝ առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու եւ նոր մեղադրանք առաջադրելու համար դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու իրավունքի իրացման համար սահմանել է մի շարք պարտադիր նախապայմաններ, որոնք կոչված են երաշխավորելու քրեական դատավարության մասնակիցների իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը եւ որոնք անվերապահորեն պետք է հաշվի առնվեն դատական պրակտիկայում: Դրանք են՝

ա) եթե ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել եւ չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում,

բ) եթե գործի փաստական հանգամանքները հնարավորություն չեն տալիս մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու առանց դատական քննությունը հետաձգելու,

գ) վերոհիշյալ հիմքերի առկայությունը պետք է գնահատի դատարանը,

դ) նիստը կարող է հետաձգվել բացառապես անհրաժեշտ քննչական եւ այլ դատավարական գործողություններ կատարելու եւ նոր մեղադրանք առաջադրելու համար,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ե) նիստը կարող է հետաձգվել ոչ ավելի, քան մեկ ամսով, բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ քննչական եւ այլ դատավարական գործողություններ կատարելու համար ողջամտորեն պահանջվում է ավելի երկար ժամկետ,

զ) հետաձգումը չի կարող նպատակ հետապնդել լրացնելու նախկինում կատարված թերի նախաքննությունը:

Առանց լրացուցիչ քննչական եւ այլ դատավարական գործողություններ կատարելու մեղադրանքը փոխելու կարգը սահմանված է օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 3-րդ եւ 5-րդ մասերով, որոնք հոդվածի այլ մասերի հետ կազմում են համակարգային առումով փոխկապակցված ամբողջականություն՝ առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու հիմնախնդրի օրենսդրական կարգավորման շրջանակներում: Մասնավորապես, օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Մեղադրողը կարող է մինչեւ դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը փոխել մեղադրանքը, այդ թվում նաեւ՝ խստացման առումով, եթե դատական քննության ընթացքում հետազոտված ապացույցները անհերքելիորեն վկայում են, որ ամբաստանյալը կատարել է այլ հանցանք, քան այն, որը նրան մեղաազարկում է»:

Օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է. «Եթե դատաքննության ընթացքում պարզվում է, որ ամբաստանյալի արարքի իրավաբանական որակումը ճիշտ չէ, իսկ մեղադրողը խստացնելու առումով արարքը վերադրակելու որոշում չի կայացնում կամ վերադրակելու համար դատական նիստը հետաձգելու միջնորդություն չի ներկայացնում, ապա դատարանն իր նախաձեռնությամբ մինչեւ 10 օր ժամկետով հետաձգում է դատական նիստը՝ առաջարկելով գլխավոր դատախազին կամ տեղակալին վերահաստատելու մեղադրական եզրակացությունը:

Մեղադրական եզրակացությունը վերահաստատելուց հետո դատարանը, մեղադրական եզրակացությանը համապատասխան, կայացնում է դատական ակտ»:

Օրենսգրքի 309.1-րդ հոդվածի ամբողջական ուսումնասիրությունից բխում է, որ դատարանում մեղադրանքը փոփոխելը կատարվում է երեք կարգով՝

ա/ մեղադրողի նախաձեռնությամբ (օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասեր), որի դեպքում մեղադրողի միջնորդությամբ նիստը հետաձգվում է անհրաժեշտ քննչական եւ այլ դատավարական գործողություններ կատարելու եւ նոր մեղադրանք առաջադրելու համար՝ առաջադրված մեղադրանքի **թե՛ խստացման, թե՛ մեղմացման առումներով**,

բ/ մեղադրողի նախաձեռնությամբ (օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 3-րդ մաս), որի դեպքում մեղադրողը կարող է մինչեւ դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը փոխել մեղադրանքը, **այդ թվում նաեւ՝ խստացման առումով՝** դատաքննության ընթացքում ի հայտ եկած հանգամանքների հիման վրա, առանց անհրաժեշտ քննչական եւ այլ լրացուցիչ դատավարական գործողություններ կատարելու եւ նոր մեղադրանք առաջադրելու համար նիստը հետաձգելու,

գ/ դատարանի նախաձեռնությամբ (օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 5-րդ մաս), որի դեպքում դատարանը նիստը մինչեւ 10 օր ժամկետով հետաձգում է՝ առաջարկելով մեղադրողին վերահաստատելու մեղադրական եզրակացությունը, եթե դատաքննության ընթացքում պարզվում է, որ ամբաստանյալի արարքի իրավաբանական որակումը ճիշտ չէ, իսկ մեղադրողը **խստացնելու առումով** արարքը վե-

րատրակելու որոշում չի կայացնում կամ վերատրակելու համար դատական նիստը հետաձգելու միջնորդություն չի ներկայացնում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քրեական գործի դատաքննության փուլում ի հայտ եկած նոր փաստերի հիմքով օբյեկտիվորեն կարող են փոփոխվել գործի հանգամանքների եւ ամբաստանյալին մեղաագրվող արարքի իրավաբանական որակումը կամ հանցակազմի հատկանիշների բովանդակությունը: Սակայն, բոլոր դեպքերում, էական հանգամանքն այն է, որ գործը շարունակում է գտնվել դատաքննության փուլում, չի փոխվում ամբաստանյալի իրավական կարգավիճակը, իսկ մրցակցային դատավարության սկզբունքի պահանջներին համապատասխան երաշխավորվում է ամբաստանյալի՝ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավունքների պաշտպանությունը:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, ի տարբերություն մեղադրողի միջնորդության երկու հնարավոր դեպքերի, որոնք անմիջականորեն ուղղված են դատարանում մեղադրանքը փոփոխելուն, այդպիսի նպատակով դատարանի նախաձեռնության հնարավոր դրսեւորումն ուղղակիորեն կարող է վերաբերել մեղադրական եզրակացությունը վերահաստատելու վերաբերյալ մեղադրողին առաջարկություն անելուն: Ընդ որում, ի տարբերություն մեղադրողի միջնորդության երկու հնարավոր դեպքերի, որոնք վերաբերում են մեղադրանքի փոփոխմանը թե՛ խստացման, թե՛ մեղմացման առումներով, դատարանի նախաձեռնությունը կարող է վերաբերել մեղադրանքի փոփոխմանը միայն խստացման առումով, այսինքն՝ դատարանը «հուշում է» մեղադրողին կատարել մեղադրանքը **խստացման** առումով փոփոխելու համար անհրաժեշտ գործողություններ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այս պարագայում լիարժեք հաշվի չի առնվել այն կարեւոր սկզբունքի պահպանումը, համաձայն որի՝ դատարանը չի կարող հանդես գալ մեղադրանքի կամ պաշտպանության կողմում եւ պետք է արտահայտի միայն իրավունքի շահերը (ՀՀ քր. դատ. օր-ի 23-րդ հոդված)՝ սկզբունք, որը նպատակաուղղված է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով նախատեսված՝ դատարանի անկախության եւ անկողմնակալության, ինչպես նաեւ մրցակցային դատավարության եւ կողմերի հավասարության սկզբունքների ապահովմանը:

7. Օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի իրավակարգավորման ուղղվածության առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նոր մեղադրանք առաջադրելու հետ կապված հարաբերությունների կարգավորման շրջանակներում օրենսդիրն ազատ է ընտրելու իրավակարգավորման ցանկացած ուղղվածություն: Տվյալ պարագայում սահմանադրական դատարանի խնդիրն է գնահատել, թե արդյոք տվյալ իրավակարգավորման արդյունքում առկա են բավարար երաշխիքներ դատարանին՝ մեղադրական թեքումից ձերբազատվելու եւ դատական քննությունը հետաձգելուց հետո նոր մեղադրանք առաջադրելու փուլում կողմերի դատավարական իրավունքների լիարժեք պաշտպանությունն ապահովելու ուղղությամբ:

Վերլուծելով ՀՀ քր. դատ. օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի



**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

սահմանադրաիրավական բովանդակությունը՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատաքննության շրջանակներում լրացուցիչ ապացույցների ձեռքբերման եւ այլ դատավարական գործողությունների կատարմամբ մեղադրանքը փոխելու դեպքում օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերն իրավակարգավորման առումով դատարանին մեղադրական թեքումից ձերբազատվելու եւ անկողմնակալ արդարադատություն իրականացնելու բավարար երաշխիքներ պարունակում են՝ դրանց սահմանադրաիրավական իրենց բովանդակությանը համապատասխան ընկալման ու իրացման պարագաներում, համաձայն որի.

**Նախ՝** դատական նիստի հետաձգումը դատարանի հայեցողական լիազորությունն է, իսկ միջնորդությունը՝ մեղադրողի խնդրանքը, որը դատարանը **կարող է** բավարարել միայն օրենքով սահմանված պայմանների պահպանման, անհրաժեշտ հիմնավորումների ու **մյուս կողմի կարծիքը լսելու արդյունքում**: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ գործնականում ՀՀ քր. դատ. օր-ի 309.1-րդ հոդվածի վիճարկվող դրույթները խիստ հազվադեպ են կիրառվում դատական պրակտիկայում: Վերջին երկու տարիների դատական վիճակագրության ուսումնասիրությունը վկայում է, որ այն վերաբերում է քննված քրեական գործերի 0,6-0,7 տոկոսին:

**Երկրորդ՝** յուրաքանչյուր այդպիսի կոնկրետ միջնորդություն քննելիս դատարանը՝ հիմք ընդունելով օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի պահանջները, պետք է գնահատի, թե **տվյալ կոնկրետ քրեական գործով՝**

ա/ մեղադրանքի ծավալի վրա ազդող՝ դատարանում ի հայտ եկած հանգամանքները մինչդատական վարույթում հայտնի են եղել, թե՛ ոչ, եւ, միաժամանակ, դրանք կարող էին հայտնի լինել նախաքննության մարմնին, թե՛ ոչ,

բ/ գործի փաստական հանգամանքները հնարավորություն տալիս են, թե ոչ՝ մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու եւ նոր մեղադրանք առաջադրելու առանց դատական քննությունը հետաձգելու եւ քննչական գործողություններ կատարելու:

**Երրորդ՝** դատարանը պետք է հանգի այն համոզման, որ այդ գործողությունները կատարվում են դատաքննության շրջանակներում՝ առանց ամբաստանյալի կարգավիճակի փոփոխության, երաշխավորելով նաեւ պաշտպանական կողմի դատավարական իրավունքները:

**Չորրորդ՝** նկատի առնվի, որ նման կարգով ձեռք բերված ապացույցները չեն կարող օգտագործվել նախկինում առաջադրված մեղադրանքը հաստատելու համար:

ՀՀ քր. դատ. օր-ի 125-րդ հոդվածը նախատեսում է, որ ապացույցները ձեռք են բերվում հետաքննության, նախաքննության եւ **դատական քննության ընթացքում՝** սույն օրենսգրքով նախատեսված **քննչական եւ դատական գործողությունների կատարման ճանապարհով**: Միաժամանակ, օրենսգրքի 310-րդ հոդվածը քրեական գործի քննությունը հետաձգելու հիմք է սահմանում նաեւ դատարանի նախաձեռնությամբ նոր ապացույցներ պահանջելու անհրաժեշտությունը: Իսկ օրենսգրքի 23-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «...Դատարանը կաշկանդված չէ կողմերի կարծիքներով եւ իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել քրեական գործով ճշմարտությունը բացահայտե-

լու համար»: Չնայած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համակարգային վերափոխումների արդյունքում այս մոտեցումները նույնպես կարող են վերանայվել՝ մրցակցային դատավարության սկզբունքի առավել ամբողջական ու լիարժեք արմատավորման տեսանկյունից, այսուամենայնիվ, գործող իրավակարգավորման շրջանակներում ակնհայտ է, որ դատարանը կարող է իրականացնել ցանկացած դատավարական գործողություն ապացույցների ձեռքբերման նպատակով՝ առանց որեւէ սահմանափակման:

Անհրաժեշտ է նկատի ունենալ նաեւ օրենսգրքի 23-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջն այն մասին, որ՝ «...Դատարանը դատավճիռը հիմնավորում է միայն այն ապացույցներով, որոնց հետազոտման ընթացքում կողմերից յուրաքանչյուրի համար ապահովվել են հավասար պայմաններ»: Հետեւաբար, եթե քրեական գործի դատաքննության ընթացքում ի հայտ են եկել նոր հանգամանքներ, ապա դրանց գնահատումը դատարանի պարտականությունն է:

8. Սահմանադրական դատարանը կարելու է նաեւ առկա իրավակարգավորման դիտարկումը Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի հիմնադրույթների տեսանկյունից: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետի համաձայն՝ քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր զք պետք է ունենա «բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար»: Այս նկատառումներով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան՝ նաեւ դատարանում արարքի վերադրակման եւ ամբաստանյալի իրավունքների պաշտպանության առումով, այն է, որ պետք է երաշխավորվի ամբաստանյալին ներկայացված մեղադրանքի բնույթի եւ հիմքերի վերաբերյալ մանրամասն տեղեկացված լինելու եւ պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար ժամանակ ու հնարավորություն ունենալու իրավունքը (մասնավորապես՝ Մատեյն ընդդեմ Ֆրանսիայի գործով 19.12.2006թ. վճիռը, *Mattei v. France*, 34034/02):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ սույն գործով քննության առարկա նորմերի իրավակարգավորման շրջանակներում, մեղադրողի կողմից մեղադրանքը փոխելուց անմիջապես հետո, դատարանը հետաձգում է դատական նիստը եւ վիճարկվող հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին դատարանը նոր մեղադրանքին ծանոթանալու համար ժամանակ է տրամադրում նրանց միջնորդության դեպքում, իսկ ամբաստանյալին եւ նրա պաշտպանին՝ անկախ միջնորդությունից»: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերոհիշյալ հոդվածների տրամաբանությունից բխում է նաեւ, որ դատաքննության բոլոր փուլերում պետք է երաշխավորված լինեն կողմերի իրավունքների լիարժեք պաշտպանությունն ու դատաքննության մրցակցային սկզբունքի ամբողջական իրացումը:

9. Ի՞նչն է խանգարել իրավակիրառական պրակտիկան այս պահանջների շրջանակներում իրականացնելուն, եւ ինչու՞ է տեղ գտել ընդհուպ այնպիսի փաստ, երբ նույն գործով, առանց մեղադրողի հիմնավորված գրավոր միջնորդու-

թյան, դատարանի կողմից վեց ամսվա ընթացքում երեք անգամ մեկական ամսով հետաձգվում է քրեական գործով դատաքննությունը՝ վերջում ամբաստանյալին ճանաչելով անմեղ եւ դատարանով արդարացված (քր. գործ ԵԿԳ/0192/01/09):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դրա պատճառները հիմնականում հանգում են հետեւյալներին.

**Ուսիս**՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համակարգային անկատարությունը, դրա շարունակական փոփոխությունների ընթացքում իրավակարգավորման նախկին սկզբունքները մասամբ պահպանելու հանգամանքը: Վերջինս իր դրսեվորումն է գտել նաեւ քննության առարկային առնչվող օրենսդրական լրացումն իրականացնելիս: Մասնավորապես, ՀՀ Ազգային ժողովի 02 նոյեմբերի 2007թ. նիստի թիվ 23 տղագրության ուսումնասիրությունը վկայում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում 309.1-րդ հոդվածի լրացումը կատարվել է որպես համակարգային մի ամբողջականություն, որի շրջանակներում է հիմնավորվել նաեւ հոդվածի 5-րդ մասի անհրաժեշտությունը: Սակայն ներկայացված հիմնավորումների վերլուծությունը վկայում է, որ լիարժեք չի ապահովվել հիմնախնդրի համակարգային կարգավորումը, մասնավորապես՝ հաշվի չեն առնվել սահմանադրական դատարանի ՄԳՈ-710 որոշմամբ ամրագրված իրավական դիրքորոշումները: Ընդ որում, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը եւ չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներին»: Վերջիններս իմաստ ու բովանդակություն են ստանում, դառնում են իրավունքի աղբյուր իրենց ամբողջականության մեջ՝ հիմքում ունենալով դատարանի իրավական դիրքորոշումները: Այս մոտեցումը պետք է հաշվի առնվի ոչ միայն իրավաստեղծ գործունեության ընթացքում, այլեւ իրավակիրառական պրակտիկայում:

**Երկրորդ**՝ այդ մասով օրենսդրական լրացման ընդհանուր տրամաբանության մեջ նկատելի է դատարանի՝ մեղադրական գործառույթից ձերբազատված չլինելու հանգամանքը: Վերջինս չի բխում մրցակցային դատավարության եվրոպական արդի զարգացումների հիմնական միտումներից: Մասնավորապես, Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովն իր՝ 2010թ. մարտի 12-13-ի 82-րդ լիազումար նիստում հաստատեց «Դատական համակարգի անկախության մասին» չափորոշիչները, որում հատուկ շեշտվում է, որ դատական իշխանության անկախությունը չի կարող դիտարկվել միայն գուտ իշխանությունների տարանջատման տեսանկյունից: Այդ անկախությունն առաջին հերթին միջոց ու հնարավորություն է մարդու իրավունքների ու ազատությունների երաշխավորման համար, որը եւ հանդիսանում է դատական իշխանության հիմնական առաքելությունը: Այս տրամաբանությանն ամենեւին համահունչ չէ օրենսդրական այն դրույթը, համաձայն որի՝ դատավորը մեղադրողի վերադասի կարծիքը լրացուցիչ ճշտելուց հետո միայն կարող է իրավունքի պաշտպանություն երաշխավորել: Այն չի բխում նաեւ 1985թ. ՄԱԿ-ի կողմից ընդունված՝ Դատական մարմինների անկախության հիմնական սկզբունքների պահանջներից:

**Երրորդ**՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված նորմի համաձայն. «Մեղադրողը կարող է մինչեւ դատարա-

նի խորհրդակցական սենյակ հեռանալը փոխել մեղադրանքը, այդ թվում նաև՝ խստացման առումով, եթե դատական քննության ընթացքում հետազոտված ապացույցները անհերքելիորեն վկայում են, որ ամբաստանյալը կատարել է այլ հանցանք, քան այն, որը նրան մեղաազարկում է»։ Հիշյալ դրույթը գրեթե նույնությամբ ամրագրված է մի շարք այլ երկրների քրեական դատավարության օրենսգրքերում (Էստոնիա՝ հոդվ. 215, Լեհաստան՝ 398, Լատվիա՝ 461-462, Սերբիա՝ 341, Ուկրաինա՝ 277, Ղազախստան՝ 320, Մոլդովա՝ 326, Բուլղարիա՝ 287 եւ այլն)։ Սակայն որն է էական տարբերությունը Հայաստանի համեմատությամբ։ Դա առաջին հերթին վերաբերում է դատավարության կողմերի, մասնավորապես՝ դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակի առանձնահատկությանը։ Այս երկրներում դատախազությունը ոչ միայն հարուցում, այլև իրականացնում է քրեական հետապնդում։ Հայաստանի Հանրապետության դատախազությանը, որը ՀՀ Սահմանադրության վեցերորդ գլխում ներկայացված է որպես դատական իշխանության մարմին, քրեական գործի նախաքննության փուլում վերապահելով միայն վերահսկողական գործառույթ գործադիր իշխանության ինստիտուտների քննություն իրականացնելու գործառույթի նկատմամբ, նույն կարգավիճակի մեջ է դրվել նաև դատաքննության փուլում։ Դրանից բխեցվում է, որ եթե նոր ի հայտ եկած հանգամանքների հիմքով պետք է քննչական եւ այլ բնույթի գործողություններ իրականացվեն, ապա ամբաստանյալը կրկին պետք է հայտնվի մեղադրյալի կարգավիճակում, որպեսզի համարժեք գործողությունների դեպքում ի վիճակի լինի պաշտպանել իր իրավունքները։ Սակայն օրենսդրությունը կարգավիճակի նման փոփոխության ինստիտուտ չի նախատեսել, եւ դա նաև կհակասեր սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշմանը։ Արդյունքում՝ քողարկված ձեռով գործադրվում է գործը լրացուցիչ քննության վերադարձնելու պրակտիկան, որը չի բխում նաև ՀՀ քր. դատ. օր-ի վիճարկվող նորմերի դրույթներից, սակայն հարուցել է դիմողի ներկայացուցիչների արդարացի դժգոհությունը։ Ուստի սահմանադրական դատարանը վիճարկվող հոդվածի սահմանադրականությունը գնահատում է դրանում բովանդակվող բոլոր մասերի համակարգային ամբողջականության մեջ՝ նաև դրանից բխող իրավական հետեւանքների առումով։

Սահմանադրական դատարանը գտնում է, որ խնդրի լուծումը պայմանավորված է առկա նորմերի ճիշտ կիրառմամբ եւ առաջադրված մեղադրանքը դատաքննության փուլում փոփոխելու ինստիտուտի համակարգային ամբողջականության ապահովմամբ։ Մասնավորապես, մեղադրողն իր սահմանադրական իրավասությամբ դատարանում մեղադրանքի պաշտպանության գործառույթը պետք է իրականացնի ամբողջական ու արդյունավետ՝ երաշխավորելով դատական քննության շրջանակներում գործի վերջնական հանգուցալուծումը։

**Չորրորդ՝** դիմողն իր իրավունքների խախտումը դիտարկում է իրավակիրառական պրակտիկայի համատեքստում։ Մասնավորապես ընդգծում է, որ դատախազի միջնորդության հիման վրա դատարանը գործի դատաքննությունը հետաձգել է 29.07.2008 թվականին՝ մեկ ամսով, մինչդեռ մեկ օր հետո՝ 30.07.2008 թվականին դատախազը որոշում է կայացրել մեղադրանքը փոխելու մասին։ Նույն օրը փոփոխված մեղադրական եզրակացությունն ուղարկվել է դատարան։ **Այդ ընթացքում ոչ մի քննչական գործողություն չի կատարվել։** Այն քննչական

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

գործողությունները, որոնց հիման վրա ստացվել են ապացույցներ եւ որոնց վրա է հիմնվել նոր մեղադրանքը, այն է՝ զեկուցագիր, հարցաքննություն, լուսանկարով ճանաչման գործողություն, արդեն իսկ կատարվել էին մի քանի օր առաջ՝ 26.07.2008 թվականին:

Սահմանադրական դատարանի իրավասության հարցը չէ օրենքի նորմի կիրառման հետ կապված վեճի քննությունը: ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով ՀՀ վճռաբեկ դատարանին է վերապահված ապահովել օրենքի միատեսակ կիրառությունը: ՀՀ վճռաբեկ դատարանը 2009թ. դեկտեմբերի 18-ի՝ Սուրեն Նալբանդյանի վերաբերյալ ՀՅԲԲԴ-2/0144/01/09 գործով նախադեպային իր որոշմամբ փորձել է քննության առարկայի շրջանակներում ապահովել օրենքի միատեսակ կիրառությունը եւ բացառել դատական պրակտիկայում քողարկված ձեռով գործը լրացուցիչ քննության ուղարկելու ինստիտուտի կիրառումը: Մասնավորապես, վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 3-րդ մասերով նախատեսված իրավական ռեժիմներով մեղադրանքը փոփոխելու համար հիմք է մեղադրանքի փաստական հանգամանքների այնպիսի փոփոխությունը, որի հետեւանքով փոխվում է արարքի իրավաբանական որակումը կամ երբ նման փոփոխման դեպքում արարքի որակումը թեւ մնում է նույնը, սակայն փոխվում է հանցակազմի հատկանիշների բովանդակությունը, օրինակ՝ փոփոխվում է միեւնույն հանցակազմի դիսպոզիցիայում նկարագրված այլընտրանքային արարքը»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, իր կարեւորությամբ հանդերձ, հիշյալ նախադեպային որոշումն իրավակիրառական պրակտիկան լիարժեք չի կարող ուղղորդել այնպես, որ մեղադրողը, ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի հիմքերով՝ դատարանում մեղադրանքը պաշտպանելու իրավասության շրջանակներում, առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու եւ նոր մեղադրանք առաջադրելու համար դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ հիմնավոր միջնորդությունը դատարանի կողմից բավարարվելու դեպքում, անհրաժեշտ գործողություններ կատարի այն պայմանով, որ բացառվի ամբաստանյալի դատավարական կարգավիճակի որեւէ փոփոխություն եւ նրա շահերի ու իրավունքների ցանկացած ոտնահարում, որի գնահատողն ու երաշխավորողը տվյալ գործը քննող դատարանն է: Հետեւաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոնշյալ իրավապայմանների ապահովման դեպքում է հնարավոր դատաքննության փուլում երաշխավորել անձանց սահմանադրական իրավունքները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19, 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի դրույթները սույն որոշման մեջ սահմա-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

նադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի հիմքերով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19-րդ հոդվածին (1-ին մաս) հակասող եւ անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**2 ապրիլի 2010 թվականի  
ՍԳՈ- 872**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔԻ 118 ԵՎ 118.6-ՐԳ ՀՈԳՎԱԾՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

13 ապրիլի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի (գեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող Ա. Նիկողոսյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների.

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Անուշավան Նիկողոսյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 118 եւ 118.6-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ա. Նիկողոսյանի՝ 26.01.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց .**

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2007 թվականի նոյեմբերի 28-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի դեկտեմբերի 10-ին եւ ուժի մեջ է մտել 2008 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի վիճարկվող 118 եւ 118.6-րդ հոդվածներն ամրագրված են օրենսգրքի՝ «Վարչական գործերի վարույթը վճարելի դատարանում» վերտառությամբ 20-րդ գլխում:

Օրենսգրքի 118-րդ հոդվածը՝ «Վարչական գործերի վարույթը վճարելի դատարանում» վերտառությամբ, սահմանում է. «Վարչական դատարանի դատական ակտերի վճարելի դատարան բողոքարկման կարգի եւ գործերի վարույթի վրա (mutatis mutandis) տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը»:

Օրենսգրքի վիճարկվող 118.6-րդ հոդվածը՝ «Վճարելի բողոքը քննության ընդունելը» վերտառությամբ, սահմանում է.

«1. Վճարելի դատարանը բողոքն ընդունում է քննության, եթե՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճարելի դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ

2) վերանայվող դատական ակտն առերեսույթ (prima facie) հակասում է վճարելի դատարանի նախկինում ընդունած որոշումներին, կամ

3) առկա է նյութական կամ դատավարական իրավունքի խախտում, որը հանգեցրել է գործի սխալ լուծմանը, կամ

4) առկա է նոր երեսան եկած կամ նոր հանգամանք:

2. Վճարելի բողոքը վարույթ ընդունելուց հետո վճարելի դատարանը որոշմամբ կարող է կասեցնել դատական ակտի կատարումը:

3. Վճարելի դատարանի որոշումները պատշաճ ձեւով ուղարկվում են բողոք բերող անձին եւ գործին մասնակցող անձանց»:

Օրենսգրքի՝ «Վարչական գործերի վարույթը վճարելի դատարանում» վերտառությամբ 20-րդ գլուխը փոփոխության է ենթարկվել 2009թ. ապրիլի 7-ին ընդունված՝ «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-99-Ն ՀՀ օրենքով: Նշված օրենքով օրենսգրքի 20-րդ գլխում կատարված փոփոխություններն ու լրացումները պայմանավորվել են ՀՀ սահմանադրական դատարանի 2008թ. նոյեմբերի 25-ի ՍԳՈ-780 որոշմամբ, որով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասը եւ 118-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչվեցին ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի եւ 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող եւ անվավեր: Սահմանադրական դատարանը միաժամանակ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված իրավանդությունների ուժը կորցնելու վերջնական ժամկետ էր սահմանել 2009թ. մարտի 31-ը՝ ՀՀ Ազգային ժողովին հնարավորություն տալով օրենսդրական կարգավորումները համալիր ձեւով համապատասխանեցնելու դատարանի որոշման պահանջներին:

2009թ. ապրիլի 7-ին ընդունված՝ «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-99-Ն ՀՀ օրենքով ՀՀ Ազգային ժողովն օրենսգրքի 20-րդ գլխում 118-րդ հոդվածը շարադրեց նոր խմբագրությամբ եւ օրենսգիրքը լրացրեց 118.1-118.6-րդ հոդվածներով:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին: ՀՀ վարչական դատարանն իր՝ 04.09.2009թ. վճռով մերժել է դիմողի հայցն ընդդեմ



**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Լոռու մարզպետարանի՝ «Ակտը մասնակի առոչինչ ճանաչելու պահանջի մասին»: Նշված վճիռը դիմողի կողմից բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան: ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ՎԴ-6/0334/05/08 վարչական գործով ըստ հայցի Անուշավան Նիկողոսյանի ընդդեմ ՀՀ Լոռու մարզպետարանի՝ «Ակտը մասնակի առոչինչ ճանաչելու պահանջի մասին», իր՝ 02.12.2009թ. որոշմամբ վերադարձրել է ՀՀ վարչական դատարանի՝ թիվ ՎԴ-6/0334/05/08 վարչական գործով 04.09.2009թ. վճռի դեմ դիմողի կողմից նյութական իրավունքի նորմերի խախտման հիմքով բերված վճռաբեկ բողոքը:

3. Դիմողը՝ վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳՈ-780 որոշման մեջ տեղ գտած իրավական դիրքորոշումները, գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում 2009թ. ապրիլի 7-ին ընդունված՝ «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-99-Ն ՀՀ օրենքով կատարված փոփոխություններից ու լրացումներից հետո էլ ապահովված չէ վարչական արդարադատության երկաստիճան համակարգում վճռաբեկ դատարանի մատչելիությունն ու արդյունավետությունը: Մասնավորապես, օրենսգրքի 118-րդ հոդվածը շարունակում է հնարավորություն տալ վարչական գործերով վճռաբեկ վարույթի նկատմամբ կիրառել քաղաքացիական դատավարության նորմերը, իսկ 118.6-րդ հոդվածով սահմանված՝ վճռաբեկ բողոքի ընդունելիության պայմանները որեւէ կերպ չեն ապահովում վճռաբեկ դատարանի մատչելիությունը: Դիմողը խնդրում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118 եւ 118.6-րդ հոդվածները ճանաչել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի եւ 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող ու անվավեր:

4. Պատասխանողը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, նշում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳՈ-780 որոշումից հետո ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը լրացվեց վճռաբեկության կարգով դատական ակտերի վերանայումը, վճռաբեկ բողոք բերելու իրավունքը եւ հիմքերը, վճռաբեկ բողոք բերելու ժամկետները եւ կարգը, վճռաբեկ բողոքը քննության ընդունելու պայմանները սահմանող՝ 118.1-118.6-րդ հոդվածներով: Արդյունքում, թեւ սահմանվեց, որ վարչական դատարանի դատական ակտերի վճռաբեկ դատարան բողոքարկման կարգի եւ գործերի վարույթի վրա (mutatis mutandis) տարածվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը, այնուամենայնիվ, վճռաբեկության ինստիտուտի իրավակարգավորման հիմնական տարրերը, այդ թվում՝ նաեւ վճռաբեկ բողոքի հիմքերն ու ընդունելիության պայմանները, հաշվի առնելով վարչական արդարադատության առանձնահատկությունները, սահմանվեցին վարչական դատավարության օրենսգրքով:

Օրենսդիրը վճռաբեկության կարգով վարչական դատարանի դատական ակտերի բողոքարկման կարգի եւ գործերի վարույթի վրա քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը տարածել է այնքանով, որքանով դրանք բխում են երկաստիճան դատական համակարգում վճռաբեկության առանձնահատկություններից եւ երաշխավորում են վարչական արդարադատության համակարգում վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքը:

Ըստ պատասխանողի՝ օրենսգրքի վիճարկվող 118-րդ հոդվածը 118.1.-118.6-րդ հոդվածների հետ համակցության մեջ գնահատելու դեպքում պարզ է դառնում, որ գործող իրավակարգավորումն էապես տարբերվում է մինչև «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-99-Ն ՀՀ օրենքի ընդունումը գործած իրավակարգավորումից:

Պատասխանողը նաեւ փաստում է, որ վարչական դատավարությունում «...նյութական կամ դատավարական իրավունքի խախտման հիմնավորումը բավական է վճռաբեկ բողոքն ընդունելու համար»:

5. Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-780 որոշմամբ արտահայտել է մի շարք սկզբունքային իրավական դիրքորոշումներ Հայաստանի Հանրապետությունում վարչական արդարադատության արդյունավետ իրականացման, ինչպես նաեւ վարչական դատավարության մասնակիցների կողմից վարչական դատարանի ակտը բողոքարկելու իրավունքի երաշխավորման առումով: Սահմանադրական դատարանի այդ իրավական դիրքորոշումներն ամբողջությամբ վերաբերելի են նաեւ սույն գործով քննության առարկա հարցերին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վիճարկվող իրավանորմերն ընդունվել են ՀՀ սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշման արդյունքում՝ սահմանադրական դատարանը կարելու է համարում պարզել, թե որքանով են հաշվի առնվել ՍԴՈ-780 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներն օրենսդրական փոփոխությունները կատարելիս, ինչպես նաեւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ գլխում կատարված փոփոխություններն ու լրացումները որքանով են նպաստել վարչական արդարադատության երկաստիճան համակարգում վճռաբեկ դատարանի մատչելիության եւ արդյունավետության ապահովմանը:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ նման գնահատականը պահանջում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ գլխի փոխկապակցված բոլոր դրույթների համադրված վերլուծություն՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասին համապատասխան քննության առնել վիճարկվող նորմերի հետ համակարգային փոխկապակցվածության մեջ գտնվող՝ օրենսգրքի 20-րդ գլխի բոլոր դրույթների սահմանադրականության հարցը:

6. Վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ գլխի՝ 2007թ. նոյեմբերի 28-ի խմբագրությամբ, դրույթների եւ նույն գլխի՝ «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-99-Ն ՀՀ օրենքով փոփոխված դրույթների համեմատական վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ դատարանում վարչական գործերի վարույթի գործող իրավակարգավորմանը, ի տարբերություն նախկին իրավակարգավորման, հատուկ են հետեւյալ հիմնական տարրերը.

**նախ.** եթե օրենսգրքի 118-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը *mutatis mutandis* վերապահմամբ տարածվում են վճռաբեկ դատարան բողոքարկման կարգի եւ գործերի վարույթի վրա, ապա վարչական դատարանի ակտերի **բողոքարկման հիմքերի վրա,**

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

ի տարբերություն նախկին իրավակարգավորման, քաղաքացիական դատավարության նորմերը չեն տարածվում, եւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ գլխում փոփոխությունների արդյունքում ամրագրվել է «Վճռաբեկ բողոք բերելու հիմքերը» վերտառությամբ 118.3-րդ հոդվածը, որը սահմանում է վարչական դատարանի ակտերի վճռաբեկության կարգով բողոքարկման հիմքերը:

**Երկրորդ`** օրենսգրքի 20-րդ գլուխը (հոդված 118), նոր իրավակարգավորման արդյունքում նախատեսելով վարչական գործերով վճռաբեկ դատարան բողոքարկելու կարգի վրա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը տարածելու հնարավորություն, միաժամանակ ամրագրել է բողոքարկման կարգի առանձին տարրեր կանոնակարգող նորմեր (բողոքարկման ենթակա դատական ակտերի եւ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը, վճռաբեկ բողոք բերելու ժամկետները, վճռաբեկ բողոքը ներկայացնելու կարգը):

**Երրորդ`** օրենսգրքի 20-րդ գլխում ամրագրվել է 118.6-րդ հոդվածը, որը սահմանում է վարչական դատարանի ակտի դեմ բերված վճռաբեկ բողոքը քննության ընդունելու պայմանները, որոնք տարբերվում են քաղաքացիական գործերով վճռաբեկ բողոքը քննության ընդունելու պայմաններից:

Ինչ վերաբերում է վճռաբեկ դատարանում վարույթի կարգին, ապա այս առնչությամբ ներկա իրավակարգավորումը «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-99-Ն ՀՀ օրենքի ընդունման արդյունքում էական փոփոխության չի ենթարկվել, եւ վարչական գործերով վճռաբեկ դատարանում վարույթն հիմնականում իրականացվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերով:

Սահմանադրական դատարանը` հաշվի առնելով ՄԴՈ-780 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ գլխում կատարված փոփոխությունների ու լրացումների բովանդակային վերլուծության եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերի հետ դրանց համադրման արդյունքում արձանագրում է.

ա) մինչեւ «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-99-Ն ՀՀ օրենքի ընդունումն առկա իրավակարգավորման եւ գործող իրավակարգավորման միջեւ հիմնական բովանդակային տարբերությունը կայանում է նրանում, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված` վճռաբեկ բողոքի ընդունելիության պայմանը փոխարինվել է վարչական դատավարության օրենսգրքի 118.6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված պայմանով,

բ) կատարված փոփոխությունները համակարգային առումով ամբողջական չեն, չեն ապահովում ու երաշխավորում վճռաբեկ դատարանում վարչական վարույթի իրականացման հստակ կարգն ու առանձնահատկությունները (ինչը նախատեսված է նաեւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածով), չի գտնվել վարչական արդարադատության գործառնական ու կառուցակարգային դատարանակազմական ամբողջականության երաշխավորման արդյունավետ լուծում,

գ) հիմնական բացը, որը հանգեցնում է վարչական դատարանի ակտերի բողո-

քարկման առկա երկաստիճան համակարգի գործունակության էական թուլացմանը, վերաբերում է բողոքը վերադարձնելու հիմնախնդրի իրավակարգավորմանն ու դրան համապատասխան՝ կառուցակարգային երաշխիքների ապահովմանը:

7. Վիճարկվող 118.6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերում տեղ են գտել քաղաքացիական դատավարության եռաստիճան համակարգին բնորոշ իրավակարգավորումներ, մինչդեռ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական արդարադատության ներկայումս գործող **երկաստիճան համակարգում** վճռաբեկ բողոքի ընդունելիության պայմանները սահմանելիս պետք է գերակայեն **վճռաբեկ դատարանի մատչելիության եւ արդյունավետ բողոքարկման իրավունքի ապահովման** երաշխիքները: Վճռաբեկ դատարանի՝ որպես ընդհանուր իրավասության դատարանների համակարգում բարձրագույն մարմնի, կառուցակարգային կարգավիճակը չի կարող խոչընդոտել օրենքով նրան վերապահված իրավասության լիարժեք իրականացմանը եւ այդ բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացմանը, եթե ստեղծվում են դրա համար անհրաժեշտ նաեւ իրավական ու կառուցակարգային երաշխիքներ: Սահմանադրական դատարանը հաշվի է առնում այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ եւ օրենքով: Ուստի նրա որեւէ կառուցակարգային կարգավիճակ չի կարող լիազորության լիարժեք կատարման խոչընդոտ հանդիսանալ: Միաժամանակ, սահմանադրական իրավակարգավորման առանցքային խնդիրներից մեկը հենց այն է, որպեսզի երաշխավորվի «գործառույթ-ինստիտուտ-լիազորություն» շղթայի օրգանական ամբողջականությունն ու լիարժեքությունը: Եթե օրենսդիրն անհրաժեշտ է համարել Հայաստանում ձեւավորել մասնագիտացված վարչական դատարան՝ միայն դատական մեկ աստիճանով, իսկ վերջինիս ակտերի բողոքարկման իրավասությունը վերապահել վճռաբեկ դատարանին, ապա բողոքարկման համակարգի ամբողջականությունն ու արդյունավետությունը նույնպես պետք է երաշխավորվի այս կառուցակարգային լուծումների շրջանակներում: Մասնավորապես, դա վերաբերում է նաեւ բողոքների ընդունման ու դրանց ըստ էության քննության առանձնահատկություններին:

Հետեւաբար, վիճարկվող դրույթում վճռաբեկ դատարանի կարգավիճակի վկայակոչմամբ բողոքի ընդունելիության այնպիսի պայմաններ չեն կարող սահմանվել, ինչը կարող է արդյունավետ չդարձնել ու սահմանափակել անձի՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակը, այդ հնարավորության ապահովման անհրաժեշտությունից թելադրված պետք է փնտրվեն ու գտնվեն դատարանակազմական լուծումները:

Մասնավորապես, վարչական դատարանի ակտերի վերաբերյալ վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմքում պետք է դրվի ոչ միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի, այլեւ՝ 213-րդ հոդվածի իրավակարգավորման տրամաբանությունը՝ նախատեսելով դրա իրացման համապատասխան երաշխիքներ:

8. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում ամրագրված նորմի եւ ՀՀ քաղաքացիական դատավարության

օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում ամրագրված նորմի, մասնավորապես, դրանցում համապատասխանաբար՝ «հանգեցրել է գործի սխալ լուծմանը» եւ «կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետեւանքներ» բառակապակցությունների համեմատական վերլուծությունը վկայում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում 118.6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված պայմանը, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված պայմանի, որոշակի առաջընթաց է վճռաբեկ դատարանի մատչելիության ապահովման առումով: Սակայն սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այս փաստը դեռեւս բավարար պայման չէ նոր իրավակարգավորման արդյունավետությունը գնահատելու համար: Վերջինիս տեսանկյունից կարելու է նշանակություն ունի 118.6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում ամրագրված՝ բողոքի ընդունելիության պայմանի բովանդակությունը՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ:

Վարչական դատավարության օրենսգրքի 118.3-րդ հոդվածում ամրագրված՝ վճռաբեկ բողոք բերելու ընդհանուր հիմքում «կարող էր ազդել գործի ելքի վրա» բառակապակցության եւ 118.6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում ամրագրված՝ վճռաբեկ բողոքի ընդունելիության պայմանում «հանգեցրել է գործի սխալ լուծմանը» բառակապակցության համեմատական վերլուծությունը վկայում է, որ «կարող էր» բառակապակցությունն արտահայտում է հավանականություն եւ կրում է դիսպոզիտիվ բնույթ, իսկ 118.6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում ամրագրված՝ «հանգեցրել է» արտահայտությունը ենթադրում է փաստի հաստատում եւ կրում է իմպերատիվ բնույթ:

Նման տարբերությունը բովանդակային առումով նշանակում է, որ եթե վճռաբեկ բողոք բերող անձն իր բողոքում պարտավոր է հիմնավորել դատական սխալի՝ գործի ելքի վրա ազդեցության վերաբերյալ իր ենթադրությունը, ապա վճռաբեկ դատարանը **դիմումի ընդունելիության հարցի քննության փուլում** պարտավոր է ոչ թե ստուգել դատական սխալի՝ գործի ելքի վրա ազդեցության վերաբերյալ վճռաբեկ բողոք բերող անձի ենթադրության հիմնավորված լինելու հանգամանքը, այլ հաստատել այն փաստը, որ դատական սխալը հանգեցրել է կամ չի հանգեցրել գործի սխալ լուծմանը: Իրավակիրառական պրակտիկան եւս ձեւավորվել է օրենսգրքի 118.6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում ամրագրված նորմի նման ընկալմամբ: Մասնավորապես, այդ մասին է վկայում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշումներում, այդ թվում՝ դիմողի գործով կայացրած որոշման մեջ վճռաբեկ դատարանի հետեւյալ ձեւակերպումը. «Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան, գնահատելով գործում առկա ապացույցները, պարզելով գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները եւ կիրառելով սույն գործով կիրառման ենթակա օրենքները, իրավացիորեն հայցը մերժել է »:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական սխալի՝ գործի սխալ լուծմանը հանգեցրած լինելու կամ չլինելու **փաստի հաստատումն** իր բնույթով չի վերաբերում դիմումի ընդունելիության պայմաններին, մնան փաստի հաստատումը կարող է տեղի ունենալ դատաքննության փուլում՝ արդարության բողոք

պահանջների պահպանմամբ: Որպես վճռաբեկ բողոքի ընդունելիության պայման կարող է հանդես գալ գործի ելքի վրա ազդեցության վերաբերյալ վճռաբեկ բողոք բերող անձի **ենթադրության ներկայացված լինելու հանգամանքի ստուգումը**, այլ ոչ թե այն փաստի հաստատումը, որ դատական սխալը **հանգեցրել է կամ չի հանգեցրել** գործի սխալ լուծմանը:

Նման եզրահանգման համար հիմք է հանդիսանում նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ի մասը, որի համաձայն՝ «Դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի՝ ըստ էության ճիշտ վճիռը չի կարող բեկանվել միայն ձեռնարկյալ նկատառումներով»: Այս նորմը եւս վկայում է այն մասին, որ դատական սխալի՝ գործի սխալ լուծմանը հանգեցնելու փաստի հաստատումը հանդիսանալով վճռի բեկանման հիմք՝ չի հանդիսանում եւ չի կարող հանդիսանալ բողոքի ընդունելիության պայման: Հետեւաբար, **այդ հարցը ենթակա է լուծման դատաքննության փուլում**, այլ ոչ թե դիմումի ընդունելիության հարցի քննության փուլում:

Մահմանադրական դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի ընդունելիության հարցի քննության փուլում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «առկա է» բառը չի կարող ընկալվել ու մեկնաբանվել որպես բողոքի ընդունման փուլում նյութական կամ դատավարական իրավունքի խախտումը հաստատելու վճռաբեկ դատարանի պարտավորվածություն՝ դրանով իսկ ընդունելիության հարցի լուծումը կախման մեջ դնելով գործի դատաքննության փուլում ըստ էության լուծման ենթակա հարցից, սահմանափակելով վճռաբեկ դատարանի մատչելիությունը՝ դատական պաշտպանության միջոցը դարձնելով անարդյունավետ: Վճռաբեկ բողոք բերող անձի պնդումը գործի ելքի վրա ազդող դատական սխալի **ենթադրյալ առկայության** մասին, եթե այդ պնդումն ակնհայտ անհիմն չէ, թույլատրելիության այլ նախադրյալների հետ մեկտեղ (ժամկետներ, բողոքի ձեռի ներկայացվող պահանջներ եւ այլն), բավարար է գործը քննության ընդունելու համար, եւ վճռաբեկ դատարանն իրավասու չէ այդ փուլում ստուգելու վճռաբեկ բողոքի **հիմնավորվածությունը**՝ այդպիսի սխալի իրական առկայությունը («առկա է», «հանգեցրել է գործի սխալ լուծմանը», «ազդել է գործի լուծման վրա»), քանի որ դրանով փոխարինվում կամ կանխորոշվում է դատաքննությունը, որը եւ պետք է ապահովի գործի արդարացի քննությունը՝ համապատասխան երաշխիքների պահպանմամբ:

9. Վարչական դատարանի վճռի դեմ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշումների ուսումնասիրությունը վկայում է նաև, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ գլխում կատարված փոփոխություններից եւ լրացումներից հետո էլ վճռաբեկ դատարանը շարունակում է վարչական գործերով վճռաբեկ վարույթի նկատմամբ կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը, անկախ նրանից, դրանք **դուրս են գալիս դատական համակարգի ընդհանուր սահմանադրական սկզբունքների շրջանակներից, թե՛ ոչ**: Ավելին, վճռաբեկ դատարանը՝ կիրառելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ վճռաբեկ բողոք բերելու հիմքերը սահմանող 118.3-րդ հոդվածը եւ բողոքի ընդունելիության պայմանները սահմա-

նող 118.6-րդ հոդվածը, զուգահեռաբար կիրառում է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համարժեք 226 եւ 234-րդ հոդվածները, այդ թվում վճռաբեկ բողոքի ընդունելիության այն պայմանները, որոնք սահմանված են 234-րդ հոդվածի 1-ին մասում:

Նման իրավիճակի առնչությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակիրառական պրակտիկայում իրացված չէ սահմանադրական դատարանի այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածում «*mutatis mutandis*» վերապահումը չի կարող մեկնաբանվել այնքան լայն, որ վարչական դատարանի ակտերի բողոքարկման նկատմամբ ամբողջությամբ կիրառվեն քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը:

Ավելին, սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածը (նոր խմբագրությամբ) ընդհանրապես թույլ չի տալիս հղում կատարել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի այն նորմերին, որոնք սահմանում են վճռաբեկ բողոք բերելու հիմքերը:

Արդարադատության արդյունավետությունը ենթադրում է **թույլատրելի ճանաչված վճռաբեկ բողոքների ըստ էության քննություն** վճռաբեկ դատարանում՝ արդարության բոլոր պահանջների պահպանմամբ եւ վարչական արդարադատության առանձնահատկությունների հաշվառմամբ: Թույլատրելիության հարցի լուծման ժամանակ բուն արդարադատության կանխորոշումն իմաստագրվում է դրա արդյունավետությունը, իսկ **բողոքի թույլատրելիության հիմքը շփոթվում է վարչական դատարանի ակտի բեկանման հիմքի հետ**: Սահմանադրական դատարանը գտնում է, որ արդարադատության նման ձեւականացումն անհամատեղելի է դրա սահմանադրական իմաստի հետ:

10. ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական դատարանի ակտերի բողոքարկման ինստիտուտի լիարժեքությունն օրենսդրորեն ապահովված չէ: Այս հարցում իրավական անորոշությունը հաղթահարելու եւ իրավակարգավորման բացը լրացնելու համար էական նշանակություն կարող է ունենալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ գլխում վճռաբեկ բողոքը վերադարձնելու հստակ իրավակարգավորումը՝ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳՈ-780 որոշման եւ սույն որոշման մեջ շարադրված իրավական դիրքորոշումները հաշվի առնելով:

Առավել կարեւոր է այն հանգամանքը, որ վարչական արդարադատության ներկա երկաստիճան համակարգի պահպանման պարագայում օրենսդրորեն պետք է գտնվեն կառուցակարգային այնպիսի լուծումներ, որ ՀՀ վճռաբեկ դատարանն ի վիճակի լինի արդյունավետ իրականացնել վարչական դատարանի ակտերի վերաբերյալ բողոքների ընդունման ու դրանց դատաքննության արդարադատական պահանջները:

Լրացուցիչ հստակեցման անհրաժեշտություն ունեն նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ գլխում տեղ գտած մի շարք այլ դրույթներ: Մասնավորապես, 118.1-րդ հոդվածում ի հայտ է գալիս «վարչական դատավարական օրենսդրությամբ նախատեսված բացառիկ դեպքեր» արտահայտությունը, իսկ 118.4-րդ հոդվածի 2-րդ մասում միջանկյալ դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք

բերելը պայմանավորվում է այլ հատուկ օրենքով նախատեսված դեպքերով, մինչդեռ հենց ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 4-րդ մասն է հիշատակում միջանկյալ ակտերը բողոքարկելու հիմքերը: Նույնը վերաբերում է այդ ակտերը բողոքարկելու համար այլ օրենքով ժամկետ սահմանելու հնարավորությանը, որով վարչական դատավարության համակարգն անհարկի փոխկապակցվում է անորոշ հատուկ օրենքների հետ՝ առանց որեւէ կոնկրետ հղման: Իսկ 118.5-րդ հոդվածի վերնագիրը շատ ավելի լայն է, քան այդ հոդվածի բովանդակությունը, բացի դրանից, որեւէ առնչություն չունի դրա 2-րդ եւ 3-րդ մասերի հետ, որոնք վերաբերում են վճռաբեկ բողոք բերած վարչական մարմնի պարտականությանը եւ վարչական դատարանի կողմից գործը վճռաբեկ դատարան ուղարկելուն:

Այս բոլորը վկայում են, որ միայն իրավակիրառական պրակտիկայի վերանայմամբ հիմնախնդիրը չի կարող լուծվել: Այն անհրաժեշտ օրենսդրական լուծումներ է պահանջում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19, 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածը՝ սույն որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «առկա է» եւ «հանգեցրել է» բառակապակցությունները՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրանց տրված մեկնաբանության շրջանակներում ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19-րդ հոդվածին (1-ին մաս) հակասող եւ անվավեր:

3. Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-17-րդ մասերի դրույթներով եւ հաշվի առնելով, որ վարչական արդարադատության առկա երկաստիճան համակարգի գործունակության եւ արդյունավետության անհրաժեշտ մակարդակի ապահովումը կամ հիմնախնդիրն համակարգային այլ լուծումներ տալը պահանջում են օրենսդրական համարժեք կարգավորումներ, սույն որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետով ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2010թ. դեկտեմբերի 1-ը:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**13 ապրիլի 2010 թվականի  
ՍԳ-Ո-873**





**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**1980 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 9-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՓՈԽԱԳՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

20 ապրիլի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի (գեկուցող), Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1980 թվականի մայիսի 9-ին ստորագրված՝ Միջազգային երկաթուղային փոխադրումների մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 08.02.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով կոնվենցիան եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Կոնվենցիան ստորագրվել է 1980թ. մայիսի 9-ին, 1999թ. հունիսի 3-ին լրամշակվել է փոփոխությունների մասին արձանագրությամբ:

2. Կոնվենցիայի նպատակն է նպաստել, բարելավել եւ դյուրացնել միջազգային երկաթուղային փոխադրումները՝ ստեղծելով միջազգային երկաթուղային փոխադրումների համար միասնական կանոններ:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

3. Կոնվենցիան բաղկացած է յոթ բաժիններից եւ յոթ հավելվածներից, որոնք կոնվենցիայի անբաժանելի մաս են կազմում:

4. Կոնվենցիայով եւ կից հավելվածներով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- կենտրոնացնել միջազգային համագործակցությունը երկաթուղային ոլորտում՝ ձեռնարկելով անհրաժեշտ եւ օգտակար միջոցներ,

- ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները միջազգային երկաթուղային փոխադրումները դյուրացնելու եւ արագացնելու նպատակով,

- աջակցել երկաթուղային վազոնների, երկաթուղային անձնակազմի, երկաթուղային ենթակառուցվածքի եւ օժանդակ ծառայությունների վերաբերյալ կանոնակարգերի, չափանիշների, ընթացակարգերի եւ կազմակերպչական մեթոդների միասնականության առավելագույն աստիճանի ապահովմանը,

- Հայաստանի Հանրապետությունում պահանջվող ձեւականությունները կատարելուց հետո կատարել այն վճիռները, որոնք հայտարարվում են իրավասու դատարանի կամ տրիբունալի կողմից՝ համաձայն կոնվենցիայի դրույթների,

- պատասխանատվություն կրել բոլոր այն ծախսերի եւ հատուցված վնասների համար, որոնք հասցվել են փոխադրողին,

- տեղեկացնել մյուս պետությանը ցանկացած իրադարձության մասին, որը կարող է խանգարել նրա կողմից կնքված պայմանագրի կատարմանը,

- կոնվենցիան մեկնաբանելիս եւ կիրառելիս հաշվի առնել դրա միջազգային իրավունքի բնույթը եւ միասնականությանը նպաստելու անհրաժեշտությունը, իսկ որեւիցե դրույթի բացակայության դեպքում կիրառել ազգային իրավունքը, այն է՝ պետության իրավունքը, որտեղ իրավասու անձը պաշտպանում է իր իրավունքները, ներառյալ կոլիզիոն նորմերը:

Կոնվենցիայում ամրագրված է նաեւ կոնվենցիային միանալու, վերապահումներ անելու եւ չեղյալ հայտարարելու կարգը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 1980 թվականի մայիսի 9-ին ստորագրված՝ Միջազգային երկաթուղային փոխադրումների մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՎ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**20 ապրիլի 2010 թվականի  
ՍԳՈ-874**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԱՏՎԻԱՅԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՕԳԱՅԻՆ  
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**20 ապրիլի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի դեկտեմբերի 10-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Լատվիայի Հանրապետության կառավարության միջեւ օդային հաղորդակցությունների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 16.03.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի տեղակալ Ա. Մարությանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց .**

98 ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(58)2011

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2009թ. դեկտեմբերի 10-ին Երեւանում՝ երկու երկրների միջեւ կանոնավոր օդային հաղորդակցությունների կարգավորման նպատակով:

2. Համաձայնագրի բաղկացուցիչ մաս է կազմում հավելվածը, որը սահմանում է երթուղիների ցանկը:

3. Համաձայնագրով սահմանված են սերտիֆիկատների եւ լիցենզիաների ճանաչման, ավիաընկերությունների նշանակման եւ շահագործման թույլտվության տրամադրման, օդային ուղիների շահագործման թույլտվության մերժման, չեղյալ ճանաչման կամ կասեցման կարգն ու պայմանները:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- մյուս կողմին տրամադրել համաձայնագրով սահմանված իրավունքները համաձայնագրի հավելվածում սահմանված երթուղիներով միջազգային օդային հաղորդակցությունները շահագործելու նպատակով,

- ավիաընկերությունների նշանակման մասին տեղեկություն ստանալուն պես նվազագույն ընթացակարգային հետաձգումներով տրամադրել շահագործման համապատասխան լիազորությունները եւ թույլտվությունները,

- եթե օդային ուղիների չեղյալ ճանաչելը, կասեցնելը կամ համաձայնագրով նախատեսված այլ պայմաններ սահմանելն էական չեն օրենքների եւ/կամ կանոնակարգերի հետագա խախտումները կանխելու նպատակով, ապա նման իրավունքն իրականացնել միայն մյուս կողմի հետ խորհրդակցություններ անցկացնելուց հետո,

- մյուս կողմի նշանակած ցանկացած ավիաընկերության օդանավի համար օդանավակայանների եւ այլ ավիացիոն միջոցների օգտագործման դիմաց չգանձել ավելի բարձր վճարներ, քան նմանատիպ միջազգային օդային հաղորդակցություններ շահագործող ազգային ավիաընկերությունից գանձվող վճարներն են,

- մյուս կողմի նշանակած ազգային օդանավերը, դրանց սովորական սարքավորումները, պահեստամասերը, վառելիքի եւ քսայուղերի պաշարները, օդանավում գտնվող պաշարներն ազատել բոլոր տեսակի մաքսատուրքերից, տեսչական եւ նմանատիպ այլ վճարներից՝ պայմանով, որ այդ սարքավորումները, պահեստամասերը եւ պաշարները մնալու են օդանավում այնքան ժամանակ, քանի դեռ դրանք չեն վերադարձվել, օգտագործվել կամ սպառվել օդանավերի թռիչքի ընթացքում,

- ՀՀ տարածքում մաքսատուրքերից եւ հարկերից ազատել ՀՀ տարածք ներմուծված անհրաժեշտ փաստաթղթերը, ինչպիսիք են չվացուցակները, ավիատոմսերը եւ բեռնագրերը՝ նախատեսված մյուս կողմի նշանակած ավիաընկերության օգտագործման համար,

- հաղորդակցությունների շահագործումից առնվազն երեսուն օր առաջ մյուս կողմի ավիացիոն իշխանությունների հաստատմանը ներկայացնել չվերթերի ծրագրերը,

- ձեռնարկել հնարավոր բոլոր միջոցները՝ վերացնելու համար խտրականության բոլոր դրսևտրումները կամ անարդար մրցակցային գործելակերպը, ինչպես նաև երաշխավորել համաձայնագրի հավելվածում սահմանված ցանկացած երթուղում համաձայնեցված հաղորդակցությունները շահագործելու՝ արդար եւ հավասար հնարավորությունները,

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

• տրամադրել անհրաժեշտ ողջ աջակցությունը՝ կանխելու համար օդանավերի ապօրինի զավթման գործողությունները եւ օդանավերի, ուղեորների եւ անձնակազմի, օդանավակայանների եւ աերոնավիգացիոն միջոցների անվտանգության դեմ ուղղված այլ անօրինական գործողությունները, ինչպես նաեւ քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված ցանկացած այլ սպառնալիք,

• ժամանակ առ ժամանակ անցկացնել խորհրդակցություններ՝ ապահովելով համաձայնագրի եւ դրան կից հավելվածի դրույթների կիրառումը, ինչպես նաեւ համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ առաջացած ցանկացած վեճ առաջին հերթին կարգավորել բանակցությունների միջոցով:

5. Համաձայնագիրն ամրագրում է դրույթներ, որոնք վերաբերում են ավիացիոն անվտանգությանը, սահմանված են նաեւ օրենքների եւ կանոնակարգերի կիրառման, վեճերի կարգավորման, համաձայնագրում փոփոխությունների կատարման, համաձայնագրի դադարեցման եւ ուժի մեջ մտնելու կարգն ու պայմանները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2009 թվականի դեկտեմբերի 10-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Լատվիայի Հանրապետության կառավարության միջեւ օդային հաղորդակցությունների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը :

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**20 ապրիլի 2010 թվականի  
ՍԳՈ- 875**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2001 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ՍՏՐԱՍԲՈՒՐԳՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
«ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՓՈԽԱԳԱՐՉ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»  
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԵՐԿՐՈՐԴ ԼՐԱՑՈՒՑԻՉ  
ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՉ /ԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ/  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**20 ապրիլի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուգյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդված 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2001 թվականի նոյեմբերի 8-ին Ստրասբուրգում ստորագրված՝ «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» եվրոպական կոնվենցիայի երկրորդ լրացուցիչ արձանագրության մեջ /կից հայտարարություններով/ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանին ուղղված Հանրապետության Նախագահի դիմումը՝ մուտքագրված 2010թ. մարտի 3 -ին:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ արդարադատության նախարար Գ. Դանիելյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով Արձանագրությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց .**

ՍԱՐՅԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ • ՏԵՂԵԿԱԳԻՐ • 1(58)/2011

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

1. Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին եվրոպական կոնվենցիան ստորագրվել է 1959թ. ապրիլի 20-ին Ստրասբուրգում: Սույն Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի 2001թ. նոյեմբերի 21-ի թիվ Ն-229-2 որոշմամբ:

1978թ. մարտի 17-ին Ստրասբուրգում ստորագրվել է հիշյալ Կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը /Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի 2004թ. մարտի 3-ի թիվ Ն-079-3 որոշմամբ/, իսկ 2001թ. նոյեմբերի 8-ին՝ Կոնվենցիայի երկրորդ լրացուցիչ արձանագրությունը, որն ուժի մեջ է մտել 2004թ. փետրվարի 1-ին: Վերջինս Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրվել է 2009թ. մարտի 3-ին:

Քննության ենթակա Արձանագրության նախաբանից բխում է, որ կարեւորելով Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների՝ հանցագործությունների դեմ պայքարում անհատական եւ հավաքական հնարավորությունների համախմբման նշանակությունը՝ այն նպատակ ունի բարելավել եւ լրացնել 1959թ. ապրիլի 20-ի եվրոպական կոնվենցիան, ինչպես նաեւ 1978թ. մարտի 17-ի լրացուցիչ արձանագրությունը:

Արձանագրության առանձին նորմերի պահանջներին համահունչ՝ Հայաստանի Հանրապետությունը հանդես է եկել համապատասխան հայտարարություններով, որոնք կոչված են գործնականում դյուրացնելու եւ երաշխավորելու Արձանագրության հստակ եւ ճշգրիտ կատարումը: Նշված հայտարարությունները վերաբերում են Արձանագրության 4-րդ հոդվածի 8-րդ կետին, 6-րդ հոդվածին, 17-րդ, 18-րդ եւ 19-րդ հոդվածների 4-րդ կետերին ու 26-րդ հոդվածի 5-րդ կետին:

2. Գործի նյութերի ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» եվրոպական կոնվենցիայի երկրորդ լրացուցիչ արձանագրությունը /կից հայտարարություններով/ բաղկացած է նախաբանից, երեք բաժիններից եւ 35 հոդվածներից:

Արձանագրության 1-ին բաժնում ներառված 1-6-րդ հոդվածներով փոփոխություններ եւ լրացումներ են կատարվել Կոնվենցիայի 1-ին, 4-րդ, 11-րդ, 15-րդ, 20-րդ եւ 24-րդ հոդվածներում:

Արձանագրության 1-ին բաժնում ամրագրված դրույթները նպատակաուղղված են ընդարձակել Կոնվենցիայի կիրառման ոլորտը, կարգավորում են կալանքի տակ գտնվող անձանց ժամանակավոր փոխանցման, Կոնվենցիայի կատարման հետ կապված ծախսերի փոխհատուցման եւ դատական մարմինների միջեւ անմիջական հաղորդակցությանն առնչվող, ինչպես նաեւ տարաբնույթ այլ հարցեր:

Արձանագրության 1-ին հոդվածը սահմանում է, որ կողմերը պարտավորվում են անհապաղ միմյանց տրամադրել փոխադարձ օգնության ամենալայն միջոցներ այն հանցագործությունների դատավարության առնչությամբ, որոնց համար պատիժ սահմանելն օգնության մասին հարցման պահին գտնվում է հայցող կողմի դատական մարմինների իրավասության ներքո: Փոխադարձ օգնությունը կարող է տրամադրվել նաեւ այն դատական վարույթներով, որոնք հարուցվում են վարչական մարմինների կողմից՝ այնպիսի գործողությունների նկատմամբ, որոնք պատժելի են հայցող կամ հայցվող կողմի ազգային օրենքով՝ օրենքի գերակայության խախտումների հիմքերով, երբ որոշումը կարող է հիմք հանդիսա-

նալ, մասնավորապես, քրեական գործերով դատարանի առջեւ՝ դատաքննություն սկսելու համար:

Արձանագրության 3-րդ հոդվածով կարգավորվում են կալանավորված անձանց հայցող կողմի տարածք ժամանակավոր փոխանցման կարգը եւ պայմանները: Մասնավորապես, կալանքի տակ գտնվող անձը, որի անձնական ներկայության համար դիմել է հայցող կողմը՝ ապացուցման այնպիսի նպատակներով, որոնք այլ են, քան դատարանի առջեւ հանդես գալը, պետք է ժամանակավորապես փոխանցվի նրա տարածք՝ պայմանով, որ նա պետք է հետ ուղարկվի հայցվող կողմի սահմանած ժամանակահատվածում եւ Կոնվենցիայի դրույթներին համապատասխան՝ այնքանով, որքանով դրանք կիրառելի են: Հիշատակված հոդվածը նախատեսում է նաեւ կալանավորված անձանց ժամանակավոր փոխանցման մերժման դեպքերը:

Արձանագրության 4-րդ հոդվածը, որով փոփոխվում է Կոնվենցիայի 15-րդ հոդվածը, արձանագրում է, որ փոխադարձ օգնության մասին հարցումները, ինչպես նաեւ առանց հարցման տրամադրվող տեղեկատվությունը պետք է հայցող կողմի արդարադատության նախարարության կողմից գրավոր հասցեագրվեն հայցվող կողմի արդարադատության նախարարությանը եւ վերադարձվեն միեւնույն ուղիներով:

Արձանագրության 5-րդ հոդվածը փոփոխություններ է կատարել Կոնվենցիայի 20-րդ հոդվածում, համաձայն որի՝ կողմերը միմյանց չպետք է Կոնվենցիայի կամ դրա արձանագրությունների կիրառումից բխող ծախսերի հատուցման պահանջ ներկայացնեն՝ բացառությամբ նույն հոդվածով նախատեսված դեպքերի:

Արձանագրության 2-րդ բաժնի նորմերը, որոնք հիմնականում նորույթ են, սահմանում են իրավական օգնության հարցումներով նախատեսված գործողությունների կատարման հետաձգման, տեսակոնֆերանսների կամ հեռախոսային կոնֆերանսների միջոցով հարցաքննությունների անցկացման հետ կապված հարաբերությունները, նախատեսում են անդրսահմանային հսկողություն իրականացնելու հնարավորությունը, համատեղ գաղտնի հետաքննություն իրականացնելու, համատեղ հետաքննության խմբեր կազմավորելու, ինչպես նաեւ այդ խմբերի գործունեության կարգն ու պայմանները:

Արձանագրության 7-րդ հոդվածին համապատասխան հայցվող կողմը կարող է հետաձգել հարցմամբ նախատեսված գործողությունը, եթե նման գործողությունը վնաս է հասցնում իր իրավասու մարմինների կողմից կատարվող հետաքննությանը, դատական կարգով հետապնդմանը կամ դրան առնչվող դատավարությանը: Եթե հարցումը հետաձգվում է, ապա պետք է տրամադրվեն հետաձգման պատճառները:

Արձանագրության 9-րդ հոդվածը նվիրված է տեսակոնֆերանսի միջոցով իրականացվող հարցաքննությանը: Եթե անձը գտնվում է կողմերից մեկի տարածքում եւ որպես վկա կամ փորձագետ պետք է հարցաքննվի մյուս կողմի դատական մարմինների կողմից, վերջինս կարող է, եթե այդ անձի համար ցանկալի կամ հնարավոր չէ նրա տարածքում հարցաքննությանն անձամբ ներկա գտնվելը, խնդրել, որ հարցաքննությունը կատարվի տեսակոնֆերանսի միջոցով: Հայցվող կողմը պետք է համաձայնի տեսակոնֆերանսի միջոցով հարցաքննությանը՝ պայմանով, որ տեսակոնֆերանսի կիրառումը չի հակասում իր օրենքի հիմնա-



**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

րար սկզբունքներին, եւ որ ինքը հարցաքննությունն անցկացնելու համար տեխնիկական միջոցներ ունի: Կողմերը, իրենց հայեցողությամբ, կարող են տեսակոնֆերանսի միջոցով հարցաքննությունը կիրառել նաեւ մեղադրյալի կամ կասկածյալի մասնակցությամբ:

Արձանագրության 10-րդ եւ 11-րդ հոդվածները կարգավորում են հեռախոսային կոնֆերանսի միջոցով իրականացվող հարցաքննության, ինչպես նաեւ առանց հարցման տրամադրվող տեղեկատվությանն առնչվող խնդիրները:

Արձանագրությունն առանձնակի կարեւորել է նախկին իրավական վիճակի վերականգնման՝ ռեստիտուցիայի ինստիտուտը: Հայցող կողմի հարցման հիման վրա եւ առանց վնաս հասցնելու բարեխիղճ երրորդ կողմերի իրավունքներին՝ հայցվող կողմը կարող է հանցագործ ճանապարհով ձեռք բերված առարկաները տրամադրել հայցող կողմին՝ դրանք օրինական սեփականատերերին վերադարձնելու նպատակով /հոդված 12/:

Արձանագրության 17-րդ հոդվածով կանոնակարգված է անդրսահմանային հսկողության իրավական ռեժիմը, համաձայն որի՝ կողմերից մեկի ոստիկանության պաշտոնյաները, որոնք քրեական հետաքննության շրջանակներում իրենց երկրում հսկում են քրեական հանցագործությանը մասնակցելու մեջ ենթադրվող անձին, պետք է իրավասու լինեն շարունակելու իրենց կողմից իրականացվող հսկողությունը մյուս կողմի տարածքում, եթե վերջինս թույլատրել է իրականացնել անդրսահմանային հսկողություն՝ նախկինում ներկայացված օգնության հարցմանն ի պատասխան: Պայմանները կարող են կցվել թույլտվությանը:

Արձանագրությունը պարտավորեցնում է հայցվող կողմին, հայցող կողմի հարցմամբ, իր ազգային օրենքին համապատասխան, ձեռնարկել ժամանակավոր միջոցներ փաստերի պահպանման, գործող իրավիճակի հաստատման կամ վտանգված իրավական շահերի պաշտպանության համար /հոդված 24/:

Արձանագրության 2-րդ բաժնի հաջորդ դրույթները վերաբերում են համատեղ գաղտնի հետաքննության, կողմերի պաշտոնյաների քրեական եւ քաղաքացիական պատասխանատվության, վկաների պաշտպանության, տեղեկատվության գաղտնիության եւ պաշտպանության հետ կապված հարցերին:

Արձանագրության 3-րդ բաժնում /30-35-րդ հոդվածներ/ զետեղված առանձին դրույթները սահմանում են Արձանագրության ստորագրման, ուժի մեջ մտնելու, միանալու եւ չեղյալ հայտարարելու ընթացակարգերը, պայմանները եւ ժամկետները:

3. Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության կարծիքի՝ Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը չի ստանձնում ֆինանսական պարտավորություններ:

Այսպիսով, հարկ է արձանագրել, որ Արձանագրությամբ ամրագրված՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածով հռչակված դրույթներին, կոչված են գործնականում նպաստելու հանցագործությունների դեմ պայքարում պետությունների համատեղ ջանքերին, ինչպես նաեւ ընդլայնելու այդ բնագավառում պետությունների անհատական եւ հավաքական հնարավորությունների շրջանակները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

հողվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2001 թվականի նոյեմբերի 8-ին Ստրասբուրգում ստորագրված՝ «Զրեական գործերով փոխադարձ օգնության մասին» եվրոպական կոնվենցիայի երկրորդ լրացուցիչ արձանագրության մեջ /կից հայտարարություններով/ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**20 ապրիլի 2010 թվականի  
ՍԴՈ-876**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ`  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԱՏՎԻԱՅԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ,  
ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՅԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՄՐԱՄԻՋՈՅՆԵՐԻ,  
ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՈՒ ԳՐԱՆՅ ԲԱՂԱԳՐԱՏԱՐՐԵՐԻ  
ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ` ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**20 ապրիլի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուկյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի (գեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ ՀՀ Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Ա. Օսիկյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների.

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի դեկտեմբերի 10-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Լատվիայի Հանրապետության կառավարության միջեւ ահաբեկչության, կազմակերպված հանցավորության եւ թմրամիջոցների, հոգեմեդրոդուն նյութերի ու դրանց բաղադրատարրերի ապօրինի շրջանառության եւ այլ հանցագործությունների դեմ պայքարում համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(58)2011  
106

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 22.03.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2009թ. դեկտեմբերի 10-ին՝ Երեւանում:

2. Համաձայնագրի նպատակն է ահաբեկչության, կազմակերպված հանցավորության եւ թմրամիջոցների, հոգեներգործուն նյութերի ու դրանց բաղադրատարրերի ապօրինի շրջանառության դեմ պայքարում օպերատիվ համագործակցության հարցերի հետ կապված գործողությունների համաձայնեցումը:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- օպերատիվ գործունեության իրականացման արդյունքում ստացված տեղեկատվության փոխանցում, այդ թվում՝

- ա) ծրագրվող կամ կատարված ահաբեկչական գործողությունների, դրանցում ներգրավված անձանց, կատարման մեթոդների եւ օգտագործվող տեխնիկական սարքավորումների,

- բ) թմրամիջոցների, հոգեներգործուն նյութերի եւ դրանց բաղադրատարրերի ապօրինի շրջանառությանը մասնակցելու մեջ կասկածվող անձանց,

- գ) հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման)՝ հայտնաբերված փաստերի ու ձեւերի մասին,

- մյուս կողմի հայցի համաձայն՝ ահաբեկչության, կազմակերպված հանցավորության եւ թմրամիջոցների, հոգեներգործուն նյութերի եւ դրանց բաղադրատարրերի ապօրինի շրջանառության հետ կապված գործերով օպերատիվ միջոցառումների անցկացում, աջակցություն կադրերի պատրաստման եւ նրանց որակավորման բարձրացման գործում, խորհրդատվական օգնության ցուցաբերում, աջակցություն բարդ փորձաքննությունների անցկացման գործում,

- մյուս կողմից ստացված տեղեկատվության եւ տեղեկությունների գաղտնիության ապահովում՝ համաձայն հաղորդող կողմի խնդրանքի:

Համաձայնագրով սահմանված են դրա ուժի մեջ մտնելու եւ դադարեցման ընթացակարգերը, ինչպես նաեւ դրանում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու կարգը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2009 թվականի դեկտեմբերի 10-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Լատվիայի Հանրապետության կառավարության միջեւ ահաբեկչության, կազմակերպված հանցավորության եւ թմրա-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

միջոցների, հոգեներգործուն նյութերի ու դրանց բաղադրատարրերի ապօրինի շրջանառության եւ այլ հանցագործությունների դեմ պայքարում համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

20 ապրիլի 2010 թվականի  
ՍԳՈ- 877



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-ԻՆ ՔՈՒՎԵՅԹՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՈՒՎԵՅԹԻ  
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ  
ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՅԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ  
ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. երեսան**

**20 ապրիլի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի նոյեմբերի 3-ին Քուվեյթում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Քուվեյթի Պետության կառավարության միջեւ եկամտունների եւ գույքի կրկնակի հարկումը բացառելու եւ հարկումից խուսափելը կանխելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2010թ. մարտի 9-ի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ս. Կարայանի գրավոր բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց.**

ՍԱՐՍԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ • ՏԵՂԵԿԱԳԻՐ • 1(58)/2011

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Քուլտեյթի Պետության կառավարության միջեւ եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը բացառելու եւ հարկումից խուսափելը կանխելու մասին համաձայնագրի նպատակն է բացառել եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը, նվազեցնել եկամտային եւ գույքային հարկերի հետ կապված խոչընդոտների բացասական ազդեցությունը միջազգային առեւտրի եւ ներդրումների նկատմամբ, խրախուսել ձեռնարկատիրական գործունեությունը՝ ստեղծելով մրցակցային շահավետ պայմաններ, խթանել ներդրումների հոսքը՝ օտարերկրյա ներդրումների համար ապահովելով բարենպաստ հարկային ռեժիմ, ինչպես նաեւ ստեղծել կանխատեսելի եւ կայուն հարկային դաշտ:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է Քուլտեյթի Պետության ռեզիդենտների կողմից Հայաստանի Հանրապետությունում ստացված որոշակի տեսակի եկամուտները չհարկելու կամ նվազեցված դրույքաչափերով հարկելու հետեւյալ պարտավորությունները.

ա) հարկել Քուլտեյթի Պետության ռեզիդենտների կողմից Հայաստանի Հանրապետությունում իրականացված ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները միայն այն դեպքում, եթե ձեռնարկատիրական գործունեությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատության միջոցով՝ վերջինիս վերագրվող եկամտի չափով: Ընդ որում, այդպիսի մշտական հաստատություն են համարվում՝

- շինարարական հրապարակը կամ կառուցման, մոնտաժային կամ հավաքման օբյեկտը կամ դրանց հետ կապված վերահսկողական գործունեությունը, եթե այդպիսի հրապարակը, օբյեկտը կամ գործունեությունը շարունակվում է 6 ամսից ավելի ժամանակահատվածով.

բ) Քուլտեյթի Պետության ձեռնարկության կողմից ծառայությունների մատուցումը, ներառյալ խորհրդատվական կամ կառավարման ծառայությունները, այդ նպատակով ձեռնարկության կողմից ընդգրկված վարձու աշխատողների կամ այլ անձնակազմի միջոցով, եթե այդ բնույթի գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում ցանկացած տասներկուամսյա ժամկետում շարունակվում է ընդհանուր առմամբ 3 ամիսը գերազանցող ժամանակահատվածով կամ ժամանակահատվածներով.

գ) ազատել հարկումից գործունեության հետեւյալ տեսակները.

- շինությունների օգտագործումը ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ առաքման նպատակով,

- ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ առաքման նպատակով,

- ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը բացառապես այլ ձեռնարկության կողմից մշակման նպատակով,

- գործունեության մշտական վալրի պահպանումը՝ ձեռնարկության համար ապրանքների կամ արտադրանքի բացառապես գնման կամ տեղեկատվություն հավաքելու նպատակով,

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

- գործունեության մշտական վայրի պահպանումը՝ ձեռնարկության համար բացառապես նախապատրաստական կամ օժանդակ բնույթի որեւէ այլ գործունեություն իրականացնելու նպատակով,

- գործունեության մշտական վայրի պահպանումը բացառապես համաձայնագրի 5-րդ հոդվածի 4-րդ կետի «ա»-«ե» ենթապարբերություններում նշված գործունեության տեսակների ցանկացած համակցության համար՝ պայմանով, որ այդ համակցության արդյունքում գործունեության մշտական վայրի ամբողջական գործունեությունը նախապատրաստական կամ օժանդակ բնույթի է.

դ) չհարկել միջազգային փոխադրումներում Քուվեյթի Պետության ձեռնարկության կողմից նավերի, օդանավերի կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցների շահագործումից ստացված շահույթը, ինչպես նաեւ այդ շահագործմանը վերաբերող շարժական գույքի օտարումից ստացված հավելաճը.

ե) ազատել հարկումից Քուվեյթի Պետության ռեզիդենտի կողմից Հայաստանում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը, եթե՝

- ստացողը հաշվետու ֆինանսական տարվա ընթացքում սկսվող կամ ավարտվող ցանկացած տասներկուամսյա ժամանակահատվածում գտնվում է Հայաստանում ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամանակահատվածով կամ ժամանակահատվածներով,

- վարձատրությունը վճարվում է Հայաստանի ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, եւ վարձատրությունը կատարելու ծախսերը չի կրում գործատուի՝ Հայաստանում ունեցած մշտական հաստատությունը.

զ) չհարկել Քուվեյթի Պետության ռեզիդենտ հանդիսացող կամ անմիջապես մինչեւ Հայաստան ժամանելը հանդիսացած եւ Հայաստանում բացառապես ուսման կամ մասնագիտացման նպատակով գտնվող ուսանողի կամ ստաժորի կողմից ստացված վճարումները, որոնք նախատեսված են նրա ապրելու, ուսանելու եւ մասնագիտանալու համար, եթե այսպիսի վճարումներն առաջանում են Հայաստանից դուրս գտնվող աղբյուրներից.

է) չհարկել այն վարձատրությունը, որը ստացվել է Քուվեյթի Պետության ռեզիդենտ հանդիսացող կամ անմիջապես մինչեւ Հայաստան ժամանելը հանդիսացած եւ Հայաստանում բացառապես ուսման կամ մասնագիտացման նպատակով գտնվող ուսանողի կամ ստաժորի ժամանակավոր ծառայություններ մատուցելուց, պայմանով, որ այդ ծառայությունները կապված են նրա կրթության կամ մասնագիտացման հետ, եւ որ այդ վարձատրությունն անհրաժեշտ է նրա ապրուստի միջոցները լավացնելու համար.

ը) ՀՀ ռեզիդենտ ընկերության կողմից Քուվեյթի Պետության ռեզիդենտի վճարվող շահաբաժինները հարկել շահաբաժինների համախառն գումարի 5 տոկոսը չգերազանցող չափով, եթե ստացողը շահաբաժինների փաստացի սեփականատերն է.

թ) ազատել հարկումից Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ընկերության կողմից վճարված շահաբաժինները, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը հանդիսանում է Քուվեյթի Պետության կառավարությունը կամ ցանկացած կառավարական հաստատություն կամ նրանց այլ սուբյեկտ.

ժ) հարկել Հայաստանի Հանրապետությունում առաջացող եւ Քուվեյթի Պե-



**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

տության ռեզիդենտին վճարվող տոկոսները դրանց համախառն գումարի 5 տոկոսը չզերազանցող չափով, եթե ստացողը տոկոսների փաստացի սեփականատերն է.

ժա) չհարկել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ընկերության կողմից վճարված տոկոսները, եթե դրանց փաստացի սեփականատերը հանդիսանում է Քուվեյթի Պետության կառավարությունը կամ ցանկացած կառավարական հաստատություն կամ նրանց այլ սուբյեկտ.

ժբ) հարկել Հայաստանի Հանրապետությունում առաջացող եւ Քուվեյթի Պետության ռեզիդենտին վճարվող ռոյալթիները դրանց համախառն գումարի 10 տոկոսը չզերազանցող չափով, եթե ստացողը ռոյալթիների փաստացի սեփականատերն է.

ժգ) չհարկել Քուվեյթի Պետության ռեզիդենտին նախկինում կատարված աշխատանքի համար վճարված կենսաթոշակները եւ համանման այլ վարձատրությունները.

ժդ) չենթարկել խտրականության Քուվեյթի Պետության քաղաքացիներին այլ կամ ավելի խիստ որեւէ հարկման կամ դրա հետ կապված որեւէ պարտավորության, մասնավորապես՝ կապված ռեզիդենտության հետ, քան այն հարկումն ու դրա հետ կապված պարտավորություններն են, որոնց միեւնույն հանգամանքների դեպքում ենթարկվում են կամ կարող են ենթարկվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները բխում են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածում ամրագրված ՀՀ արտաքին քաղաքականության սկզբունքներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2009 թվականի նոյեմբերի 3-ին Քուվեյթում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Քուվեյթի Պետության կառավարության միջեւ եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը բացառելու եւ հարկումից խուսափելը կանխելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

20 ապրիլի 2010 թվականի  
ՍԳՈ-878



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-ԻՆ ՔՈՒՎԵՅԹՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՈՒՎԵՅԹ  
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ  
ՔՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**20 ապրիլի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի նոյեմբերի 3-ին Քուվեյթում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Քուվեյթի Պետության կառավարության միջեւ մշակույթի եւ արվեստի բնագավառներում համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 30.03.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ մշակույթի նախարար Հ. Պողոսյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց .**

ՍԱՐՅԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ • ՏԵՂԵԿԱԳԻՐ • 1(58)/2011

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2009թ. նոյեմբերի 3-ին:
  2. Համաձայնագրի նպատակն է կողմերի միջև հաստատել մշակույթի եւ արվեստի, ինչպես նաեւ մշակութային ինքնության պահպանման եւ զարգացման ոլորտներում համագործակցություն:
  3. Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.
    - խրախուսել եւ դյուրացնել ուղղակի կապերը մյուս կողմի հետ՝ գրականության, արվեստի, կինոյի, ճարտարապետության, թանգարանների, գրադարանների եւ մշակույթի այլ բնագավառներում,
    - կազմակերպել գրքերի տոնավաճառներ, ապահովել մյուս կողմի մասնակցությունը՝ ազատելով նրանց ֆինանսական վճարներից, մաքսային եւ այլ վճարումներից,
    - համաձայնագրով նախատեսված անհատներ եւ պատվիրակություններ ուղարկելիս ապահովել նրանց ճանապարհաձախսը, ինչպես նաեւ ցուցանմուշների ապահովագրության, դրանց ցուցադրման վայր տեղափոխելու եւ վերադարձնելու ծախսերը, ընդունելիս ապահովել հյուրերի կացության եւ ներքին տրանսպորտի, հանկարծակի հիվանդության դեպքում բուժօգնության, ցուցահանդեսների կազմակերպման, կատալոգների տպագրության հետ կապված ծախսերը:
- Համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամկետով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից, եւ ինքնաբերաբար երկարաձգվում է՝ հերթական հնգամյա ժամկետով, քանի դեռ կողմերն այլ որոշում չեն ընդունել:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2009 թվականի նոյեմբերի 3-ին Քուվեյթում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Քուվեյթի Պետության կառավարության միջև մշակույթի եւ արվեստի բնագավառներում համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**20 ապրիլի 2010 թվականի  
ՍԳՈ-879**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ  
ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՊԱՏՊԱՄԱՎՈՐ ԸՆՏՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ»  
ԹԻՎ 10 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի ԹԻՎ 17-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՎԻՃԱՐԿԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**23 ապրիլի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.  
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (զեկուցող),  
Ֆ. Թոխյանի (զեկուցող), Մ. Թովուրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի,  
Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող կողմի՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով թիվ 10 ընտրատարածքի պատգամավորության թեկնածու Ն. Փաշինյանի ներկայացուցիչներ Վ. Հովսեփյանի եւ Վ. Գրիգորյանի (05.03.2010թ. եւ 09.04.2010թ. նիստեր),

պատասխանող կողմի՝ թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Ս. Մարկոսյանի, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա. Սմբատյանի, հարակից պատասխանող՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչներ Ս. Հովհաննիսյանի եւ Ն. Հովհաննիսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետի, 101-րդ հոդվածի 9-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25 եւ 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստերում՝ 05.03.2010թ. եւ 09.04.2010թ.՝ բանավոր եւ 23.04.2010թ. գրավոր ընթացակարգերով քննեց «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին» թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 17-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով թիվ 10 ընտրատարածքի պատգամավորության թեկնածու Ն. Փաշինյանի 21.01.2010թ. դիմումն է սահմանադրական դատարան:

ՍԱՐՍԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(58)/2011

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ 2010թ. հունվարի 27-ի աշխատակարգային նիստում քննարկելով վերոհիշյալ դիմումը, որոշում է կայացրել՝ համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 74-րդ հոդվածի 4-րդ մասի՝ գործն ընդունել քննության եւ գործով որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին, իսկ որպես հարակից պատասխանող՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին:

Գործի քննության նախապատրաստման ընթացքում պատասխանող կողմից պահանջվել եւ ուսումնասիրվել են թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի՝ 2010 թվականի հունվարի 14-ի ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով 2010թ. հունվարի 10-ի լրացուցիչ ընտրության արդյունքների արձանագրության եւ 2010 թվականի հունվարի 21-ի թիվ 18-Ա որոշման պատճենները, թիվ 10 ընտրատարածքի՝ բոլոր 34 տեղամասային ընտրական հանձնաժողովների արձանագրությունները, տեղեկանք՝ թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում դիմում-բողոքների քննարկման վերաբերյալ:

Միաժամանակ, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովից պահանջվել եւ ուսումնասիրվել են ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հոկտեմբերի 6-ի՝ «ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Խ. Սուքիասյանի պատգամավորական լիազորությունները դադարած համարելու մասին» թիվ 19 արձանագրության եւ ՀՀ ԿԸՀ-ի 2009 թվականի հոկտեմբերի 20-ի՝ «ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով լրացուցիչ ընտրություն նշանակելու եւ ընտրության նախապատրաստման ու անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» թիվ 84-Ա որոշման պատճենները, ինչպես նաեւ տեղեկանքներ՝ ՀՀ գլխավոր դատախազությունից, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունից, Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանից:

Բոլոր նյութերն օրենքով սահմանված կարգով նախապես տրամադրվել են դիմող կողմին ուսումնասիրելու համար:

05.03.2010թ. գործի դատաքննությունն սկսվելուց եւ զեկուցողների զեկույցը ներկայացնելուց անմիջապես հետո, երբ դատարանն օրենքով սահմանված կարգով անցավ նյութերի հետազոտման կարգի հետ կապված առաջարկությունների քննարկմանը, դիմողի ներկայացուցիչները՝ վկայակոչելով դիմողի խնդրանքը, միջնորդեցին ապահովել նրա ներկայությունը գործի քննությանը կամ, քանի որ դիմողը գտնվում է անազատության մեջ, գոնե իրենց հնարավորություն տրվի հանդիպելու դիմողի հետ, որի հնարավորությունը նախապես չեն ունեցել: Սահմանադրական դատարանը՝ քննարկելով այդ միջնորդությունը, որոշեց «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի հիման վրա կասեցնել գործի վարույթը, հնարավորություն տալ դիմողի ներկայացուցիչներին հանդիպելու կալանքի տակ գտնվող դիմողին՝ նրա դիրքորոշումները լիարժեք ներկայացնելու համար:

29.03.2010թ. դիմողի ներկայացուցիչ Վ. Գրիգորյանը սահմանադրական դատարան ներկայացրած գրավոր դիմումով տեղեկացրեց, որ իրենք կարողացել են հանդիպել դիմողին, ճշտել նրա դիրքորոշումները եւ խնդրում է վերսկսել գործի վարույթը:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱՊՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Սահմանադրական դատարանը 30.03.2010թ. որոշում կայացրեց գործի վարույթը վերսկսելու մասին:

09.04.2010թ. գործի վարույթը վերսկսվեց դիմողի ներկայացուցիչների բացատրությունները ներկայացնելով: Գիմողի ներկայացուցիչներ Վ. Գրիգորյանը եւ Վ. Հովսեփյանը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի համաձայն իրենց բացատրություններն ամբողջ ծավալով ներկայացնելուց հետո՝ մինչեւ պատասխանող կողմի բացատրությունները ներկայացնելը, հարցերին պատասխանելու փուլում հրաժարվեցին հետագա դատաքննության ընթացքում ներկայացնելու դիմողին: Նկատի ունենալով, որ նման պայմաններում խոչընդոտվում է բանավոր ընթացակարգով գործի դատաքննության հետագա շարունակումը եւ հաշվի առնելով արդեն իսկ քննության նշանակված տարբեր գործերով սահմանադրական դատարանի ծանրաբեռնվածությունը, սահմանադրական դատարանը որոշեց գործի հետագա դատաքննությունը շարունակել գրավոր ընթացակարգով՝ ժամանակ տրամադրելով կողմերին գրավոր ընթացակարգով գործի քննության օրենքով սահմանված դատավարական պահանջների շրջանակներում ներկայացնելու իրենց բացատրությունները կամ դրանց լրացումները: Սահմանված ժամկետներում պատասխանող եւ հարակից պատասխանող կողմերը ներկայացրել են իրենց բացատրությունները, ինչը տրամադրվել է դիմողին:

Գործի դատաքննության արդյունքներով՝ ուսումնասիրելով կողմերի բացատրությունները, նրանց կողմից ներկայացված նյութերը, հետազոտելով դիմումը, սահմանադրական դատարանի կողմից պահանջված ու գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Թիվ 10 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով ՀՀ Ազգային ժողովի լրացուցիչ ընտրություններն անցկացվել են 2010թ. հունվարի 10-ին՝ ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված կարգով ձեւավորված թվով 34 ընտրական տեղամասերում:

Թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը՝ ամփոփելով թիվ 10 ընտրատարածքում ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով 2010թ. հունվարի 10-ի լրացուցիչ ընտրության արդյունքները, 2010 թվականի հունվարի 14-ին կայացրել է թիվ 17-Ա որոշումը՝ Արա Ռուբենի Սիմոնյանի՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր ընտրվելու մասին:

Համաձայն թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի՝ ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով 2010 թվականի հունվարի 10-ի լրացուցիչ ընտրության արդյունքների ամփոփիչ արձանագրության՝ թիվ 10 ընտրատարածքում առաջադրված եւ ՀՀ ընտրական օրենսգրքի 114-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված կարգով քվեաթերթիկներում ընդգրկված 3 պատգամավորության թեկնածուների օգտին տրված ձայները բաշխվել են հետեւյալ համամասնությամբ. Գավիթ Հակոբյան՝ 288, Արա Սիմոնյան՝ 6.850, Նիկոլ Փաշինյան՝ 4.650: Ըստ թիվ 10 ԸԸՀ-ի ամփոփիչ արձանագրության՝ ՏԸՀ-ներին հատկացված քվեաթերթիկների թիվը 57.000 է, մարված քվեաթերթիկների թիվը՝ 41.343, անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 416, քվեարկության մասնակիցների թիվը՝ 12.204:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Գիմում-բողոքների հիման վրա թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն օրենքով սահմանված կարգով անվավեր է ճանաչել թիվ 10/15 եւ 10/19 ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքները՝ դրանցում քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվն արձանագրելով որպես տեղամասում անճշտությունների չափ, որը հաշվի է առնվել ընտրությունների արդյունքներն ամփոփելիս:

2. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորության թեկնածու Ն. Փաշինյանը սահմանադրական դատարան ներկայացրած դիմումով խնդրում է «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին» թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 17-Ա որոշումը ճանաչել անվավեր:

Գիմողի ներկայացուցիչ Վ. Գրիգորյանը նախ վիճարկում է ընտրական հանձնաժողովների իրավագործությունն ընդհանրապես՝ Սահմանադրությամբ նման մարմիններ նախատեսված չլինելու հանգամանքով:

Գիմողը՝ որպես թիվ 10 ԸԸՀ-ի 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 17-Ա որոշման անվավերության հիմք ներկայացնում է հետեւյալ փաստարկները: Նախ այն, որ թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից իրեն 05.12.2009թ. որպես նույն ընտրատարածքի լրացուցիչ ընտրություններում ԱԺ պատգամավորության թեկնածու գրանցելուց հետո՝ առանց ԿԸՀ-ի կողմից գրանցված թեկնածուին կալանքի տակ պահելու համաձայնության, իրեն կալանքի տակ պահելը խախտում է ՀՀ ընտրական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները: Ըստ դիմողի՝ լինելով անազատության մեջ՝ ինքը հնարավորություն չի ունեցել անձամբ կազմակերպել եւ անցկացնել իր նախընտրական քարոզչությունը, ինչով խախտվել է իր եւ մյուս թեկնածուների միջեւ նախընտրական քարոզչության ընթացքում հավասար հնարավորություններ ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունը:

Գիմողը պնդում է նաեւ, որ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր՝ 20.10.2009թ. կայացրած թիվ 84-Ա որոշմամբ թիվ 10 ընտրատարածքում լրացուցիչ ընտրությունները 2010թ. հունվարի 10-ին նշանակելով՝ խախտել է ՀՀ ընտրական օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները՝ սխալ հաշվարկելով ընտրությունների անցկացման համար սահմանված 80-օրյա ժամկետը: Նման իրավիճակը բացասական ազդեցություն է ունեցել իր պատիվ ընտրական իրավունքի իրացման վրա, քանի որ 2009թ. դեկտեմբերի 31-ից մինչեւ 2010թ. հունվարի 10-ը ՀՀ կառավարության կողմից հայտարարվել են ոչ աշխատանքային օրեր, ինչն իր հերթին ազդել է նախընտրական քարոզչության արդյունավետության վրա:

Գիմողը նշում է նաեւ, որ ընտրությունների նախապատրաստման եւ անցկացման ընթացքում տեղի են ունեցել ՀՀ ընտրական օրենսգրքի տարաբնույթ խախտումներ, որոնք, իր կարծիքով, ազդել են ընտրատարածքում ընտրությունների արդյունքների վրա: Մասնավորապես նշվում է, որ նախընտրական քարոզչության ընթացքում թեկնածուների համար չեն ապահովվել հավասար պայմաններ ու հնարավորություններ, սահմանափակվել են դիմող թեկնածուի վստահված

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

անձանց իրավունքները, ընտրատեղամասերում կատարված իրավախախտումների վերաբերյալ վստահված անձանց դիմում-բողոքները մնացել են անպատասխան, ընտրատեղամասերում ձայների հաշվարկի ժամանակ տեղի են ունեցել ՀՀ ընտրական օրենսգրքի խախտումներ:

Դիմող կողմը նշված օրինախախտումների առկայությունը հիմնավորելու համար դիմումին կից ներկայացրել է ընտրական հանձնաժողովներին ուղղված՝ վստահված անձանց դիմում-բողոքների պատճեններ, վերջիններիս ի պատասխան ներկայացված գրություններ, ՀՀ գլխավոր դատախազությանը դիմողի ներկայացուցչի հասցեագրած դիմումների եւ դրանց պատասխանների պատճեններ, այլ թղթակցություններ ու նյութեր, որոնք վերաբերում են թվով 11 ընտրական տեղամասերի:

Դիմողի ներկայացուցիչ Վ. Հովսեփյանը ՀՀ սահմանադրական դատարանում տվյալ հարցերի վերաբերյալ բացատրություններ ներկայացնելիս առանց լրացուցիչ հիմնավորումների բառացիորեն կրկնեց միայն այն, ինչը շարադրված է դիմումում:

Դիմողի ներկայացուցիչ Վ. Գրիգորյանը գտնում է նաեւ, որ թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն օրենքի պահանջների խախտումով է ամփոփել ընտրությունների արդյունքները, ինչի առնչությամբ բողոք է ներկայացվել ՀՀ վարչական դատարան եւ գործում առկա է վերջինիս 18 հունվարի 2010թ. ՎԴ/0085/05/10 գործով վճիռը:

3. Պատասխանողը, առարկելով դիմողի փաստարկները, գտնում է, որ թիվ 10 ընտրատարածքում ՀՀ ԱԺ մեծամասնական ընտրակարգով լրացուցիչ ընտրությունների ընթացքում տեղի չեն ունեցել այնպիսի խախտումներ, որոնք կարող էին հիմք հանդիսանալ հանձնաժողովի կողմից այլ որոշում կայացնելու համար:

Ըստ պատասխանողի՝ ընտրված եւ դիմող թեկնածուների միջեւ ձայների հարաբերակցությունը բացառում է անճշտությունների ազդեցությունն ընտրությունների արդյունքների վրա եւ չի բացառում ընտրված թեկնածուին պարզելու հնարավորությունը: Բացի դրանից, ըստ պատասխանող կողմի՝ դիմողի վստահված անձանց կողմից թիվ 10 ԸԸՀ ներկայացված դիմում-բողոքները քննության առարկա են դարձել ընտրական հանձնաժողովում, նշված փաստերի մեծ մասը գուրկ է եղել հիմքից եւ իրականությանը չի համապատասխանել: Պատասխանողն անդրադառնալով դիմողի կողմից ներկայացված նյութերին ու փաստերին՝ գտնում է, որ դիմողի կարծիքով տեղ գտած ընտրախախտումները վերաբերում են միայն մի քանի ընտրական տեղամասերի, եւ դրանք հիմնականում ժամանակին հանձնաժողովի կողմից քննության են առնվել ու չեն խախտել ազատ ընտրություններում դիմողի՝ որպես թեկնածու հանդես գալու իրավունքը:

Ըստ պատասխանողի՝ դիմողը ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգի համաձայն՝ կալանքի տակ գտնվելով, օրենքով սահմանված կարգով ընտրական գործընթացին մասնակցել է իր վստահված անձանց միջոցով եւ իր այդ իրավունքն իրացրել է առանց արգելքի ու ամբողջությամբ:

Ինչ վերաբերում է դիմողի անագատության մեջ գտնվելուն, ապա այդ հարցը լուծվել է դատական կարգով եւ դուրս է պատասխանող կողմի իրավասության շրջանակներից:



**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Հարակից պատասխանող՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ դիմողի փաստարկները հիմնավոր չեն եւ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը չի կարող վիճարկվել, քանի որ այն ընդունվել է օրենքով սահմանված կարգով, տեղի չեն ունեցել այնպիսի ընտրախախտումներ, որոնց ազդեցությունն անհնարին դարձնէր հստակ պարզելու ընտրված թեկնածուին կամ որոնք հաշվի չեն առնվել ընտրության արդյունքներն ամփոփելիս:

Դիմողի հիմնական փաստարկների առնչությամբ հարակից պատասխանողը գտնում է, որ, նախ. ընտրության օրվա փոփոխությունը պայմանավորված է եղել թեկնածուների պասիվ ընտրական իրավունքը երաշխավորելու անհրաժեշտությամբ, քանի որ ՀՀ Ազգային ժողովից պատգամավորի տեղը թափուր լինելու վերաբերյալ արձանագրության ուշ ստանալու փաստն անհնարին էր դարձրել ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով ոչ շուտ, քան 75 եւ ոչ ուշ, քան 70 օրվա ընթացքում ապահովել պատգամավորության թեկնածուների հայտերի ընդունումը: Միաժամանակ, ըստ հարակից պատասխանողի՝ հաշվի է առնվել այն հանգամանքը, որ քվեարկությունը տոն օրերի չնշանակվի: Այն նշանակվել է օրենքով որպես տոն սահմանված օրերին հաջորդող կիրակի օրը: Այս մոտեցմամբ էր միայն հնարավոր երաշխավորել բոլոր պատգամավորության թեկնածու գրանցվողների իրավունքները, եւ որը որեւէ ձեռով պասիվ ընտրական իրավունքի խախտման պատճառ չէր կարող հանդիսանալ, առավել եւս՝ երբ այն վերաբերել է առաջադրվող բոլոր թեկնածուներին:

Հարակից պատասխանողը գտնում է, որ դիմողը չի օգտվել նաեւ ՀՀ ընտրական օրենսգրքի 25-րդ հոդվածի 9-րդ մասի ընձեռած հնարավորություններից՝ նախընտրական քարոզչությունն արդյունավետ իրականացնելու համար:

Հարակից պատասխանողը գտնում է նաեւ, որ դիմողը «Ձերբակալված եւ կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքով եւ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով անարգել իրականացրել է իր ընտրական իրավունքը:

Ինչ վերաբերում է դիմողի երկրորդ փաստարկին, ապա հարակից պատասխանողը գտնում է, որ ՀՀ ընտրական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասը նախատեսում է ԿԸՀ-ի եզրակացությունը **պատգամավորության թեկնածուին** ազատությունից զրկելու հանգամանքի առնչությամբ՝ որպես կանխարգելիչ միջոց նրա իրավունքների պաշտպանության համար: Այս պարագայում դիմողը պատգամավորության թեկնածու է գրանցվել արդեն իսկ կալանավորված լինելուց հետո՝ դատաքննության փուլում, ամբաստանյալի կարգավիճակում, երբ գտնվելիս է եղել դատական իշխանության իրավագործության ներքո: Ըստ հարակից պատասխանողի՝ թերեւս դա են նկատի ունեցել նաեւ դիմողի փաստաբանները, որ խափանման միջոցին առնչվող հարցով իրավացիորեն դիմել են ոչ թե ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին, այլ դատարան, որը եւ դատական կարգով լուծում է տվել այդ հարցին: Իսկ դիմողն օգտվել է իր ընտրական իրավունքներից ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված կարգով:

Հարակից պատասխանողը բերում է նաեւ հակափաստարկներ առանձին ընտրախախտումների վերաբերյալ դիմողի փաստարկներին՝ չընդունելով դրանց հիմնավոր լինելը:

4. Գլխող կողմն առաջին հերթին վիճարկում է ընտրական հանձնաժողովների իրավագործության հարցը՝ գտնելով, որ ՀՀ ԿԸՀ-ի կողմից «իշխանության իրականացումը» հակասում է ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածին: Ըստ դիմողի՝ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված է, որ միայն Սահմանադրությամբ նախատեսված պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք են օժտված «...իշխանություն իրականացնելու իրավասությամբ»: Իսկ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը «...Սահմանադրությամբ չնախատեսված կազմավորում է»:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության հոդվածները մեկնաբանելիս անհրաժեշտ է առաջին հերթին նկատի ունենալ ամեն մի հոդվածի եւ դրա նորմերի կարգավորման առարկան եւ մեկնաբանությունն իրականացնել դրանց կարգավորման առարկայի շրջանակներում:

ՀՀ Սահմանադրության 2-րդ անփոփոխելի հոդվածի 2-րդ մասը սահմանում է ժողովրդի կողմից իրեն պատկանող իշխանության իրականացման ձեւերը: Այսինքն՝ 2-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորման առարկան 1-ին մասում հռչակված ժողովրդաիշխանության սկզբունքի կոնկրետացումն է դրա իրականացման ձեւերի առնչությամբ:

Ընդ որում, ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է՝

ա/ ազատ ընտրությունների եւ հանրաքվեների միջոցով,

բ/ ինչպես նաեւ՝ Սահմանադրությամբ նախատեսված պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

Սահմանադրության այս վերջին դրույթը սահմանում է, որ ներկայացուցչական հիմունքներով ժողովրդի իշխանությունն իրականացվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով, որոնք պետք է նախատեսված լինեն Սահմանադրությամբ:

Ժողովրդաիշխանության սահմանադրական իմաստից, մասնավորապես, բխում են ժողովրդի հետեւյալ հիմնական իրավունքները. 1) լինել գերագույն իշխանության աղբյուր եւ կրող, 2) ձեւավորել իշխանության ներկայացուցչական մարմիններ, 3) պատվիրակել սեփական լիազորություններն իշխանության ներկայացուցչական մարմիններին, 4) ունենալ իր այդ իրավունքների սահմանադրորեն ամրագրված կարգավիճակ:

Ժողովուրդն իր իշխանությունը ներկայացուցչական մարմինների միջոցով իրականացնելու դեպքում իր կամքն արտահայտում է ոչ թե ուղղակիորեն, այլ իր կողմից ընտրված ներկայացուցիչների միջոցով (խորհրդարան, Նախագահ, տեղական ինքնակառավարման մարմիններ), որոնց հանձնարարում է իր լիազորությունների իրականացումը որոշակի ժամկետով: Ներկայացուցչական մարմինները պետք է արտահայտեն ժողովրդի կամքը եւ շահերը, հաշվետու լինեն ժողովրդի, ընտրողների առջեւ: Մնացած պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք ածանցված են ներկայացուցչական մարմիններից եւ կազմավորվում են նրանց միջոցով՝ **Սահմանադրությամբ կամ օրենքով սահմանված կարգով:**

Միաժամանակ, դա չի նշանակում, որ պետական ողջ մեխանիզմն ուղղակի կախվածության մեջ է ներկայացուցչական մարմիններից: Պետական իշխանության որոշակի հատուկ գործառնությունների եւ խնդիրների առկայությունը պահանջում են ներկայացուցչական կամ առաջնային մանդատով օժտված մարմինների կողմից:

մից կազմավորված առանձին պետական մարմինների գործառնական ու կառուցակարգային որոշակի անկախություն եւ ինքնավարություն՝ Սահմանադրությամբ եւ/կամ օրենքով նախատեսված գործառույթ իրականացնելու համար: Դա բխում է հենց ժողովրդի եւ ժողովրդավարության շահերից: Այդպիսի մարմիններ են նաեւ ընտրական հանձնաժողովները: Ընդ որում, ինչպես եվրոպական երկրների մեծ մասում, Հայաստանում նույնպես Սահմանադրությունն ի սկզբանե այդ անկախությունը եւ ինքնուրույնությունը երաշխավորում է ոչ թե ժողովրդի կամքի արտահայտման իրավագրությամբ, այլ իրավունքով, Սահմանադրությամբ եւ օրենքով:

Սահմանադրության 2-րդ հոդվածի 2-րդ մասի այնպիսի սուբյեկտիվ մեկնաբանությունը, համաձայն որի բոլոր պետական մարմինները պետք է նախատեսվեն Սահմանադրությամբ, աղավաղում է սահմանադրական այդ նորմի բուն էությունը: Այդպիսի մոտեցմամբ ընդհուպ նույնացվում են «ժողովրդաիշխանություն» եւ «պետական իշխանություն» հասկացությունները: Սահմանադրություններում հստակ սահմանազատելով «ժողովրդի իշխանությունը» «պետական իշխանությունից»՝ հիմնական շեշտադրումն արվում է այն առնչությամբ, որ պետական իշխանությունն ածանցվում է ժողովրդաիշխանությունից եւ այն իրականացվում է իշխանությունների բաժանման եւ հավասարակշռման սկզբունքի հիման վրա:

Հաշվի առնելով նաեւ իր՝ 2006թ. նոյեմբերի 7-ի ՍԴՈ-664 եւ 2007թ. հունիսի 10-ի ՍԴՈ-703 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ընտրական հանձնաժողովները ոչ թե ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի իմաստով ներկայացուցչական ժողովրդաիշխանություն իրականացնող մարմիններ են, այլ իրենց պետաիշխանական իրավասության շրջանակներում կոչված են Սահմանադրությամբ ու օրենքով սահմանված կարգի համաձայն՝ իրավունքի ուժով ապահովել ներկայացուցչական ժողովրդաիշխանության մարմինների կազմավորումը:

Ընդ որում, ՀՀ Սահմանադրությունը հստակ սահմանում է նաեւ, թե որ մարմիններն են ձեւավորվում ընտրությունների միջոցով, եւ թե ինչ սկզբունքներով է այն իրականացվում (հոդվ. 4): Բացի դրանից, Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը եւ **օրենքներին** համապատասխան:

Սահմանադրության 83.5-րդ հոդվածը նաեւ սահմանում է, որ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու եւ պաշտպանելու պայմանները եւ կարգը: Դա հավասարապես վերաբերում է նաեւ ընտրական իրավունքի իրականացման պայմանների ու կարգի սահմանմանը: Առավել եւս, նույն 83.5-րդ հոդվածի 7-րդ կետը սահմանում է, որ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքով է սահմանվում «հանրաքվեների, Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կարգը»: Սահմանադրության հիշյալ նորմերի եւ 2-րդ հոդվածի՝ «...Սահմանադրությամբ նախատեսված պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով...» դրույթի միջեւ հակասություն փնտրելը զուտ ձեւականացված մոտեցման արդյունք է եւ չի ենթադրում, որ երկրում գոյություն ունեն-

ցող բոլոր պետական մարմիններն իրավունակ կարող են լինել միայն այն դեպքում, եթե անմիջականորեն նախատեսված են Սահմանադրությամբ:

Հայաստանի Հանրապետությունում ընտրական հանձնաժողովները ձեռնարկում են ՀՀ Ազգային ժողովի կողմից օրենսդիր իշխանության իրականացման սահմանադրական գործառույթի շրջանակներում ընդունված օրենքով սահմանված կարգով:

5. ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2007թ. հունիսի 10-ի ՍԳՈ-703 որոշման մեջ իրավական դիրքորոշում էր արտահայտել, որ՝ «...եթե դիմող կողմն ընտրությունների նախապատրաստման, անցկացման եւ արդյունքների ամփոփման գործընթացով պայմանավորված ընտրական հանձնաժողովների, իրավասու այլ մարմինների որոշումները, գործողությունները կամ անգործությունը մինչեւ սահմանադրական դատարան դիմելը ՀՀ ընտրական օրենսգրքով եւ իրավական այլ ակտերով նախատեսված՝ արտադատական (վարչական) կամ դատական կարգով չի բողոքարկել, այսինքն՝ օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգով եւ ժամկետներում չի օգտագործել (սպառել) իր ընտրական իրավունքների պաշտպանության՝ օրենքով նախատեսված բոլոր միջոցները, ապա լիարժեք չեն դառնում սահմանադրական դատարանում ընտրությունների արդյունքներով քննվող հանրային-իրավական վեճի շրջանակներում ապացուցողական նշանակություն ունեցող փաստեր ներկայացնելու եւ դրանցով իր փաստարկները հիմնավորելու նրա դատավարական հնարավորությունները»:

Սույն գործի շրջանակներում դիմումին կից ներկայացրած տարաբնույթ հաղորդումներն ու արձանագրություններն օրենքով սահմանված կարգով հիմք պետք է հանդիսանային ընտրատեղամասերում քվեարկության արդյունքները բողոքարկելու կամ արտադատական ու դատական կարգով հնարավոր ընտրախախտումները քննության առարկա դարձնելու համար: Կոնկրետ ընտրախախտումների հետ կապված հանգամանքները՝ ըստ ՀՀ օրենսդրության, դատական կարգով քննության առարկա են ընդհանուր իրավասության եւ վարչական դատարաններում: ՀՀ սահմանադրական դատարանը ձեռնպահ պետք է մնա ամբողջությամբ առաջին ատյանի՝ փաստի դատարանի դեր ստանձնելուց, եւ նրա իրավասությունն է ընտրության արդյունքների վերաբերյալ ընտրական հանձնաժողովի վերջնական որոշման հետ կապված վեճի լուծումը, այսինքն՝ կոնկրետ իրավական ակտին առնչվող վեճի քննությունը (ՀՀ Սահմանադրության հոդված 100, կետ 3.1): Ընտրական գործընթացի առանձին մասնակիցներ խորությամբ չըմբռնելով 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի նոր խմբագրությամբ 3.1-րդ կետի իմաստը՝ անհիմն փորձում են սահմանադրական դատարանը դիտարկել որպես ընտրական վեճ լուծող առաջին ատյանի դատարան: Դա այն դեպքում, երբ ՀՀ ընտրական օրենսգրքի 139-րդ հոդվածը 31 կետերով նախատեսում է պատասխանատվության բոլոր այն դեպքերը, որոնք առնչվում են ընտրախախտումներին եւ որոնք պետք է իրավասու դատարանների կողմից քննության առարկա դառնան ու ապացուցվեն օրենքով սահմանված կարգով: Պատահական չէ նաեւ, որ ՀՀ ընտրական օրենսգրքի 63.1-րդ հոդվածի 2-րդ մասը պահանջում է, որ դատարանների վճիռները հիմք ընդունվեն **ընտրության արդյունքների ամփոփման փուլում:**

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Սահմանադրական դատարանն ղիմողի կողմից ներկայացվել է միայն երկու դատական ակտ (ՀՀ վարչական դատարանի 20.11.2009թ. եւ 18.01.2010թ. վճիռները, որոնք կայացվել են ղիմողի օգտին): Այդ դատական ակտերից բացի, ղիմումին կից ՀՀ սահմանադրական դատարան են ներկայացվել թվով 11 ընտրատեղամասերի առնչությամբ թվով 50 (հիսուն) տարբեր թղթակցություններ, այդ թվում՝ ՀՀ դատախազությանն ուղղված հաղորդում հանցագործություն կատարելու մասին՝ թվով 3, որոշում քր. գործ հարուցելու եւ վարույթ ընդունելու մասին՝ 1, ՀՀ գլխավոր դատախազության կայք էջից տեղեկություններ եւ դատախազության պատասխաններ՝ 5, թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին հղած տարաբնույթ ղիմումներ՝ 25, տեղամասերում կազմված արձանագրություններ՝ 8, տեղամասային հանձնաժողովների անդամների հատուկ կարծիքներ քվեարկության արդյունքների վերաբերյալ՝ 2 (10/34 եւ 10/29 ընտրատեղամասեր), ղիմումներ տեղամասային ընտրական հանձնաժողովներին՝ 3, այլ գրագրություններ՝ 2, ղիմում ԿԸՀ-ին՝ 1: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին հղած ղիմումների 50 տոկոսից ավելին բաժին է ընկնում թվով երկու՝ 10/15 եւ 10/19 ընտրական տեղամասերին, որոնցում քվեարկության արդյունքներն ընտրական հանձնաժողովի կողմից հետագայում անվավեր են ճանաչվել: Ընդ որում, թե՛ ղիմողի ամփոփումներում եւ թե՛ ղիմումին կցված թղթակցություններում **23 ընտրական տեղամասերում (ընդհանուր թվի 68 տոկոսը) ընտրությունների կազմակերպման ու անցկացման ընթացքում տեղ գտած հնարավոր ընտրախախտումների վերաբերյալ որեւէ փաստ չի ներկայացվում** (10/04, 10/05, 10/06, 10/07, 10/11, 10/14, 10/16, 10/17, 10/18, 10/21, 10/22, 10/23, 10/24, 10/25, 10/26, 10/27, 10/28, 10/29, 10/30, 10/31, 10/33 ընտրական տեղամասեր):

Թվով շուրջ 11 ընտրական տեղամասերին առնչվող՝ ղիմումին կից ներկայացված մյուս թղթակցությունների թե՛ բնույթը եւ թե՛ առավել եւս բովանդակությունը վկայում են, որ դրանք, թերեւս, կարող էին ներկայացվել ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքները բողոքարկելու համար, որն իրականացվել է միայն երկու տեղամասում (10/07 եւ 10/30), եւ որի արդյունքներով որեւէ էական խախտում չի արձանագրվել: Բացի դրանից, ըստ թիվ 10 ԸԸՀ-ի կողմից սահմանադրական դատարան ներկայացված՝ տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների, ընտրատարածքի թվով 34 տեղամասերից 30-ում (88.2 տոկոս) այդ արձանագրություններն ստորագրել են տեղամասային ընտրական հանձնաժողովների՝ նիստին մասնակցած բոլոր անդամները: Միայն երկու տեղամասերում են (թիվ 10/15 եւ 10/19) արձանագրություններն ստորագրել հանձնաժողովների 8 անդամներից 6-ը, սակայն հետագայում այդ տեղամասերում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության արդյունքներն անվավեր է ճանաչել:

Ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովների ընդհանուր թվով շուրջ 270 անդամներից հետագա իրավական գործընթացներ իրականացնելու համար միայն 3 անդամ է ՀՀ ընտրական օրենսգրքի 61-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով ստորագրել արձանագրությունը՝ հատուկ կարծիք ունենալու նշումով (թիվ 10/29, 10/30, 10/34 ընտրատեղամասեր), սակայն երկուսն օրենքով սահմանված կարգով գրավոր հատուկ կարծիք չեն կցել արձանագրությանը:

Միաժամանակ, ՀՀ գլխավոր դատախազության տեղեկանքի համաձայն՝

թիվ 10 ընտրատարածքում 2010թ. հունվարի 10-ին կայացած ընտրությունների ընթացքում ընտրախախտումների վերաբերյալ բոլոր դիմում-բողոքները, մասնալի հրապարակումները, դիմողի կողմից ներկայացված տեսանյութերը դարձել են ուսումնասիրության առարկա եւ դրանց հիման վրա հարուցվել է չորս քրեական գործ: Հետագայում դրանցից 2-ով վարույթը կարճվել է հանցակազմի բացակայության պատճառով, նախաքննությամբ չեն հաստատվել նաեւ թիվ 10/12 եւ 10/14 ընտրական տեղամասերի առնչությամբ ներկայացված ահազանգերը, մեկ փաստով գործն ուղարկվել է դատարան եւ 10/09 ընտրատեղամասի դիմաց տեղի ունեցած վիճարանության վերաբերյալ նախաքննությունը շարունակվում է:

Պատասխանող կողմն իր բացատրություններում նույնպես չի ընդունում այն հանգամանքները, որոնցով դիմող կողմը հիմնավորում է իր պահանջները, եւ այդ հանգամանքների վերաբերյալ ներկայացնում է իր կոնկրետ հակափաստարկները: Միաժամանակ փաստվում է, որ մինչեւ ընտրության արդյունքների ամփոփումը հանձնաժողովն ստացել է 28 դիմում, որից 8-ը՝ մինչեւ քվեարկության օրը: Բոլոր դիմումները քննարկվել են հանձնաժողովի կողմից՝ օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում, եւ հնարավոր ընտրախախտումների վերաբերյալ որեւէ ահազանգ չի մնացել անարձագանք: Իսկ այդ առնչությամբ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի գործողությունները դատական կարգով չեն բողոքարկվել: Իսկ դատական կարգով երկու այլ բողոքները (թեկնածուի գրանցման եւ հունվարի 14-ին ներկայացված դիմում-բողոքն ընդունելու վերաբերյալ), ինչպես նշվեց, լուծվել են դիմողի օգտին: Դիմողը պատասխանող եւ հարակից պատասխանող կողմերի գրավոր ներկայացված հակափաստարկների վերաբերյալ առարկություններ չի ներկայացրել: Բացի դրանից, դիմողը վերաշարադրելով նշված թղթակցությունների բովանդակությունն ըստ թվով 11 ընտրական տեղամասերի՝ սահմանադրական դատարան ներկայացրած դիմումի շրջանակներում հիմնական շեշտը դնում է «**որպես դիմողի փաստարկներ**» ներկայացվող երկու հանգամանքի վրա, **նախ**, իր հիմնավորմամբ օրենքի խախտումով ՀՀ ԿԸՀ-ի կողմից ընտրության օրվա նշանակումը, **երկրորդ**՝ դիմողի անազատության մեջ գտնվելը: Ուստի սահմանադրական դատարանը ելակետային է համարում անդրադարձն այդ երկու հանգամանքներին՝ պարզելու համար դրանց բնույթն ու հնարավոր ազդեցությունն ընտրությունների արդյունքներով թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 14.01.2010թ. թիվ 17-Ա որոշման վրա:

6. Ըստ դիմողի՝ ՀՀ Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով լրացուցիչ ընտրություն նշանակելու վերջնաժամկետը պետք է լիներ 2009թ. դեկտեմբերի 26-ը, այլ ոչ թե 2010թ. հունվարի 10-ը: Հիմնավորումն այն է, որ մանդատը թափուր մնալուց հետո ՀՀ ընտրական օրենսգրքի 118-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի համաձայն 80-օրյա ժամկետը լրանում է 2009թ. դեկտեմբերի 26-ին:

ԿԸՀ-ի 20.10.2009թ. թիվ 84-Ա որոշմամբ թիվ 10 ընտրատարածքում նշանակվել է ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով լրացուցիչ ընտրություն՝ քվեարկության օր նախատեսելով 2010թ. հունվարի 10-ը: Սահմանադրական դատարանում որպես հարակից պատասխանող ճանաչված՝ ՀՀ ԿԸՀ-ի բացատրություններում պատճառաբանվում է օրենքով նախատեսված 80-օրյա ժամկետը **չպահպանելու** իրողությունը:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Քննության առարկա սահմանադրաիրավական վեճի շրջանակներում էական նշանակություն ունեն հետեւյալ երկու հանգամանքները, նախ՝ ԿԸՀ-ի գործողության իրավաչափությունը եւ դրա հնարավոր հետեւանքները, երկրորդ՝ մասն իրավիճակի հնարավոր ազդեցությունն ազատ ընտրությունների կազմակերպման եւ դիմողի պասիվ ընտրական իրավունքի իրացման վրա:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ բոլոր պարագաներում ԿԸՀ-ն իրավասու չէ ցանկացած հիմնավորմամբ ընտրության օրվա վերաբերյալ օրենքով նախատեսված ժամկետի փոփոխություն կատարել: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասը հստակ սահմանում է, որ՝ «Իրավական ակտով սահմանված ժամկետը որոշվում է օրացուցային տարով, ամսով, ամսաթվով կամ տարիներով, ամիսներով, շաբաթներով, օրերով կամ ժամերով հաշվարկվող որոշակի ժամանակահատվածի ավարտով»: Այս կանոնը հավասարապես վերաբերում է ինչպես ՀՀ ընտրական օրենսգրքի 117 եւ 118-րդ հոդվածներով նախատեսված ժամկետներին, այնպես էլ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվող ժամկետին, որոնք իրավակիրառողը պարտավոր է հաշվի առնել ու պահպանել:

Կարեւոր է նաեւ այն հարցի պարզաբանումը, թե իրավակարգավորման ինչ նպատակ են հետապնդել ՀՀ ընտրական օրենսգրքի 117 եւ 118-րդ հոդվածներով 80, 75, 70, 45, 40 եւ 35 օրեր նախատեսող ժամկետները: ՀՀ ընտրական օրենսգրքի նշված հոդվածների եւ դրանցում կատարված փոփոխությունների համադրված վերլուծությունը վկայում է, որ մինչեւ 2005թ. մայիսի 19-ին ՀՕ-101-Ն օրենքով կատարված օրենսդրական փոփոխությունները (ՀՀ ընտրական օրենսգրքի 107-րդ հոդվածի առկայության պայմաններում), ՀՀ ընտրական օրենսգրքի 117-րդ հոդվածը ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուների առաջադրման փաստաթղթերը համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնելու համար նախատեսել էր 5-10 օր, ստորագրություններ հավաքելու համար պաշտոնաթերթիկներ ստանալու համար՝ 5-10 օր, թեկնածուների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում՝ ստորագրություններով պաշտոնաթերթիկները, ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնելու համար՝ քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 45 օր առաջ (15-20 օր), թեկնածուի գրանցման համար՝ 5-10 օր: Օրենքով նախատեսված կարգով այս գործընթացներն ավարտվում էին քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 40 եւ ոչ ուշ, քան 35 օր առաջ, որին հետեւում էր նախընտրական քարոզչությունը:

2005թ. մայիսի 19-ին ՀՕ-101-Ն օրենքով ուժը կորցրած ճանաչվեց ՀՀ ընտրական օրենսգրքի 107-րդ հոդվածը, ավելորդ դարձավ ստորագրահավաքի համար ժամկետի սահմանումը, սակայն անփոփոխ մնաց դեռեւս 03.07.2002թ. ՀՕ-406-Ն օրենքով Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով լրացուցիչ ընտրությունների անցկացման համար նախատեսված 80-օրյա ժամկետը:

Բնականաբար, հստակ ու համակարգված օրենսդրական կանոնակարգումը, ինչպես նաեւ անկանխատեսելի իրավիճակները հաղթահարելուն կոչված ու օրենքով նախատեսված իրավակարգավորումները կբացառեին իրավակիրառական պրակտիկայում հնարավոր շփոթը: Այսուհանդերձ, ստեղծված իրավիճակում ԿԸՀ-ն կարող էր կամ դատական կարգով բողոքարկել ՀՀ Ազգային ժողովի

պատգամավորի լիազորությունները դադարած համարելու մասին թիվ 19 արձանագրության իրավաչափությունը (պայմանավորված դրա հնարավոր ուշ ստանալու հանգամանքներով), կամ հնարավորինս օգտագործել վերոնշյալ օրենսդրական փոփոխությունների արդյունքում, այսպես կոչված, «ազատ մնացած» 15-20 օր ժամանակահատվածը՝ թեկնածուների առաջադրման համար խոչընդոտներ չստեղծելու եւ օրենքով նախատեսված 80-օրյա ժամկետը չխախտելու համար: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ՀՀ ընտրական օրենսգրքով ընտրությունների նախապատրաստմանն ու անցկացմանն ուղղված գրեթե բոլոր գործողությունների եւ միջոցառումների իրականացման ժամկետների սահմանման համար, որպես կանոն, օգտագործվում են «ոչ շուտ քան...», եւ ոչ ուշ, քան...», «...-օրյա ժամկետում» բառակապակցությունները, որոնք ենթադրում են, որ ՀՀ ընտրական օրենսգիրքը սահմանում է ժամանակահատվածի սկիզբը եւ (կամ) վերջը՝ կոնկրետ օրերի ընտրության հարցում որոշակի հայեցողության դրսևորման հնարավորությունը ընձեռելով ընտրական իրավունքի սուբյեկտներին:

Իրենց հերթին պատգամավորության թեկնածուները կարող էին ՀՀ ԿԸՀ-ի 20 հոկտեմբերի 2009թ. թիվ 84-Ա որոշումը դատական կարգով բողոքարկել, եթե գտնում էին, որ այն խախտում է կամ կարող է խախտել իրենց իրավունքները: Բացի դրանից, ՀՀ սահմանադրական դատարանում քննվող գործով վեճի առարկան ըստ էության ոչ թե ԿԸՀ-ի հիշյալ որոշումն է, որը գործող օրենսդրության շրջանակներում միայն վարչական արդարադատության օբյեկտ կարող էր հանդիսանալ, այլ ԸԸՀ-ի 14.01.2010թ. թիվ 17-Ա որոշումը:

Միաժամանակ, սահմանադրական վեճի շրջանակներում անհրաժեշտ է գնահատել նաեւ նման իրավիճակի հնարավոր ազդեցությունն ընտրական ողջ գործընթացի եւ, մասնավորապես, դիմողի պասիվ ընտրական իրավունքի իրացման վրա:

Նախ. հավաստի չէ դիմողի կողմից բերվող տեղեկատվությունը, որ «ՀՀ կառավարության որոշմամբ 2009թ. դեկտեմբերի 31-ից մինչև 2010թ. հունվարի 10-ը հայտարարվել են ոչ աշխատանքային օրեր»: Դեկտեմբերի 31-ից մինչև հունվարի 7-ը ոչ աշխատանքային օրեր են սահմանվել «Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի 1-ին եւ 1.1-րդ հոդվածներով: ՀՀ կառավարության 17 դեկտեմբերի 2009թ. թիվ 1450-Ն որոշմամբ միայն 2010թ. հունվարի 8-ի աշխատանքային ուրբաթ օրը տեղափոխվել է 2009թ. դեկտեմբերի 26-ի շաբաթ օրը:

Ինչ վերաբերում է նախընտրական քարոզչության արդյունավետության վրա նման փոփոխությունների հնարավոր ազդեցության առնչությամբ դիմողի պնդմանը, ապա ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ նման հանգամանքն իրավաբանորեն նույնպես գնահատելի էր, քանի որ այդ փոփոխություններից անմիջապես հետո թեկնածուները կարող էին դատական կարգով բողոքարկել քվեարկության օրվա նշանակման վերաբերյալ ՀՀ ԿԸՀ-ի 20.10.2009թ. թիվ 84-Ա որոշումը՝ նախընտրական քարոզչության արդյունավետ պայմաններ երաշխավորելու տեսանկյունից, որը չի արվել: Մյուս կողմից՝ ստեղծված իրավիճակը հավասարապես վերաբերել է թիվ 10 ընտրատարածքում գրանցված Ազգային ժողովի պատգամավորության բոլոր թեկնածուներին եւ չի կարող դիտարկվել որպես դրանցից միայն մեկի պասիվ ընտրական իրավունքի իրացման վրա ազդող գոր-



**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

ծոն: Բացի դրանից, եթե նույնիսկ այս փաստի հիման վրա ընտրության արդյունքներն անվավեր ճանաչվեն եւ ՀՀ ընտրական օրենսգրքի 116-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն այդ մասին որոշումն ընդունելուց հետո ոչ շուտ, քան 10 եւ ոչ ուշ, քան 20 օր հետո անցկացվի վերաքվեարկություն, ինչը դիմողի խնդրանքն է, ապա այդ ժամանակահատվածը հաշվարկվելու է որպես նախորդ ժամանակահատվածի օրգանական շարունակություն եւ ընտրական գործընթացի վրա ազդեցության առումով որեւէ նշանակություն ունենալ չի կարող:

7. Դիմողի հաջորդ փաստարկը վերաբերում է հետեւյալին. «Լինելով անագատության մեջ, խախտվել է Դիմողի եւ մնացած թեկնածուների միջեւ նախընտրական քարոզչության ընթացքում հավասար հնարավորություններ ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունը, քանի որ Դիմողը հնարավորություն չի ունեցել անձամբ կազմակերպել եւ անցկացնել իր նախընտրական քարոզչությունը»: Դիմողը գտնում է, որ այդ իրողությունը, ի թիվս դիմումում բերված այլ պատճառների, պայմանավորված է եղել օրենքի խախտմամբ նրան կալանքի տակ պահելու հանգամանքով:

Գործի նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ, նախ. ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 9-րդ մասը սահմանում է. «Ձերբակալված եւ կալանքի տակ գտնվող թեկնածուները նախընտրական քարոզչությունն իրականացնում են իրենց վստահված անձանց միջոցով: Այդ նպատակով՝ ձերբակալված եւ կալանքի տակ գտնվող թեկնածուներն իրավունք ունեն նախընտրական քարոզչության ընթացքում՝ օրական մինչեւ 2 ժամ տեւողությամբ, ձերբակալվածներին պահելու եւ կալանքի տակ պահելու լիազորություն ունեցող հաստատություններում հանդիպումներ ունենալ ոչ ավելի, քան իրենց 3 վստահված անձի հետ»: ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության կողմից ՀՀ սահմանադրական դատարանի պահանջով ներկայացված տեղեկանքի համաձայն՝ 2009թ. դեկտեմբերի 7-ից մինչեւ 2010թ. հունվարի 10-ը դիմողի վստահված անձինք ամեն օր մինչեւ երկու ժամ տեւողությամբ հանդիպում են ունեցել թեկնածուի հետ: Այդ հնարավորությունից նրանք կամուրջ չեն օգտվել 31.12.2009թ., 01-02.01.2010թ.: Երկրորդ՝ ՀՀ Երեսան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի նախագահի՝ ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած պաշտոնական գրությունից պարզվում է, որ պատգամավորության թեկնածու գրանցվելուց հետո դիմողի փաստաբանների միջնորդությամբ նրա խափանման միջոցի փոփոխման հարցը դատաքննության առարկա է դարձել եւ մերժվել է:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքներով ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշման հետ կապված վեճի քննության շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանն իրավագոր չէ դատաքննության առարկա դարձնել ամբաստանյալի կարգավիճակում գտնվող պատգամավորության թեկնածուի նկատմամբ կիրառված խափանման միջոցի օրինականության շուրջ առաջացած վեճը եւ գնահատական տալ քրեական գործի քննության շրջանակներում դատարանի կայացրած որոշմանը, որն օրենքով սահմանված կարգով բողոքարկման առարկա կարող էր դառնալ միայն ընդհանուր իրավասու-

թյան վերադաս դատարանում, ինչն իրականացվել է: ՀՀ սահմանադրական դատարանն ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարանների համար դատական նոր առյուծ չէ: Իսկ ՀՀ Սահմանադրության համաձայն՝ դատական ակտերը սահմանադրական վերահսկողության օբյեկտ չեն հանդիսանում: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 8 մարտի 2008թ. ՍԳՈ-736 որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ սահմանադրական դատարանի՝ գործի փաստական հանգամանքները կողմերի դիրքորոշումներից անկախ բացահայտելու պարտականությունն ունի որոշակի հստակ սահմաններ, եւ այդ սկզբունքը չի լիազորում սահմանադրական դատարանին ստանձնելու իրավապահ այլ մարմինների (դատախազական կամ քննչական) լիազորություններ, փոխարինել արդարադատական կամ վարչական այլ մարմիններին: Սահմանադրական դատարանը սույն գործի քննության շրջանակներում հիմք է ընդունում այն իրողությունը, որ տվյալ կարգավիճակում դիմողն անարգել իրացրել է ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված իր իրավունքները:

8. Դիմողի բացատրություններում ներկայացված՝ ընտրության արդյունքներն օրենքի խախտումներով ամփոփելու փաստարկների առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սուբյեկտիվ մեկնաբանություն է տրվում ՀՀ ընտրական օրենսգրքի 116-րդ հոդվածի 1-ին մասին եւ 63.1-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին: Օրենսգրքի 116-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվում է. «Քվեարկության ամփոփիչ արձանագրությունների տվյալների հիման վրա, սույն օրենսգրքի 63.1 հոդվածով սահմանված կարգով եւ ժամկետում, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ըստ ընտրատարածքների ամփոփում է ընտրությունների արդյունքները եւ ընդունում հետեւյալ որոշումներից մեկը՝

- 1) պատգամավոր ընտրվելու մասին.
- 2) պատգամավորի ընտրությունն անվավեր ճանաչելու մասին.
- 3) պատգամավորի ընտրությունը չկայացած ճանաչելու մասին»:

Օրենսգրքի 63.1-րդ հոդվածի 2-րդ մասն իր հերթին սահմանում է, որ՝ «Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում տեղամասերում քվեարկության արդյունքների հետ կապված բողոք լինելու դեպքում քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 5 օր հետո, հիմք ընդունելով տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունները, դատարանների վճիռներն ու ընտրատարածքում կատարված վերահաշվարկների արդյունքները, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը ամփոփում է ընտրատարածքում ընտրությունների արդյունքները եւ արձանագրությամբ վավերացնում այն»:

Օրենսգրքի բերված դրույթներից չի բխում, որ քվեարկության օրվանից հետո՝ մինչեւ 5-րդ օրվա վերջն ընտրական հանձնաժողովը չի կարող ամփոփել ընտրության արդյունքները: Գիշտ հակառակը՝ շեշտվում է, որ այն պետք է իրականացվի «**ոչ ուշ, քան 5 օր հետո**»: Եթե որեւէ մեկը փորձի բողոքը ներկայացնել վերջին օրվա ժամը, օրինակ, 17.59-ին, ապա դիմողի փաստարկների շրջանակներում ընդհանրապես միայն օրենքի խախտումով հնարավոր կլինի ընտրության արդյունքների ամփոփումը: Պատահական չէ, որ նման իրավիճակ չառաջանալու համար ՀՀ ընտրական օրենսգրքի 40-րդ հոդվածի 6-րդ եւ 7-րդ կետերը համա-

պատասխանաբար սահմանում են. «6. Տեղամասային ընտրական հանձնաժողովում քվեարկության արդյունքների վերահաշվարկի պահանջի մասին դիմումները կարող են ներկայացվել միայն համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով **քվեարկության հաջորդ օրը՝ մինչև ժամը 14.00-ն**»:  
«7. Ընտրություններ նշանակվելուց հետո՝ մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը, ընտրական հանձնաժողովները ստացված դիմումներին պատասխանում, իսկ սույն օրենսգրքով սահմանված դեպքերում դրանց վերաբերյալ որոշումներ են ընդունում հնգօրյա ժամկետում: **Քվեարկության օրվան կամ ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետին նախորդող 5 օրերի ընթացքում ստացված դիմումները քննարկվում եւ սույն օրենսգրքով սահմանված դեպքերում դրանց վերաբերյալ որոշումներ են ընդունվում համապատասխանաբար մինչև քվեարկության օրը կամ մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը**»:

Բերված դրույթների համադրված վերլուծությունից հետևում է, որ միայն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում տեղամասերում քվեարկության արդյունքների հետ կապված ոչ թե ենթադրյալ, այլ կոնկրետ բողոքի **առկայությունն է հիմք** ընտրությունների արդյունքները ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 5 օր հետո ամփոփելու համար՝ հիմք ընդունելով դատարանների վճիռները եւ ընտրատարածքում կատարած վերահաշվարկի արդյունքները: Բացի դրանից, ընտրությունների արդյունքներն ամփոփելիս, ըստ սահմանադրական դատարան ներկայացրած բացատրությունների, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը պարզել է նաեւ, որ վարչական դատարանում եւ ՀՀ ԿԸՀ-ում տվյալ ընտրություններին առնչվող չքննված կամ անպատասխան դիմումներ չկան:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 74-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին» թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 17-Ա որոշումը թողնել ուժի մեջ:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**23 ապրիլի 2010 թվականի  
ՄԳՈ- 880**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐԴԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
«ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ  
55-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 13-ՐԳ ՄԱՍԻ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅԱՐԲ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ԳՐՈՒՅԹԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**4 մայիսի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (գեկուցող), Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Վարդան Հարությունյանի դիմումի հիման վրա՝ «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածի 13-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված դրույթի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Վ. Հարությունյանի՝ 16.02.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց.**

1. «Դատախազության մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2007 թվականի փետրվարի 22-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի մարտի 29-ին եւ ուժի մեջ է մտել 2007 թվականի մայիսի 1-ից:

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ • ՏԵՂԵԿԱԳԻՐ • 1(58)/2011

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի՝ «Դատախազների վարձատրությունը» վերտառությամբ 55-րդ հոդվածի 13-րդ մասը սահմանում է. «Դասային աստիճան ունեցող դատախազները ստանում են հավելավճար՝ դատախազի, **դատավորի եւ դատախազության քննիչի** պաշտոնում աշխատած յուրաքանչյուր տարվա համար՝ իրենց շնորհված դասային աստիճանի նկատմամբ սահմանված հավելավճարի առավելագույն չափի 4-ական տոկոսի չափով: Բոլոր դեպքերում դասային աստիճանի համար տրվող հավելավճարը չի կարող գերազանցել պաշտոնային դրույքաչափը»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է նրան, որ դիմողը 1974 թվականի նոյեմբերի 10-ից մինչև 1997 թվականի հունիսի 10-ը ծառայել է ՀՀ ոստիկանության համակարգում: 1997 թվականի հունիսի 11-ից մինչև 2007 թվականի մայիսի 25-ն աշխատել է ՀՀ դատախազության համակարգում եւ զբաղեցրել ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության Երեւանի կայազորի դատախազության ավագ քննիչի, դատախազի օգնականի եւ դատախազի պաշտոններ: 2007 թվականի մայիսի 25-ին իր դիմումի համաձայն ազատվել է աշխատանքից եւ անցել Երկարամյա ծառայության կենսաթոշակի՝ «Դատախազության մասին» ՀՀ նախկին օրենքի 66-րդ հոդվածի 9-րդ կետի եւ 40-րդ հոդվածի 1-15-րդ մասերով սահմանված պայմաններով:

«Դատախազության մասին» ՀՀ գործող օրենքի 75-րդ հոդվածի 1-ին մասի ուժով եւ «Դատախազության մասին» ՀՀ գործող օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի կարգով 2008 թվականի հունվարի 1-ից նրա կենսաթոշակը վերահաշվարկվել է:

Պարզելով, որ «Դատախազության մասին» ՀՀ գործող օրենքի 55-րդ հոդվածի 13-րդ մասի ուժով կիրառվել է, իր կարծիքով՝ «երկակի չափանիշ», այն է՝ կենսաթոշակի չափը որոշելիս **դատախազության աշխատողի ստաժում** ներառվել է ամբողջ աշխատանքային ստաժը՝ ինչպես իրավաբանի մասնագիտական ստաժը, այնպես էլ դատախազությունում ծառայության ժամանակահատվածը (36 տարի 6 ամիս 25 օր), իսկ աշխատավարձի հաշվարկի ժամանակ՝ միայն այն ժամանակահատվածը, որն առնչվում է միայն դատախազությունում աշխատած ժամանակահատվածին (9 տարի 12 ամիս 23 օր), դիմողը 25.08.2008 թվականին դիմել է ՀՀ գլխավոր դատախազին՝ իր ստաժի վերահաշվարկ կատարելու խնդրանքով:

Այնուհետեւ դիմողը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ ի թիվս այլոց, ՀՀ դատախազությանը երկարամյա ծառայության կենսաթոշակը վերահաշվարկելուն պարտավորեցնելու պահանջով, ինչը ՀՀ վարչական դատարանի 05.06.2009 թվականի վճռով մերժվել է:

Վերը նշված վճռի դեմ դիմողը վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ վճռաբեկ դատարան: Վերջինս՝ վերահաստատելով ՀՀ վարչական դատարանի եզրահանգումները, իր՝ 29.07.2009թ. որոշմամբ վերադարձրել է վճռաբեկ բողոքը:

3. Դիմողը «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 13-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված դրույթում «դատախազի, դատավորի եւ դատախազության քննիչի» բառակապակցությունը դիտարկելով «Դատա-

խագրության մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 13-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված դրույթի համատեքստում՝ գտնում է, որ վիճարկվող դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության 6, 14.1., 34 եւ 42-րդ հոդվածներին:

Վիճարկվող դրույթի՝ Սահմանադրության 14.1-րդ հոդվածին հակասելու առնչությամբ դիմողը, ելնելով իր այն դիրքորոշումից, որ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 13-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված դրույթում «դատախազ», «դատավոր», «դատախազության քննիչ» արտահայտությունները վերաբերում են իրավաբանի մասնագիտությանը, գտնում է, որ վիճարկվող դրույթը ներառում է ոչ միայն դատախազի, դատավորի եւ դատախազության քննիչի աշխատանքային ստաժը, այլ նաեւ **իրավաբանի մասնագիտական ստաժը**: Մինչդեռ, ըստ դիմողի, նշված դրույթում ներառելով միայն դատախազի, դատավորի եւ դատախազության քննիչի աշխատանքային ստաժը՝ օրենսդիրը խտրական վերաբերմունք է ցուցաբերում այն դատախազների նկատմամբ, ովքեր աշխատել են որպես փաստաբան, քննիչ, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում եւ տարբեր կազմակերպություններում՝ իրավաբան: Ըստ դիմողի՝ «Դատախազության մասին» ՀՀ նախկին օրենքով նշված անձանց աշխատանքը ներառվում էր իրավաբանի մասնագիտական ստաժում:

Վիճարկվող դրույթի՝ Սահմանադրության 34-րդ հոդվածին հակասելու առնչությամբ դիմողը, ելնելով իր այն դիրքորոշումից, որ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 13-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված դրույթը ներառում է **իրավաբանի մասնագիտական ստաժը**, մինչդեռ վիճարկվող դրույթը որպես իրավաբանի մասնագիտական ստաժ է դիտարկում միայն դատախազի, դատավորի, դատախազության քննիչի պաշտոններում աշխատած ժամանակահատվածը, գտնում է, որ վիճարկվող դրույթն արհեստականորեն դուրս է թողնում փաստաբանի, քննիչի, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում եւ տարբեր կազմակերպություններում՝ իրավաբանի պաշտոններում աշխատած ժամանակահատվածը՝ վատթարացնելով այն դատախազների կենսամակարդակը, որոնք նախկինում զբաղեցրել են վերը նշված պաշտոնները:

Վիճարկվող դրույթի՝ Սահմանադրության 42-րդ հոդվածին հակասելու առնչությամբ դիմողը, ելնելով իր այն դիրքորոշումից, որ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 13-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված դրույթը ներառում է **իրավաբանի մասնագիտական ստաժը**, մինչդեռ վիճարկվող դրույթը որպես իրավաբանի մասնագիտական ստաժ է դիտարկում միայն դատախազի, դատավորի, դատախազության քննիչի պաշտոններում աշխատած ժամանակահատվածը, գտնում է, որ վիճարկվող դրույթը վատթարացնում է որոշ դատախազների իրավական վիճակը, քանի որ հաշվի չի առնում տվյալ դատախազների՝ փաստաբանի, քննիչի, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում եւ տարբեր կազմակերպություններում՝ իրավաբանի պաշտոններում աշխատած ժամանակահատվածը:

Բացի դրանից, դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթը թույլ է տալիս աշխատանքային ստաժի նկատմամբ ցուցաբերել երկակի մոտեցում, այն է՝ կենսաթոշակի չափը որոշելիս **դատախազության աշխատողի ստաժում** ներառել ամ-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

բողջ աշխատանքային ստաժը՝ ինչպես իրավաբանի մասնագիտական ստաժը, այնպես էլ դատախազությունում ծառայության ժամանակահատվածը, իսկ աշխատավարձի հաշվարկի ժամանակ՝ միայն այն ժամանակահատվածը, որն առնչվում է միայն դատախազի, դատավորի, դատախազության քննիչի պաշտոններում աշխատած ժամանակահատվածին:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ վիճարկվող դրույթը որեւէ կերպ չի կարող դիտարկվել որպես խտրականություն: Հասարակական կյանքի տարբեր ոլորտների, այդ թվում՝ նաեւ սոցիալական ապահովության ոլորտի իրավական կարգավորման տարբերակված մոտեցման առկա-յությունը թույլատրելի է, եթե տարբերակման չափանիշներն օբյեկտիվորեն արդարացված եւ հիմնավորված են, հետապնդում են սահմանադրորեն նշանակալի նպատակներ, եւ այդ նպատակներին հասնելու իրավական միջոցները համաչափ են դրանց: Ըստ պատասխանողի՝ դատախազի, դատավորի եւ դատախազության քննիչի պաշտոնում աշխատած յուրաքանչյուր տարվա համար՝ դասային աստիճան ունեցող դատախազների համար հավելավճարի սահմանումը պայմանավորված է վերջիններիս գործունեության բնույթով, նրանց իրավասությամբ, հիմնավորված է եւ չի կարող դիտվել որպես օրենքի առաջ բերողի հավասարության սահմանադրական սկզբունքի խախտում: Պատասխանողն այս մոտեցումը հիմնավորելու համար վկայակոչում է «Աշխատանքի վարձատրության մասին» 2001թ. սեպտեմբերի 11-ի ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված նորմը:

Ինչ վերաբերում է վիճարկվող դրույթի՝ ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածին ենթադրյալ հակասությանը, ապա պատասխանողը՝ վկայակոչելով սահմանադրական դատարանի 2006թ. սեպտեմբերի 20-ի ՍԳՈ-647 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումը, գտնում է, որ վեճի առարկան չի առնչվում այդ սահմանադրական նորմին:

Պատասխանողն անհիմն է համարում դիմողի պնդումն այն մասին, որ դատախազի սոցիալական ապահովության պայմանները սահմանելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաեւ այն մասնագիտական ստաժը, որը հաշվարկվել է վերջինիս պաշտոնում նշանակելիս: Այս առնչությամբ պատասխանողը տրամաբանական է համարում, որ պաշտոնում նշանակելիս ներկայացվող պահանջները եւ դատախազների սոցիալական ապահովության հարցերը կարգավորելիս դրա հիմքում դրվող չափանիշները կարող են տարբերվել: Մասնավորապես, օրենքով հավելավճար կարող է սահմանվել որոշակի կատեգորիայի անձանց համար, հաշվի առնելով նրանց աշխատանքային կամ մասնագիտական առանձնահատկությունները:

Վիճարկվող դրույթի՝ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասին ենթադրյալ հակասության առնչությամբ վկայակոչելով սահմանադրական դատարանի 2008թ. հունվարի 15-ի ՍԳՈ-723 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումը՝ պատասխանողը գտնում է, որ «Դատախազության մասին» ՀՀ օրենքում տրված իրավակարգավորումը լիովին համապատասխանում է սահմանադրական դատարանի վկայակոչված դիրքորոշմանը:

5. Սահմանադրական դատարանը խտրականության արգելման սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով եւ իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միեւնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերածվել խտրականության: Խտրականության սկզբունքի խախտում է հանդիսանում այն տարբերակված մոտեցումը, որը գուրկ է օբյեկտիվ հիմքից եւ իրավաչափ նպատակից:

Սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը հարկ է համարում պարզել, թե արդյոք դատախազներին դասային աստիճանի համար տրվող հավելավճարը հաշվարկելիս տվյալ դատախազի կողմից նախկինում որպես դատավոր աշխատած տարիները հաշվի առնելն ունի օբյեկտիվ հիմք եւ իրավաչափ նպատակ: Այդ կապակցությամբ հարկ է պարզել դասային աստիճանի բնույթը եւ նպատակը:

Դատախազներին շնորհվող դասային աստիճանը ցույց է տալիս դատախազի որակավորման աստիճանը: Որակավորումը, իր հերթին, բնութագրում է դատախազի՝ տվյալ բնագավառում աշխատանքային փորձը եւ հմտությունները, որից էլ կախված է դատախազի աշխատանքի վարձատրության չափը: Հետեւաբար, դատախազներին դասային աստիճանի համար տրվող հավելավճարը հաշվարկելիս միայն որպես դատախազ աշխատած տարիները հաշվի առնելն ունի օբյեկտիվ հիմք եւ իրավաչափ նպատակ:

Ինչ վերաբերում է հավելավճարը հաշվարկելիս նաեւ որպես դատախազության քննիչ աշխատած տարիները հաշվի առնելուն, որը սահմանված է վիճարկվող դրույթով, սահմանադրական դատարանը գտնում է, որ այդպիսի պահանջը եւս ունի օբյեկտիվ հիմք եւ իրավաչափ նպատակ: Դա պայմանավորված է օրենքի հետադարձ ուժի մերժման եւ լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի սկզբունքներով: Նշված սկզբունքները պահպանելու անհրաժեշտությամբ թելադրված՝ օրենսդիրը «Դատախազության մասին» գործող օրենքն ընդունելիս հաշվի է առել այն հանգամանքները, որ «Դատախազության մասին» նախկին օրենքով.

- դատախազության քննիչի եւ դատախազի պաշտոնները վերաբերել են միեւնույն բնագավառին՝ դատախազական գործունեությանը,

- դատախազության քննիչին եւ դատախազին շնորհվել են միեւնույն դասային աստիճանները.

- վերը նշված հանգամանքներով պայմանավորված՝ դատախազության քննիչի եւ դատախազի պաշտոնները գործառնական առումով համակարգային ընդհանրություն ունեցող պաշտոններ են:

Ավելին, օրենքի հետադարձ ուժի մերժման եւ լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի սկզբունքները պահպանելու անհրաժեշտությամբ թելադրված՝ օրենսդիրը «Դատախազության մասին» գործող օրենքն ընդունելիս «դատախազ» եզրույթում ներառել է նաեւ դատախազի նախկին ավագ օգնականներին եւ օգնականներին, որոնց պաշտոնները վերանվանվել են որպես համապատասխան դատախազության դատախազներ եւ ավագ դատախազներ: Օրենսդիրը հաշվի է առել նաեւ այն հանգամանքը, որ 2007 թվականի դեկտեմբերի 1-ից դատախազության քննիչների ինստիտուտը դատախազության համակարգից հանվել է:



Ինչ վերաբերում է դատախազին դասային աստիճանի համար տրվող հավելավճարը հաշվարկելիս որպես դատավոր աշխատած տարիները հաշվի առնելու հիմքի օբյեկտիվությանը եւ նպատակի իրավաչափությանը, սահմանադրական դատարանը հարկ է համարում շեշտել, որ որակավորման առումով դատավորի եւ դատախազի պաշտոններին օրենսդրորեն ներկայացվում են գրեթե համանման պահանջներ, որոնք զգալիորեն տարբերվում են ընդհանրապես իրավաբանի մասնագիտությանը ներկայացվող պահանջներից: Բացի դրանից, նոր իրավակարգավորման ժամանակ նախկին իրավակարգավորմամբ սահմանված սուբյեկտների կազմը չի նեղացվել, իսկ դրա ընդլայնման կարգի ու շրջանակների որոշումն օրենսդրի իրավասության հարցն է: Անհիմն է դիմողի դիրքորոշումը նաեւ այն առնչությամբ, որ վիճարկվող դրույթի առկա ձեւակերպումը թույլ է տալիս աշխատանքային ստաժի նկատմամբ ցուցաբերել երկակի մոտեցում: Աշխատավարձը եւ կենսաթոշակը փոխկապակցված, սակայն տարբեր իմաստիտուտներ են, որոնց իրավակարգավորման չափանիշները նույնպես կարող են տարբեր լինել: Դրանով են պայմանավորված նաեւ կենսաթոշակի նշանակման տարբերակված մոտեցումները տարբեր մասնագիտությունների համար:

Իսկ ինչ վերաբերում է դասային աստիճան ունեցող դատախազների համար՝ դատախազի, դատավորի եւ դատախազության քննիչի պաշտոնում աշխատած տարիներից ելնելով հավելավճարի սահմանմանը, ապա դա հենց այս պաշտոնների համար նախատեսված սոցիալական անկախության երաշխիք է եւ որեւէ առնչություն չունի Սահմանադրության 14.1-րդ հոդվածի առաջին մասով սահմանված՝ օրենքի առջեւ բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքի հետ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի առջեւ բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքը ենթադրում է օրենքի առջեւ հավասար պատասխանատվության, պատասխանատվության անխուսափելիության եւ իրավական պաշտպանության հավասար պայմանների ապահովում, եւ չի առնչվում իրավական տարբեր կարգավիճակ ունեցող սուբյեկտների համար որեւէ իրավաչափ նպատակով պայմանավորված նախադրյալներ՝ տվյալ դեպքում սոցիալական անկախության երաշխիքներ նախատեսելու կամ իրավունքի տվյալ կատեգորիայի սուբյեկտների համար լրացուցիչ պարտականություններ սահմանելուն:

6. Սահմանադրական դատարանը սույն գործի քննության շրջանակներում անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաեւ կենսաթոշակային հարաբերությունների բնագավառում Սահմանադրության 34-րդ հոդվածի կիրառելիության հարցին:

Կենսաթոշակային ապահովության իրավունքը՝ սահմանված Սահմանադրության 37-րդ հոդվածով, եւ բավարար կենսամակարդակի իրավունքը՝ սահմանված Սահմանադրության 34-րդ հոդվածով, թեպետեւ իրենց բնույթով դասվում են սոցիալական իրավունքների շարքին, այնուամենայնիվ, դրանք տարբեր իրավունքներ են, վերաբերում են տարբեր կատեգորիայի անձանց, եւ այդ իրավունքները Սահմանադրությամբ տարանջատված են: Սահմանադրության 37-րդ հոդվածով նախատեսված՝ կենսաթոշակային ապահովության իրավունքը վերա-

պահված է հասարակության՝ սոցիալապես առավել խոցելի խմբերին: Օրենսդիրն այդ խմբերի ներկայացուցիչներին դիտարկում է որպես աշխատունակության լրիվ կամ մասնակի կորուստ ունեցողներ, որոնք դրա հետեւանքով չեն կարող սեփական աշխատանքով իրենց եւ իրենց ընտանիքների համար ապահովել բավարար կենսամակարդակ: Դրա հետեւանքով պետությունն իր սոցիալական քաղաքականության արդյունավետ իրականացման նպատակով նշված խմբերի համար սահմանել է կենսաթոշակային ապահովության իրավունք: Կենսաթոշակային իրավունքի նպատակն անձի համար **ոչ թե բավարար, այլ նվազագույն կենսամակարդակ** ապահովելն է:

Հետեւաբար, Սահմանադրության 34-րդ հոդվածով սահմանված՝ բավարար կենսամակարդակի իրավունքն ապահովելու՝ պետության պարտականությունը, **նախ**՝ չի վերաբերում սոցիալապես խոցելի խմբերին, եւ, **երկրորդ**՝ այն հանդես է գալիս որպես նորմ-սկզբունք, որը յուրաքանչյուր պետություն, ելնելով իր տնտեսական հնարավորություններից, այնպես, ինչպես սահմանված է Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածի 1-ին մասում, պարտավոր է ապահովել **աշխատունակ, այլ ոչ թե աշխատունակության լրիվ կամ մասնակի կորուստ** ունեցող քաղաքացիների համար:

7. Հիմք ընդունելով դիմումում բարձրացված հարցադրումները՝ կապված օրենքի հետադարձ ուժի արգելման սկզբունքի հետ, սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրական դատարանի 2008թ. հունվարի 15-ի ՍԳՈ-723 որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումները կիրառելի են սույն գործի նկատմամբ:

Սահմանադրական դատարանն իր՝ 2008թ. հունվարի 15-ի ՍԳՈ-723 որոշման 8-րդ կետում գտել է, որ՝ «...օրենսդիրն իրավասու է օրենսդրական փոփոխությունների արդյունքում սահմանելու կենսաթոշակի հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման լիովին նոր համակարգ: Սակայն նման փոփոխությունները չեն կարող վերացնել այն կենսաթոշակները, այդ թվում՝ արտոնյալ կարգով նշանակվող, որոնք ստանալու իրավունքն անձը ձեռք է բերել նախկինում գործող օրենսդրության հիման վրա: Եթե օրենքն արդեն սահմանել է կենսաթոշակի տեսակները, կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց շրջանակը, կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանները, կենսաթոշակի չափը եւ վճարման պայմանները, պետության համար ծագում է պարտականություն երաշխավորելու կենսաթոշակի իրավունքի առնչությամբ **լեզիտիմ ակնկալիքների** հանդեպ հարգանքի եւ իրավական որոշակիության սկզբունքների իրացումը:...»:

Սույն գործի քննության շրջանակներում զարգացնելով իր՝ 2008թ. հունվարի 15-ի ՍԳՈ-723 որոշման 8-րդ կետում ամրագրված իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքի տեսանկյունից սահմանադրական դատարանի վերը նշված որոշման մեջ ամրագրված հինգ պայմաններից չորսը՝ կենսաթոշակի տեսակները, կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց շրջանակը, կենսաթոշակի չափը, կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանները, կենսաթոշակային իրավունքի պարտադիր տարրեր են: Ընդ որում, ՍԳՈ-723 որոշման 8-րդ կետում ամրագրված՝ կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանների ներքո սահմանադրական

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

դատարանը նկատի է ունեցել կենսաթոշակի ձեռքբերման արտոնյալ պայմանները: Ինչ վերաբերում է վերջին տարրին՝ կենսաթոշակի վճարման պայմաններին, ապա այն ֆակուլտատիվ տարր է եւ կախված է կենսաթոշակի նախկինում սահմանված կամ նշանակված չափից: Այսինքն՝ այդ տարրը կարող է դառնալ պարտադիր տարր միայն այն դեպքում, երբ կենսաթոշակային իրավահարաբերությունների նոր համակարգ սահմանելիս նվազեցվում է նախկինում սահմանված կամ նշանակված կենսաթոշակի չափը:

«Դատախազության մասին» ՀՀ նախկին եւ գործող օրենքների համեմատական վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործող օրենքի վիճարկվող դրույթը չի վերացնում մինչ այդ գոյություն ունեցող կենսաթոշակի տեսակը, չի սահմանափակում մինչ այդ սահմանված կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց շրջանակը, չի նվազեցնում մինչ այդ սահմանված կենսաթոշակի չափը, չի առնչվում արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունքին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19, 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 13-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված դրույթը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**4 մայիսի 2010 թվականի  
ՍԳՈ-881**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՎՃՈՒՐԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ  
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԱՏԱՎՈՐ Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԳԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ  
ՕՐԵՆՍՊԻՔԻ 177-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 268-ՐԴ  
ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**11 մայիսի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի, մասնակցությամբ՝ գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25 եւ 71-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ վճռաբեկ դատարանի եւ Երևանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Ավետիսյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի եւ 268-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ վճռաբեկ դատարանի եւ Երևանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Ավետիսյանի՝ համապատասխանաբար 23.02.2010թ. եւ 10.03.2010թ. սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումներն են:

Հաշվի առնելով, որ դիմումները վերաբերում են նույն հարցին, այն է՝ դատվածության եւ դրա հետ կապված կրկնակիության եւ ռեցիդիվի առկայության դեպքում արարքի քրեաիրավական որակման եւ պատժի նշանակման կանոնակարգմանը, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի

ՍԱՐՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ • ՏԵՂԵԿԱԳԻՐ • 1(58)/2011

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

39-րդ հոդվածով՝ սահմանադրական դատարանն իր՝ 19.03.2010թ. ՍԳԱՌ-27 որոշմամբ սույն գործերը միավորել է դատարանի նույն նիստում քննելու համար:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքն (այսուհետ՝ օրենսգիրք) ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2003թ. ապրիլի 18-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2003թ. ապրիլի 29-ին եւ համաձայն «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ ուժի մեջ է մտել 2003թ. օգոստոսի 1-ից:

Օրենսգրքի 177-րդ հոդվածը վերնագրված է «Գողությունը», իսկ 268-րդ հոդվածը՝ «Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառությունն առանց իրացնելու նպատակի»: Սույն հոդվածները փոփոխությունների են ենթարկվել համապատասխանաբար՝ 01.07.2004թ. ընդունված ՀՕ-97-Ն եւ 26.05.2008թ. ընդունված ՀՕ-76-Ն օրենքներով:

Օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող հոդվածների նորմերը սահմանում են «Հոդված 177. Գողությունը

...

3. Գողությունը, որը կատարվել է՝

...

3) սույն օրենսգրքի 175-182-րդ, 222-րդ, 234-րդ, 238-րդ, 269-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների համար երկու կամ ավելի դատվածություն ունեցող անձի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա»:

«Հոդված 268. Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառությունն առանց իրացնելու նպատակի.

...

2. Նույն արարքները, որոնք կատարվել են՝

1) կրկին անգամ՝

պատժվում են ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

2. Գործի փաստական հանգամանքները հանգում են հետեւյալներին.

1) քաղ. Նիկոլայ Հովսեփյանի նկատմամբ քրեական գործը հարուցվել է 2009թ. մայիսի 15-ին, հունիսի 4-ին նրան մեղադրանք է առաջադրվել օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով: Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 13.08.2009թ. դատավճռով Ն. Հովսեփյանը նշված մեղադրանքով դատապարտվել է կալանքի 2 ամիս ժամկետով:

Դատախազի վերաքննիչ բողոքի հիման վրա ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իր՝ 05.10.2009թ. դատավճռով Ն. Հովսեփյանին դատապարտել է ազատազրկման 4 տարի ժամկետով:

Վճռաբեկ բողոքով գործը մուտք է եղել ՀՀ վճռաբեկ դատարան:

ՀՀ վճռաբեկ դատարանը՝ գտնելով, որ վեճը լուծելու համար կիրառման ենթակա օրենքի դրույթի՝ օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի սահմանադրականության խնդիր կարող է առաջանալ, կասեցրել է գործի վարույթը եւ դիմել ՀՀ սահմանադրական դատարան:

2) Քաղ. Արթուր Սկրտչյանին մեղադրանք է առաջադրվել օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, իսկ քաղ. Սարգիս Հարությունյանին՝ 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով եւ 268-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով: Մեղադրական եզրակացությունը կազմվել է 2009թ. դեկտեմբերի 29-30-ին եւ գործը 15.01.2010թ. ուղարկվել է Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան:

Գտնելով, որ վեճը լուծելու համար կիրառման ենթակա օրենքի դրույթները՝ օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի եւ 268-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի ու դրա հետ կապված՝ 21 եւ 22-րդ հոդվածների սահմանադրականության խնդիր կարող է առաջանալ՝ Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Ավետիսյանը կասեցրել է գործի վարույթը եւ դիմել ՀՀ սահմանադրական դատարան:

3. Գիմողներն իրենց դիրքորոշումը հիմնավորում են հետեւյալ փաստարկներով: Օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով պատասխանատվություն է նախատեսվում հափշտակությունների համար երկու եւ ավելի դատվածություն ունեցող անձի կողմից գողություն կատարելու դեպքում: Տվյալ դեպքում դատվածության առկայությունն ազդում է արարքի որակման վրա, եւ հափշտակության համար դատվածություն ունեցող անձի կատարած գողությունը համարվում է որակապես ավելի ծանր հանցանք, քան դատվածություն չունեցողի կողմից կատարված նույնական գողությունը: Օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը որպես թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության ծանրացնող հանգամանքներով (որակյալ) հանցակազմի հատկանիշ է սահմանում արարքի կրկնակիությունը (դատվածության հետ կապված եւ չկապված):

Գիմողները գտնում են, որ ինչպես վիճարկվող հոդվածներում, այնպես էլ օրենսգրքի մի շարք հոդվածներում կիրառված կրկնակիության եւ ռեցիդիվի ինստիտուտն անհամատեղելի է ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 7-րդ մասում ամրագրված՝ «ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար» սկզբունքի հետ, ինչպես նաեւ հակասում է Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 7-րդ կետին, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 1-ին մասին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային մի շարք վճիռներում արտահայտած իրավական դիրքորոշումներին (օր.՝ Չոլտոտիսինն ընդդեմ Ռուսաստանի գործով վճիռը):

Գիմողները գտնում են, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում մշակված չափանիշները սույն գործով կիրառելու պարագայում վիճարկվող հոդվածներն առերեսույթ չեն համապատասխանում

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 7-րդ մասին, քանի որ նոր մեղադրանքն անհրաժեշտաբար բխում է էականորեն նույնական փաստերից, եւ նախորդ դատապարտումն անհրաժեշտաբար օրինական ուժ ստացած է լինում:

Էականորեն նույնական փաստերից նոր մեղադրանքի բխելու չափանիշն առկա է, քանի որ մեղադրանքի ծավալից նախորդ դատապարտումների փաստի դուրսբերման դեպքում արարքն այլեւս չի կարող որակվել վիճարկվող հոդվածներով, այլապես կխախտվի օրենքի եւ դատարանի առջեւ բոլորի հավասարության սկզբունքը: Հետեւաբար, այն արարքները, որոնց համար անձը դատապարտված է եղել, հանդիսանում են նոր մեղադրանքի անքակտելի եւ էական տարր:

Ըստ դիմողների՝ նույն արարքի համար կրկին անգամ դատվելը բացառելու սկզբունքի հիմքում ընկած է մեղքը քաված լինելու կանխավարկածը, համաձայն որի՝ անձը չի կարող կրել իր իրավունքների կամ ազատությունների սահմանափակումներ՝ նախկինում կատարած հանցագործության հիմքով, իսկ վիճարկվող իրավակարգավորման դեպքում իր պատիժը կրած եւ մեղքը քաված անձի առնչությամբ շարունակում է գործել նրա կողմից նոր հանցանք կատարելու հնարավորության կասկածը: Դատվածությունը, ըստ էության, հանդես է գալիս որպես կանխարգելիչ, շարունակվող քրեական պատիժ, որը նոր հանցանք կատարելու դեպքում վեր է ածվում լրացուցիչ պատժի:

Վերը նշված վերլուծության արդյունքում դիմողները գտնում են, որ դատվածությունների առկայությունը եւ կրկնակիությունը հանցագործության որակյալ հատկանիշ ճանաչելն ակնհայտորեն հետապնդում է իրավաչափ նպատակ՝ քրեաիրավական միջոցներով պայքար կրկնահանցավորության դեմ: Սակայն ընտրված միջոցը, այն է՝ քրեաիրավական ներգործությունը հանցանքի, այլ ոչ թե պատժի տարրի վրա կենտրոնացնելը, դիմողների կարծիքով, սահմանադրականության խնդիրներ է հարուցում:

4. Պատասխանողը՝ առարկելով դիմողների փաստարկների դեմ, գտնում է, որ օրենսգրքով սահմանված հիշյալ դրույթները չեն հակասում ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 7-րդ մասին եւ չեն սահմանափակում անձի իրավունքներն ու ազատությունները:

Պատասխանողը նշում է, որ իր իրավասության սահմաններում օրենսդիրն ազատ է ինքնուրույն որոշելու օրենսգրքի դրույթների բովանդակությունը, այդ թվում՝ սահմանելու առանձին արարքների հանցավորությունը, դրանց պատժելիությունը եւ այլ քրեաիրավական հետեւանքները: Սակայն քրեաիրավական արգելքների եւ սանկցիաների սահմանումը չի կարող կամայական լինել: Քրեաիրավական ներագրման միջոցների կիրառման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ սահմանադրական կարգի, անձանց կյանքի եւ առողջության, հասարակական կարգի եւ հասարակության բարօրության պահպանման անհրաժեշտությամբ: Այս մոտեցումը ենթադրում է այնպիսի իրավակարգավորման սահմանում, որը պետք է ենթադրի յուրաքանչյուրի իրավունքների ու ազատությունների պետական պաշտպանություն:

Պատասխանողը միաժամանակ գտնում է, որ անձի, հասարակության եւ պետության իրավունքների պաշտպանության մեխանիզմները, ինչպես նաեւ հանցագործությունների կանխումը պետք է հիմնվեն արդարության եւ քրեական պա-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

տասխանատվության, քրեական օրենքով պաշտպանվող շահերի համաչափության սահմանադրական սկզբունքների վրա՝ անվերապահորեն ապահովելով հանրային-իրավական հարաբերությունների՝ այս ոլորտում անձի իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքները:

Պատասխանողը նշում է, որ նման երաշխիքներից է Սահմանադրության 22-րդ հոդվածի 7-րդ մասում ամրագրված՝ նույն արարքի համար կրկին անգամ չդատվելու սկզբունքը: Նույն արարքի համար կրկին անգամ չդատվելու սահմանադրական եւ միջազգային իրավական արգելքն օրենսգրքում բարձրացվել է սկզբունքի մակարդակի (10-րդ հոդվածի 2-րդ մաս), ըստ որի՝ բացառվում է նույն արարքի համար անձի կրկնակի դատապարտումը կամ միեւնույն արարքն օրենսգրքի մի քանի հոդվածներով որակելը:

Միեւնույն ժամանակ այդ սկզբունքը չի սահմանափակում նաեւ օրենսդրի իրավունքը սահմանելու իրավական հետեւանքներ առաջացնող այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք դատվածությունն է եւ դրանից ածանցված՝ հանցագործությունների կրկնակիությունն ու ռեցիդիվը: Նման կարգավորումն ուղղակիորեն բխում է օրենսգրքում ամրագրված՝ արդարության եւ պատասխանատվության անհատականացման սկզբունքից:

Պատասխանողի կարծիքով՝ ՀՀ քրեական օրենսգրքը, սահմանելով չհանված կամ չմարված դատվածության քրեաիրավական հետեւանքները, դրա տարբերակման հիմքում դնում է այն, թե ինչպես դա կանդրադառնա առանձին հանցագործությունների հասարակական վտանգավորության վրա: Ընդ որում, եթե հանցագործությանը բնութագրական է հատուկ ռեցիդիվի բարձր մակարդակ, դատվածությունը դիտվում է որպես տվյալ հանցագործությունը որակյալ դարձնող հանգամանք, որի հանրային վտանգավորության հիմքում ընկած է տվյալ անձի սխտեմատիկ վարքագիծը:

5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող հոդվածների սահմանադրականությունը գնահատելիս պետք է ելնել ՀՀ Սահմանադրությունից բխող իրավական պատասխանատվության ընդհանուր սկզբունքներից, որոնք սահմանելով ինչպես օրենսդրի հայեցողության սահմանները քրեաիրավական կարգավորման ընթացքում, այնպես էլ քրեական պատժի ենթարկվող քաղաքացու սահմանադրաիրավական կարգավիճակը, իրենց բնույթով համապատասխան ոլորտում կազմում են պետության եւ անձի փոխհարաբերության հիմքը:

Ինչպես շատ պետություններ, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունն իրեն հռչակելով որպես իրավական պետություն, իր Սահմանադրությունում հստակ սահմանել է հետեւյալ դրույթը. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները եւ ազատությունները բարձրագույն արժեքներ են» (3-րդ հոդվածի 1-ին մաս): Սրանից էլ բխում են Սահմանադրության նույն հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերով ամրագրված նորմերը. «Պետությունն ապահովում է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան»:  
«Պետությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:



**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Քրեական պատասխանատվության միջոցների կիրառումն արդարացված է Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, պատվի եւ բարի համբավի պաշտպանության անհրաժեշտությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքներից է նաեւ Սահմանադրության 22-րդ հոդվածի 7-րդ մասում ամրագրված դրույթը, համաձայն որի՝ ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար, եւ որն իր սահմանադրաիրավական բովանդակությամբ ենթակա չէ սահմանափակման (անգամ արտակարգ կամ ռազմական դրության պայմաններում):

ՀՀ Սահմանադրության պահանջներին համահունչ են նաեւ մի շարք միջազգային պայմանագրերի դրույթները, մասնավորապես՝ Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 7-րդ կետը, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 1-ին մասը եւ այլն, որոնցով Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է պարտավորություններ՝ երաշխավորելու անձանց՝ նույն արարքի համար կրկին անգամ չդատվելու իրավունքը:

6. ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 7-րդ մասում ամրագրված վերոհիշյալ նորմն իր արտացոլումն է գտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածում, որի 2-րդ մասը սահմանում է. «Նույն անձի վերաբերյալ, նույն դեպքի առիթով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը մեղադրանքն ավելի ծանրով փոխարինելու կամ ավելի խիստ պատիժ նշանակելու կամ մեկ այլ հիմքով, որն առաջ կրերի անձի վիճակի վատթարացում»:

Նույն արարքի համար կրկին անգամ չդատվելու սահմանադրական սկզբունքն օրենսդիրն իրավացիորեն տարածել է ոչ միայն դատական, այլեւ քրեական հետապնդման մարմինների գործունեության նկատմամբ: Քր.դատ.օր.-ի 21-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը, եթե այն կարող է հանգեցնել անձի վիճակի վատթարացման:

Գիմողների հարցադրման կապակցությամբ՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում պարզել «նույն արարք» եզրույթի բովանդակությունը: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի եւ արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: «Նույն արարք»-ի տառացի մեկնաբանությունից բխում է, որ խոսքը վերաբերում է մեկ արարքի, միեւնույն արարքին, իսկ օրենսգրքի ձեւակերպմամբ՝ «նույն դեպքին» եւ ոչ թե նույնաման, նույնատեսակ, նույնաբնույթ արարքին: Հակառակ մեկնաբանության դեպքում կստացվեր, որ եթե անձը մեկ անգամ

դատվել է, օրինակ՝ գողության համար եւ նորից է կատարել գողություն, ապա նա չի կարող կրկին դատվել գողության համար՝ դատողություն, որը գուրկ է տրամաբանությունից:

Անդրադառնալով դիմողների այն հարցադրմանը, համաձայն որի՝ կրկին անգամ կամ երկու եւ ավելի դատվածություն ունեցող անձի կողմից նոր նույնանման հանցանք կատարելը որպէս արարքը որակյալ դարձնող հատկանիշ դիտելը եւ դրա համար ավելի խիստ պատիժ սահմանելը ենթադրում է, որ անձը կրկին անգամ դատապարտվում է նախկինում կատարած եւ պատիժը կրած արարքի համար, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում այն դիտարկել ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ քրեական օրենսդրության խնդիրներին, սկզբունքներին դրանց համապատասխանության տեսանկյունից:

Օրենսգրքի՝ «ՀՀ քրեական օրենսգրքի խնդիրները» վերտառությամբ 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի խնդիրներն են՝ հանցավոր ոտնձգություններից պաշտպանել մարդու եւ քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, իրավաբանական անձանց իրավունքները, սեփականությունը, շրջակա միջավայրը, հասարակական կարգը եւ անվտանգությունը, սահմանադրական կարգը, խաղաղությունը եւ մարդկության անվտանգությունը, ինչպէս նաեւ կանխել հանցագործությունները: Այլ սկզբունքների թվում օրենսգրքը սահմանում է նաեւ արդարության եւ պատասխանատվության անհատականացման սկզբունքը (օրենսգրքի 10-րդ հոդված): Ըստ այդ սկզբունքի՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը եւ քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխան են հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հաշվի առնեն հանցավորի անձնավորությունը, անհրաժեշտ ու բավարար լինեն նրան ուղղելու եւ նոր հանցագործությունները կանխելու համար:

Օրենսգրքի՝ «Պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները» վերտառությամբ 61-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պատժի տեսակը եւ չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով եւ բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը եւ պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:

Օրենսգրքի Ընդհանուր մասի վերոհիշյալ հոդվածներում պատժի տեսակն ու չափը որոշելիս, ի թիվս այլ հանգամանքների, կարեւորվում է հանցավորի անձը բնութագրող տվյալների (այդ թվում՝ պատասխանատվությունը եւ պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների), ինչպէս նաեւ հանցավորին ուղղելու եւ նոր հանցագործությունները կանխելու համար պատժի անհրաժեշտ ու բավարար լինելու գնահատումը: Միայն նման գնահատման պայմաններում է հնարավոր ապահովել պատասխանատվության եւ պատժի անհատականացման օրենսդրական սկզբունքը: Այդ առումով էլ՝ ինչպէս օրենսդիրն օրենսգրքի Հատուկ մասում, այնպէս էլ դատարանը կոնկրետ գործով պատժատեսակ ու պատժաչափ որոշելիս հանցակազմի մյուս բաղադրատարրերի հետ մեկտեղ պետք է պատշաճ ուշադրություն դարձնեն հանցավորի՝ հանցակազմի սուբյեկտի անձնավորությանը:

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգիրքը հանցակազմի ընդհանուր սուբյեկտներից առանձնացնում է **հատուկ սուբյեկտներին**: Սուբյեկտի այս տեսակը, բացի երեք պարտադիր հատկանիշներից (ֆիզիկական անձ, մեղսունակություն եւ քրեական պատասխանատվության ենթարկելու տարիք), բնութագրվում է նաեւ ոչ պարտադիր հատկանիշներով, որոնք նախատեսված են օրենսգրքի Հատուկ մասի նորմերով: Սուբյեկտի ոչ պարտադիր հատկանիշները կամ ուղղակի նախատեսված են համապատասխան հանցակազմի դիսպոզիցիայում, կամ սահմանվում են մեկնաբանության միջոցով (օր.՝ պաշտոնատար անձի հասկացությունը՝ 308-րդ հոդվածի 3-րդ մասում): Հատուկ սուբյեկտն իր պաշտոնական, ծառայողական կամ մասնագիտական գործունեության բերումով հանրորեն վտանգավոր այնպիսի գործողություն (անգործություն) կատարող անձն է (օր.՝ պաշտոնատար անձը, զինծառայողը, բժիշկը, դատավորը, դատախազը եւ այլն), որպիսին չեն կարող կատարել այլ անձինք: Այդպիսի անձանց հատուկ սուբյեկտներ ճանաչելը բխում է ոչ թե նրանց սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ հանգումներից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, ծննդից, գույքային կամ այլ դրությունից, որը կհակասեր օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքին (ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի 1-ին մաս եւ օրենսգրքի 6-րդ հոդված), այլ, որովհետեւ հանրորեն վտանգավոր նման արարքները կարող են կատարվել միայն այդ անձանց կողմից:

Քրեական իրավունքի տեսությունը հատուկ սուբյեկտների շարքին է դասում նաեւ կրկնահանցագործներին եւ ռեցիդիվիստներին, քանի որ նրանք իրենց իրավական կարգավիճակով առանձնանում են առաջին անգամ հանցանք կատարած անձանցից: Նման տեսական հետետությունից բխեցվում է օրենսդրական համարժեք կարգավորում: Հանցագործությունների կրկնակիության եւ ռեցիդիվի հասկացությունները տրված են օրենսգրքի 21 եւ 22-րդ հոդվածներում: Օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցագործությունների կրկնակիություն է համարվում օրենսգրքի Հատուկ մասի միեւնույն հոդվածով կամ հոդվածի մասով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենսգրքի տարբեր հոդվածներով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը կրկնակի է համարվում միայն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում:

Հանցագործությունների ռեցիդիվի հասկացությունն իր օրենսդրական ձեւակերպումն է ստացել օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասում, ըստ որի՝ ռեցիդիվ է համարվում դիտավորությամբ հանցանք կատարելն այն անձի կողմից, ով դատվածություն ունի նախկինում դիտավորությամբ կատարված հանցանքի համար: Հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերում տրված են վտանգավոր եւ առանձնապես վտանգավոր ռեցիդիվի բնորոշումները: Հոդվածի 4-րդ մասը **բացառում է ռեցիդիվի առկայությունն այն դեպքերում, երբ նախկինում կատարած հանցանքների համար դատվածությունը հանվել կամ մարվել է օրենքով սահմանված կարգով**, ինչպես նաեւ, երբ անձը հանցանքներ է կատարել մինչեւ 18 տարին լրանալը: Նույն կերպ կրկնակիությունը բացակայում է, եթե նախկինում կատարած հանցանքի համար անձը քրեական պատասխանատվությունից ազատվել է օրենքով սահմանված

**հիմքերով, կամ այդ հանցանքի համար դատվածությունը մարվել կամ հանվել է (օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մաս):**

8. Օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ անձը դատվածություն ունեցող է համարվում մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դատվածությունը մարվելու կամ հանվելու պահը: Դատվածությունն օրենսգրքի 84-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն հանդիսանում է պարտադիր պայման հանցագործության ռեցիդիվը ճանաչելու եւ պատիժ նշանակելիս դա հաշվի առնելու համար: Դատվածությունը փաստորեն անձի յուրահատուկ իրավական դրությունն է, որն առաջանում է մեղադրական դատավճռով պատժի նշանակման արդյունքում: Դրա առանձնահատկությունն այն է, որ դատվածություն ունեցող անձի համար կարող են ծագել օրենսգրքով նախատեսված քրեաիրավական բնույթի բացասական հետեւանքներ: Սակայն քրեաիրավական հետեւանքները ծագում են միայն այդ անձի կողմից **նոր հանցանք** կատարելու դեպքում: Օրենսգրքի 84-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատվածության քրեաիրավական հետեւանքներն են. դատվածությունը որպես քրեական պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք հաշվի առնելը, որոշ հանցակազմերում այն որակյալ դարձնող հատկանիշ նախատեսելը (օր.՝ հափշտակությունների դեպքում), ուղղիչ հիմնարկի տեսակի ընտրությունը, դատվածությունը ռեցիդիվի այս կամ այն տեսակի առկայությունը որոշելիս հաշվի առնելը: Ընդ որում, դատվածությունը հանելը կամ մարելը վերացնում է դատվածության հետ կապված իրավական բոլոր հետեւանքները (օրենսգրքի 84-րդ հոդվածի 8-րդ մաս): Դատվածություն չունեցող են համարվում նաեւ այն անձինք, ովքեր դատարանի դատավճռով դատապարտվել են առանց պատիժ նշանակելու կամ դատարանի դատավճռով ազատվել են պատիժը կրելուց կամ պատիժը կրել են այնպիսի արարքի համար, որի հանցավորությունն ու պատժելիությունը վերացված են օրենքով (օրենսգրքի 84-րդ հոդվածի 3-րդ մաս):

Ինչպես նշվեց, ռեցիդիվը պատասխանատվությունը եւ պատիժը ծանրացնող հանգամանք է, որը հանցավորի անձը բնութագրում է որպես հանրորեն վտանգավոր եւ հանցավոր հակումներ ունեցող: Սակայն, եթե որեւէ ծանրացնող հանգամանք օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածում նախատեսված է որպես հանցակազմի հատկանիշ, ապա դա չի կարող կրկին հաշվի առնվել որպես պատասխանատվությունը եւ պատիժը ծանրացնող հանգամանք:

Օրենսդիրը՝ սահմանելով չմարված կամ չհանված դատվածության քրեաիրավական հետեւանքները, տարբերակում է դրանք կախված այն բանից, թե ինչպես է դատվածությունն անդրադառնում այս կամ այն բնույթի հանցագործությունների հասարակական վտանգավորության աստիճանի վրա: Եթե նախկինում դատվածություն ունեցող անձի կողմից կատարված հանցագործությունը, անկախ դրա բնույթից, մեծացնում է այդ հանցագործության հասարակական վտանգավորության աստիճանը, ապա դա նախատեսվում է օրենսգրքի Ընդհանուր մասի նորմերում որպես պատիժը ծանրացնող հանգամանք: Իսկ եթե նախկին դատվածության ազդեցությունը նոր հանցագործության հասարակական վտանգավորության աստիճանի վրա օրենսդրի կողմից գնահատվում է որպես սովորականի շրջանակներից դուրս եկող, ապա դատվածությունը գնահատվում է

որպես որակյալ հանցակազմի սուբյեկտին բնորոշ հատկանիշ, որի հակասոցիալական բնույթը մեծամասամբ որոշվում է անձի հանցավոր վարքագծի պարբերականությամբ:

Դատվածության ինստիտուտը՝ եւ՛ որպես որակյալ հանցակազմի տարր, եւ՛ որպես պատժի նշանակման ժամանակ հաշվի առնվող հանգամանք, իրավաչափ նպատակ է հետապնդում, եւ դրա տարբեր ձեւերի կիրառումն օրենսդրի հայեցողության շրջանակներում է:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նույն արարքի համար կրկին անգամ դատվելը բացառելու սկզբունքն այն ձեւով, ինչպես սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ եւ կարգավորված է ՀՀ քրեական օրենսգրքով, բացառում է անձին կրկնակի դատապարտելն ու պատժելը միեւնույն հանցագործության համար, ինչպես նաեւ միեւնույն հանցավոր արարքի որակումն օրենսգրքի մի քանի հոդվածով, եթե դրանցում պարունակվող նորմերը հարաբերակցվում են որպես Ընդհանուր եւ Հատուկ մասերի նորմեր կամ մաս եւ ամբողջություն:

9. Նույն արարքի համար անձին կրկին անգամ դատելու սահմանադրական արգելքին եւ նույն արգելքն ամրագրած՝ ՀՀ ներպետական իրավական համակարգի բաղկացուցիչ մասը կազմող համապատասխան միջազգային պայմանագրերին համահունչ է օրենսգրքում ամրագրված այն սկզբունքը, ըստ որի՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը եւ քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ ու բավարար լինեն նրան ուղղելու եւ նոր հանցագործությունները կանխելու համար (հոդված 10):

Դա նշանակում է, որ հիշյալ սկզբունքը չի արգելում ինչպես օրենսդրին՝ ՀՀ քրեական օրենսդրությունում ամրագրել դատվածության եւ դրա հետ կապված կրկնակիության ու ռեցիդիվի ինստիտուտները՝ քրեական օրենսդրությամբ նախատեսված իրավական հետեւանքներով հանդերձ, այնպես էլ դատարանին՝ հանցանք կատարած անձի պատժի տեսակն ու չափը սահմանված ձեւով որոշելու գործընթացում հաշվի առնել հանցագործության բնույթը, դրա հասարակական վտանգավորությունը, հաճախականությունը, դրդապատճառները եւ այլ հանգամանքները, ինչպես նաեւ հանցավորի անձը բնութագրող տվյալները:

Այսպիսով, **չհանված կամ չմարված դատվածություն ունեցող անձի կողմից** նոր նույնաբնույթ հանցագործություն կատարելը որպես արարքը որակյալ դարձնող կամ պատասխանատվությունը եւ պատիժը ծանրացնող հանգամանք դիտելը չի կարող համարվել նախկինում կատարած արարքի համար «կրկին անգամ դատվել», ինչպես նաեւ օրենքի առջեւ բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքի խախտում: Առավել եւս, կրկնակիությանն առնչվող բոլոր այն դեպքերը, որոնք կապված չեն դատվածության հետ, սահմանադրականության խնդիր չեն առաջացնում:

Ինչ վերաբերում է դիմումում վկայակոչված՝ «Ս. Ջոլոտուխինն ընդդեմ Ռուսաստանի» (CASE OF SERGEY ZOLOTUKHIN v. RUSSIA, Application no. 14939/03) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի 10 փետրվարի 2009թ. վճռին, ապա դատարանն իրավացիորեն գտել է, որ տվ-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

յալ դեպքում խախտվել է նույն արարքի համար կրկին չդատվելու սկզբունքը, քանի որ դիմողը նույն արարքի համար սկզբից ենթարկվել է վարչական, ապա քրեական պատասխանատվության: Ինչպես նշված, այնպես էլ մի շարք այլ վճիռներում Եվրոպական դատարանն ընդգծում է այն միտքը, որ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված կամ արդարացված անձը չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար, բացառությամբ նոր երեսան եկած հանգամանքների դեպքերի:

Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է նաեւ, որ մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների հետագա ամրապնդման տեսանկյունից հանրապետությունում օրենսդրական զարգացումները պետք է ընթանան այն ուղղությամբ, որ շեշտը դնելով ոչ թե հանցանքի որակման, այլ պատժի տարրերի վրա՝ կատարելագործվեն ռեցիդիվի ինստիտուտը կանոնակարգող իրավանորմերը՝ իրենցում ներառելով նաեւ նախկին դատվածությանն առնչվող քրեաիրավական հետեւանքները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետը եւ 268-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**11 մայիսի 2010 թվականի  
ՍԳՈ- 882**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ`  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ  
ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2009-2010  
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ  
ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ`  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**25 մայիսի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի (զեկուցող),

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի մարտի 16-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջեւ 2009-2010 թվականների ֆինանսական համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 26.04. 2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 1(58)2011  
150

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2010թ. մարտի 16-ին՝ Երեւանում:
2. Համաձայնագրով նախատեսված է սոցիալ-տնտեսական զարգացման նպատակով ֆինանսական եւ վարկային աջակցություն ցուցաբերել բնապահպանության, տնտեսության, էներգետիկայի եւ ժողովրդավարության ոլորտներում:
  3. Համաձայնագրով նախատեսված գումարներն ուղղվելու են, մասնավորապես, հետեւյալ ծրագրերի իրագործմանը՝
    - «Բնապահպանական ծրագիր. արգելոցների աջակցության բաղադրիչ»՝ ֆինանսական օժանդակություն մինչեւ չորս միլիոն եվրո,
    - հանրային զարգացման համագործակցության շրջանակում «Էներգետիկայի ծրագիր. Վերականգնվող էներգակիրների վարկավորման բաղադրիչ»՝ վերականգնման վարկերի բանկից մինչեւ տասնութ միլիոն եվրո գումարի չափով իջեցված տոկոսադրույքով վարկ, ինչպես նաեւ մինչեւ մեկ միլիոն հինգ հարյուր հազար եվրո գումարի չափով ֆինանսական օժանդակություն վերոհիշյալ ծրագրի անհրաժեշտ հարակից միջոցառումների անցկացման եւ համակարգման նպատակով,
    - հանրային զարգացման համագործակցության շրջանակում «Ժողովրդավարության, համայնքային զարգացման, իրավական պետության ծրագիր. Համայնքային ենթակառուցվածքների բաղադրիչ»՝ վերականգնման վարկերի բանկից մինչեւ քառասուն միլիոն եվրո գումարի չափով իջեցված տոկոսադրույքով վարկ,
    - հանրային զարգացման համագործակցության շրջանակում «Էներգետիկայի ծրագիր. Հիդրոէլեկտրակայանների Որոտան կասկադ բաղադրիչ» ծրագրի համար՝ վերականգնման վարկերի բանկից մինչեւ քսաներկու միլիոն եվրո գումարի չափով իջեցված տոկոսադրույքով վարկ:
  4. Համաձայնագրով նախատեսվում է նաեւ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության եւ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից համատեղ, փոխադարձ համաձայնությամբ ընտրվող հասցեատեր, որին հնարավորություն կտրվի ստանալու վարկային գումարներ՝ Վերականգնման վարկերի բանկից:
  5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.
    - երաշխավորել Վերականգնման վարկերի բանկի օգտին վճարումները եվրոյով՝ ի կատարումն երրորդ պետության՝ ՀՀ միջնորդությամբ ստանձնած վարկային պարտավորությունների,
    - ազատել Վերականգնման վարկերի բանկին բոլոր տեսակի հարկերից եւ պետական այլ տուրքերից, երբ պայմանագրի կնքման գործընթացը տեղի է ունենալու ՀՀ տարածքում,
    - վարկի եւ ֆինանսական օժանդակության օգտագործումից անհրաժեշտաբար բխող ծովային, ցամաքային եւ օդային ճանապարհներով անձանց եւ գույքի տեղափոխման համար ուղեւորներին եւ առաքողներին տրամադրել տրանսպորտային ձեռնարկության ազատ ընտրության հնարավորություն, ընդ որում՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում գործող տրանսպորտային ձեռնարկությունների իրավահավասար մասնակցությամբ, անհրաժեշտության դեպ-



**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

քում տրամադրել պահանջվող թույլտվություններ տրանսպորտային հիշյալ ձեռնարկությունների մասնակցության համար:

Համաձայնագրով սահմանված են նաեւ դրա ուժի մեջ մտնելու կարգն ու պայմանները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2010 թվականի մարտի 16-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջեւ 2009-2010 թվականների ֆինանսական համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**25 մայիսի 2010 թվականի  
ՍԳՈ- 883**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2010 ԹՎԱԿԱՆԻ ՍԱՐՏԻ 5-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻԶԵՎ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ (ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ) ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**25 մայիսի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի (գեկուցող), Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի մարտի 5-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ փոխառության համաձայնագրում (Լրացուցիչ ֆինանսավորում Սոցիալական պաշտպանության վարչարարության ծրագրի համար) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 5 մայիսի 2010թ. ՀՀ սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

ՍԱՐՍԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ • ՏԵՂԵԿԱԳԻՐ • 1(58)/2011

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱՂՐԱՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ փոխառության համաձայնագիրը (Լրացուցիչ ֆինանսավորում Սոցիալական պաշտպանության վարչարարության ծրագրի համար) ստորագրվել է 2010 թվականի մարտի 5-ին՝ Երեւանում:

Ըստ համաձայնագրի՝ Բանկը համաձայնագրում սահմանված կամ դրանում նշված պայմաններով եւ ժամկետներում Վարկառուին տրամադրում է հինգ միլիոն դոլարի չափով գումար (վարկ)՝ համաձայնագրի 1-ին ժամանակացույցում նկարագրված Ծրագրի ֆինանսավորմանն աջակցելու համար:

Ծրագրի նպատակն է բարելավել հանրային զբաղվածության, կենսաթոշակային եւ սոցիալական աջակցության գործակալությունների գործունեությունը (արդյունավետությունը, գործունակությունը, որակը) բնակչությանը ծառայությունների մատուցման գործում:

Ծրագիրը բաղկացած է Սկզբնական ծրագրի բոլոր բաղադրիչների համաձայն ծավալվող միջոցառումներից:

Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը՝ որպես Վարկառու, ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- վճարել սկզբնավճար, որը հավասար պետք է լինի վարկի գումարի մեկ քառորդ տոկոսին (0.25%),
- յուրաքանչյուր տարվա մայիսի 1-ին եւ նոյեմբերի 1-ին տոկոսի յուրաքանչյուր ժամանակահատվածի համար վճարել տոկոսագումար, որի դրույքաչափը հավասար է վարկի արժույթի ԼԻԲՈՐ-ին՝ ավելացնելով փոփոխական տարբերությունը (variable spread)՝ պայմանով, որ վարկի ամբողջ մայր գումարի կամ դրա մի մասի փոխարկումից հետո, փոխարկման ժամանակահատվածում Վարկառուի կողմից այդպիսի գումարի դիմաց վճարման ենթակա տոկոսագումարը կորոշվի Ընդհանուր պայմանների IV հոդվածի դրույթների համաձայն: Չնայած նշվածին, եթե վարկի առհանված մնացորդի որեւէ գումար ժամանակին չի վճարվում, եւ վճարում չի կատարվում երեսուն (30) օրվա ընթացքում, ապա Վարկառուի կողմից վճարվելիք տոկոսը պետք է հաշվարկվի համաձայն Ընդհանուր պայմանների,
- վարկի մայր գումարը վճարել համաձայնագրի 3-րդ ժամանակացույցում սահմանված մարման ժամանակացույցին համապատասխան,
- հայտարարել Ծրագրի նպատակներին իր հանձնառության մասին՝ Ծրագիրն իրականացնելով ՀՀ ֆինանսների նախարարության միջոցով՝ Գործառնական ձեռնարկի եւ Ընդհանուր պայմանների դրույթների համաձայն,
- ապահովել Ծրագրի իրականացումը համաձայնագրի 2-րդ ժամանակացույցի դրույթներին համապատասխան՝ առանց սահմանափակելու համաձայնագրի 3.01 բաժնի դրույթները,
- Ծրագրի իրականացման համար ձեռնարկել ինստիտուցիոնալ միջոցառումներ, հակակոռուպցիոն միջոցառումներ՝ համաձայնագրի 2-րդ ժամանակացույցի դրույթներին համապատասխան,
- մոնիտորինգի ենթարկել եւ գնահատել Ծրագրի առաջընթացը եւ պատրաստել Ծրագրի իրականացման հաշվետվություններ,
- վարել կամ հանձնարարել վարելու ֆինանսական կառավարման համակարգ,

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

- աուդիտի ենթարկել իր ֆինանսական հաշվետվությունները՝ դրանք համաձայնագրում սահմանված ժամկետներում ներկայացնելով Բանկին,
- Ծրագրի համար պահանջվող եւ վարկի միջոցներից ֆինանսավորման ենթակա բոլոր ապրանքները եւ աշխատանքները գնել Գնումների ուղեցույցի 1-ին բաժնում սահմանված կամ նշված պահանջների համաձայն,
- Ծրագրի համար պահանջվող եւ վարկի միջոցներից ֆինանսավորման ենթակա բոլոր խորհրդատվական ծառայությունները գնել Խորհրդատուի ուղեցույցում սահմանված կամ նշված պահանջների համաձայն,
- իրականացնել վարկի գումարների մարումը՝ համաձայնագրի 3-րդ ժամանակացույցի դրույթներին համապատասխան:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2010 թվականի մարտի 5-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ փոխառության համաձայնագրում (Լրացուցիչ ֆինանսավորում Սոցիալական պաշտպանության վարչարարության ծրագրի համար) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**25 մայիսի 2010 թվականի  
ՍԳՈ- 884**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 5-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ  
ՋԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ  
ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ (ԵՐԿՐՈՐԳ ԼՐԱՅՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԿՐՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 3-ՐԳ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ)  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**25 մայիսի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի (զեկուցող),

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի մարտի 5-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ վարկային համաձայնագրում (Երկրորդ լրացուցիչ ֆինանսավորում Սոցիալական ներդրումների հիմնադրամի 3-րդ ծրագրի համար) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 05.05.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց .**

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2010թ. մարտի 5-ին Երեւանում՝ Սկզբնական ծրագրին լրացուցիչ ֆինանսավորում տրամադրելու նպատակով:

2. Ծրագրի նպատակն է համայնքային ենթակառուցվածքների եւ ծառայութունների որակի բարելավման, համայնքային ու քաղաքային մակարդակում լրացուցիչ ինստիտուցիոնալ կարողությունների խթանման միջոցով օժանդակել անապահովների եւ խոցելի խմբերի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված քաղաքականությանը:

3. Համաձայնագիրը բաղկացած է վեց հոդվածից, երեք առդիրից եւ հավելվածից:

4. Համաձայնագրում ամրագրված կամ նշված պայմաններով Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկը Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է յոթ միլիոն ԱՄՆ դոլար գումարի չափով վարկ, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել արժույթի փոխարկման միջոցով վերը նշյալ Ծրագրի ֆինանսավորմանն օժանդակելու համար:

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- վճարել սկզբնական վճար վարկի գումարի մեկ տոկոսի մեկ քառորդի (0.25%) չափով,

- սկսած 2020 թվականի ապրիլի 15-ից մինչև 2034 թվականի ապրիլի 15-ը կիսամյակային մուծումներով մարել վարկի մայր գումարը,

- ՀՄՆՀ կանոնադրությունում կամ ենթաօրենսդրական ակտերում բոլոր էական փոփոխությունները, գործադիր տնօրենի եւ վարչության պետի պաշտոններում նշանակումները, ինչպես նաեւ աշխատանքային պայմանների փոփոխությունները համաձայնեցնել Բանկի հետ,

- ապահովել, որպեսզի Ծրագրի շրջանակներում կատարվող գնումներն իրականացվեն համաձայն 1999 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 765 որոշման՝ առավելագույնը հարյուր հիսուն հազար ԱՄՆ դոլար արժողությամբ գործարքների,

- ծրագրի իրականացումը խթանելու նպատակով ստացողի կողմից լրացուցիչ համաձայնագրում փոփոխություններ կատարելու դեպքում ՀՀ իրավունքներն իրականացնել այնպես, որ պաշտպանվեն ՀՀ եւ Բանկի շահերը, իրագործվեն ֆինանսավորման նպատակները,

- ապահովել, որպեսզի Ծրագրի համար պահանջվող եւ վարկի միջոցներից ֆինանսավորվելիք բոլոր ապրանքներն ու աշխատանքները, ինչպես նաեւ բոլոր խորհրդատվական ծառայությունները գնվեն Գնումների ուղեցույցի եւ Առդիրի դրույթներին համահունչ:

Համաձայնագրով սահմանված են նաեւ դրա գործողության մեջ դնելու եւ դադարեցման ընթացակարգերը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

1. 2010 թվականի մարտի 5-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ վարկային համաձայնագրում (Երկրորդ լրացուցիչ ֆինանսավորում Սոցիալական ներդրումների հիմնադրամի 3-րդ ծրագրի համար) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

25 մայիսի 2010 թվականի  
ՍԳՈ- 885



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԲԻՇԿԵԿՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ԱՆԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՆՆԱԿԻՑ  
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ  
ՓՈԽՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ  
(ԿԻՑ ԱՌԱՐԿՈՒԹՅԱՄԲ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**25 մայիսի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2008 թվականի հոկտեմբերի 10-ին Բիշկեկում ստորագրված՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ պետական պահպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման ուղղությամբ փոխհամագործակցության մասին համաձայնագրում (կից առարկությամբ) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 07.05.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ պետական պահպանության ծառայության պետ Հ. Հարությունյանի բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

ՍԱՐՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ • ՏԵՂԵԿԱԳԻՐ • 1(58)/2011



**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

1. Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ պետական պահպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման ուղղությամբ փոխհամագործակցության մասին համաձայնագիրը (կից առարկությամբ) /այսուհետ՝ համաձայնագիր/ Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրվել է 2008 թվականի հոկտեմբերի 10-ին՝ Բիշկեկում:

Համաձայնագիրն ստորագրել են Հայաստանի Հանրապետությունը (առարկությամբ), Ադրբեջանի Հանրապետությունը (վերապահումով), Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Դրոգստանի Հանրապետությունը, Մոլդովայի Հանրապետությունը (վերապահումով), Ռուսաստանի Դաշնությունը, Տաջիկստանի Հանրապետությունը, Ուզբեկստանի Հանրապետությունը:

2. Նշված համաձայնագրի նպատակն է նպաստել պետական պահպանության օբյեկտների անվտանգության ապահովման եւ պահպանվող օբյեկտների պաշտպանության ոլորտում համագործակցության հետագա զարգացմանը եւ խորացմանը:

Սույն համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է, մասնավորապես՝

- իրականացնել փոխհամագործակցություն եւ համակարգել գործունեությունը պետական պահպանության ենթակա օբյեկտների անվտանգության ապահովման եւ պահպանվող օբյեկտների պաշտպանության (հոդված 2, ա) կետ), տեղեկատվության փոխանակման, տեղեկատվական համակարգերի, օպերատիվ հաշվառումների ու արխիվների հավաքման եւ օգտագործման (հոդված 2, բ) կետ), պահպանության գործունեությունում նյութերի, տեխնիկական եւ տրանսպորտային միջոցների, հանդերձանքի, զենքի, զինամթերքի, հատուկ միջոցների, սարքավորումների եւ կապի միջոցների օգտագործման (հոդված 2, գ) կետ), կադրերի մասնագիտական ուսուցման եւ վերապատրաստման (հոդված 2, ե) կետ), նորմատիվային իրավական հենքի մշակման ուղղություններով (հոդված 2, զ) կետ),

• պետական պահպանության օբյեկտների անվտանգության ապահովման եւ պահպանվող օբյեկտների պաշտպանության ոլորտում՝ ապահովել պետական պահպանության օբյեկտների անվտանգությունը եւ պաշտպանությունը՝ պետական պահպանության օբյեկտների գտնվելու վայրում՝ պահպանական միջոցառումների անցկացման ժամանակ (հոդված 3, ա) կետ), պետական պահպանության օբյեկտների ու պահպանվող օբյեկտների նկատմամբ հակաիրավական ոտնձգությունների կանխարգելման, բացահայտման եւ կանխման ժամանակ (հոդված 3, բ) կետ), այդ օբյեկտների կենսական կարեւորություն ունեցող շահերի համար սպառնալիքի մասին տեղեկություններ ստանալու ժամանակ (հոդված 3, գ) կետ), ի շահ պետական պահպանության օբյեկտների անվտանգության ապահովման՝ օպերատիվ հետախուզական միջոցառումների անցկացման ժամանակ (հոդված 3, դ) կետ),

• ՀՀ-ի տարածքում գտնվելու ժամանակ ապահովել պետական պահպանության ենթակա անձանց անվտանգությունը՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան (հոդված 3, 2-րդ պարբերություն),

• ՀՀ-ում ստեղծել տեղեկատվական համակարգ պետական պահպանության օբյեկտների անվտանգության ապահովման նպատակով հետաքրքրություն ներ-

կայացնող հարցերի վերաբերյալ (հոդված 4, 1-2 պարբերություն) եւ այդ տեղեկատվությունը տրամադրել երրորդ կողմի միայն տեղեկատվություն տրամադրած պետության լիազորված պետական մարմնի գրավոր համաձայնությամբ եւ նրա կողմից սահմանված ծավալով (հոդված 4, 4-րդ պարբերություն),

- ապահովել համատեղ պահպանության միջոցառումների մասնակիցների համար բոլոր քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին եւ նորմերին համապատասխան, ստեղծել անհրաժեշտ պայմաններ ծառայողական պարտականությունների կատարման համար (հոդված 7, 1-ին պարբերություն),

- փոխգործակցել ազգային օրենսդրությունների ներդաշնակեցման, համագործակցության նորմատիվային իրավական բազայի կատարելագործման հարցերի շուրջ՝ Կողմերի լիազորված պետական մարմինների արդյունավետ գործունեության ապահովման նպատակով եւ հօգուտ պետական պահպանության օբյեկտների անվտանգության ապահովման ու պահպանվող օբյեկտների պաշտպանության (հոդված 9, 1-ին պարբերություն),

- ազգային օրենսդրությանը համապատասխան, լիազորված պետական մարմինների միջոցով փոխանակել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող նորմատիվային իրավական ակտեր (հոդված 9, 2-րդ պարբերություն),

- անհրաժեշտության դեպքում ստեղծել համակարգման համատեղ շտաբներ, խորհուրդներ կամ աշխատանքային խմբեր, փոխանակել ներկայացուցիչներ եւ մշակել համատեղ միջոցառումների ծրագիր (հոդված 10),

- համաձայնագրի կիրառման եւ մեկնաբանման հետ կապված վեճերը լուծել շահագրգիռ Կողմերի խորհրդակցությունների ու բանակցությունների կամ Կողմերի միջեւ համաձայնեցված այլ ընթացակարգերի միջոցով (հոդված 12):

3. Ադրբեջանի Հանրապետությունը վերապահում է կատարել համաձայնագրի 10-րդ հոդվածի վերաբերյալ: «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ պետական պահպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման ուղղությամբ փոխհամագործակցության մասին» համաձայնագրում շարադրված դրույթներից ոչ մեկը Ադրբեջանի Հանրապետությունը չի կիրառելու Հայաստանի Հանրապետության նկատմամբ:

Հայաստանի Հանրապետությունը չի ընդունում Ադրբեջանի Հանրապետության վերապահումը, եւ նա նույնպես չի կիրառելու սույն համաձայնագրի դրույթները Ադրբեջանի Հանրապետության նկատմամբ:

Մոլդովայի Հանրապետությունը վերապահում է արել համաձայնագրի այն մասի նկատմամբ, որն առնչվում է օրենսդրության ներդաշնակեցմանը, համատեղ օպերատիվ հետախուզական միջոցառումների իրականացմանը, Մոլդովայի Հանրապետության տարածքում համակարգման համատեղ մշտական շտաբների, խորհուրդների կամ աշխատանքային խմբերի ստեղծմանը եւ 16-րդ հոդվածի ֆինանսական պարտավորություններին առնչվող մասի նկատմամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մա-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

սին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2008 թվականի հոկտեմբերի 10-ին Բիշկեկում ստորագրված՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ պետական պահպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման ուղղությամբ փոխհամագործակցության մասին համաձայնագրում (կից առարկությամբ) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

25 մայիսի 2010 թվականի  
ՍԳՈ- 886



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ԳՈՒՇԱՆՔԵՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ,  
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԹԻԿՈՒՆՔԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**25 մայիսի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի հոկտեմբերի 5-ին Դուշանբեում ստորագրված՝ Անկախ պետությունների համագործակցությունում խաղաղության պահպանման հավաքական ուժերի գործունեության եւ անձնակազմի ֆինանսական, տեխնիկական եւ թիկունքային ապահովման կարգի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանում 11.05.2010թ. մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Նազարյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնա-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

գիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2007 թվականի հոկտեմբերի 5-ին Դուշանբեում՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների տարածքներում խաղաղության պահպանման գործողությունների անցկացման ժամանակ Անկախ պետությունների համագործակցությունում խաղաղության պահպանման հավաքական ուժերի գործունեության եւ անձնակազմի ֆինանսական, տեխնիկական եւ փկունքային ապահովման կարգի հաստատման նպատակով:

2. Համաձայնագիրն ստորագրել են Հայաստանի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը (վերապահումով), Դրոգստանի Հանրապետությունը, Ռուսաստանի Դաշնությունը եւ Տաջիկստանի Հանրապետությունը:

3. Համաձայնագրով սահմանված են խաղաղության պահպանման հավաքական ուժերի կազմավորման, գործունեության եւ անձնակազմի ֆինանսավորման կարգն ու պայմանները:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

ա) խաղաղության պահպանման գործողություն նախապատրաստելու եւ անցկացնելու ժամանակ խաղաղության պահպանման հավաքական ուժերի գործունեության եւ անձնակազմի ֆինանսական, տեխնիկական եւ փկունքային ապահովման համակարգման համար պաշտպանության նախարարությունում կառավարության ղեկավարի որոշմամբ ստեղծել ժամանակավոր օպերատիվ խումբ,

բ) խաղաղության պահպանման գործողություն նախապատրաստելու եւ անցկացնելու ընթացքում ապահովել խաղաղության պահպանման հավաքական ուժերին սպառազինությամբ եւ ռազմական տեխնիկայով, նյութական միջոցներով եւ ռազմատեխնիկական գույքի այլ տեսակներով,

գ) խաղաղության պահպանման գործողություն նախապատրաստելու եւ անցկացնելու ընթացքում խաղաղության պահպանման հավաքական ուժերի անձնակազմի ժամանակավոր օգտագործմանը տրամադրել իր սեփականությունը հանդիսացող անհրաժեշտ անշարժ գույքը (անշարժ գույքի օբյեկտները),

դ) ուղղակի հարկերից եւ տուրքերից ազատել տրանսպորտային հաղորդակցությունները եւ կառույցները, որոնք օգտագործվում են խաղաղության պահպանման հավաքական ուժերի կողմից,

ե) խաղաղության պահպանման գործողություն նախապատրաստելու եւ անցկացնելու ընթացքում խաղաղության պահպանման հավաքական ուժերի գործունեության իրականացման եւ դրանց անձնակազմի բնակվելու համար տրամադրել անհրաժեշտ շտաբ-կայաններ, ճամբարներ եւ ծառայությունների տեղակայման համար շինություններ եւ հողատարածքներ,

զ) համաձայնագրի դրույթների կիրառման եւ մեկնաբանման հետ կապված ցանկացած վեճ լուծել բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով:

5. Համաձայնագիրն ամրագրում է դրույթներ, որոնք սահմանում են համաձայնագիրն ուժի մեջ մտնելու եւ դադարելու, ինչպես նաեւ համաձայնագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու կարգն ու պայմանները:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. 2007 թվականի հոկտեմբերի 5-ին Դուշանբեում ստորագրված՝ Անկախ պետությունների համագործակցությունում խաղաղության պահպանման հավաքական ուժերի գործունեության եւ անձնակազմի ֆինանսական, տեխնիկական եւ քիկունքային ապահովման կարգի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**25 մայիսի 2010 թվականի  
ՍԳՈ- 887**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2010 ԹՎԱԿԱՆԻ ՍԱՐՏԻ 30-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ  
(ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՐԳԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ)  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**25 մայիսի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի մարտի 30-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ վարկային համաձայնագրում (Հանրային հատվածի արդիականացման երկրորդ ծրագիր) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանում 14.05.2010թ. մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց .**

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2010 թվականի մարտի 30-ին Երեւանում՝ հանրային հատվածի կառավարման ամրապնդման նպատակով:
2. Համաձայնագրի բաղկացուցիչ մաս են կազմում երեք ժամանակացույց եւ մեկ հավելված, որոնցով սահմանված են ծրագրի նկարագրությունը, ծրագրի իրականացման կարգը, վարկի մարման ժամանակացույցը, սահմանումները եւ ընդհանուր պայմանների փոփոխությունները:
3. Համաձայնագրով նախատեսվում է, որ Բանկը Հայաստանի Հանրապետությանը կտրամադրի 9.000.000 (ինը միլիոն) ԱՄՆ դոլարին համարժեք վարկ՝ համաձայնագրով նախատեսված միջոցառումների ֆինանսավորման նպատակով: Ծրագրի իրականացման վերջնաժամկետ սահմանված է 2015 թվականի հուլիսի 31-ը:
4. Վարկը Հայաստանի Հանրապետությանը տրամադրվում է 25 տարի ժամկետով, որից 10-ը՝ արտոնյալ (առանց մայր գումարի վճարման): Վարկի տոկոսադրույքը կազմում է 6-ամսյա USD LIBOR+ փոփոխական մարժա: Մայր գումարի մարումները կատարվելու են կիսամյակային հավասար մասնաբաժիններով՝ սկսած 2020 թվականի մայիսի 1-ից մինչեւ 2034 թվականի մայիսի 1-ը:
5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.
  - ա) իրականացնել ծրագիրը համաձայնագրի դրույթներին եւ դրա բաղկացուցիչ մաս հանդիսացող ժամանակացույցերին եւ հավելվածին համապատասխան,
  - բ) ծրագրի իրականացման ողջ պատասխանատվությունը վերապահել Հանրային հատվածի բարեփոխումների հանձնաժողովին (ՀՀԲՀ) եւ ապահովել, որ ՀՀԲՀ-ն ծրագիրն իրականացնի ծրագրի իրականացման պլանին եւ ծրագրի գործառնական ձեռնարկին համապատասխան,
  - գ) ծրագրի պատշաճ համակարգումը եւ իրականացումն ապահովելու նպատակով կազմավորել ծրագրի կառավարման խումբ, որը բաղկացած կլինի ծրագրի ղեկավարից եւ աշխատակազմի անդամներից,
  - դ) ապահովել ծրագրի իրականացումը Հակակոռուպցիոն ուղեցույցի դրույթներին համապատասխան,
  - ե) մոնիտորինգի ենթարկել եւ գնահատել ծրագրի առաջընթացը եւ պատրաստել ծրագրի հաշվետվություններ եւ դրանք ներկայացնել մյուս կողմին ոչ ուշ, քան փակման ամսաթվից վեց ամիս անց, ինչպես նաեւ մյուս կողմին տրամադրել մոնիտորինգի եւ գնահատման տարեկան հաշվետվություն եւ աշխատանքային տարեկան ծրագիր մինչեւ յուրաքանչյուր տարվա մարտի 1-ը,
  - զ) վարել կամ հանձնարարել վարել ֆինանսական կառավարման համակարգ, պատրաստել եւ յուրաքանչյուր օրացուցային եռամսյակի ավարտից ոչ ուշ, քան քառասունհինգ օրվա ընթացքում մյուս կողմին ներկայացնել միջանկյալ, աուդիտ չանցած ֆինանսական հաշվետվություններ ծրագրի համար եռամսյակային կտրվածքով, ինչպես նաեւ աուդիտի ենթարկել իր ֆինանսական հաշվետվությունները,
  - է) բացառությամբ համաձայնագրով սահմանված դեպքերի՝ ապրանքները եւ աշխատանքները գնել Սիջազգային մրցակցային սակարկությունների հիման վրա շնորհված պայմանագրերով, իսկ խորհրդատվական ծառայությունները՝



**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

այն պայմանագրերով, որոնք շնորհվել են որակի եւ գնի վրա հիմնված ընտրության հիման վրա:

6. Համաձայնագրով սահմանված են ծրագրի մոնիտորինգի եւ գնահատման, ֆինանսական կառավարման եւ աուդիտի, գնումների, վարկի գումարների առհանման, վարկի տոկոսագումարների վճարման կարգն ու պայմանները:

7. Համաձայնագիրն ամրագրում է դրույթներ, որոնք սահմանում են համաձայնագիրն ուժի մեջ մտնելու եւ դադարելու, ինչպես նաեւ համաձայնագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու կարգն ու պայմանները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2010 թվականի մարտի 30-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ վարկային համաձայնագրում (Հանրային հատվածի արդիականացման երկրորդ ծրագիր) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**25 մայիսի 2010 թվականի  
ՍԳՈ- 888**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ  
(ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ)  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**25 մայիսի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի մարտի 10-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի միջեւ վարկային համաձայնագրում (Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման ծրագիր) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 14.05.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց .**

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ • ՏԵՂԵԿԱԳԻՐ • 1(58)/2011

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

1. Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի միջեւ վարկային համաձայնագիրը (Երեւանի մետրոպոլիտենի վերակառուցման ծրագիր) ստորագրվել է 2010 թվականի մարտի 10-ին:

Համաձայնագիրն ունի երկու Առդիր՝ Առդիր 1.«Ծրագրի նկարագրություն», Առդիր 2.«Դասերը եւ օգտագործումները»:

2. Համաձայնագրում ամրագրված պայմաններով Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը (այսուհետ՝ Բանկ) համաձայնում է Հայաստանի Հանրապետությանը տրամադրել հինգ միլիոն (5.000.000) եվրո գումարի չափով վարկ՝ համաձայնագրի Առդիր 1-ում նկարագրված ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) ֆինանսավորման նպատակով: Ծրագրի կատարման ժամկետը 2013 թվականի հուլիսի 1-ն է:

Նշված Ծրագրի նպատակն է ֆինանսավորել գերակա կապիտալ ներդրումները՝ վերակառուցելու Երեւան քաղաքի մետրոպոլիտենի համակարգը:

Ծրագիրը կազմված է հետեւյալ մասերից (ենթակա դրանց այնպիսի փոփոխությունների, որոնց շուրջ Բանկը եւ ՀՀ-ն կարող են ժամանակ առ ժամանակ համաձայնություն ձեռք բերել)՝ 60 սայլակների փոխարինում եւ տեխնիկական սպասարկման սայլակի գնում, գծերի բարելավումներ՝ ներառյալ փայտակոճեր, ռելսերի միջադիրներ եւ ամրաններ, փորակավոր ռելսեր եւ ուղեփոխիչներ, եռակցման նյութեր, տեխնիկական սպասարկման սարքավորում եւ գործիքներ եւ դրանց հետ կապված տեղադրման աշխատանքներ, էլեկտրամատակարարման վերականգնում՝ ներառյալ 6 ԿՎ ընտրված մալուխների եւ համադրիչների փոխարինում, ինչպես նաեւ ջրի ներթափանցման հետ կապված միջոցառումներ՝ ներառյալ պոմպերի մատակարարում եւ տեղադրում:

3. Վարկի օգտագործման նվազագույն գումարը 100.000 եվրո է, կանխավճարի նվազագույն գումարը՝ 500.000 եվրո:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- մարել վարկը քսանչորս հավասար կիսամյակային վճարումներով՝ տոկոսագումարների վճարման ամսաթվին, որն ընկնում է սույն համաձայնագրի ստորագրման երրորդ տարին կամ անմիջապես հետո (հոդված II, Բաժին 2.02, կետ ե)),

- վճարել տոկոսագումար տարեկան 0,5 տոկոսի չափով յուրաքանչյուր տարվա ապրիլի 16-ին եւ հոկտեմբերի 16-ին (հոդված II, Բաժին 2.02, կետեր դ), է)),

- օգտագործել տրամադրվող գումարը ժամանակ առ ժամանակ՝ Ծրագրի համար պահանջվող ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների խելամիտ գներով կատարված ծախսերի կամ վարկի բացման միջնորդավճարների համար (հոդված II, Բաժին 2.03),

- եթե Բանկն այլ բան չի նախատեսում, ապա Ծրագրի իրականացման բացառիկ նպատակով՝ ենթավարկային համաձայնագրի համաձայն, վարկի միջոցները տրամադրել Ծրագրի սուբյեկտին առանց գրավի եւ նույն՝ համաձայնագրում սահմանված պայմաններով (հոդված III, Բաժին 3.01, կետ ա)),

- եթե Բանկն այլ բան չի նախատեսում, չփոխանցել, չփոփոխել, չեղյալ չհայտարարել եւ չշեղվել Ենթավարկային համաձայնագրի որեւէ դրույթից (հոդված III, Բաժին 3.01, կետ գ)),

- ապահովել, որ Ծրագրի սուբյեկտը միշտ ունենա բավարար միջոցներ իր

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

պարբերական ծախսերը կատարելու համար՝ ներառյալ իր պարտքի սպասարկման պարտավորությունները ծածկելու միջոցներ, եւ կատարելու Ծրագրի համաձայնագրի եւ ենթավարկային համաձայնագրի շրջանակներում ստանձնած իր մյուս պարտավորությունները՝ սկսած 2010 ֆինանսական տարուց եւ մինչեւ սույն համաձայնագրի գործողության դադարեցումը (հոդված III, Բաժին 3.01, կետ ք)),

- չվաճառել, չփոխանցել, վարձակալությամբ չտալ եւ այլ կերպ չօտարել Ծրագրի սուբյեկտի կողմից շահագործվող ակտիվներն ամբողջությամբ կամ դրա զգալի մասը, որոնք կարելու է կամ ցանկալի են Ծրագրի սուբյեկտի հիմնական գործողության բնականոն ընթացքի համար՝ բացառությամբ թափանցիկ հիմունքներով նախատեսված՝ Ծրագրի սուբյեկտի մասնավորեցման ընթացքում (հոդված III, Բաժին 3.01, կետ ք)),

- ինչպես նաեւ չդադարեցնել, չփոփոխել, չշեղվել կամ չհամաձայնել փոխանցել Ծրագրի փաստաթղթերը կամ ֆինանսավորման համաձայնագիրը, որոնց ՀՀ-ն կողմ է հանդիսանում, եւ կատարել որեւէ այլ փաստաթուղթ եւ ձեռնարկել որեւէ այլ գործողություն, որն անհրաժեշտ եւ ցանկալի է ֆինանսավորման համաձայնագիրը եւ Ծրագրի փաստաթղթերը գործողության մեջ դնելու համար (հոդված III, Բաժին 3.01, կետ ժ), ի)):

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. 2010 թվականի մարտի 10-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի միջեւ վարկային համաձայնագրում (Երեւանի մետրոպոլիտենի վերակառուցման ծրագիր) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**25 մայիսի 2010 թվականի  
ՍԳՈ- 889**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՐԱՐԱՏ ԾՈՎՅԱՆԻ ԵՎ ՍՎԵՏԼԱՆԱ ՀԱԿՈՐՅԱՆԻ  
ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 9-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 8-ՐԳ ԿԵՏԻ «Ա» ԵՎ «Բ»  
ԵՆԹԱԿԵՏԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**25 մայիսի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուկյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, մասնակցությամբ՝

դիմող Ա. Ծովյանի, դիմողների ներկայացուցիչ Կ. Մեժրույանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ Արարատ Ծովյանի եւ Սվետլանա Հակոբյանի դիմումի հիման վրա՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի «ա» եւ «բ» ենթակետերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ Ա. Ծովյանի եւ Ս. Հակոբյանի՝ 25.02.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց .**

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ♦ 1(58)2011

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

1. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1997 թվականի դեկտեմբերի 27-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հունվարի 10-ին եւ ուժի մեջ է մտել 1998 թվականի հունվարի 11-ին:

ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմի 2010 թվականի մարտի 10-ի որոշմամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի «ա» եւ «բ» ենթակետերի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, 213-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 210-րդ հոդվածի 4-րդ մասի, 226-րդ հոդվածի 1-ին կետի, 233-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 231-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ Ա. Ծովյանի եւ Ս. Հակոբյանի դիմումը քննության է ընդունվել մասնակի՝ միայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի «ա» եւ «բ» ենթակետերի մասով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի՝ «Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ եւ վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաեւ դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքի դրույքաչափերը» վերտառությամբ 9-րդ հոդվածի 8-րդ կետի «ա» եւ «բ» ենթակետերը սահմանում են. «Առաջին ատյանի դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ եւ վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաեւ դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքը գանձվում է հետեւյալ դրույքաչափերով.

...

8. դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար՝

ա) գույքային պահանջի գործերով

վերաքննիչ բողոքում նշված վիճարկվող գումարի 3 տոկոսի չափով, իսկ եթե վիճարկվում են առաջին ատյանի դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ կամ բավարարված կամ չբավարարված պահանջները չեն վիճարկվում, ապա առաջին ատյանի դատարան հարուցված եւ բողոքարկվող հայցի հայցագնի 3 տոկոսի չափով,

բ) ոչ գույքային բնույթի պահանջի գործերով

բազային տուրքի տասնապատիկի չափով»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է նրան, որ դիմողներն իրենց իրավունքների դատական պաշտպանության նպատակով դիմել են Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան՝ խնդրելով քանդել շինությունը եւ վերականգնել մինչեւ իրավունքի խախտումը գոյություն ունեցած վիճակը կամ փոխհատուցել կրած վնասը: Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 15.08.2006թ. թիվ 02-2409 վճռով հայցը մերժվել է:

Դիմողների վերաքննիչ բողոքի հիման վրա ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 28.02.2007թ. վճռով բողոքը բավարարվել է:

Նշված քաղաքացիական գործով պատասխանող կողմի վճռաբեկ բողոքի

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանի 09.11.2007թ. թիվ 3-1400 (ՎԴ) որոշմամբ բեկանվել է ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 28.02.2007թ. վճիռը եւ գործն ուղարկվել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.01.2008թ. որոշմամբ գործն ուղարկվել է Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան քննության համար՝ որոշման մեջ տալով հետեւյալ հիմնավորումը. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ փոխվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում գործերի քննության կարգը եւ ներկայումս ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում գործի քննությունն իրականացվելու է ՀՀ վճռաբեկ դատարանում գործի քննության կանոններով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով չկա այն դատական ակտը, որի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննությունը հնարավոր կլինի իրականացնել վճռաբեկ դատարանում գործի քննության կանոններով, վերաքննիչ դատարանը գտավ, որ սույն քաղաքացիական գործը պետք է ուղարկել Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան քննության համար»:

Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 19.06.2009թ. թիվ ԵԿԴ/1036/02/08 վճռով հայցը մերժվել է:

Դիմողները նշված վճռի դեմ բերել են վերաքննիչ բողոք՝ պետական տուրք վճարելով միայն ոչ գույքային բնույթի պահանջի համար:

Դիմողների վերաքննիչ բողոքի հիման վրա ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.08.2009թ. թիվ ԵԿԴ-1036/02/08 որոշմամբ վերաքննիչ բողոքը վերադարձվել է երկու պահանջներից մեկի՝ գույքային բնույթի պահանջի համար պետական տուրքը վճարված չլինելու պատճառաբանությամբ:

Դիմողների վճռաբեկ բողոքի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը՝ վերահաստատելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի իրավական դիրքորոշումները, իր՝ 30.09.2009թ. թիվ ԵԿԴ/1036/02/08 որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձրել է:

3. Դիմողները՝ հղում կատարելով Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին, գտնում են, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի «ա» եւ «բ» ենթակետերով սահմանված դրույթները՝ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ, խախտում են դատարանի մատչելիության իրավունքը եւ հակասում են ՀՀ Սահմանադրության 3 եւ 18-րդ հոդվածներին:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի «ա» եւ «բ» ենթակետերով սահմանված դրույթների առնչությամբ դիմողները կատարում են երեք հարցադրում.

ա/ որքանով է իրավաչափ բեկանված գործով նույն անձի կողմից նոր վերաքննիչ բողոք բերելու համար կրկին անգամ պետական տուրք վճարելու պարտականություն սահմանելը,

բ/ որքանով է իրավաչափ վերաքննիչ բողոք բերելիս երկու հայցապահանջներից մեկի՝ հիմնական հայցապահանջի համար պետական տուրք վճարած լի-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

նելու պարագայում երկրորդ հայցապահանջի՝ այլընտրանքային հայցապահանջի համար եւս պետական տուրք վճարելու պարտականություն սահմանելը,

զ/ որքանո՞վ է իրավաչափ վերաքննիչ բողոք բերելիս երկու հայցապահանջներից մեկի՝ հիմնական հայցապահանջի համար պետական տուրք վճարած լինելու պարագայում երկրորդ հայցապահանջի՝ այլընտրանքային հայցապահանջի համար պետական տուրք չվճարելու պատճառաբանությամբ վերաքննիչ բողոքն ամբողջությամբ՝ եւ՛ առաջին, եւ՛ երկրորդ հայցապահանջների մասով վերադարձնելը:

Վերը նշված հարցադրումների առնչությամբ դիմողներն իրավաչափ չեն համարում վերաքննիչ բողոք բերելիս հիմնական հայցապահանջին զուգահեռ այլընտրանքային հայցապահանջի եւ բեկանված գործով նույն անձի կողմից կրկին անգամ վերաքննիչ բողոք բերելու համար պետական տուրք վճարելու պարտականություն սահմանելը, ինչպես նաեւ վերաքննիչ բողոք բերելիս երկու հայցապահանջներից մեկի համար պետական տուրք վճարած լինելու պարագայում երկրորդ հայցապահանջի համար պետական տուրք չվճարելու պատճառաբանությամբ վերաքննիչ բողոքն ամբողջությամբ վերադարձնելը:

4. Ըստ պատասխանողի՝ դիմողներն իրենց դիմումում բարձրացնում են առանձին դեպքերում վերաքննիչ բողոք բերելու համար պետական տուրքից ազատելու, ինչպես նաեւ դատավարական բնույթի հարցեր, որոնք վիճարկվող դրույթի իրավակարգավորման շրջանակից դուրս են, քանզի վիճարկվող դրույթը բացառապես սահմանում է վերաքննիչ բողոք բերելու համար պետական տուրքի դրույքաչափերը: Պատասխանողը գտնում է, որ սահմանադրական դատարան ներկայացված դիմումն ակնհայտ անհիմն է, քանի որ վիճարկվող դրույթները դիմումում բարձրացված պահանջներին չեն առնչվում: Պատասխանողը միջնորդել է սահմանադրական դատարանին գործի վարույթը կարճել:

5. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող դրույթների սահմանադրականության առնչությամբ դիմողների բարձրացրած հարցադրումները դիտարկել ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածում ամրագրված՝ պետական տուրքեր մուծելու պարտականության, նշված սահմանադրական պարտականության եւ դատարանի մատչելիության իրավունքի հարաբերակցության, պետական տուրքի բովանդակության, դերի ու նշանակության, ինչպես նաեւ դատարանների՝ որպես պետական մարմինների գործառույթների համատեքստում:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ Սահմանադրության 45 եւ 83.5-րդ հոդվածների պահանջներին համապատասխան, ի թիվս պետական տուրքի այլ տեսակների, սահմանում է դատարան տրվող հայցադիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ եւ վճռաբեկ բողոքների համար գանձվող պետական տուրքի դրույքաչափերը, տուրք վճարողներին, պետական տուրքը գանձելու, վերադարձնելու, արտոնություններ տրամադրելու կարգն ու պայմանները:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է պետական տուրքի հասկացությունը: Ըստ այդ հոդվածի՝ «Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրակա-



**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

նացմամբ պայմանավորված՝ **սույն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար** ֆիզիկական եւ իրավաբանական անձանցից Հայաստանի Հանրապետության պետական եւ (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված **պարտադիր վճար է**»:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է պետական տուրք վճարողների շրջանակը: Ըստ այդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրք վճարողներ են համարվում «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի **7 հոդվածով նախատեսված ծառայություններից կամ գործողություններից** օգտվող ֆիզիկական եւ իրավաբանական անձինք:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը պետական տուրքի գանձման օբյեկտ, այսինքն՝ պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված **գործողություն է** դիտարկում, մասնավորապես, դատարան տրվող հայցադիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ եւ վճռաբեկ բողոքների **քննությունը**:

Դատարաններում պետական տուրք վճարելու պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում փոխհատուցել պետության՝ արդարադատության իրականացման հետ կապված ծախսերը, կանխարգելել ակնհայտ անհիմն հայցադիմումների հոսքը, դատարան դիմելու իրավունքի չարաշահումը:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքն առանձնացնում է գույքային պահանջի եւ ոչ գույքային պահանջի առնչությամբ գանձվող պետական տուրքերը՝ դրանց համար սահմանելով հաշվարկման միմյանցից էապես տարբերվող կարգ, ինչն օբյեկտիվորեն պայմանավորված է այդ պահանջների բնությով եւ առանձնահատկություններով: Գույքային պահանջի առնչությամբ գանձվող պետական տուրքը համամասնական տուրք է, եւ հաշվարկվում է հայցագրի նկատմամբ տուրքային հարաբերակցությամբ, իսկ ոչ գույքային պահանջի առնչությամբ գանձվող տուրքը պարզ տուրք է, եւ գանձվում է հաստատագրված գումարի չափով: Եթե հայցադիմումը ներառում է գույքային եւ ոչ գույքային պահանջներ, ապա օրենքը՝ այդ պահանջներից յուրաքանչյուրի քննությունը դիտարկելով որպես օրենքի իմաստով ինքնուրույն եւ առանձին գործողություն, պահանջում է, որ պետական տուրք վճարվի միաժամանակ եւ՝ գույքային, եւ՝ ոչ գույքային պահանջների առնչությամբ (հոդվ. 32, մաս 4)՝ այդպիսով հետապնդելով իրավաբանորեն հիմնավոր փաստարկված նպատակ:

6. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դատարաններում պետական տուրք վճարելու սահմանադրական պարտականության կատարումը սերտորեն առնչվում է անձի՝ դատարան դիմելու սահմանադրական իրավունքի իրացման հնարավորության հետ՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականությունը չի հետապնդում դատարան դիմելու սահմանադրական իրավունքից անձին զրկելու նպատակ: Օրենսդիրը կարգավորելով դատարաններում պետական տուրքի գանձման հետ կապված իրավահարաբերությունները՝ կաշկանդված է քաղաքացիական իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրական սկզբունքներով, մասնավորապես, դատարանի մատչելիության սկզբունքի երաշխավորման պարտականությամբ: Ուստի օրենսդրի պարտականությունն է

երաշխավորել պատշաճ հավասարակշռություն, մի կողմից, դատարաններում պետական տուրք գանձելու՝ պետության օրինավոր շահի, դատարաններում պետական տուրք վճարելու՝ անձի սահմանադրական պարտականության եւ, մյուս կողմից՝ դատարանների միջոցով իր իրավունքները պաշտպանելու՝ դիմողի օրինավոր շահի միջեւ: Հետեւաբար, այդպիսի հավասարակշռության ապահովումը հետապնդում է սահմանադրաիրավական նպատակ:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի ուսումնասիրությունը վկայում է, որ օրենքը սահմանել է որոշակի իրավական երաշխիքներ, որոնք միտված են նշված հավասարակշռությունն ապահովելու նպատակին: Մասնավորապես, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի առաջին պարբերության «գ» կետի համաձայն՝ առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել դատարանները կամ դատավորները՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում նշված առանձին գործերով՝ **ելնելով կողմերի գույքային դրությունից:** Այս դրույթը դատարանի մատչելիության իրավունքի իրացման հնարավորություն է երաշխավորում ոչ բավարար ֆինանսական միջոցներ ունեցող անձանց համար: Ընդ որում, վերոհիշյալ արտոնությունները, ի թիվս այլոց, ներառում են նաեւ պետական տուրքից ընդհանրապես ազատելու հնարավորությունը: Միաժամանակ, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը սահմանում է այն դեպքերը, երբ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականությունից անձն ազատվում է օրենքի ուժով, որով բացառվում է այդ պարտականությունից անձին ազատելու հայեցողական մոտեցումը: Բացի դրանից, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասը ելնելով այն սկզբունքից, որ դատական ծախսերը վճարում է դատավարության պարտվող կողմը՝ սահմանում է, որ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջեւ բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հետեւաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ արդարադատության բնագավառում պետական տուրքի գանձման սույն գործով վիճարկվող կարգի նախատեսման խնդրում օրենսդրությամբ ստեղծված են բավարար իրավական երաշխիքներ, որոնց միջոցով ապահովվում է պատշաճ սահմանադրաիրավական հավասարակշռություն պետության եւ անձի օրինավոր վերոհիշյալ շահերի միջեւ:

Միաժամանակ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողների կողմից մատնանշված իրավիճակներում գործում են վերոհիշյալ օրենսդրական բոլոր երաշխիքները, ինչը հնարավորություն է տալիս նշված դեպքերում եւս դատարանի մատչելիության իրավունքի իրացումն անիրավաչափորեն չպայմանավորել դատարաններում պետական տուրք վճարելու պարտականությամբ:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել նաեւ, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի կիրառման դատական պրակտիկան ամփոփված է ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 1999թ. մարտի 27-ի թիվ 8 որոշմամբ, որում, մասնավորապես, նշվում է, որ ՀՀ վճարելի դատարանի որոշմամբ գործը վերաքննիչ դատարանին նոր քննության ուղարկելու դեպքում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-73-րդ հոդվածների եւ «Պետական տուրքի մասին» մասին ՀՀ օրենքի համաձայն՝ կողմերից պետական տուրքի գանձում չի

նախատեսվում: Համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի՝ դիմողներն օրենքի ուժով ազատվում են պետական տուրք վճարելու պարտականությունից նաեւ նոր երեսան եկած հանգամանքների հետեւանքով դատարանի վճիռը կամ որոշումը վերանայելու վերաբերյալ բողոք ներկայացնելիս: Նշված դեպքերում պետական տուրք վճարելու պարտականության բացակայությունը պայմանավորված է այն տրամաբանությամբ, համաձայն որի՝ դատարանի կողմից կատարվող գործողությունը, որպես պետական տուրքի գանձման օբյեկտ, թելադրված է օբյեկտիվորեն փաստված իրավական անհրաժեշտությամբ, հետեւաբար՝ չի պայմանավորվում պետական տուրքի վճարման սահմանադրական պարտականության կատարմամբ:

7. Սահմանադրական դատարանն իր՝ 2008թ. սեպտեմբերի 9-ի ՍԳՈ-758 որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ յուրաքանչյուր դատական ատյանի գործառույթի իրացման արդյունքում անձի իրավունքների դատական պաշտպանությունը նոր որակ է ստանում, յուրաքանչյուր դատական ատյանի կողմից իր գործառույթների իրականացման արդյունքում ընդունված դատական ակտն իր ինքնուրույն դերակատարությունն ունի դատական պաշտպանության իրավունքի իրացման ողջ գործընթացում: Սույն գործի շրջանակներում զարգացնելով նշված իրավական դիրքորոշումը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ վերադաս դատարանի ակտի հիման վրա նոր քննության արդյունքում ստորադաս դատարանի կողմից ընդունված ակտը եւս հետապնդում է ինքնուրույն նպատակ՝ տվյալ գործի քննության գործընթացում կողմերի համար առաջացնելով իրավական նոր հետեւանքներ: Հետեւաբար, դատական նման ակտի արդյունքում առաջանում են նաեւ տվյալ ակտի բողոքարկման հետ կապված նոր իրավահարաբերություններ, որոնց պայմաններում դատաքննության արդյունքում կայացված դատական ակտը հանդիսանում է վերադաս դատարանի կողմից վերահսկողության նոր օբյեկտ: Դրանով պայմանավորված՝ վերադաս դատարանը, վերահսկողություն իրականացնելով դատական ենթադրյալ սխալ պարունակող՝ ստորադաս ատյանի ինքնուրույն դատական ակտի նկատմամբ, կատարում է գործողություն, որն օրենքի իմաստով հանդիսանում է պետական տուրքի գանձման ինքնուրույն օբյեկտ: Ընդ որում, խնդրո առարկա իրավիճակում գանձվող պետական տուրքը ծառայում է այն նույն նպատակներին, ինչն այդ ինստիտուտն ունի ընդհանրապես, այն է՝ փոխհատուցել վերադաս դատարանի կողմից գործի քննության ծախսերը եւ ապահովել կողմերի դատավարական կարգապահությունը:

Բացի դրանից, հաշվի առնելով նաեւ, որ դիմողների մատնանշած իրավիճակում բողոք բերող կողմը շարունակում է օգտվել օրենսդրական այն երաշխիքներից, որոնք միտված են բացառելու դատարանի մատչելիության իրավունքի իրացմանը պետական տուրք վճարելու պարտականությամբ խոչընդոտելու հնարավորությունը, սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթը՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ պետական տուրք գանձվում է նաեւ նոր քննության արդյունքում ընդունված դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելիս, դատարանի մատչելիության իրավունքի ենթադրյալ խախտման առումով սահ-

մանադրականության խնդիր չի առաջացնում: Այլ է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 09.11.2007թ. թիվ 3-1400(ՎԴ) որոշման առկայության դեպքում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից 21.01.2008թ. ընդունված թիվ 07-4326 քաղաքացիական գործով վերոնշյալ որոշման հիմնավորվածության ու իրավաչափության հարցը, որը, սակայն, առնչվում է օրենքի կիրառման ոլորտին եւ դուրս է օրենքի նորմի սահմանադրականության հարցով վեճի առարկայի, ինչպես նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից այն քննության առնելու իրավասության շրջանակներից:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը 2009թ. սեպտեմբերի 30-ի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումն ընդունելիս ընդհանրապես չի անդրադարձել 03.09.2009թ. ներկայացված վճռաբեկ բողոքում պետական տուրքի չվճարված մասով վճարումը հետաձգելու և հարցը վեճն ըստ էության լուծող դատական ակտով լուծելու միջնորդությանը:

8. Դիմողների այն հարցադրման առնչությամբ, համաձայն որի՝ վիճարկվող դրույթը՝ դատարանների կողմից դրան տրված մեկնաբանությամբ, պարտավորեցնում է պետական տուրք վճարել միաժամանակ երկու «այլընտրանքային» պահանջների համար, սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանով դիմողները բարձրացնում են վերաքննիչ դատարանի որոշման իրավաչափության հարց, որի պարագայում առկա չէ պատճառահետեւանքային կապ վիճարկվող նորմի եւ դիմողների իրավունքների ենթադրյալ խախտման միջեւ: Ինչ վերաբերում է վիճարկվող դրույթների բուն բովանդակությանը, ապա այն ոչ միայն չի պարտավորեցնում դատարաններում պետական տուրք վճարել, այսպես կոչված, **այլընտրանքային** գույքային պահանջներից յուրաքանչյուրի համար, այլ նաեւ **գործնականում բացառում է վերաքննիչ դատարան այլընտրանքային գույքային պահանջներ ներկայացնելու որեւէ հնարավորություն**: Վիճարկվող դրույթի պահանջը ոչ թե այլընտրանքային գույքային պահանջներից յուրաքանչյուրի համար պետական տուրքի միաժամանակյա վճարումն է, այլ այն վերաբերում է գույքային եւ ոչ գույքային պահանջներին: Իսկ գույքային եւ ոչ գույքային պահանջները, միմյանցից էապես տարբերվելով իրենց բնույթով եւ բովանդակությամբ, չեն կարող գործնականում հարաբերակցվել որպես այլընտրանքային հայցապահանջներ: Գույքային եւ ոչ գույքային պահանջները, որոնց հիմքում դրված են նյութական եւ ոչ նյութական կարիքների բավարարման, հետեւաբար՝ նաեւ բովանդակությամբ տարբեր խնդիրներ, չեն կարող միմյանց փոխարինել՝ միմյանց նկատմամբ հանդես գալով որպես այլընտրանքային պահանջներ: Այլընտրանքային պահանջները կարող են ներկայացվել բովանդակությամբ համասեռ խնդրի կամ՝ տվյալ դեպքում գույքային պահանջի շրջանակներում, որտեղ այդ պահանջները հանդես են գալիս որպես գույքային բնույթի եւ գործնականում միմյանց փոխարինող պահանջներ, կամ ոչ գույքային պահանջի շրջանակներում հանդես գալով որպես ոչ գույքային բնույթի եւ գործնականում միմյանց փոխարինող պահանջներ:

9. ՀՀ դատական օրենսգրքի 39-րդ հոդվածի համաձայն՝ վերաքննիչ դատարանն իր իրավասության շրջանակներում առաջին ատյանի ընդհանուր իրա-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

վասության դատարանների դատական ակտերը վերանայող դատարան է, հետեւաբար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի համաձայն վերաքննիչ դատարանում բողոքարկման օբյեկտն առաջին ատյանի դատարանի դատական ակտն է: Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի հիման վրա վերահսկողություն է իրականացնում առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականության նկատմամբ՝ դրանում տեղ գտած հնարավոր դատական սխալը վերացնելու նպատակով: Ուստի, եթե առաջին ատյանի դատարանում քննության առարկան մեկ կամ մի քանի պահանջ ներառող հայցապահանջն է, ապա վերաքննիչ դատարանում քննության առարկան ոչ թե առաջին ատյանի դատարան ներկայացված հայցապահանջում ներառված առանձին պահանջներն են, այլ առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված ենթադրյալ դատական սխալը: Հետեւաբար, գույքային եւ ոչ գույքային պահանջների առնչությամբ կայացված՝ առաջին ատյանի դատական ակտը կարող է քննության առարկա դառնալ միաժամանակ գույքային եւ ոչ գույքային պահանջների առնչությամբ՝ իր ամբողջության մեջ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողների այն հարցադրումը, համաձայն որի՝ մի պահանջի առնչությամբ պետական տուրքի վճարումը պետք է հիմք հանդիսանա վերաքննիչ բողոքն ամբողջությամբ քննության ընդունելու համար, անհիմն է, պայմանավորված չէ վերաքննիչ դատարանի գործառնությամբ ու անիրագործելի է:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի «ա» եւ «բ» ենթակետերը՝ սույն որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումների շրջանակներում, համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում իրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**25 մայիսի 2010 թվականի  
ՍԳՈ- 890**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ ԱՆԱՍՏԱՍ ԳԻՇՅԱՆԻ, ՆՈՐԱՅՐ ԵՂԻԿՅԱՆԻ,  
ԱՐՏԱԿ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ, ՍՈՒՐԵՆ ԹԱԳԵՎՈՍՅԱՆԻ, ՍՐՔՈՒՀԻ  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԵՐԶԱԿՅԱՆԻ ԳԻՄՈՒՄՆԵՐԻ  
ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ  
ՕՐԵՆՍԳՐՔԻ 113-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ 3-ՐԳ ԿԵՏԻ ԵՎ 113-ՐԳ  
ՀՈԳՎԱԾԻ ԵՐՐՈՐԳ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. երեսան**

**1 հունիսի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով՝ Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող), մասնակցությամբ՝

դիմողներ Ա. Գիշյանի, Ն. Եղիկյանի,

գործով որպես պատասխանող ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ Անաստաս Գիշյանի, Նորայր Եղիկյանի, Արտակ Մուրադյանի, Սուրեն Թադեոսյանի, Սրբուհի Հարությունյանի եւ Հովհաննես Գերձակյանի դիմումների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի եւ 113-րդ հոդվածի երրորդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Սահմանադրական դատարանը՝ նկատի ունենալով, որ քաղաքացիներ Անաստաս Գիշյանի, Նորայր Եղիկյանի, Արտակ Մուրադյանի, Սուրեն Թադեոսյանի, Սրբուհի Հարությունյանի եւ Հովհաննես Գերձակյանի դիմումների հիման վրա քննության ընդունված դիմումները վերաբերում են նույն հարցին, իր՝

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

08.04.2010թ. աշխատակարգային որոշմամբ որոշել է դրանք միավորել եւ քննել դատարանի նույն նիստում:

Գործի քննության առիթը քաղաքացիներ 1. Գիշյանի եւ Ն. Եղիկյանի՝ 24.02.2010թ. եւ Ա. Մուրադյանի, Ս. Թադեոսյանի, Ս. Հարությունյանի եւ Հ. Գերձակյանի՝ 22.03.2010թ.ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. ՀՀ աշխատանքային օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 9-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2004 թվականի դեկտեմբերի 14-ին եւ ուժի մեջ է մտել 2005 թվականի հունիսի 21-ին:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող՝ «Աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի նախաձեռնությամբ» վերտառությամբ 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետը սահմանում է. «Գործատուն իրավունք ունի լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաեւ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը ... արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական եւ աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման, ինչպես նաեւ արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների թվաքանակի կրճատման դեպքում»:

Նույն հոդվածի երրորդ մասը սահմանում է. «Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ եւ 4-րդ կետերով նախատեսված հիմքերով գործատուն աշխատանքային պայմանագիրը կարող է լուծել, եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին առաջարկել է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը հրաժարվել է առաջարկված աշխատանքից:

Գործատուի մոտ համապատասխան հնարավորությունների բացակայության դեպքում պայմանագիրը լուծվում է առանց աշխատողին այլ աշխատանք առաջարկելու»:

2. Դիմողներից Ա. Գիշյանի եւ Ն. Եղիկյանի առնչությամբ քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է նրան, որ «Արմեն-Տել» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի 14.01.2008 թվականի համապատասխանաբար՝ թիվ 052-Կ եւ 050-Կ հրամաններով, հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետը եւ 115-րդ հոդվածի երկրորդ մասը, դիմողներն ազատվել են աշխատանքից:

Դիմողները դիմել են Երեւանի Արաբկիր եւ Բանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ նախկին աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապորդի դիմաց վճարելու, նյութական եւ բարոյական

վնասի փոխհատուցման պահանջներով: Երեւանի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 16.04.2008 թվականի թիվ 2-605 վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ հայցը մերժվել է միայն նյութական վնասի փոխհատուցման պահանջի մասով: Հայցը մասնակիորեն բավարարելիս դատարանը հիմք է ընդունել, ի թիվս այլոց, ՀՀ վճռաբեկ դատարանի 26.10.2006թ. թիվ 3-1775 (ՎԳ) եւ 26.01.2007թ. թիվ 3-34 (ՎԳ) նախադեպային որոշումները:

Վերը նշված վճռի դեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն վերաքննիչ բողոք է ներկայացրել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան: Վերջինս իր՝ 19.09.2008թ. թիվ ԵԱԲԳ/0605/02/08 որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն՝ բեկանել է Երեւանի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 16.04.2008 թվականի թիվ 2-605 վճիռը եւ գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Երեւանի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 10.12.2008 թվականի թիվ ԵԱԲԳ/0605/02/08 վճռով նախկին աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապուրդի դիմաց վճարելու պահանջի մասին հայցը բավարարվել է:

Վերը նշված վճռի դեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն վերաքննիչ բողոք է ներկայացրել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան: Վերջինս իր՝ 30.04.2009թ. թիվ ԵԱԲԳ/0605/02/08 որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքը՝ անփոփոխ եւ օրինական ուժի մեջ թողնելով Երեւանի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 16.04.2008 թվականի թիվ 2-605 վճիռը:

Վերը նշված որոշման դեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ վճռաբեկ դատարան: Վերջինս իր՝ 06.11.2009թ. թիվ ԵԱԲԳ/0605/02/08 որոշմամբ վճռաբեկ բողոքը բավարարել է՝ բեկանել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.04.2009թ. թիվ ԵԱԲԳ/0605/02/08 որոշումը եւ այն փոփոխել՝ մերժել է դիմողի հայցը:

Դիմողներից Ա. Մուրադյանի, Ս. Թադեւոսյանի, Ս. Հարությունյանի եւ Հ. Դերձակյանի առնչությամբ քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է նրան, որ «Գաֆէսճեան թանգարան» հիմնադրամի համապատասխանաբար՝ թիվ 07.11.2008.-Ա5, 07.11.2008.-Ա2, 07.11.2008.-Ա3, 07.11.2008.-Ա4 հրամաններով, հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետը եւ 115-րդ հոդվածի երկրորդ մասը, դիմողներն ազատվել են աշխատանքից:

Դիմողները դիմել են Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ աշխատանքից ազատելու մասին հրամաններն անվավեր ճանաչելու, աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապուրդի գումարը բռնագանձելու պահանջներով: Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 27.02.2009 թվականի թիվ ԵԿԳ-3613/02/08 վճռով հայցը մերժվել է:

Վերը նշված վճռի դեմ դիմողները վերաքննիչ բողոք են ներկայացրել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան: Վերջինս իր՝ 25.05.2009թ. թիվ ԵԿԳ-3613/02/08 որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն՝ բեկանել է Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության



**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

դատարանի 27.02.2009 թվականի թիվ ԵԿԳ-3613/02/08 վճիռը եւ գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության: Վերաքննիչ բողոքը մասնակիորեն բավարարելիս դատարանը հիմք է ընդունել, ի թիվս այլոց, այն հանգամանքը, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետում նշված՝ **աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման հիմքով աշխատողների թվաքանակը չի կարող կրճատվել**՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետում նման հիմքերի բացակայության պատճառով:

Վերը նշված որոշման դեմ «Գաֆեժեճեան թանգարան» հիմնադրամը վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ վճռաբեկ դատարան: Վերջինս իր՝ 04.12.2009թ. թիվ ԵԿԳ-3613/02/08 որոշմամբ վճռաբեկ բողոքը բավարարել է մասնակիորեն՝ բեկանել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.05.2009թ. թիվ ԵԿԳ-3613/02/08 որոշումը եւ այն փոփոխել՝ մերժել է դիմողների հայցը: Վճռաբեկ բողոքը մասնակիորեն բավարարելիս դատարանը հիմք է ընդունել, ի թիվս այլոց, այն հանգամանքը, որ ՀՀ վերաքննիչ դատարանը, անտեսելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի կարգավորումը, հանգել է անհիմն եզրակացության այն մասին, որ օրենքը **աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման հիմքով աշխատողների թվաքանակի կրճատման հնարավորություն չի նախատեսում**:

3. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի առնչությամբ դիմողներից Ա. Գիշյանը եւ Ն. Եղիկյանը գտնում են, որ նշված կետով օրենսդիրը խախտում է, նախ՝ ՀՀ Սահմանադրության 1-ին (սոցիալական պետության սկզբունք), 14-րդ (մարդու արժանապատվության հարգում) եւ 14.1-րդ (խտրականության արգելք) հոդվածների պահանջները, քանի որ վիճարկվող օրինադրույթը նման ձեւակերպմամբ գործատուներին այդ դրույթի սուբյեկտիվ մեկնաբանման եւ ոչ իրավաչափ կիրառման լայն հնարավորություն է տալիս:

Ա. Գիշյանը եւ Ն. Եղիկյանը պնդում են նաեւ, որ դատական ակտերի հիման վրա ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վիճարկվող դրույթը հնարավորություն է տալիս գործատուներին տվյալ դրույթի հիման վրա աշխատողներին աշխատանքից ազատել հիմնավոր պատճառների բացակայության դեպքում՝ սխալ մեկնաբանելով այն: Ըստ դիմողների՝ վիճարկվող օրինադրույթում ամրագրված նախապայմանների առկայությունը հնարավոր է պարզել միայն գործատուից, իսկ աշխատողները, որպես կանոն, դրանք պարզելու հնարավորություն չունեն, եւ արդյունքում ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածին համապատասխան իրավունքների դատական պաշտպանության իրավունքը դառնում է ընդամենը փաստաթղթային ձեւակերպում:

Ա. Գիշյանի եւ Ն. Եղիկյանի պնդմամբ՝ օրենսգրքի վիճարկվող դրույթը հակասում է նաեւ ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածին եւ 48-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին, քանի որ դիմողներին տվյալ հիմքով աշխատանքից ազատելիս գործատուն նրանց չի տեղեկացրել աշխատողների կրճատման ընթացակարգերի մասին, ընդհակառակը, գործատուն չի պատասխանել դիմողների դիմումներին եւ նրանց աշխատանքից ազատել է ոչ հիմնավոր պատճառներով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի երրորդ մասի առնչությամբ

դիմողներ Ա. Գիշյանը եւ Ն. Եղիկյանը գտնում են, որ նշված մասով օրենսդիրը խախտում է աշխատողների՝ ՀՀ Սահմանադրության 1-ին, 3, 14, 14.1., 32 եւ 48-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքները, քանի որ՝ «եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում» եւ «գործատուի մոտ համապատասխան հնարավորությունների բացակայության դեպքում» ձեւակերպումներով գործատուի համար սուբյեկտիվ գործողությունների լայն դաշտ է ստեղծում: Այստեղից դիմողները եզրակացնում են, որ իրավակիրառողի (այդ թվում՝ վճռաբեկ դատարանի) կողմից օրենսգրքի վիճարկվող դրույթի տարրնթերցման եւ տարաբնույթ մեկնաբանման արդյունքում անհամապատասխանություն է առաջանում ՀՀ Սահմանադրության հիշատակված նորմերի եւ վիճարկվող օրինադրույթի միջև:

Դիմողներից Ա. Մուրադյանի, Ս. Թադեոսյանի, Ս. Հարությունյանի եւ Հ. Գերձակյանի կարծիքով՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետը հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 3, 14, 14.1., 32 եւ 48-րդ հոդվածներին, քանի որ վիճարկվող դրույթի իրավակիրառական պրակտիկան ցույց է տալիս, որ գործատուների կողմից նշված հոդվածը կիրառվում է հիմնականում այն դեպքերում, երբ որեւէ հիմնավորված պատճառ չկա աշխատողներին աշխատանքից ազատելու համար: Հետեւաբար, դիմողների կարծիքով, ՀՀ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող դրույթի կապակցությամբ ձեւավորված իրավակիրառական պրակտիկան ուղղակիորեն հակասում է ՀՀ Սահմանադրությանը:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողների փաստարկների դեմ, գտնում է, որ դիմողներ Ա. Մուրադյանը, Ս. Թադեոսյանը, Ս. Հարությունյանը, Հ. Գերձակյանը ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում են վիճարկվող դրույթի կիրառման իրավաչափության հարց: Ըստ պատասխանողի՝ դիմողներն ըստ էության գտնում են, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է գործատուի կողմից այդ հիմքով աշխատանքային պայմանագրի լուծման կոնկրետ հիմքեր, որոնք, սակայն, դիմողների պարագայում չեն պահպանվել: Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասով, 32-րդ հոդվածով եւ ՍԳԱՌ-21, ՍԳՌ-870, ՍԳՌ-839, ՍԳՌ-817 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներով՝ պատասխանող կողմն առաջարկել է դիմողներ Ա. Մուրադյանի, Ս. Թադեոսյանի, Ս. Հարությունյանի, Հ. Գերձակյանի դիմումի մասով գործի վարույթը կարճել:

Ինչ վերաբերում է դիմողներ Ա. Գիշյանի եւ Ն. Եղիկյանի դիմումին, պատասխանողն այս առնչությամբ նշում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 24.02.2009թ. ՍԳՌ-792 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը կարող է օգտագործվել որպես ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի սահմանադրականության հիմնավորման փաստարկ: Նույն որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն անդրադարձել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ որպես գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման ինքնուրույն հիմքի նպատակահարմարությանը եւ այն դիտել է որպես աշխատանքային պայմանագրի լուծման օբյեկտիվ պատճառ:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասի առնչությամբ պատասխանող կողմը գտնում է, որ օրենսդիրը սահմանել է աշխատողների իրավունքների պաշտպանության եւս մեկ երաշխիք, այն է՝ որոշակի հիմքերի առկայության դեպքում գործատուն իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում պարտավոր է աշխատողին առաջարկել նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ նման հնարավորությունների բացակայության դեպքում լուծել աշխատանքային պայմանագիրը աշխատողի հետ՝ առանց այլ աշխատանք առաջարկելու: Վերոգրյալի հիման վրա պատասխանող կողմը գտնում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը եւ 113-րդ հոդվածի 3-րդ մասը չեն հակասում ՀՀ Սահմանադրությանը եւ առաջարկում է օրենսգրքի նշված դրույթները ճանաչել ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող:

5. Ամփոփելով դիմողների փաստարկները՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողներն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումը հիմնականում պայմանավորում են վիճարկվող դրույթների **իրավակիրառական պրակտիկայով**, այն է՝ գործատուների եւ դատարանների կողմից դրանց սխալ մեկնաբանմամբ եւ սխալ կիրառմամբ՝ նման իրավակիրառական պրակտիկայի հիմքը համարելով վիճարկվող դրույթների իրավական անորոշությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողներն իրենց իրավունքների խախտումը հիմնականում պայմանավորում են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի ձեւակերպումների եւ 113-րդ հոդվածի երրորդ մասում օգտագործված՝ «եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում» եւ «գործատուի մոտ համապատասխան հնարավորությունների բացակայության դեպքում» բառակապակցությունների իրավական անորոշությամբ եւ դրա հետեւանքով իրավակիրառ պրակտիկայում այդ դրույթներին տրված, իրենց կարծիքով, սխալ մեկնաբանությամբ, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի եւ 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները՝ սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը կարեւորում է վիճարկվող դրույթների կիրառման պրակտիկայում դրանց նկատմամբ դրսեւորված մոտեցումների գնահատման անհրաժեշտությունը:

6. Սահմանադրական դատարանը՝ վերահաստատելով իր ՍԳՈ-747 եւ ՍԳՈ-780 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները, սույն գործով կրկին անգամ ընդգծում է, որ օրենքներում օգտագործվող առանձին հասկացություններ չեն կարող ինքնաբավ լինել: Դրանց բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաեւ դատական պրակտիկայում: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի ձեւակերպումների եւ 113-րդ հոդվածի երրորդ մասում օգտագործված՝ «եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում» եւ «գործատուի մոտ համապատասխան հնարավորությունների բացակայության դեպքում» բառակապակցությունների եւ դրանց բնորոշ հատկանիշների բովանդակության բացա-

հայտմանը: Ընդ որում, նշված ձեռակերպումները եւ բառակապակցությունները գնահատման ենթակա ձեռակերպումներ եւ բառակապակցություններ են: Դրանք ենթակա են գնահատման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ ելնելով տվյալ գործի բոլոր կոնկրետ փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից: Գործը քննող դատարանն է իրավասու գնահատելու այս իրավիճակը եւ պարզելու, թե արդյո՞ք տվյալ անձը, կոնկրետ դեպքում՝ գործատուն, ցուցաբերել է կամայականություն:

Գործի նյութերի ուսումնասիրության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ գործերով ՀՀ վճռաբեկ դատարանը՝ ելնելով իր սահմանադրաիրավական կարգավիճակից, հստակեցրել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի եւ նույն հոդվածի երրորդ մասի բովանդակությունը՝ ապահովելով ստորադաս դատարանների եւ մյուս իրավակիրառողների կողմից վիճարկվող դրույթների միատեսակ ընկալումը եւ կիրառումը:

Բացի դրանից, ՀՀ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող դրույթների վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային նշանակության որոշումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա են ՀՀ վճռաբեկ դատարանի մի շարք իրավական դիրքորոշումներ, որոնք հանդես են գալիս որպես ստորադաս դատարանների եւ մյուս իրավակիրառողների կողմից ՀՀ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող դրույթների միատեսակ ընկալման եւ միատեսակ կիրառման երաշխիք: Նշված որոշումների մի մասով վճռաբեկ դատարանը բեկանել է ստորադաս դատարանների դատական ակտերը՝ ապահովելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի հիմքով աշխատանքից ազատված անձանց իրավունքների վերականգնումը: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 26.10.2006թ. թիվ 3-1775 (ՎԳ), 26.10.2006թ. թիվ 3-1880 (ՎԳ) եւ 26.01.2007թ. թիվ 3-34 (ՎԳ) քաղաքացիական գործերով բացահայտել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող դրույթների կիրառման ոլորտում ստորադաս առյանների հետեւյալ դատական սխալները.

- գործատուի մոտ աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը եւ որակավորմանը համապատասխան այլ աշխատանքի բացակայության վերաբերյալ գործատուի բացատրությունները եւ գրությունները չեն հանդիսանում թույլատրելի ապացույցներ,

- գործատուի մոտ աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը եւ որակավորմանը համապատասխան այլ աշխատանքի բացակայության վերաբերյալ թույլատրելի ապացույցներ են հանդիսանում, օրինակ, կազմակերպության աշխատողների թվաքանակը եւ պաշտոնների անվանումները սահմանող փաստաթղթերն այն մասին, որ գործատուի մոտ առկա չէ աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը եւ որակավորմանը համապատասխան այլ աշխատանք,

- գործատուն կրում է անուղղակի ապացուցման պարտականություն աշխատողի հանդեպ նրան արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական եւ աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման, ինչպես նաեւ արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների թվաքանակի կրճատման դեպքում աշխատանքից ազատելիս ապացուցելու, որ իր

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

մոտ բացակայում է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք:

Ընդ որում, նշված որոշումներից երկուսով (ՀՀ վճռաբեկ դատարանի 26.10.2006թ. թիվ 3-1775 (ՎԳ) եւ 26.01.2007թ. թիվ 3-34 (ՎԳ) որոշումներ) արտահայտված իրավական դիրքորոշումները կիրառվել են Երեւանի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 16.04.2008թ. թիվ 2-605 վճռով՝ դիմողներից Ա. Գիշյանի եւ Ն. Եղիկյանի վերաբերյալ քաղաքացիական գործով:

7. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողների իրավունքների ենթադրյալ խախտումը պայմանավորված չէ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի եւ 113-րդ հոդվածի երրորդ մասի դրույթների իրավական անորոշությամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի երրորդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**1 հունիսի 2010 թվականի  
ՍԳՈ- 891**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԼԻՆՍԻ» ՀԻՄՆԱԳՐԱՄԻ  
ՄԻՋԵՎ ՎԵՐԱՋԵՎԱԿԵՐՊՎԱԾ ԵՐԿՐՈՐԳ ՓՈԽԸՄԲՈՒՆՄԱՆ ՀՈՒՇԱԳՐՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**3 հունիսի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող, զեկուցող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Ա. Գյուրջյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի մայիսի 27-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ «Լինսի» հիմնադրամի միջեւ Վերածեսակերպված երկրորդ փոխըմբռնման հուշագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 27 մայիսի 2010թ. ՀՀ սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումը:

Լսելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունը, հետազոտելով Վերածեսակերպված երկրորդ փոխըմբռնման հուշագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց.**

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ • ՏԵՂԵԿԱԳԻՐ • 1(58)/2011

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱՂՐԱՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Հայաստանի Հանրապետության կառավարության եւ «Լինսի» հիմնադրամի միջեւ Վերածնակերպված երկրորդ փոխըմբռնման հուշագիրն ստորագրվել է 2010թ. մայիսի 27-ին:

Վերածնակերպված երկրորդ փոխըմբռնման հուշագրի նպատակն է Հայաստանում իրականացնել լրացուցիչ ծրագիր՝ ուղղված Հայաստանի ժողովրդի բարեկեցության ապահովմանը՝ կրթական հաստատությունների բարենորոգման եւ վերակառուցման միջոցով («Դպրոցաշինության երկրորդ ծրագիր»):

Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է Վերածնակերպված երկրորդ փոխըմբռնման հուշագրի II հոդվածի 2.1. բաժնի «ա» կետի (i) ենթակետի 2-րդ պարբերությունում նախատեսված ֆինանսական պարտավորությունները կատարել բարեխղճորեն, այն հաշվով, որպեսզի Ծրագիրն ավարտին հասցվի նախատեսված ժամկետին:

Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է նաեւ Վերածնակերպված երկրորդ փոխըմբռնման հուշագրի II հոդվածի 2.1. բաժնի «ա» կետի (i) ենթակետի 4-րդ պարբերությունում նախատեսված հանգամանքների առկայության դեպքում հաջորդ տարվա պետական բյուջեով միջոցներ հատկացնել Ծրագրի գերազանցող գումարների տարբերությունը փակելու համար:

Հայաստանի Հանրապետությունը, Վերածնակերպված երկրորդ փոխըմբռնման հուշագրի IV հոդվածի 4.6. բաժնի համաձայն, պարտավորվում է «Լինսից», նրա լիազորված ներկայացուցիչներից, որոնք Հայաստանի Հանրապետության քաղաքացի չեն կամ ՀՀ օրենսդրությամբ ստեղծված մարմիններ չեն, ինչպես նաեւ Ծրագրի համար օգտագործված նյութերի եւ ծառայությունների դիմաց ոչ մի տեսակի հարկեր, տուրքեր եւ կառավարական մարմինների կողմից պահանջվող գանձումներ չգանձել, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախապես գրավոր կերպով համաձայնեցված է «Լինսի» հիմնադրամի հետ:

Կողմերը համաձայն են, որ Վերածնակերպված երկրորդ փոխըմբռնման հուշագիրն ընդունվի Հայաստանում որպես միջազգային պայմանագիր եւ ՀՀ կառավարության համար պարտադիր բնույթ ունեցող ներպետական եւ միջազգային պարտավորություն: Հայաստանի Հանրապետության համար նշված պարտավորության համար իրավական հիմք են հանդիսանում «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» 2007թ. փետրվարի 22-ի ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթներն այն մասին, որ «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի սուբյեկտ կարող է լինել նաեւ միջազգային կամ օտարերկրյա պետության ոչ կառավարական կազմակերպությունը կամ միավորումը, որը Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնում է կամ մտադիր է իրականացնել բարեգործական, մարդասիրական, զարգացման կամ տեխնիկական, տնտեսական կամ ֆինանսական աջակցությանն ուղղված գործունեություն կամ Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է կամ տրամադրելու է մարդասիրական կամ ֆինանսական օգնություն»:

Վերածնակերպված երկրորդ փոխըմբռնման հուշագրի VII հոդվածը նախատեսում է, որ կողմերի միջեւ հնարավոր վեճերի կարգավորման ժամանակ Հուշագիրը պետք է մեկնաբանվի Ամերիկայի Միացյալ Նահանգների Նյու Յորք նահանգի Նյու Յորք քաղաքի օրենքների համաձայն եւ պետք է գերակայեն բոլոր փաստաթղթերի անգլերեն տարբերակները:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2010 թվականի մայիսի 27-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ «Լինսի» հիմնադրամի միջեւ Վերածեւակերպված երկրորդ փոխըմբռնման հուշագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**3 հունիսի 2010 թվականի  
ՍԳՈ- 892**





**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2006 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԵՐԻ 20-ԻՆ ՆՅՈՒ ՅՈՐՔՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ  
ԲՈՆՈՒԹՅԱՔ ԱՆՀԵՏԱՑԱԾ ԲՈԼՈՐ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**15 հունիսի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների.

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2006 թվականի դեկտեմբերի 20-ին Նյու Յորքում ընդունված՝ Բռնությամբ անհետացած բոլոր անձանց պաշտպանության մասին միջազգային կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 07.04.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Ա. Օսիկյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով կոնվենցիան եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. Կոնվենցիան ստորագրվել է 2007թ. ապրիլի 10-ին:
2. Կոնվենցիայի նպատակն է կանխարգելել բռնությամբ անհետացումները

եւ պայքարել բռնության անհետացման հանցագործության անպատժելիության դեմ:

3. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ բռնության անհետացման իրականացումը կամ իրականացման փորձը քրեական իրավունքում որպես հանցագործություն որակելու համար, սահմանելով համապատասխան պատժամիջոցներ,

- քրեական իրավունքում սահմանել մեղմացուցիչ հանգամանք այն անձանց նկատմամբ, ովքեր բռնության անհետացման գործողություն կատարելուն մասնակից լինելով հանդերձ, արդյունավետ օժանդակում են անհետացած անձի կենդանի վերադարձմանը կամ բռնության անհետացման առնչվող հանգամանքների պարզաբանմանը կամ բռնության անհետացում իրականացնող անձանց ինքնության պարզաբանմանը,

- առանց խախտելու մյուս քրեական ընթացակարգերը ծանրացուցիչ հանգամանքներ դիտարկել անհետացած անձի մահվան կամ հղի կանանց, անչափահասների, հաշմանդամների կամ այլ՝ մասնավորապես խոցելի անձանց՝ բռնության անհետացման գործողություն կատարող անձի կամ անձանց նկատմամբ,

- ձեռնարկել համապատասխան միջոցներ անհետացած անձանց փնտրելու, նրանց ազատելու, մահվան դեպքում՝ նրանց աճյունների տեղը հայտնաբերելու, դրանց նկատմամբ հարգանքի ապահովման եւ վերադարձման համար,

- ապահովել այնպիսի իրավական համակարգ, որպեսզի բռնության անհետացման տուժողներին իրավունք ընձեռվի ստանալու անհետաձգելի, արդար ու համարժեք փոխհատուցում:

Կոնվենցիայով նախատեսված գործառույթներն իրականացնելու համար պետք է ստեղծվի բռնության անհետացման հարցերով Կոմիտե, որը կազմվելու է բարոյական բարձր հատկանիշներով օժտված, մարդու իրավունքների ոլորտում ճանաչում ունեցող, անկախ ու անկողմնակալ տասը որակյալ փորձագետներից: Նրանք ընտրվելու են գաղտնի քվեարկությամբ՝ Կողմ պետությունների կողմից՝ աշխարհագրական հավասարաչափ բաշխմամբ, չորս տարի ժամկետով, եւ օգտվում են այն նույն արտոնություններից եւ անձեռնմխելիությունից, որոնք տրամադրվում են ՄԱԿ-ի առաքելություններում աշխատող փորձագետներին, ինչպես նշված է ՄԱԿ-ի՝ Արտոնությունների եւ անձեռնմխելիության մասին կոնվենցիայում:

Կոնվենցիան բաց է ՄԱԿ-ի անդամ բոլոր պետությունների միանալու համար:

Կոնվենցիան կիրառվում է՝ առանց խախտելու միջազգային մարդասիրական իրավունքի դրույթները, ներառյալ 1949թ. օգոստոսի 12-ի՝ Ժնևի 4 կոնվենցիաներով եւ 1977թ. հունիսի 8-ի՝ դրանց կից արձանագրություններով Պայմանավորվող բարձր կողմերի ստանձնած պարտավորությունները:

Կոնվենցիան սահմանում է ուժի մեջ մտնելու, մեկնաբանման կամ կիրառման, երկու եւ ավելի Կողմ պետությունների միջեւ բանակցությունների միջոցով չհարթվող տարաձայնությունների դեպքում դատարան դիմելու եւ կոնվենցիայում փոփոխություններ կատարելու կարգը:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2007 թվականի դեկտեմբերի 20-ին Նյու Յորքում ընդունված՝ Բռնությամբ անհետացած բոլոր անձանց պաշտպանության մասին միջազգային կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**15 հունիսի 2010 թվականի  
ՍԳՈ- 893**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԼՈՎԱԿԻԱՅԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՕԳԱՅԻՆ  
ՀԱՂՈՐԳԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
Վ ԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**15 հունիսի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թովուկյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների.

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի մարտի 18-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Սլովակիայի Հանրապետության կառավարության միջեւ օդային հաղորդակցությունների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2010թ. մայիսի 20-ի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի տեղակալ Ա. Մարությանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

ՍԱՐՅԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(58)/2011

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Սլովակիայի Հանրապետության կառավարության միջեւ օդային հաղորդակցությունների մասին համաձայնագիրն ստորագրվել է 2010թ. մարտի 18-ին՝ Երեւանում:

Համաձայնագրի նպատակը Պայմանավորվող կողմերի համապատասխան տարածքների միջեւ եւ դրանցից դուրս օդային կանոնավոր հաղորդակցություն հաստատելն է՝ համաձայն Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին 1944թ. դեկտեմբերի 7-ի Չիկագոյի կոնվենցիայի:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք պարտավորություններ, այդ թվում.

- Սլովակիայի Հանրապետության նշանակած ավիաընկերության կողմից միջազգային օդային կանոնավոր հաղորդակցություններ իրականացնելու համար տրամադրել հետեւյալ իրավունքները՝

ա) առանց վայրէջքի թռչել Հայաստանի Հանրապետության տարածքի վրայով,

բ) Հայաստանի Հանրապետության տարածքում ոչ առեւտրային նպատակներով կատարել կանգառներ,

գ) կատարել կանգառներ Հայաստանի Հանրապետության տարածքում համաձայնագրին կից հավելվածի Երթուղիների ցանկում սահմանված երթուղիների կետերում՝ միջազգային փոխադրումներում ուղեւորներ, բեռ եւ փոստ՝ առանձին կամ համակցված, օդանավ վերցնելու եւ իջեցնելու նպատակով,

- Սլովակիայի Հանրապետության կողմից սահմանված երթուղիներով համաձայնեցված հաղորդակցությունների իրականացման նպատակով մեկ կամ մի քանի ավիաընկերություններ նշանակելու մասին տեղեկություն ստանալուն պես՝ Սլովակիայի Հանրապետության կողմից նշանակված ավիաընկերություններին տրամադրել համաձայնեցված հաղորդակցությունները շահագործելու համապատասխան թույլտվություններ՝ ընթացակարգային նվազագույն հետաձգումներով,

- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության նշանակած ավիաընկերությունները պահպանեն Սլովակիայի Հանրապետության օրենքները, կանոնակարգերը եւ ընթացակարգերը, Եվրոպական համայնքի իրավունքը, որոնք վերաբերում են միջազգային աերոնավիացիայում ներգրավված օդանավի՝ պետության տարածք մուտք գործելուն, այնտեղ գտնվելուն կամ այնտեղից մեկնելուն կամ նման օդանավի շահագործմանը եւ նավիգացիային,

- վավեր ճանաչել Սլովակիայի Հանրապետության օրենքների եւ կանոնակարգերի, Եվրոպական համայնքի օրենքների եւ կանոնակարգերի համաձայն տրված կամ ճանաչված՝ վավեր թռիչքային պիտանիության սերտիֆիկատները, իրավասության վկայականները եւ լիցենզիաները՝ համաձայնեցված հաղորդակցությունները շահագործելու նպատակով,

- վերահաստատել, համաձայն միջազգային իրավունքով նախատեսվող իր իրավունքների եւ պարտավորությունների, որ անօրինական գործողությունների դեմ քաղաքացիական ավիացիայի անվտանգությունն ապահովելու նպատակով Պայմանավորվող կողմերի փոխադարձ պարտավորությունները կազմում են համաձայնագրի անբաժանելի մասը,

- փոխադարձության սկզբունքով Սլովակիայի Հանրապետության նշանա-

կամ ավիաընկերությանն ազատել ներմուծման սահմանափակումներից, մաքսատուրքերից, այլ հարկումներից, տեսչական վճարներից եւ այլ ազգային տուրքերից ու վճարումներից՝ կապված օդանավերի, վառելիքի, քսայուղերի, սպառվող տեխնիկական միջոցների, պահեստամասերի, ներառյալ՝ շարժիչների, օդանավի սովորական սարքավորումների, օդանավի պաշարների եւ այլ գույքի հետ, որոնք նախատեսված են օգտագործման համար կամ միմիայն օգտագործվում են համաձայնեցված օդային հաղորդակցությունները շահագործող՝ Սլովակիայի Հանրապետության նշանակված ավիաընկերության օդանավի շահագործման համար,

- Սլովակիայի Հանրապետության նշանակված ավիաընկերությունների կողմից համաձայնեցված հաղորդակցությունների համար գանձվող սակագները սահմանել ողջամիտ մակարդակներով՝ հաշվի առնելով բոլոր հարակից գործոնները:

3. Համաձայնագրի անբաժանելի մասն է կազմում դրա հավելվածը, որում նախատեսված է երթուղիների ցանկը:

4. Համաձայնագրով նախատեսվում է Պայմանավորվող կողմերի միջեւ խորհրդակցությունների անցկացում եւ վեճերի կարգավորում՝ արբիտրային դատարան դիմելու միջոցով:

5. Համաձայնագիրը կնքված է երկու բնօրինակով՝ հայերեն, սլովակերեն եւ անգլերեն, ընդ որում, բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Տարածայնություններ ծագելու դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

6. Սահմանադրական դատարանը միաժամանակ նշում է, որ Հայաստանի Հանրապետությունը միացած լինելով Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին 1944թ. դեկտեմբերի 7-ի Չիկագոյի, Օդանավում կատարված հանցագործությունների եւ որոշ այլ գործողությունների մասին 1963թ. սեպտեմբերի 14-ի Տոկիոյի, Օդանավերի անօրինական զավթման դեմ պայքարի մասին 1970թ. դեկտեմբերի 16-ի Հաագայի, Քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված անօրինական գործողությունների դեմ պայքարի մասին 1971թ. սեպտեմբերի 23-ի Մոնրեալի, Պայթուցիկ նյութերի հայտնաբերման նպատակով նշագրման մասին 1991թ. մարտի 1-ի Մոնրեալի կոնվենցիաներին, որոնց վերաբերյալ սույն համաձայնագրում կան հղումներ, ստեղծել է միջազգային իրավական պատշաճ հիմք՝ երկկողմ արդյունավետ պայմանագրային հարաբերություններ հաստատելու համար:

7. Սույն համաձայնագրի եւ գործում առկա մյուս փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ համաձայնագրով ստանձնված պարտավորությունները բխում են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածի պահանջներից, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի սկզբունքներին եւ նորմերին համապատասխան՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մա-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

սին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2010 թվականի մարտի 18-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Սլովակիայի Հանրապետության կառավարության միջեւ օդային հաղորդակցությունների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**15 հունիսի 2010 թվականի  
ՍԳՈ- 894**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-ԻՆ ԳԱՄԱՍԿՈՍՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՓՈԽԱԳԱՐՉ  
ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**15 հունիսի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուկյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապալանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի մարտի 23-ին Դամասկոսում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Սիրիայի Արաբական Հանրապետության միջեւ քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 25.05.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ արդարադատության նախարար Գ. Դանիելյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց .**

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ • ՏԵՂԵԿԱԳԻՐ • 1(58)/2011



**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

1. Հայաստանի Հանրապետության եւ Սիրիայի Արաբական Հանրապետության միջեւ համաձայնագիրն ստորագրվել է 2010 թվականի մարտի 23-ին:

2. Նշված համաձայնագրի նպատակն է ամրապնդել քրեական գործերով փոխադարձ իրավական օգնություն տրամադրելու իրավական հիմքերը:

Համաձայնագիրը տարածվում է հանցագործությունների կատարման առնչությամբ հետաքննությունների, քննությունների եւ դատական ընթացակարգերի վրա՝ համաձայն երկու Կողմերի օրենսդրության:

Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- ՀՀ օրենսդրությանը համապատասխան տրամադրել քրեական գործերով փոխադարձ իրավական օգնություն այն դեպքում, եթե արարքը, որի համար հարցում է ներկայացվել, քրեորեն պատժելի է երկու Կողմերի օրենսդրությամբ (հոդված 1, կետեր 1, 2),

- իր հայեցողությամբ տրամադրել իրավական օգնություն նաեւ այն դեպքում, երբ արարքը, որի համար հարցում է ստացվել, ՀՀ օրենսդրությամբ քրեորեն պատժելի չէ (հոդված 1, կետ 2),

- իրավական օգնության շրջանակներում ընթացակարգային փաստաթղթեր հանձնել, ապացույցներ ստանալ, անձանց եւ առարկաների գտնվելու վայրը եւ ինքնությունը հաստատել, հայցող Կողմի իրավասու մարմինների կամավոր ներկայանալու համար վկաներ, տուժողներ եւ փորձագետներ հրավիրել (հոդված 2, կետեր 1-4),

- միջոցներ ձեռնարկել՝ կապված գույքի պաշտպանության հետ (հոդված 2, կետ 6),

- նշանակել կենտրոնական մարմին, ՀՀ-ի համար կենտրոնական մարմին է հանդիսանում ՀՀ գլխավոր դատախազությունը եւ ՀՀ արդարադատության նախարարությունը (հոդված 3),

- հարցումները եւ լրացուցիչ փաստաթղթերը զուգակցել հայցվող Կողմի լեզվով կամ անգլերենով հաստատված թարգմանությամբ (հոդված 5),

- բանկային գաղտնիքին կամ հարկման գաղտնիության հետ կապված իրավական օգնություն տրամադրել հայցվող Կողմի օրենսդրության համաձայն (հոդված 6, կետ 2),

- չմերժել ահաբեկչության հանցագործությունների հարցով իրավական օգնությունը՝ ՀՀ եւ Սիրիայի Արաբական Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային եւ տարածաշրջանային կոնվենցիաների համաձայն (հոդված 6, կետ 2),

- Սիրիայի Արաբական Հանրապետության կենտրոնական կամ իրավասու մարմինների կնիքով հաստատված՝ համաձայնագրի համապատասխան փաստաթղթերն ընդունել առանց օրինականացման ընթացակարգերի կամ վավերականության հաստատման այլ ձևերի (հոդված 7, կետ 1),

- գաղտնի պահել սիրիական Կողմի հարցման հիման վրա՝ իրավական օգնության համար հարցումը, դրա բովանդակությունը, լրացուցիչ փաստաթղթերը եւ հարցման համաձայն կատարված ցանկացած գործողություն, ինչպես նաեւ նման օգնություն տրամադրելու փաստը (հոդված 8, կետ 1),

- ՀՀ տարածքում վերցնել վկաների եւ տուժողների վկայություններ, փորձա-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

գիտական եզրակացություններ, փաստաթղթեր, իրեր, հարցման մեջ նշված այլ վկայություններ եւ փոխանցել սիրիական Կողմին (հոդված 11, կետ 1),

- ՀՀ իրավունքին համապատասխան իրավասու մարմինների օգնությամբ օգտագործել բոլոր հնարավորությունները՝ պարզելու համար հարցման մեջ նշված անձանց ինքնությունը եւ իրերի գտնվելու վայրը (հոդված 12),

- համագործակցել հանցագործության գործիքների եւ հանցավոր գործունեությունից ստացված եկամուտների բացահայտման, ինչպես նաեւ դրանց հետ կապված համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու ուղղությամբ (հոդված 17, կետ 1),

- որպես հայցվող Կողմ իր տարածքում կրել իրավական օգնության համար հարցման կատարման սովորական ծախսերը, բացառությամբ այն ծախսերի, որ կրում է հայցող սիրիական Կողմը (հոդված 18, կետ 1),

- վճարել որպես հայցող Կողմ դեպի իր տարածք եւ իր տարածքից անձանց տեղափոխման հետ կապված ծախսերը, փորձագետի ծախսերն ու վճարները, փոխանցված առարկաները հայցվող Կողմի տարածքից հայցող Կողմի տարածք եւ հետադարձ տեղափոխման հետ կապված ծախսերը (հոդված 18, կետ 1),

- համաձայնագրի մեկնաբանումից եւ (կամ) կիրառումից ծագած վիճահարույց հարցերը լուծել դիվանագիտական բանակցությունների միջոցով՝ երկու Կողմերի կենտրոնական մարմինների ներգրավմամբ (հոդված 19, կետ 2):

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2010 թվականի մարտի 23-ին Դամասկոսում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Սիրիայի Արաբական Հանրապետության միջեւ քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**15 հունիսի 2010 թվականի  
ՍԳՈ- 895**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ԱՐՈՒՄՅԱԿ ԱԹԱՆԵՍՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ  
221-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ ԵՐԿՐՈՐԳ ՄԱՍԻ 3-ՐԳ ԿԵՏԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔԻ 221-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**15 հունիսի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Մ. Թովուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի, մասնակցությամբ՝

դիմող Ա. Աթանեսյանի,

գործով որպես պատասխանող ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Արուսյակ Աթանեսյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետի e, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ա. Աթանեսյանի՝ 16.02.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային e, Հայաստանի Հանրապետության քաղաքա-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

ցիական դատավարության օրենսգրքերը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ աշխատանքային օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 9-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2004 թվականի դեկտեմբերի 14-ին եւ ուժի մեջ է մտել 2005 թվականի հունիսի 21-ին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքի ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հունիսի 17-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին եւ, ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ին:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող՝ «Աշխատանքային կարգապահության կոպիտ խախտումը» վերտառությամբ 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետը, մասնավորապես, սահմանում է. «Աշխատանքային կարգապահության կոպիտ խախտում կարող է համարվել ... իր եւ այլոց համար անօրինական եկամուտներ ստանալու կամ այլ անձնական դրդապատճառներով պաշտոնեական դիրքը օգտագործելը, ինչպես նաեւ **կամայականություն դրսևորելը**»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետը սահմանում է. «Գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը ... մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը, սակայն դատարանի կայացրած գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի է պատճառաբանված, սխալ է պատճառաբանված կամ պատճառաբանված չէ, ապա վերաքննիչ դատարանը պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է նրան, որ դիմողը 2000 թվականի հունվարին արդարադատության նախարարի հրամանով նշանակվել է ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության Թալինի տարածքային բաժնի պետ: ՀՀ արդարադատության նախարարության ստուգումների եւ մեթոդաբանության վարչությունը 2009 թվականի փետրվարի 24-26-ն ընկած ժամանակահատվածում ստուգումներ է իրականացրել ՔԿԱԳ գործակալության Թալինի տարածքային ստորաբաժանումում, որի արդյունքներով ՀՀ արդարադատության նախարարը ՀՀ փոխվարչապետին եւ Թալինի քաղաքապետին գրություն է ներկայացրել այն մասին, որ 2007-2008 թվականներն ընկած ժամանակահատվածում ՔԿԱԳ գործակալության Թալինի տարածքային ստորաբաժանման աշխատանքներում առկա են որոշակի թերություններ եւ բացթողումներ, եւ առաջարկվել է քննարկել աշխատողներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

2009 թվականի մարտի 16-ին Թալինի քաղաքապետի հրամանով, հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածը եւ ստուգումների արդյունքների վերաբերյալ 27.02.2009թ. տեղեկանքը, դիմողն ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

Դիմողը դիմել է ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատա-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

րան՝ Թալինի քաղաքապետի 16.03.2009թ. թիվ 2 հրամանն անվավեր ճանաչելու եւ աշխատանքային խախտված իրավունքը վերականգնելու՝ իր զբաղեցրած պաշտոնում վերականգնելու պահանջներով, ինչը ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 29.05.2009 թվականի վճռով մերժվել է: Դատարանը հիմք է ընդունել 27.02.2009թ. ստուգման վերաբերյալ տեղեկանքում արձանագրված փաստերը՝ ընդգծելով, որ ստուգման վերաբերյալ տեղեկանքը չի վիճարկվել դիմողի կողմից:

Վերը նշված վճռի դեմ դիմողը վերաքննիչ բողոք է ներկայացրել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան: Վերջինս, հիմք ընդունելով 27.02.2009թ. ստուգման վերաբերյալ տեղեկանքում արձանագրված փաստերը, **մեկնաբանելով** ՀՀ աշխատանքային օրենսգրքի 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետում նշված «կամայականություն» եզրույթը, հաստատված համարելով, որ 27.02.2009թ. ստուգման վերաբերյալ տեղեկանքում արձանագրված փաստերը հանդիսանում են կամայականության դրսևորումներ, իր՝ 31.07.2009թ. որոշմամբ մերժել է դիմողի վերաքննիչ բողոքը՝ անվիճակի թողնելով ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 29.05.2009թ. վճիռը: Միաժամանակ, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի առաջին մասին 1-ին կետի պահանջները՝ վերաքննիչ քաղաքացիական դատարանը պատճառաբանել է ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ անվիճակի թողնված վճիռը:

Վերը նշված որոշման դեմ դիմողը վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ վճռաբեկ դատարան: Վերջինս, վերահաստատելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի եզրահանգումները, իր՝ 23.09.2009թ. որոշմամբ վերադարձրել է վճռաբեկ բողոքը:

3. Դիմողը գտնում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող դրույթում օգտագործված «կամայականություն դրսևորելը» բառակապակցությունը հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված իրավական պետության սկզբունքին, որովհետեւ այն ձեւակերպված է ոչ հստակ, անորոշ, ինչը տարընկալումների եւ տարակերպ մեկնաբանությունների տեղիք է տալիս, որի արդյունքում խախտվում են օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքը՝ ամրագրված ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածում, եւ 32-րդ հոդվածի առաջին մասով երաշխավորված իրավունքը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի դրույթների առնչությամբ դիմողը գտնում է, որ դրանք հակասում են ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով սահմանված՝ համապատասխանաբար դատական պաշտպանության արդյունավետ միջոցի եւ արդար դատաքննության իրավունքներին:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետի առնչությամբ գտնում է, որ ներկայացված դիմումում դիմողն առավելապես անդրադարձել է ընդհանուր իրավասության դատարանների, մասնավորապես՝ վերաքննիչ դատարանի կողմից կոնկրետ գործով վիճարկվող դրույթի կիրառմանը: Ըստ պա-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

տասխանողի՝ դիմումի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դիմողը ձեռնարկներ են վիճարկելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետի սահմանադրականությունը՝ ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց: Ուստի պատասխանողը գտնում է, որ գործի վարույթը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետի մասով ենթակա է կարճման:

Ինչ վերաբերում է վիճարկվող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, ապա պատասխանողը գտնում է, որ այս դրույթում ամրագրված՝ վերաքննիչ դատարանի լիազորությունն ուղղակիորեն պայմանավորված է ողջամիտ ժամկետում գործը քննելու պահանջով եւ ուղղված է գործի շրջապատույտի կանխմանը: Այսինքն՝ վիճարկվող դրույթը վերաքննիչ դատարանին լիազորում է իր իրավասության սահմաններում, եթե դա հնարավոր է դատական ակտի վերաքննության արդյունքում, վերացնել գործն ըստ էության լուծող դատական ակտի թերությունները՝ դրանով իսկ կանխելով գործի քննության անհարկի ձգձգումներն ու շրջապատույտը:

5. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետի առնչությամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողն իր իրավունքների խախտումը հիմնականում պայմանավորում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետում օգտագործված «կամայականություն դրսետորելը» բառակապակցության իրավական անորոշությամբ եւ դրա հետեւանքով իրավակիրառ պրակտիկայում այդ դրույթներին տրված, իր կարծիքով, սխալ մեկնաբանությամբ, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի եւ 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները, սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը կարելի է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետում օգտագործված՝ «կամայականություն դրսետորելը» բառակապակցության սահմանադրաիրավական իմաստի բացահայտման անհրաժեշտությունը:

6. Սահմանադրական դատարանը՝ վերահաստատելով իր ՍԳՈ-747 եւ ՍԳՈ-780 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները, սույն գործով կրկին անգամ ընդգծում է, որ օրենքներում օգտագործվող առանձին հասկացություններ չեն կարող ինքնաբավ լինել: Դրանց բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաեւ դատական պրակտիկայում: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետում օգտագործված՝ «կամայականություն դրսետորելը» բառակապակցության եւ դրան բնորոշ հատկանիշների բովանդակության բացահայտմանը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ գործով ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետում օգտագործված՝ «կամայականություն դրսետորելը» բառակապակցությունը մեկնաբանել է **որպես ցանկացած գործողություն կամ անգործություն՝ կատարված պաշտոնատար անձի կողմից, որը նա-**

**խատեաված չէ օրենքով եւ կատարվել է դրա պահանջների խախտմամբ:** Այսինքն՝ վերաքննիչ դատարանը «կամայականություն» եզրույթի նման մեկնաբանությամբ կամայական գործողության բովանդակությունն ըստ էության նույնացրել է ապօրինի գործողության բովանդակության հետ:

«Կամայականություն» եզրույթը ՀՀ օրենսդրության մեջ հստակ բնորոշված չէ, այն սահմանափակ կիրառում ունի եւ գործող օրենսդրության, մասնավորապես, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի երկրորդ պարբերության, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետի, ինչպես նաեւ դատական պրակտիկայի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 3-2497 (ՎԳ), 2006թ. դեկտեմբերի 22-ի թիվ ՎԲ-341/06, 2007 թվականի հունվարի 26-ի թիվ 3-1 (ՏԳ), 2007 թվականի մարտի 2-ի թիվ 3-295 (ՎԳ), 2007 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 3-1832 (ՎԳ), 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԼԳ/0162/06/08 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ ՀՀ օրենսդրության մեջ եւ դատական պրակտիկայում «կամայականություն» եզրույթը մեկնաբանվում է որպես ապօրինություն, օրինականության սկզբունքի խախտում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող՝ 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետում առկա է նաեւ «իբ եւ այլոց համար անօրինական եկամուտներ ստանալը կամ այլ անձնական դրդապատճառներով պաշտոնեական դիրքը օգտագործելը» բառակապակցությունը, որպես ապօրինի վարքագծի դրսևորման առանձնահատուկ ձեւ, որն առավել որոշակի է, քան «կամայականություն դրսևորելը» բառակապակցությունը:

Հաշվի առնելով «կամայականություն» եզրույթի վերաբերյալ ՀՀ օրենսդրության մեջ եւ դատական պրակտիկայում ըստ էության միասնական նման բնորոշման առկայությունը, ինչպես նաեւ այն հանգամանքը, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող՝ 221-րդ հոդվածի բոլոր դրույթները, ինչպես նաեւ երկրորդ մասի 3-րդ կետի դիսպոզիցիան որպես ապօրինի վարքագծի դրսևորման ձեւ են մատնանշում անօրինականության տարբեր տեսակներ, սահմանադրական դատարանը գտնում է, որ նման պայմաններում ՀՀ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող՝ 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետում «կամայականություն դրսևորելը» բառակապակցությունն ինքնին ավելորդ է եւ կարող է «ապօրինի» եզրույթի կամայական եւ հակասական մեկնաբանության տեղիք տալ:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաեւ այն հանգամանքը, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքը կամայականություն դրսևորելը համարում է աշխատանքային կարգապահության կոպիտ խախտում, որը հիմք է հանդիսանում աշխատողին առանց կարգապահական առավել մեղմ տույժերի ենթարկելու աշխատանքից անհապաղ ազատելու համար, սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետում օգտագործված՝ «կամայականություն դրսևորելը» բառակապակցությունն ապօրինի վարքագծի սուբյեկտիվ ընկալման ու տարածական մեկնաբանության եւ դրա արդյունքում՝ աշխատողին անհապաղ աշխատանքից ազատելու իրավականորեն չհիմնավորված հնարավորություն է ստեղծում:

7. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի առա-

ջին մասի 1-ին կետի առնչությամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողն իր իրավունքների խախտումը հիմնականում պայմանավորում է ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով սահմանված՝ համապատասխանաբար դատական պաշտպանության արդյունավետ միջոցի եւ արդար դատաքննության իրավունքների, իր կարծիքով՝ խախտմամբ, սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը կարելու որում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի դրույթների սահմանադրականության գնահատումը ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի առաջին մասում ամրագրված՝ գործի քննության ողջամիտ ժամկետների եւ դատական ակտի պատճառաբանվածության երաշխիքների միաժամանակյա ապահովման համատեքստում:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությանը ՀՀ սահմանադրական դատարանն անդրադարձել է բազմաթիվ որոշումներում (ՍԳՈ-664, ՍԳՈ-665, ՍԳՈ-690, ՍԳՈ-691, ՍԳՈ-773, ՍԳՈ-751, ՍԳՈ-758, ՍԳՈ-765, ՍԳՈ-767, ՍԳՈ-780, ՍԳՈ-787, ՍԳՈ-818, ՍԳՈ-833, ՍԳՈ-851): Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը կարելու որում է հարցին անդրադարձը բողոքարկման ինստիտուտի արդյունավետության ապահովման տեսանկյունից:

Վերաքննիչ ատյանի դատարանների՝ դատական համակարգում ունեցած դերով են պայմանավորված դատական բողոքարկման հարաբերությունների կարգավորման բնագավառում կատարված օրենսդրական փոփոխությունները, որոնց արդյունքում համապատասխանաբար ՀՀ վերաքննիչ քրեական եւ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարաններին, ի լրումն այլ լիազորությունների, իրավունք է վերապահվում վերաքննիչ բողոքը մերժելիս պատճառաբանել անփոփոխ թողնված դատական ակտը, եթե դատարանի կայացրած՝ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի է պատճառաբանված, սխալ է պատճառաբանված կամ պատճառաբանված չէ՝ դրանով իսկ երաշխավորելով առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծած դատական ակտի ինչպես հիմնավորվածությունը, այնպես էլ հնարավորինս լիարժեք ընկալումն ու մատչելիությունը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քննարկվող լիազորությունը վերապահված է նաեւ ՀՀ վճռաբեկ դատարանին՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 6-րդ կետերով: Բացի դրանից, համանման նորմեր տեղ են գտել նաեւ ՀՀ դատական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում, 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 6-րդ կետերում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով եւ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով նախատեսված լիազորության համադրված վերլուծությունը վկայում է, որ վերաքննիչ ատյանի դատարաններին նման լիազորություն վերապահելը նպատակ է հետապնդել անհրաժեշտության դեպքում երաշխավորել առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծած դատական ակտի պատճառաբանվածությունը եւ դատաքննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու սահմանադրաիրավական պահանջի իրացումը, ինչպես նաեւ ապահովել իրավական որոշակիության սկզբունքի իրացումը:



**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Սահմանադրական դատարանը միաժամանակ ընդգծում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետը, նախատեսելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ խնդրո առարկա լիազորությունը, միաժամանակ, որպես այդ լիազորության կիրառման իրավաչափությունն ապահովող երաշխիք, ամրագրում է դրանից օգտվելու չափորոշիչներ: Այն է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով նախատեսված լիազորությունը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը կարող է կիրառել բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն **ըստ էության ճիշտ լուծող** դատական ակտ, սակայն այն «...թերի է պատճառաբանված, սխալ է պատճառաբանված կամ պատճառաբանված չէ»: Նման գործը վերաքննության կարգով վերանայելիս ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը **պարտավոր է** առաջին ատյանի դատական ակտի պատճառաբանությունները լրացնել նոր պատճառաբանություններով, եթե այդ ակտը թերի է պատճառաբանված, ճիշտ պատճառաբանել, եթե այդ ակտը սխալ է պատճառաբանված, կամ պատճառաբանել, եթե այդ ակտն ընդհանրապես պատճառաբանված չէ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանին նշված լիազորությունը վերապահելիս օրենսդիրը նկատի է ունեցել նաեւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ **ըստ էության ճիշտ վճռի՝** ձեռնարկի նկատառումներով բեկանման արգելքի հանգամանքը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի՝ «...թերի է պատճառաբանված, սխալ է պատճառաբանված» բառակապակցությունը սահմանադրականության խնդիր չի առաջացնում եւ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանին վերապահված՝ քննարկվող լիազորությունը համահունչ է ՀՀ Սահմանադրությամբ, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով երաշխավորված՝ արդար դատաքննության եւ ողջամիտ ժամկետներում դատական քննության իրավունքներին: Հիշյալ լիազորության բացակայությունը, ընդհակառակը, կարող է վտանգել արդար դատաքննության, ինչպես նաեւ ողջամիտ ժամկետներում դատաքննության իրավունքները:

Այլ է վիճակը «...կամ պատճառաբանված չէ» բառակապակցության առնչությամբ: Նման ձեռնարկուման առկայությունն ինքնաբերաբար ենթադրում է չպատճառաբանված դատական ակտի գոյություն: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 9 ապրիլի 2007թ. ՄԴ-Ո-690 որոշման մեջ հստակ իրավական դիրքորոշումներ է արտահայտել դատական ակտի պատճառաբանված լինելու սահմանադրաիրավական անհրաժեշտության վերաբերյալ, եւ այդ դիրքորոշումներն ամբողջությամբ վերաբերելի են նաեւ քննության առարկա գործին: Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրությունն ընդհանրապես պետք է բացառի չպատճառաբանված դատական ակտի գոյությունը, որովհետեւ նման ակտը չի կարող համապատասխանել իրավական պետության հիմնարար սկզբունքներին, չի կարող երաշխավորել մարդկանց իրավունքների արդյունավետ դատական պաշտպանություն, ինչպես նաեւ ապահովել խախտված իրավունքների արդյունավետ վերականգնում:

Այդ նկատառումներից ելնելով է, որ, մասնավորապես, ՀՀ քաղաքացիական

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

դատավարության օրենսգիրքը (հոդված 132) պարտադիր նորմատիվ պահանջ է սահմանում դատական վճռի բովանդակության վերաբերյալ, նախատեսելով, որ «դատարանի վճիռը կազմված է ներածական, նկարագրական, **պատճառաբանական** եւ եզրափակիչ մասերից»: Միաժամանակ, նույն հոդվածի 1-ին մասում սահմանվում է, որ «Վճռի պատճառաբանական մասում պետք է նշվեն դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետետությունները, այս կամ այն ապացույցները մերժելու փաստարկները, ինչպես նաեւ այն օրենքները, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը եւ այլ իրավական ակտերը, որոնցով դատարանը ղեկավարվել է վճիռ կայացնելիս»:

Դատարանի վճռի պատճառաբանման անհրաժեշտությանն անդրադարձել է նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ մասնավորապես շեշտելով, որ արդար դատաքննության պահանջը ներառում է նաեւ դատարանի պատճառաբանված որոշում ընդունելու պարտավորությունը (տե՛ս Van de Hunk v. the Netherlands, Judgment of 19 April 1994):

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետը՝ «...ինչպես նաեւ կամայականություն դրսեւորելը» բառակապակցության մասով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1, 3, 14.1-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետը՝ «...կամ պատճառաբանված չէ» բառակապակցության մասով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 18-րդ (1-ին մաս), 19-րդ (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի հիմքով ՀՀ Սահմանադրության 1-ին, 18-րդ (1-ին մաս), 19-րդ (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր ճանաչել նաեւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ «...կամ չպատճառաբանված է» եւ 6-րդ կետը՝ «...պատճառաբանված չէ» բառակապակցությունների մասով:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**15 հունիսի 2010 թվականի  
ՍԳՈ- 896**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ  
ԵՎ ԻՆՈՎԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՐ» P457-AM  
ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ՆԱՄԱԿ-ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**22 հունիսի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Մ. Թումասյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի հունիսի 11-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Էլեկտրոնային հասարակության եւ ինովացիոն ծրագրի նախապատրաստման համար» P457-AM կանխավճարի նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2010թ. հունիսի 17-ի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազո-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

տելով նամակ-համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. Կանխավճարի նամակ-համաձայնագիրն ստորագրվել է 2010թ. հունիսի 11-ին, որի նպատակն է օժանդակել աջակցման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) նախապատրաստմանը, այն է՝ ա) ավելացնել այն տնային տնտեսությունների, բիզնեսների եւ հանրային կառույցների քանակը, որոնց հասանելի են ապահով եւ մատչելի համացանցը, համակարգիչները եւ էլեկտրոնային ծառայությունները, բ) ավելացնել գիտելիքի եւ տեխնոլոգիաների վրա հիմնված ոլորտի ծավալները եւ ապահովել շուկայի, ֆինանսների, հմտությունների եւ զբաղվածության ավելի լավ հասանելիություն տվյալ ոլորտում:

Նամակ-համաձայնագիրն ունի հավելված, որով սահմանվում են կանխավճարի (այսուհետ՝ կանխավճար) տրամադրման պայմանները եւ իրականացվելիք միջոցառումների (այսուհետ՝ միջոցառումներ) նկարագրությունը: Նամակ-համաձայնագրի անբաժանելի մասն են կազմում 2008թ. հունվարի 15-ով թվագրված Ստանդարտ պայմանները:

2. Նամակ-համաձայնագրով Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկը (այսուհետ՝ Համաշխարհային բանկ) առաջարկում է Հայաստանի Հանրապետությանը (այսուհետ՝ Ստացող) Ծրագրի նախապատրաստման միջոցներից նամակ-համաձայնագրում եւ դրա հավելվածում ներկայացվող պայմաններով տրամադրել 3.000.000 ԱՄՆ դոլարը չգերազանցող գումարի չափով կանխավճար՝ օժանդակելու համար միջոցառումների ֆինանսավորմանը:

Իր համաձայնությունը հաստատելով՝ Ստացողը փաստում է, որ լիազորված է կնքել համաձայնագիրը եւ իրականացնել միջոցառումները, հետ վճարել կանխավճարը, նամակ-համաձայնագրի շրջանակներում իրականացնել իր մյուս պարտավորությունները:

3. Նամակ-համաձայնագրի հավելվածով սահմանվում են իրականացվող միջոցառումները, նախատեսվում են դրանց մոնիթորինգը եւ գնահատումը, ֆինանսական կառավարումը, գնումների ու կանխավճարի առհանման պայմանները:

Մասնավորապես, համաձայն նամակ-համաձայնագրի բաժին 3.01-ի՝ միջոցառումների շրջանակներում ապրանքների, խորհրդատվական ծառայությունների, վերապատրաստումների եւ գործառնական ծախսերի (2.300.000 ԱՄՆ դոլար), ինչպես նաեւ նամակ-համաձայնագրի բաժին 2.01 (բ)-ի՝ տրամադրվող ենթավարկերի (700.000 ԱՄՆ դոլար) համար կանխավճարի միջոցներից Ստացողը կարող է գումարներ առհանել ֆինանսավորման ենթակա ծախսերի 100%-ը՝ առանց հարկերի:

4. Նամակ-համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- ստեղծել Ծրագրի կազմկոմիտե, որը պետք է կազմված լինի Ծրագրի իրականացման գործում ներգրավված նախարարությունների եւ գործակալությունների ներկայացուցիչներից,

- Ծրագրի կազմկոմիտեի միջոցով նամակ-համաձայնագրի շրջանակներում միջոցառումներն իրականացնել պատշաճ հետետողականությամբ եւ արդ-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

յունավետությամբ, Համաշխարհային բանկին ներկայացնել ապրանքների, խորհրդատվական ծառայությունների, վերապատրաստումների եւ գործառնական ծախսերի, ինչպես նաեւ կանխավճարի միջոցների օգտագործման վերաբերյալ ողջ տեղեկատվությունը.

- կանխավճարի միջոցների հաշվին ֆինանսավորման ենթակա ապրանքներ, աշխատանքներ եւ ծառայություններ ձեռք բերելիս ղեկավարվել նամակ-համաձայնագրի հավելվածի դրույթներով՝ նախատեսված Համաշխարհային բանկի կողմից մշակված Գ-նումների ուղեցույցով.

- համաձայնագրի հավելվածի բաժին 3.01-ի աղյուսակի Կատեգորիա 2-ում ներկայացվող կանխավճարի միջոցների մի մասը տրամադրել Համաշխարհային բանկի հետ սերտ համագործակցությամբ ընտրված ֆինանսական կազմակերպություններին (այսուհետ՝ ՄՖԿ-ներ)՝ ՀՀ-ի եւ յուրաքանչյուր ՄՖԿ-ի միջեւ կնքված լրացուցիչ վարկավորման համաձայնագրերի շրջանակներում.

- աուդիտի ենթարկել ֆինանսական հաշվետվությունները կանխավճարի իրականացման ողջ ժամանակահատվածի համար, իսկ միջանկյալ, աուդիտի չենթարկված ֆինանսական հաշվետվությունները միջոցառումների համար պատրաստել եւ Համաշխարհային բանկին ներկայացնել ոչ ուշ, քան յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ավարտից 45 օր հետո կիսամյակային կտրվածքով,

- բոլոր ապրանքները եւ ծառայությունները, բացի խորհրդատվական ծառայություններից, ձեռք բերել 2004թ. մայիսին հրապարակված եւ 2006թ. հոկտեմբերին վերանայված՝ «ՎՋՄԲ փոխառությունների եւ ՄԶԸ վարկերի շրջանակում գնումների ուղեցույցների» I բաժնի եւ նամակ-համաձայնագրի I բաժնի դրույթների համաձայն.

- բոլոր խորհրդատվական ծառայությունները ձեռք բերել 2004թ. մայիսին հրապարակված եւ 2006թ. հոկտեմբերին վերանայված՝ «Համաշխարհային բանկի վարկառուների կողմից խորհրդատուների ընտրության եւ վարձելու ուղեցույցի» I եւ IV բաժինների եւ նամակ-համաձայնագրի հավելվածի համաձայն.

- վճարել տոկոս՝ առհանված կանխավճարի մնացորդի դիմաց, որի տոկոսադրույքը պետք է հավասար լինի ԱՄՆ դոլարի համար ԼԻԲՈՐ + ֆիքսված տարբերություն: Տոկոսների գանձումն սկսվելու է կանխավճարի գումարների առհանման օրից եւ պետք է վճարվի յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ին եւ հուլիսի 1-ին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2010 թվականի հունիսի 11-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

«Էլեկտրոնային հասարակության եւ ինովացիոն ծրագրի նախապատրաստման համար» P457-AM կանխավճարի նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

22 հունիսի 2010 թվականի  
ՍԳՈ-897



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-ԻՆ ԳԱՄԱՍԿՈՍՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱՔԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՓՈԽԱԳԱՐՉ  
ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**25 հունիսի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի մարտի 23-ին Դամասկոսում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Սիրիայի Արաբական Հանրապետության միջեւ քաղաքացիական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 01.06.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ արդարադատության նախարար Գ. Դանիելյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայ-

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆ • ՏԵՂԵԿԱԳԻՐ • 1(58)2011

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

նագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց** .

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2010թ. մարտի 23-ին՝ Դամասկոսում:

2. Համաձայնագրի նպատակն է խրախուսել արդյունավետ համագործակցությունը դատական եւ իրավական գործերում, կարգավորելով քաղաքացիական գործերով դատական փաստաթղթերի եւ դրանց առնչվող արտադատական փաստաթղթերի հանձնման, ապացույցների ձեռքբերման եւ քաղաքացիական գործերով դատական որոշումների ճանաչման եւ կատարման հարցերը:

3. Համաձայնագրով նախատեսվում են կողմերի միջեւ դատական փաստաթղթերի եւ դրանց առնչվող արտադատական փաստաթղթերի փոխանցման կարգը, գործով ապացույցների ձեռքբերման, դրանց օրինական ճանաչման եւ փոխանցման, ինչպես նաեւ այդ գործողություններին առնչվող ծախսերի կատարման կարգը:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- հայցող Կողմին տրամադրել պահանջվող նյութի վերաբերյալ փաստաթղթեր՝ արդարադատության նախարարության միջոցով՝ դատական ծանուցագրերի հանձնման վերաբերյալ ՀՀ օրենքներով նախատեսված ընթացակարգերին համապատասխան,

- հայցող Կողմին փաստաթղթերի հանձնումը հնարավոր չլինելու դեպքում, անհապաղ տեղեկացնել նրան դրա պատճառների մասին,

- ապահովել հայցող Կողմի ապացույցներ ձեռք բերելու վերաբերյալ խնդրանքը ՀՀ օրենքներին եւ այլ իրավական ակտերին համապատասխան,

- ճանաչել եւ կատարել քաղաքացիական գործերով մյուս Կողմի իրավասու դատարանների որոշումները, եթե դրանք ուժի մեջ են մտել եւ վերանայման կարգով անցել են բոլոր ընթացակարգերը, ինչպես նաեւ կայացվել են իրավասությանն առնչվող միջազգային իրավունքի այն սկզբունքներին համապատասխան, որոնք կիրառելի են ՀՀ տարածքում,

- կրել փաստաթղթերի հանձնման հետ կապված բոլոր ծախսերը կամ վճարները:

Համաձայնագրով միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների համաձայն սահմանվում են նաեւ դրա կիրառման եւ մեկնաբանման հետ կապված բոլոր վեճերի կարգավորման, համաձայնագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու, ինչպես նաեւ ուժի մեջ մտնելու եւ դադարեցման ընթացակարգերը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.



**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

1. 2010 թվականի մարտի 23-ին Դամասկոսում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Սիրիայի Արաբական Հանրապետության միջեւ քաղաքացիական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**25 հունիսի 2010 թվականի  
ՍԴՈ-898**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-ԻՆ ԴԱՄԱՍԿՈՍՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱՔԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՆՁՆՄԱՆ ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**25 հունիսի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուկյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի մարտի 23-ին Դամասկոսում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Սիրիայի Արաբական Հանրապետության միջեւ հանձնման համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 08.06.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ արդարադատության նախարար Գ. Դանիելյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց .**

Հայաստանի Հանրապետության եւ Սիրիայի Արաբական Հանրապետության միջեւ քննության առարկա համաձայնագիրն ստորագրվել է 2010 թվականի մարտի 23-ին՝ Դամասկոսում:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Նշված համաձայնագրի նպատակն է երկկողմ հարաբերությունների ամրապնդումը եւ հանձնման բնագավառում արդյունավետ համագործակցությունը:

Համաձայնագրի համաձայն՝ քրեական հետապնդման մեջ գտնվող անձի հանձնումն իրականացվում է այն բոլոր արարքների համար, որոնք Հայաստանի Հանրապետության եւ Սիրիայի Արաբական Հանրապետության օրենքներով համարվում են հանցանք եւ պատժվում են ազատազրկմամբ առնվազն մեկ տարի ժամկետով: Հանձնումը կարող է իրականացվել նաեւ այն դատապարտյալի նկատմամբ, որի կատարած արարքը եւ դրա համար նախատեսված առավելագույն պատիժը համապատասխանում են վերոնշյալին, եւ կայացված դատավճիռը սահմանում է առնվազն վեց ամիս ազատազրկում:

Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- Սիրիական կողմի հարցման դեպքում հանձնել ՀՀ տարածքում գտնվող յուրաքանչյուր անձի, ով հանցանք կատարելու կամ պատիժը կրելու համար հետապնդման մեջ է գտնվում Սիրիական կողմի իրավասու մարմինների կողմից (հոդված 1),

- ստանալով հանձնման մասին հարցումը, բացառությամբ համաձայնագրի 3-րդ հոդվածում նշված դեպքերի, որպես հայցվող Կողմ, ՀՀ օրենքներին համապատասխան ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ պահանջվող անձին ձերբակալելու կամ կալանավորելու համար (հոդված 6),

- անհետաձգելի դեպքերում՝ Ինտերպոլի միջոցով կամ դիվանագիտական ուղիներով Սիրիական կողմի իրավասու մարմինների գրավոր հարցման դեպքում ՀՀ օրենսդրությանը համապատասխան ժամանակավորապես կալանավորել պահանջվող անձին (հոդված 7, մաս 1),

- Սիրիական կողմի համաձայնության բացակայության պարագայում՝ հանձնված անձին չենթարկել քրեական հետապնդման եւ չպատժել հանձնման հիմք հանդիսացած հանցանքից բացի, նրա՝ մինչեւ իր փոխանցումը կատարած այլ հանցանքի համար (հոդված 11, մաս 1),

- եթե հանձնված անձը վերադառնում է ՀՀ տարածք նախքան հետապնդումը, դատավարությունը կամ պատժի կատարումը դադարեցնելը, ապա, հայցող Սիրիական կողմի պահանջով, նա կրկին հանձնվում է (հոդված 13),

- որպես հայցվող Կողմ՝ հայցող Սիրիական կողմին փոխանցել հանցանքի ապացույց հանդիսացող բոլոր իրերն ու առարկաները, հանցագործության գործիքները կամ հանցանքի հետեւանքով ձեռք բերված գործիքները, նույնիսկ այն դեպքում, եթե հանձնումը չի կարող իրականացվել հանձնման ենթակա անձի մահվան կամ փախուստի պատճառով կամ հնարավոր որեւէ այլ պատճառով (հոդված 14, մաս 1),

- որպես հայցվող Կողմ՝ հոգալ ՀՀ տարածքում հանձնման հետ կապված ծախսերը, իսկ որպես հայցող Կողմ կրել տարանցիկ փոխադրման հետ կապված ծախսերը (հոդված 16):

Ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ հանրնդգրկուն միջազգային պայմանագրերի դրույթներին:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2010 թվականի մարտի 23-ին Գամասկոսում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Սիրիայի Արաբական Հանրապետության միջեւ հանձնման համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**25 հունիսի 2010 թվականի  
ՍԳՈ-899**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԲՈՒԳԱՊԵՇՏՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ  
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՅԱՌԵԼՈՒ  
ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**25 հունիսի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (գեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի նոյեմբերի 10-ին Բուդապեշտում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Հունգարիայի Հանրապետության կառավարության միջեւ եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը բացառելու եւ հարկումից խուսափելը կանխելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 08.06.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ս. Կարայանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. Խնդրո առարկա համաձայնագիրն ստորագրվել է 2009թ. նոյեմբերի 10-ին՝ Բուդապեշտում: Համաձայնագրի նպատակը Պայմանավորվող պետությունների միջև եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը բացառելու եւ հարկումից խուսափելը կանխելու հետ կապված հարաբերությունների կարգավորումն է: Այն բաղկացած է 29 հոդվածից եւ համաձայնագրի անբաժանելի մաս կազմող Արձանագրությունից:

2. Համաձայնագրով նախատեսված է, որ այն կիրառվում է Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ հանդիսացող անձանց նկատմամբ՝ կապված Պայմանավորվող պետության կամ նրա իշխանության տեղական մարմինների կողմից եկամտի եւ գույքի նկատմամբ սահմանվող հարկերի հետ՝ անկախ դրանց գանձման եղանակից:

Համաձայնագրով սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում եւ Հունգարիայի Հանրապետությունում գանձվող հարկերի տեսակները, կանոնակարգվում են եկամուտների ստացման՝ երկրում հիմնական եկամտատեսակների՝ շահաբաժինների, տոկոսների, ռոյալթիների հարկման պայմանները եւ, հատկապես, դրույքաչափերը:

Համաձայնագրով սահմանված են հարկման հետեւյալ օբյեկտները .

- անշարժ գույքից ստացված եկամուտը,
- ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող շահույթը,
- միջազգային փոխադրումներից՝ նավերի, օդանավերի կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցների շահագործումից ստացված շահույթը,
- շահաբաժինները, տոկոսները, ռոյալթին,
- գույքի արժեքի հավելածը,
- արտիստների եւ մարզիկների գործունեությունից ստացված եկամուտը,
- կենսաթոշակները, պետական ծառայության դիմաց վճարված աշխատավարձը,
- ուսանողին, դասախոսին, ուսուցչին տրված վճարումները, այլ եկամուտներ:

Ըստ համաձայնագրի՝ այն կիրառվում է նաեւ դրանում նախատեսված ցանկացած նույնատիպ կամ էապես համանման հարկերի նկատմամբ, որոնք սահմանվում են համաձայնագիրն ստորագրելուց հետո՝ գործող հարկերի կամ դրանց փոխարեն:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք պարտավորություններ, այդ թվում.

- իր իրավասու մարմինների միջոցով Հունգարիայի Հանրապետությանը ծանուցել իր հարկային օրենքներում կատարված ցանկացած էական փոփոխության մասին,

- ապահովել Հայաստանում կրկնակի հարկման բացառումը,

- Հունգարիայի Հանրապետության քաղաքացիներին Հայաստանի Հանրապետությունում չենթարկել այլ կամ ավելի խիստ որեւէ հարկման կամ դրա հետ կապված որեւէ պարտավորության կատարման, մասնավորապես՝ կապ-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

ված ռեզիդենտության հետ, քան այն հարկումը ու դրա հետ կապված պարտավորությունների կատարումն է, որոնց, միեւնույն հանգամանքների դեպքում, ենթարկվում են կամ կարող են ենթարկվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիները,

- ապահովել, որպեսզի Հունգարիայի Հանրապետության ձեռնարկության տնտեսական գործունեության իրականացման հիմնական վայրի հարկումը Հայաստանի Հանրապետությունում չլինի նվազ բարենպաստ, քան Հայաստանի Հանրապետության համանման գործունեություն իրականացնող ձեռնարկությունների հարկումը,

- Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունները, որոնց գույքն ամբողջությամբ կամ մասամբ պատկանում է Հունգարիայի Հանրապետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կամ ուղղակի կամ անուղղակի վերահսկվում է Հունգարիայի մեկ կամ մի քանի ռեզիդենտների կողմից, Հայաստանի Հանրապետությունում չենթարկել այլ կամ ավելի ծանր որեւէ հարկման կամ դրա հետ կապված պարտավորությունների կատարման, քան Հայաստանի Հանրապետության այլ նման ձեռնարկությունները:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը կրում է ֆինանսական պարտավորություններ, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է Հունգարիայի Հանրապետության ռեզիդենտների կողմից Հայաստանի Հանրապետությունում ստացված որոշ տեսակի եկամուտները չհարկել կամ հարկել նվազեցված դրույքաչափերով:

Համաձայնագրով սահմանափակվում է նաեւ Հունգարիայի Հանրապետության ռեզիդենտի կողմից հայաստանյան աղբյուրներից ստացվող տոկոսները եւ ռոյալթիները հարկելու՝ Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սակայն, եթե տոկոսների եւ ռոյալթիների փաստացի սեփականատերը Հունգարիայի Հանրապետության ռեզիդենտ է, ապա Հայաստանում գանձվող հարկը չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի 10 տոկոսը եւ ռոյալթիների համախառն գումարի 5 տոկոսը:

5. Համաձայնագիրն ամրագրում է նաեւ հարկումից խուսափելը կանխելու կառուցակարգ, ինչպես նաեւ երաշխավորում է Պայմանավորվող պետությունների ազգային անձանց նկատմամբ հարկային խտրականության բացառումը:

Արդի միջազգային իրավունքին ներդաշնակ համաձայնագրի գործողությունը չի տարածվում դիվանագիտական ներկայացուցչությունների եւ հյուպատոսական հիմնարկների անդամների նկատմամբ:

Համաձայնագրի եզրափակիչ դրույթները նվիրված են վերջինիս մեկնաբանման կամ կիրառման հետ կապված հնարավոր վեճերի լուծման, տեղեկությունների փոխանակման, ուժի մեջ մտնելու եւ դրա գործողության դադարեցման կարգին ու պայմաններին, ժամկետներին:

6. Հունգարիայի Հանրապետության հետ կրկնակի հարկումը բացառելու մասին համաձայնագրի կնքումը հնարավորություն կտա զարգացնելու երկու պետությունների միջեւ ապրանքների եւ ծառայությունների շրջանառությունը, կապիտալի, տեխնոլոգիաների, մարդկանց շարժը, կնպաստի տնտեսական կապերի զարգացմանը:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրության 8 եւ 9-րդ հոդվածների դրույթներին, կոչված են զարգացնելու կողմերի միջեւ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունները, նաեւ ստեղծելու իրավական բարենպաստ պայմաններ կողմերի համապատասխան սուբյեկտների տնտեսական գործունեության ազատության համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2009 թվականի նոյեմբերի 10-ին Բուդապեշտում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Հունգարիայի Հանրապետության կառավարության միջեւ եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը բացառելու եւ հարկումից խուսափելը կանխելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**25 հունիսի 2010 թվականի  
ՍԳ-Ո-900**





**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ԴԻԴԻ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 210-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ  
1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ 216-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**29 հունիսի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովոզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի, մասնակցությամբ՝

«Դիդի Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն Գ. Խալաթյանի,

գործով որպես պատասխանող ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Դիդի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին մասի եւ 216-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Դիդի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ 15.03.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքը եւ տվյալ իրավահարաբերություններին առնչվող այլ իրավական ակտերը, ինչպես նաեւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆ • ՏԵՂԵԿԱԳԻՐ • 1(58)2011

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հուլիսի 28-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Ուրիշի հողամասից սահմանափակ օգտվելու իրավունք (սերվիտուտ)» վերտառությամբ 210-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Հողամասի սեփականատերերը կամ օգտագործողներն իրավունք ունեն հարեւան հողամասի սեփականատիրոջից, իսկ անհրաժեշտության դեպքում նաեւ այլ հողամասի սեփականատիրոջից պահանջել իրենց տրամադրելու այդ հողամասի սահմանափակ օգտագործման իրավունք (սերվիտուտ)»:

Նույն օրենսգրքի՝ «Սերվիտուտի դադարելը» վերտառությամբ 216-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«Այն դեպքերում, երբ քաղաքացուն կամ իրավաբանական անձին պատկանող հողամասը սերվիտուտով ծանրաբեռնված լինելու հետեւանքով չի կարող օգտագործվել իր նշանակությանը համապատասխան, սեփականատերն իրավունք ունի դատական կարգով պահանջել դադարեցնելու սերվիտուտը»:

2. Ըստ գործում առկա նյութերի՝ «Թիվ 12 ԲԱՏՁ» ԲԲԸ-ն 2002թ. մայիսի 31-ին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով «Դիդի Գրուպ» ՍՊԸ-ին է վաճառել Արշակունյաց 119 հասցեում գտնվող շինությունից 48,2 քմ տարածք, իսկ ենթավարձակալության պայմանագրով ՍՊԸ-ի օգտագործմանն է հանձնել 4350 քմ տարածք: Շինության նկատմամբ սեփականության իրավունքը եւ հողամասի նկատմամբ օգտագործման իրավունքն ստացել են պետական գրանցում 2002թ. հունիսի 11-ին: Երեւանի քաղաքապետի՝ 20.02.2003թ. թիվ 296-Ա որոշմամբ տրամադրված թույլտվության հիման վրա «Դիդի Գրուպ» ՍՊԸ-ն նշված 4350 քմ հողամասի վրա կառուցել է հեղուկ գազի լիցքավորման կայան եւ սկսել զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.11.2007թ. թիվ 07-3610 վճռով ճանաչվել է «Դիդի Գրուպ» ՍՊԸ-ի սեփականության իրավունքը նաեւ 48.2 քմ մակերեսով շինությամբ ծանրաբեռնված հողի նկատմամբ:

Հետագայում, 12.04.2004թ. քաղաքացիներ Արշակ Աբրահամյանն ու Աստղիկ Սիմոնյանը «Թիվ 12 ԲԱՏՁ» ԲԲԸ-ից ձեռք են բերել Արշակունյաց 119 հասցեում գտնվող մնացած անշարժ գույքը՝ 3044.3 քմ շինությունը, իսկ 2006 թվականից նաեւ՝ այդ շինությանը կից 16799 քմ հողամասը, որը ներառում է ենթավարձակալության պայմանագրի հիման վրա «Դիդի Գրուպ» ՍՊԸ-ին օգտագործման հանձնված հողամասը: Հողամասի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելուց հետո, քաղաքացիներ Արշակ Աբրահամյանն ու Աստղիկ Սիմոնյանն իրենց սեփականության իրավունքի պաշտպանության նպատակով հայց են ներկայացրել դատարան՝ ընդդեմ «Դիդի Գրուպ» ՍՊԸ-ի՝ տարածքից վտարելու եւ սեփականության իրավունքը խախտող գործողությունները կանխելու պահանջով, որը Երեւանի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 18.12.2006 թվականի վճռով բավարարվել է:

Իր սեփականության իրավունքի պաշտպանության նպատակով «Դիդի

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Գրույ» ՍՊԸ-ն դիմել է դատարան՝ 4350 քմ հողամասի նկատմամբ հարկադիր սերվիտուտ սահմանելու պահանջով: Երեսանի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանի 23.04.2009 թվականի վճռով հայցը մերժվել է: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.07.2009 թվականի որոշմամբ «Դիդի Գրույ» ՍՊԸ-ի վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ Երեսանի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ: ՀՀ վճռաբեկ դատարանի 07.11.2009 թվականի որոշմամբ «Դիդի Գրույ» ՍՊԸ-ի վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

3. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող դրույթների սահմանադրականության վերաբերյալ դիմող կողմը պնդում է, որ դրանք չեն համապատասխանում իրավական որոշակիության պահանջին, քանի որ դրանցում բացահայտված չեն «սահմանափակ օգտագործման» եւ «իր նշանակությանը համապատասխան» հասկացությունները: Ըստ դիմողի՝ օրենսդիրը պարտավոր էր տալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 216-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «իր նշանակությանը համապատասխան» հասկացության այն նվազագույն չափորոշիչները, որոնք կերաշխավորեին տվյալ հողամասի սեփականատիրոջ եւ հարակից հողամասի սեփականատիրոջ կողմից իրենց հողամասերի նկատմամբ սեփականության տուբյեկտիվ իրավունքի միաժամանակյա ազատ իրականացումը, ինչպես նաեւ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ «սահմանափակ օգտագործման» հասկացության այն նվազագույն չափորոշիչները, որոնց պայմաններում ուրիշի հողամասից օգտվելը վնաս չի հասցնի մյուս սեփականատիրոջ՝ իր հողամասը դրա նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու իրավունքին: Ըստ դիմողի՝ ՀՀ դատարանները եւ, մասնավորապես, ՀՀ վերաքննիչ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 216-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «իր նշանակությանը համապատասխան» հասկացությունը մեկնաբանել է այնպես, որ տվյալ հողամասի սեփականատերը չի կարող այդ հողամասի վրա «շինարարություն իրականացնել, շենք-շինություններ կառուցել, օգտագործել ցանկացած այլ նպատակով»: Դիմողը գտնում է, որ սերվիտուտի դեպքում հողամասի սեփականատերը պետք է զրկվի հողամասի՝ սերվիտուտով ծանրաբեռնված մասի վրա շինություններ կառուցելու, հողամասի այդ մասը ցանկացած այլ նպատակով օգտագործելու իրավունքից, քանի որ «...դա բխում է սերվիտուտի, այսինքն՝ երկու հարակից հողամասերի սեփականատերերից մեկի սեփականության իրավունքի ազատ իրացման հնարավորությունից»:

Դիմողը նշում է նաեւ, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 210-րդ եւ 216-րդ հոդվածներում առկա է օրենքի բաց, որը դրսեւորվում է նրանում, որ նշված հոդվածները վերաբերում են **միայն հողամասերին**, եւ ոչ՝ շինություններին: Բացի դրանից, դիմողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 216-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «իր նշանակությանը համապատասխան» հասկացությունն ինքնին «ավելորդ» հասկացություն է եւ, անկախ իր իրավական որոշակիությունից, խոչընդոտում է սերվիտուտ պահանջող սեփականատիրոջ սեփականության իրավունքի անարգել իրականացմանը: Ինչպես նշում է դիմողը, օրենսդրության մեջ տվյալ հասկացության առկայությունը բոլոր դեպքերում բացառում

է սերվիտուտի իրավունքի իրականացումը, տեղիք է տալիս կամայականությունների եւ արդարադատության բնագավառում չարաշահումների, հետեւաբար, այս հիմնավորումներով է նշված հասկացությունը խախտում նաեւ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների 1-ին մասերով սահմանված՝ համապատասխանաբար դատական պաշտպանության արդյունավետ միջոցի եւ արդար դատաքննության իրավունքները: Ըստ դիմող կողմի՝ այդ իրավունքներն իրենց հիմքում ունեն ոչ միայն տվյալ դատավարական իրավունքների համար անհրաժեշտ իրավական մեխանիզմներ եւ կառուցակարգեր, այլեւ նյութական իրավունքի՝ դատական կարգով իրացվելիության հանգամանքը: Այսինքն՝ եթե տվյալ նյութական իրավունքի վերաբերյալ նորմը չի համապատասխանում իրավական որոշակիության եւ կանխատեսելիության պահանջներին, կամ թեկուզեւ համապատասխանում է այդ պահանջներին, սակայն օրենսդրությամբ այդ նյութական իրավունքի իրացման համար սահմանվում են այնպիսի պայմաններ, որոնք արգելափակում են նյութական այդ իրավունքի՝ դատական կարգով իրացվելու հնարավորությունը, ապա այդ պայմանը «չի կարող համարվել դատական պաշտպանության արդյունավետ միջոց կամ արդար դատաքննության տարր»:

Դիմող կողմը, իր դիմումում հղում կատարելով իրավական ակտերի որոշակիության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի եւ ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշումներին, գտնում է, որ օրենքի անհստակության պատճառով չի կարողացել կանխատեսել իր վարքագիծը, օգտագործման իրավունքով ՍՊԸ-ին հատկացված հողամասի վրա կատարվել են մեծ ներդրումներ, կառուցվել է հեղուկ գազի լիցքավորման ստացիոնար կայան՝ այն մտադրությամբ, որ հնարավոր վեճերի դեպքում ՍՊԸ-ին կտրվի սերվիտուտի իրավունք, մինչդեռ այդպիսի իրավունք ՍՊԸ-ին չտրամադրելով վերջինիս հասցվում է հսկայական նյութական վնաս:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ վիճարկվող դրույթներն անգամ ձեւական առումով չեն կարող հակասել ՀՀ Սահմանադրությանը, եւ դիմումը պետք է դիտարկվի բացառապես վիճարկվող իրավադրույթների՝ իրավական որոշակիության սկզբունքին հակասության տեսանկյունից:

Ըստ պատասխանողի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին մասը չի հակասում ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով սահմանված իրավական պետության սկզբունքին, մասնավորապես, սերվիտուտն ուրիշի գույքի սահմանափակ օգտագործման իրավունք է եւ իր իրավաբանական էությանը եւ նշանակությանը համապատասխան բազմաթիվ իրավական համակարգերում ամրագրվել է որպես ուրիշի գույքի սահմանափակ օգտագործման իրավունք, հետեւաբար՝ «սերվիտուտ» հասկացության սահմանման համար «սահմանափակ օգտագործման իրավունք» հասկացության օգտագործումը չի կարող հակասել իրավական որոշակիության պահանջին: Ավելին, այդ երկու հասկացությունները կարող են դիտարկվել որպես հոմանիշներ: Բացի դրանից, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին մասը սահմանելով սերվիտուտի հասկացությունը՝ այն բնորոշում է որպես ուրիշի գույքի սահմանափակ օգտագործման իրավունք: Եվ ինչպես գտնում է պատասխանող կողմը՝ օրենսդիրը կարող էր սահմանափակվել միայն հանրաճանաչ «սերվիտուտ» հասկացության կիրառմամբ,

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

մինչդեռ օրենսդիրը սահմանել է նաև դրա բովանդակությունը, այսինքն՝ սահմանվել են այն դեպքերը, երբ անձի սեփականությունը կարող է ծանրաբեռնվել սերվիտուտով: Բացի դրանից, պատասխանող կողմը տարբեր երկրների օրինակներով մատնանշում է, որ սերվիտուտը, որպես ուրիշի գույքի սահմանափակ օգտագործման իրավունք, լայնորեն կիրառվում է միջազգային իրավական պրակտիկայում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 216-րդ հոդվածի 2-րդ մասի առնչությամբ պատասխանող կողմը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքը թույլ է տալիս սերվիտուտով ծանրաբեռնել նաև շենքերն ու շինությունները: Քաղաքացիական իրավունքի օբյեկտ համարվող յուրաքանչյուր գույք ունի իր նպատակային նշանակությունը, եւ սեփականատերն ազատ է իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքն օգտագործել դրա նպատակային նշանակությանը համապատասխան, եւ որ «գույքի նշանակություն» հասկացությունը չի կարող դիտվել որպես իրավական որոշակիության սկզբունքին հակասող, քանի որ դա հանրահայտ հասկացություն է եւ ուղղակիորեն բխում է գույքի անհատական հատկանիշներից, դրա սոցիալական նշանակությունից, պիտանելիությունից, դրա հատկանիշներով պայմանավորված այն օգտագործելու հնարավորությունից, տնտեսական նշանակությունից:

Պատասխանող կողմը փաստարկում է նաև գործը լուծող վերջնական դատական ակտով դիմողի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 216-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառելիության հարցը, պնդելով, որ այդ նորմը դատական եւ ոչ մի ակտով դիմողի նկատմամբ չի կիրառվել եւ գործի վարույթն այդ մասով ենթակա է կարճման:

5. Ուսումնասիրելով գործում առկա Երեսան քաղաքի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵՇԴ/1586/02/08 քաղ. գործով 23.04.2009թ. վճիռը եւ նույն գործով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.07.2009թ., ՀՀ վճռաբեկ դատարանի 07.10.2009թ. որոշումները, սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի սույն գործով վիճարկվող 216-րդ հոդվածի 2-րդ մասի նորմերը դիմողի նկատմամբ չեն կիրառվել, հետեւաբար, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ եւ 60-րդ հոդվածների հիմքերով, գործի վարույթն այդ մասով ենթակա է կարճման:

6. Դիմումի առարկայի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 210-րդ հոդվածի վիճարկվող մասի սահմանադրականությունը որոշելիս.

- բացահայտել սերվիտուտի ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությունը, դրա դերն ու նշանակությունը ՀՀ իրավական համակարգում,
- գնահատել սերվիտուտի հետ կապված քաղաքացիական հարաբերությունների իրավակարգավորման սկզբունքների, ձեւերի ու միջոցների, դրանց որոշակիության սահմանադրական իրավաչափությունը, նաև որպես սեփականության իրավունքի իրացման անխախտելիության եւ օրենքով նախատեսված հիմքերով այդ իրավունքի որոշակի սահմանափակման իրավական երաշխիք,
- գնահատել ՀՀ իրավահամակարգում սերվիտուտի միջազգային իրավակի-

րառական պրակտիկայի հնարավոր ներդրման (զարգացման) սահմանադրաիրավական համատեղելիությունը:

Նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ սույն գործով վիճարկվող նորմի կարգավորման առարկան անմիջականորեն առնչվում է սեփականության իրավունքի իրացման եւ դրա հնարավոր սահմանափակման իրավաչափության խնդրին, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում այդ նորմի սահմանադրականությունը գնահատել նաև սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության եւ այդ իրավունքի պաշտպանության վերաբերյալ արտահայտած իր իրավական դիրքորոշումների, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի տեսանկյունից:

ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով (ՍԳՈ-92, ՍԳՈ-630, ՍԳՈ-649, ՍԳՈ-650, ՍԳՈ-667, ՍԳՈ-669, ՍԳՈ-735, ՍԳՈ-815) անդրադառնալով սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման, այդ իրավունքի պաշտպանության, հնարավոր սահմանափակման խնդիրներին՝ իրավական դիրքորոշումներ է արտահայտել հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման, սեփականությունից հրաժարվելու հետ կապված հարաբերությունների իրավակարգավորման սահմանադրականության վերաբերյալ՝ կարեւորելով այդ բնագավառում սահմանադրական կարգի սկզբունքներից բխող իրավական միջոցների գործադրման անհրաժեշտությունը: Վերահաստատելով այդ դիրքորոշումները եւ ելնելով սույն գործով դիմումում բարձրացված հարցերի բովանդակությունից՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում գնահատել նաև **սեփականության իրավունքի հնարավոր սահմանափակման սահմանադրական իրավաչափության շրջանակները**, նկատի ունենալով այն հանգամանքը, որ սերվիտուտն ուրիշի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի կամավոր կամ հարկադիր սկզբունքով օգտագործման իրավունք է:

7. Սեփականության իրավունքը ՀՀ-ում, որպես անձի հիմնական իրավունք, ճանաչվում է պաշտպանվում է պետության կողմից (ՀՀ Սահմ. 8 հոդված): Այդ իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է անձի կողմից սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելուն, օգտագործելուն, տնօրինելուն եւ կտակելուն, որը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության եւ պետության իրավունքներն ու օրինական շահերը (ՀՀ Սահմ. 31 հոդվածի 1-ին մաս):

Սեփականության իրավունքը, որպես գույքային իրավունք, կարող է ունենալ նաև սեփականատեր չհանդիսացող անձը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի մի շարք նորմերով կարգավորվում են ինչպես սեփականատիրոջ, այնպես էլ սեփականատեր չհանդիսացող անձանց գույքային իրավունքները (դրանց ծագման, փոփոխման եւ դադարման հիմքերն ու կարգը, ինչպես նաև այդ իրավունքների պաշտպանության միջոցները): ՀՀ Սահմանադրության 3-րդ, 18-րդ, 19-րդ եւ մի շարք այլ հոդվածներով երաշխավորված է անձի իրավունքների, այդ թվում՝ նաև գույքային իրավունքների պաշտպանությունը: Վերջինիս իրացմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական

օրենսգրքի 1-ին, 170-րդ, 278-րդ եւ այլ հոդվածների համաձայն անձանց գույքային իրավունքները, այդ թվում՝ սեփականատեր չհանդիսացող, ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նախատեսված կարգով ենթակա են պաշտպանության:

Անձի գույքային իրավունքների (այդ թվում՝ սեփականության իրավունքի) իրացման շրջանակներում ծագող հարաբերությունների կարգավորման միջոց է հանդիսանում սերվիտուտը, որը ՀՀ իրավահամակարգում ներդրվել է նորանկախ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունմամբ պայմանավորված՝ «Անշարժ գույքի մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-29, ընդունված՝ 27.12.1995թ., ուժը կորցրել է 01.01.1999թ.), համաձայն որի սահմանվում էր, որ սերվիտուտը (օգտակալությունը) ուրիշի սեփականության սահմանափակ օգտագործման իրավունքն է, որով կողմերից մեկը՝ սերվիտուտի (օգտակալության) տերը, իրավունք է ստանում այլ անձի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմաններին համապատասխան հատուկ նպատակով օգտագործել կամ նրա իրավունքների նկատմամբ որոշակի սահմանափակումներ սահմանել (2-րդ հոդված): Հիշյալ օրենքի 16-րդ հոդվածում նախատեսված էին սերվիտուտի (օգտակալության) բովանդակությունը, սերվիտուտով ծանրաբեռնված անշարժ գույքի (հողամաս, շենքեր, շինություններ եւ այլ ամրակալված գույք) սեփականատիրոջ իրավունքները, պայմանագրային ձեւով սերվիտուտ սահմանելու, դրա շուրջ ծագած վեճերը լուծելու, սերվիտուտով ծանրաբեռնված գույքից օգտվելու դիմաց վճարելու կարգը:

Սերվիտուտի ինստիտուտը գործող իրավակարգավորման շրջանակներում համակարգված ձեւով զարգացվել է ՀՀ օրենսդրական մի շարք ակտերով, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (135, 170, 188, 210-217, 238, 615 եւ 692-րդ հոդվածներ), «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով (14.1, 18.1, 20 եւ 23-րդ հոդվածներ), «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով (2, 11, 16, 21, 23, 25, 37, 41 եւ 44-րդ հոդվածներ), ՀՀ հողային օրենսգրքով (13, 14, 19, 22, 33, 50, 53, 54, 58, 62, 65, 68, 77, 100 եւ 118-րդ հոդվածներ) եւ ենթաօրենսդրական ակտերով: Սերվիտուտի նորմատիվ իրավակարգավորման այդպիսի ընդգրկուն շրջանակը պայմանավորված է ինչպես այդ ինստիտուտի հետ կապված իրավահարաբերությունների բովանդակությամբ, այնպես էլ սերվիտուտով ծանրաբեռնման ենթակա գույքի ընդարձակ կազմով: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 210-217-րդ հոդվածների համադրված վերլուծությունը վկայում է, որ սերվիտուտը ուրիշի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքից անհրաժեշտաբար սահմանափակ **օգտվելու իրավունք է** (ինչպես **հատուցման (վճարի)**, այնպես էլ **առանց հատուցման պայմանի**), որը կարող է իրացվել ինչպես հողամասերի, **այնպես էլ շենքերի, շինությունների եւ այլ անշարժ գույքի նկատմամբ** (օրենսգրքի 217-րդ հոդված): Այդպիսով, չնայած սույն գործով վիճարկվող եւ դրա հետ համակարգային առումով փոխկապակցված վերոհիշյալ նորմերով կարգավորվում է հողային հարաբերություններից բխող սերվիտուտը, սակայն օրենսդիրը հնարավոր է համարել սերվիտուտով ծանրաբեռնել ոչ միայն հողամասերը, **այլեւ ցանկացած անշարժ գույք**, որից սահմանափակ օգտվելն անհրաժեշտ է: Այս առումով դիմողի հարցադրումները՝ սերվիտուտը միայն հողամասերին վերաբերելու առումով, անհիմն են:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոհիշյալ նորմերի համաձայն սերվիտուտ

կարող է սահմանվել հետեյալ սկզբունքներով. **կամավոր**՝ կողմերի միջեւ նուտարական կարգով վավերացված գրավոր համաձայնությամբ, եւ **հարկադրաբար**՝ դատական կարգով: Միաժամանակ, հասարակական կարիքների համար, անկախ սեփականության իրավունքի սուբյեկտից, սահմանվում է անվճար, հարկադիր եւ **մշտական սերվիտուտ**: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ եւ 213-րդ հոդվածների համաձայն սերվիտուտը, որպես գույքային իրավունք, ենթակա է **պետական գրանցման**, որի կարգն ու պայմանները մանրամասնված են «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի վերոհիշյալ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 50-54-րդ հոդվածներով: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 215-րդ եւ 217-րդ հոդվածների համաձայն գույքային իրավունքն այլ անձի փոխանցելիս պահպանվում է նաեւ սերվիտուտը: Օրենսգրքի 210-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերի համաձայն սերվիտուտը **չի կարող լինել առուվաճառքի, գրավի եւ վարձակալության ինքնուրույն առարկա**, իսկ սերվիտուտով ծանրաբեռները **սեփականատիրոջը չի գրկում տվյալ գույքի տիրապետման, օգտագործման եւ տնօրինման իրավունքներից**: Սերվիտուտը համապատասխան իրավակարգավորման է ենթարկվել գրավի, գույքի վարձակալության եւ անհատույց օգտագործման հետ կապված հարաբերություններում (օրենսգրքի 238, 615 եւ 692-րդ հոդվածներ): Օրենսգրքի 216-րդ հոդվածի համաձայն նախատեսված են սերվիտուտի դադարման (այդ թվում՝ դատական կարգով) հետեյալ հիմքերը, երբ.

- վերացել են դրա սահմանման հիմքերը,
- սերվիտուտով ծանրաբեռնված լինելու հետեւանքով անշարժ գույքը չի կարող օգտագործվել իր նշանակությանը համապատասխան:

Այսպիսով, վերլուծելով ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի եւ վերջինիս իրացումը սերվիտուտի միջոցով կարգավորող քաղաքացիաիրավական նորմերի բովանդակությունը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սերվիտուտը որպես գույքային իրավունք.

- պայմանավորված է ուրիշի սեփականությունը հանդիսացող գույքի օգտագործման թելադրված (անխուսափելի) անհրաժեշտությամբ, առանց որի սերվիտուտ պահանջող անձն անկարող է իրացնել (կամ լիարժեք իրացնել) սեփականության իր իրավունքը,

- նպատակաուղղված չէ անձին, որպես սերվիտուտով ծանրաբեռնված գույքի սեփականատիրոջ, իր իրավունքներից զրկելուն,

- ուրիշի սեփականությունը հանդիսացող գույքի սահմանափակ օգտագործման իրավունք է, որի իրացմամբ սերվիտուտով ծանրաբեռնված գույքի սեփականատերը չի զրկվում այդ գույքը տիրապետելու, օգտագործելու եւ տնօրինելու իր սահմանադրական իրավունքներից,

- կոչված է ուրիշի սեփականությունը հանդիսացող գույքի ոչ լիարժեք, սահմանափակ եւ թելադրված անհրաժեշտության նպատակով օգտագործմանը,

- չի կարող ինքնուրույն քաղաքացիաիրավական գործարքների առարկա լինել,

- որպես կանոն, իրականացվում է սերվիտուտ սահմանելու անհրաժեշտության հանգամանքների գոյության ժամկետով, եւ կարող է պահպանվել (փոխանցվել) իրավահաջորդության սկզբունքով,

- հասարակական կարիքների համար անվճար, հարկադիր եւ մշտական սերվիտուտ կարող է սահմանվել միայն օրենքով,



**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

- ճանաչվում, երաշխավորվում եւ պաշտպանվում է պետության կողմից՝ ենթարկվելով պետական գրանցման՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով սահմանված կարգով,

- օրենքով նախատեսված հիմքերով ենթակա է դադարման, այդ թվում՝ դատական կարգով, քաղաքացիական այլ իրավունքներին համարժեք ենթակա է հավասար իրավական պաշտպանության:

8. Անդրադառնալով սերվիտուտի իրավակարգավորման անորոշության վերաբերյալ դիմումում բարձրացված հարցադրումներին, վերահաստատելով իր մի շարք որոշումներում (ՄԳՈ-630, ՄԳՈ-652, ՄԳՈ-705, ՄԳՈ-720, ՄԳՈ-723, ՄԳՈ-731, ՄԳՈ-753, ՄԳՈ-833) իրավական որոշակիության սկզբունքի եւ դրա բովանդակության վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող իրավակարգավորման մեջ որոշ հասկացությունների, մասնավորապես՝ «սահմանափակ օգտագործում» (ՀՀ քաղ. օր.-ի 210-րդ հոդվածի 1-ին մաս), «իր նշանակությանը համապատասխան» (ՀՀ քաղ. օր.-ի 216-րդ հոդվածի 2-րդ մաս) անորոշության վերաբերյալ պնդումները հիմնավոր չեն: Ուրիշի գույքից **սահմանափակ օգտվելու իրավունքը**, որը եւ հանդիսանում է սերվիտուտի բուն իմաստը, պարզորոշ ենթադրում է սերվիտուտ պահանջող անձի իրավունքը ոչ թե լիարժեք օգտագործելու իր սեփականությունը չհանդիսացող գույքը, այլ այնքանով, **որքանով դա անհրաժեշտ է իր սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի տիրապետման, օգտագործման եւ տնօրինման իրավունքը լիարժեք իրականացնելու համար**: Վերջինս ուղղակիորեն բխում է ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունից, այսինքն՝ անձի սեփականության իրավունքը, ինչպես եւ ցանկացած այլ իրավունք, պետք է իրականացվի այլ անձանց նույնպիսի իրավունքների, հասարակության եւ պետության օրինական շահերի հետ ներդաշնակման սկզբունքով: Հետեւաբար, օրենսդրի խնդիրն է իրավակարգավորման համապատասխան միջոցների, ձեւերի եւ մեթոդների գործադրմամբ ապահովել իրավահարաբերությունների սուբյեկտների միջեւ այդպիսի ներդաշնակ վարքագիծ, նախատեսելով նաեւ հնարավոր վեճերի լուծման հստակ ընթացակարգեր (այդ թվում՝ դատական): Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող իրավակարգավորումը նախատեսում է այդպիսի հնարավորություն:

Գույքն իր **նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելը**, որպես գույքային իրավունքի իրականացման միջոց, իրավակարգավորման է ենթարկված ոչ թե սերվիտուտի հետ կապված իրավահարաբերությունների, այլ քաղաքացիական իրավունքների կարգավորման շրջանակներում, որպես քաղաքացիական հարաբերությունների սուբյեկտների իրավաչափ վարքագիծ: Դա է վկայում մասնավորապես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 134, 202, 209, 884 եւ 889-րդ հոդվածների վերլուծությունը՝ հողային եւ փոխառության հետ կապված իրավակարգավորման առնչությամբ, որից հետեւում է, որ քաղաքացիաիրավական հարաբերության օբյեկտ հանդիսացող ցանկացած գույք ենթակա է օգտագործման իր նպատակային նշանակությանը համապատասխան, ելնելով տվյալ գույքի սպառողական եւ այլ հատկանիշներից, որոնք յուրաքանչյուր դեպքում ենթակա են գնահատման ինչպես օրենքով սահմանված կարգով, այնպես էլ իրավակիրա-

ռական պրակտիկայում: Տվյալ դեպքում հողամասերի նպատակային նշանակությամբ, դրանց կատեգորիաների որոշման հետ կապված հարաբերությունները կարգավորված են ՀՀ հողային օրենսգրքով (օրենսգրքի 2, 5-8, 20, 22-23, 27, 29, 31, 34-36, 39, 41-43, 45, 49-50, 57, 62, 64-66-րդ եւ բազմաթիվ այլ հոդվածներ):

Վերոշարադրյալից հետեւում է, որ սերվիտուտին առնչվող իրավահարաբերություններն անհրաժեշտ է դիտարկել իրավակարգավորման համակարգային ամբողջականության մեջ, ինչը չի արվել դիմողի կողմից:

9. Անդրադառնալով սեփականության իրավունքը սերվիտուտով սահմանափակելու իրավաչափության միջազգային իրավական գնահատման խնդրին՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում դիտարկել այն եվրոպական պետություններում այդ իրավունքի նորմատիվ կարգավորման պրակտիկայի, ինչպես նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի շրջանակներում:

Եվրոպական պետությունների իրավակիրառական պրակտիկան վկայում է, որ սերվիտուտի հասկացության վերաբերյալ առկա են իրավակարգավորման երկու հիմնական մոտեցումներ. մի դեպքում՝ իրավական ակտերով մանրամասն ամրագրվում են սերվիտուտի՝ որպես ուրիշի սեփականությունը հանդիսացող հողամասից կամ այլ անշարժ գույքից սահմանափակ օգտվելու իրավունքի բովանդակային առանձնահատկությունները (ինչպես, օրինակ, Լիտվայում, Գերմանիայի Դաշնությունում), մյուս դեպքում խնդիրը հանգում է սերվիտուտի իրավունքի ամրագրմանը եւ այն նպատակների սահմանմանը, որոնց դեպքում կարող է տրամադրվել սերվիտուտ (Ռուսաստանի Դաշնություն, Ուկրաինա, Բելառուս եւ այլն):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներով սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափությունը գնահատելիս հիմնվել է հետեւյալ հիմնական սկզբունքների ու չափորոշիչների վրա.

- սեփականության իրավունքի սահմանափակումը համատեղելի է Կոնվենցիային կից առաջին արձանագրության 1-ին հոդվածի 1-ին կետի առաջին նախադասությունում ամրագրված ընդհանուր նորմի հետ, եթե ապահովված է «արդարացի հավասարակշռություն» հանրության ընդհանուր շահի եւ անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջեւ,

- սեփականության իրավունքի սահմանափակման միջոցները պետք է բավարարեն «օրինականության պահանջը» եւ չլինեն «կամայական»,

- սեփականության իրավունքի սահմանափակմանն ուղղված վիճարկվող միջոցները պետք է նախատեսված լինեն օրենքով կամ միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով,

- սեփականության իրավունքի սահմանափակմանն ուղղված միջոցներ նախատեսող օրենքը պետք է բավարարի մի շարք պահանջներ, որոնք ներկայացվում են ինչպես օրենքի որակին ու բովանդակությանը, այնպես էլ այն ընդունած մարմիններին ու նրանց լիազորությունների իրականացման օրինականությանը,

- սեփականության իրավունքի սահմանափակման միջոցները պետք է հետապնդեն հասարակական շահից բխող իրավաչափ նպատակ,

- սեփականության իրավունքի սահմանափակման դեպքում պետությունը պարտավոր է պահպանել համամասնության ողջամիտ հարաբերակցությունը

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

սեփականատիրոջ իրավունքների պաշտպանության եւ ընդհանուր շահի պաշտպանության պահանջների միջեւ, այսինքն՝ սահմանափակման միջոցը պետք է լինի «ողջամիտ եւ պատշաճ՝ իր նպատակին հասնելու համար, եւ համարժեք՝ այդ նպատակին»:

Համադրելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող նորմը եւ դրա հետ համակարգային առումով փոխկապակցված՝ օրենսգրքի մյուս նորմերը Եվրոպական դատարանի նախադեպային նշանակության իրավական մոտեցումների հետ՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վեճի առարկա իրավակարգավորումը նախատեսելիս օրենսդիրն առաջնորդվել է անհատի եւ հասարակության շահերի արդարացի հավասարակշռման սկզբունքով, մասնավորապես, սերվիտուտը դիտարկելով որպես անձանց սեփականատիրական իրավունքների եւ դրանցից բխող օրինական շահերի հնարավոր բախման կանխարգելման միջոց, միաժամանակ նախատեսելով սերվիտուտ սահմանելու հիմքերը եւ կարգը (այդ թվում՝ պետական գրանցման), դրա դատական պաշտպանության միջոցները, բացառել է ուրիշի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքը վերոհիշյալ հիմքով կամայական օգտագործելու իրավական հնարավորությունը: Այս առումով վիճարկվող նորմում նախատեսված իրավակարգավորումը, որպես սեփականության իրավունքի հնարավոր սահմանափակման միջոց, հետապնդում է սահմանադրաիրավական, հետեւաբար՝ նաեւ արդարացի նպատակ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սերվիտուտի նման իրավակարգավորումն ապահովում է ՀՀ Սահմանադրության 8 եւ 31-րդ հոդվածներով նախատեսված՝ անձի սեփականության իրավունքն ազատ եւ հայեցողաբար իրացնելու սահմանադրաիրավական սկզբունքի իրականացումը՝ այն սահմանափակումներով, որոնք իրավաչափ են ու պայմանավորված են այլ անձանց, հանրության եւ պետության իրավունքների ու օրինական շահերի հաշվառման անհրաժեշտությամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:
2. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 216-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականությունը որոշելու մասով գործի վարույթը կարճել:
3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**29 հունիսի 2010 թվականի  
ՄԳՈ- 901**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՑԻ ԿԱՐԻՆԵ ՊԱՌԱՎՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 265-ՐԳ  
ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԳ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. երեսան**

**7 հուլիսի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող Կ. Պառավյանի եւ դիմողի ներկայացուցիչ Գ. Մուլենցյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Կարինե Պառավյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Կ. Պառավյանի՝ 25.03.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 9-ին, Հայաստանի Հանրա-

ՍԱՐՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ • ՏԵՂԵԿԱԳԻՐ • 1(58)/2011

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

պետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2004 թվականի դեկտեմբերի 14-ին եւ ուժի մեջ է մտել 2005 թվականի հունիսի 21-ից:

Աշխատանքային օրենսգրքի՝ «Աշխատանքային պայմանագրի վերաբերյալ վեճերը» վերտառությամբ վիճարկվող 265-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«Տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական կամ այլ պատճառներով կամ գործատուի եւ աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության դեպքում դատարանը կարող է աշխատողին չվերականգնել իր նախկին աշխատանքում՝ պարտավորեցնելով գործատուին հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար աշխատողին վճարելու հատուցում՝ միջին աշխատավարձի չափով, մինչեւ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը: Այս դեպքում դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից աշխատանքային պայմանագիրը համարվում է լուծված»:

2. Զննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է նրան, որ դիմողը դիմելով Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ վիճարկել է իր հետ կնքված աշխատանքային պայմանագրի լուծման օրինականությունը եւ պահանջել է իրեն վերականգնել նախկին աշխատանքում ու պատասխանող կազմակերպությունից բռնագանձել հարկադիր պարապուրդի գումարը: Դատարանը՝ գտնելով, որ դիմողի աշխատանքային պայմանագրի լուծումը եղել է օրինական, իր՝ 09.07.2009թ. վճռով հայցն ամբողջությամբ մերժել է: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր՝ 02.10.2009թ. որոշմամբ եզրահանգելով, որ գործատուի կողմից դիմողի հետ աշխատանքային հարաբերությունները դադարեցվել են **առանց օրինական հիմքերի, դիմողի վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակի**, այն է՝ դիմողին նախկին աշխատանքում վերականգնելու մասին պահանջը մերժվել է՝ հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող նորմը: Վերաքննիչ քաղաքացիական դատարանը՝ նկատի ունենալով, որ պատասխանող կազմակերպության բոլոր 16 հաստիքները փաստացի թափուր չեն, գտել է, որ դիմողին աշխատանքում վերականգնելու իրական հնարավորությունը բացակայում է, եւ ուստի առկա է գործատուի ու աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման օբյեկտիվ անհնարինություն:

Վճռաբեկ դատարանը դիմողի վճռաբեկ բողոքը վերադարձրել է իր՝ 02.12.2009թ. որոշմամբ:

3. Ըստ դիմողի՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող նորմը հակասում է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածով, 18-րդ հոդվածի 1-ին մասով, 19-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նորմերին:

Դիմողի պնդմամբ՝ վիճարկվող նորմը չի բավարարում օրենքի որոշակիության եւ կանխատեսելիության պահանջները: Նորմի իրավական ամրագրման, ձեւակերպման համար կիրառված հասկացությունները, մասնավորապես, «գործատուի եւ աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինություն» եւ «տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական կամ այլ պատճառներով աշխատանքային հարաբերությունների

վերականգնման անհնարինություն» ձեռակերպումները բավականին անորոշ են եւ իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում են տարաբնույթ մեկնաբանությունների:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի 1-ի մասի, ինչպես նաեւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համադրված վերլուծությամբ դիմողը նշում է, որ մարդու եւ նրա հիմնական իրավունքների եւ ազատությունների, որպես գերագույն արժեքների, պաշտպանությանն ուղղված իրավական պաշտպանության ցանկացած միջոց, այդ թվում՝ դատական պաշտպանության միջոցը, պետք է լինի արդյունավետ, իրավական պաշտպանության միջոցն (այդ թվում՝ դատական պաշտպանության միջոցը) իրավունքի ցանկացած սուբյեկտի համար պետք է լինի օգտակար եւ դրանով իսկ նպաստի իրավունքի սուբյեկտի խախտված իրավունքի, ազատության պաշտպանության ու դրանց վերականգնման նպատակի իրացմանը: Ըստ այդմ, դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթի հակասահմանադրականությունը դրսևորվում է նաեւ նրանում, որ հնարավորություն չտալով վերականգնել անձի խախտված իրավունքը՝ խախտված իրավունքի դատական պաշտպանության միջոցը դարձնում է անարդյունավետ:

4. Ըստ պատասխանողի՝ ինչպես առանձին միջազգային իրավական փաստաթղթերի, մասնավորապես «Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային հարաբերությունների դադարեցման մասին» թիվ 158 կոնվենցիայի 10-րդ հոդվածի, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ բոլոր այն դեպքերում, երբ օբյեկտիվորեն հնարավոր չէ խախտված իրավունքի պաշտպանության արդյունքում վերականգնել մինչեւ իրավունքի խախտումը գոյություն ունեցած վիճակը, իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոց է հանդիսանում համարժեք փոխհատուցումը:

Պատասխանողի պնդմամբ՝ վիճարկվող նորմը, նշված մոտեցումներին համապատասխան, նախատեսում է անօրինականորեն ազատված աշխատողին աշխատանքում վերականգնելու անհնարինության դեպքում հատուցում վճարելու պահանջ: Միաժամանակ պատասխանողը հայտնում է, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2010թ. հունիսի 24-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով վիճարկվող նորմը փոփոխվել է, ինչի արդյունքում առավել գործուն մեխանիզմներ են ստեղծվել աշխատանքային օրենսդրության խախտման արդյունքում աշխատողին պատճառված վնասը հատուցելու համար:

Վիճարկվող նորմի անորոշության վերաբերյալ դիմողի փաստարկների առնչությամբ պատասխանողը, վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի 2010թ. հունիսի 1-ի ՍԴՈ-891 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ նորմը զերծ է անորոշությունից եւ անհստակությունից:

5. Վիճարկվող դրույթի սահմանադրականությունը սահմանադրական դատարանը նախեստաջ անհրաժեշտ է համարում զնահատել, մի կողմից, ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածով երաշխավորված՝ անձի աշխատանքի ընտրու-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

թյան ազատության, մյուս կողմից՝ Սահմանադրության 8-րդ հոդվածով երաշխավորված՝ տնտեսական գործունեության ազատության հարաբերակցության համատեքստում, հաշվի առնելով նաև սահմանադրական դատարանի այն իրավական դիրքորոշումները, որոնք ամրագրված են իր՝ 2009թ. փետրվարի 24-ի ՍԳՈ-792 որոշման եւ 2010թ. հունիսի 1-ի ՍԳՈ-891 որոշման մեջ, որով ՀՀ Սահմանադրության պահանջներին համապատասխանող է ճանաչվել վիճարկվող նորմի հետ համակարգային փոխկապակցության մեջ գտնվող՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը:

Աշխատանքի ընտրության ազատությունը, որը ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածում ամրագրված է որպես սոցիալական ազատություն, ներառում է, ի թիվս այլոց, աշխատանք փնտրելու իրավունքը, որի մեկնաբանությունից բխում է նաև արդեն **ձեռք բերած աշխատանքից կամայականորեն չզրկվելու իրավունքը:**

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածով որպես սահմանադրական կարգի հիմունք հռչակված՝ տնտեսական գործունեության ազատությունը, ի թիվս այլոց, ենթադրում է գործատուին այնպիսի իրավագործությունների տրամադրում, որոնք նրան թույլ կտան տնտեսական գործունեության արդյունավետության եւ իր գույքի ռացիոնալ օգտագործման նպատակներից ելնելով ինքնուրույնաբար եւ իր ռիսկով ընդունել կազմակերպչական եւ կադրային քաղաքականությանն ուղղված որոշումներ:

Սահմանադրական դատարանն իր՝ 2009թ. փետրվարի 24-ի ՍԳՈ-792 որոշման մեջ անդրադառնալով Սահմանադրության պաշտպանության ներքո գտնվող վերոհիշյալ սահմանադրական ազատությունների փոխհարաբերակցությանը՝ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ աշխատանքի ընտրության ազատությունը պայմանավորված է, նախ՝ աշխատանքային հարաբերությունների հաստատման ու դադարման երկկողմ ազատ կամահայտնության ապահովման օրենսդրական հստակ երաշխիքների առկայությամբ, որոնք նաև անհրաժեշտ են ՀՀ Սահմանադրության ինչպես 32-րդ հոդվածում (1-ին մաս) նախատեսված անձի իրավունքի իրացման, այնպես էլ 8-րդ հոդվածում (2-րդ մաս) ամրագրված սկզբունքին համապատասխան տնտեսավարման շուկայական հարաբերությունների ազատ ու բազմակողմ զարգացման համար:

Վկայակոչելով վերոհիշյալ իրավական դիրքորոշումը եւ ընդգծելով աշխատանքային հարաբերություններում գործատուի եւ աշխատողի իրավունքների ու օրինական շահերի միջեւ արդարացի հավասարակշռության ապահովման անհրաժեշտությունը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ տնտեսական, կազմակերպչական եւ տեխնոլոգիական պատճառների առկայության դեպքում անձին աշխատանքում չվերականգնելն իրավաչափ է նաև անձի իրավունքների պաշտպանության տեսանկյունից, քանի որ անձին աշխատանքում վերականգնելու օբյեկտիվ անհնարինության պայմաններում լուծվում է համարժեք փոխհատուցման խնդիրը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման իրավակարգավորումն ընդունված է նաև ինչպես Աշխատանքի միջազգային կազմակերպության միջազգային իրավական փաստաթղթերում, այնպես էլ մի շարք պետությունների օրենսդրություններում: Մասնավորապես, Աշխատանքի միջազգային կազմակերպության շրջանակներում ընդունված՝ Գործատուի նախաձեռնու-

թյամբ աշխատանքային հարաբերությունների դադարեցման մասին թիվ 158 կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝ «Եթե սույն Կոնվենցիայի 8-րդ հոդվածում նշված մարմինները փաստում են աշխատանքից ազատվելու անհիմն լինելը, եւ եթե նրանք ազգային օրենսդրությանը եւ պրակտիկային համապատասխան իրավասու չեն կամ գործնականում անհնար են համարում վերացնել աշխատանքից ազատելու մասին հրամանը եւ(կամ) աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու կարգադրություն կամ առաջարկ անելը, նրանք օժտվում են **համապատասխան փոխհատուցում** կամ նպատակահարմար համարվող այլ նպաստ վճարելու մասին կարգադրություն արձակելու իրավասությամբ»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վիճարկվող իրավակարգավորումը բխում է այն իրողությունից, որ օբյեկտիվ իրականության մեջ կարող են առաջանալ իրավիճակներ, երբ աշխատանքում վերականգնումը գործնականում կլինի անհնարին, ինչպես նաեւ բխում է տնտեսավարող սուբյեկտների տնտեսական գործունեության ազատությունը երաշխավորելու իրավաչափ նպատակից, եւ նկատի ունենալով խնդրո առարկայի վերաբերյալ միջազգային իրավակարգավորումն ու միջազգային փորձը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ **տնտեսական, տեխնոլոգիական եւ կազմակերպչական պատճառներով աշխատանքում վերականգնելու անհնարինության դեպքերում աշխատողին աշխատանքում չվերականգնելու ինստիտուտն ինքնին իրավաչափ է:**

Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմի խնդիրն է արդարացի հավասարակշռություն ապահովել գործատուի շահերի եւ անօրինական կարգով աշխատանքից ազատված աշխատողի իրավունքների եւ օրինական շահերի միջեւ: Նշված հավասարակշռությունը կարող է ապահովվել միայն այն դեպքում, երբ աշխատանքում վերականգնելու **օբյեկտիվ անհնարինության դեպքերում** երաշխավորվի աշխատողի իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության պատշաճ եւ արդյունավետ մեխանիզմ: Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ որպես առավել արդյունավետ եւ օպտիմալ պաշտպանության մեխանիզմ ընտրվել է աշխատողին չվերականգնելու դիմաց փոխհատուցում վճարելու ինստիտուտը:

6. Աշխատանքի իրավունքի իրացման հիմնական նպատակը վարձատրություն ստանալն է: Այդ նպատակն է շեշտադրված Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին 1966թ. միջազգային դաշնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետում, ըստ որի՝ աշխատանքի իրավունքը ներառում է յուրաքանչյուրի՝ իր ապրուստն այնպիսի աշխատանքով վաստակելու հնարավորության իրավունքը, որը նա ազատորեն ընտրում է կամ որին նա ազատորեն համաձայնում է: Ասվածը նշանակում է, որ աշխատանքում վերականգնվելու հարցում անձի ունեցած անհատական շահն ունի տնտեսական, ֆինանսական արժեք, ինչը բավարար հիմք է, որ տվյալ դեպքում աշխատանքի իրավունքը պաշտպանվի Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով: Ավելին, համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի (տե՛ս, մասնավորապես, Տրզոն ընդդեմ Խորվա-



քիայի գործով, Trgo v. Croatia, 2009թ. հունիսի 11-ի վճիռը, կետ 44)՝ նշված կոնվենցիոն նորմի իմաստով գույք է համարվում ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլ նաև նյութական միջոցը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիքը: Տվյալ դեպքում այն անձը, ով աշխատանքից ազատվել է անօրինական կարգով, ունի լեգիտիմ ակնկալիք շարունակելու ստանալ վարձատրություն իր աշխատանքի դիմաց: Հետեւաբար, աշխատողին գործատուի կողմից անօրինականորեն աշխատանքից ազատելը հանդիսանում է նրա **գույքային իրավունքների խախտում**:

Խախտված իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի անհրաժեշտ բաղադրատարրն է հանդիսանում անձի խախտված իրավունքի վերականգնումը: Վերջինս ենթադրում է այն բացասական հետեւանքների վերացում, որոնք անձի համար առաջացել են իրավունքի խախտման արդյունքում: Որպես կանոն, այդ բացասական հետեւանքների վերացումը տեղի է ունենում մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնմամբ: Սակայն, առանձին դեպքերում, մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը կարող է օբյեկտիվորեն անհնարին լինել: Այս դեպքում որպես խախտման բացասական հետեւանքները վերացնելու իրավական միջոց է ծառայում, ինչպես նշվեց, անձի կրած վնասի դիմաց տրվող փոխհատուցումը: Այս մոտեցումն է արտահայտված նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում (տե՛ս, մասնավորապես, Վասիլեսկուն ընդդեմ Ռումինիայի գործով, Vasilescu v. Romania, 1998թ. մայիսի 22-ի վճիռը, կետ 61): Տվյալ դեպքում անօրինականորեն ազատված անձին աշխատանքում չվերականգնելու, այն է՝ մինչև իրավախախտման փաստը գոյություն ունեցած վիճակը վերականգնելու անհնարինության դեպքում անձի խախտված իրավունքի արդյունավետ իրավական պաշտպանությունը կարող է տեղի ունենալ նրան փոխհատուցում վճարելու միջոցով: Այս գաղափարն է ամրագրված նաև վերոհիշյալ ԱՄԿ թիվ 158 կոնվենցիայի 10-րդ հոդվածում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող նորմի վերլուծությունը վկայում է, որ այն չի նախատեսում անօրինականորեն ազատված անձի իրավունքի պաշտպանության արդյունավետությունը փոխհատուցման վճարմամբ ապահովելու հնարավորություն: Վիճարկվող դրույթը գործատուին միայն պարտավորեցնում է հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար աշխատողին վճարել հատուցում՝ միջին աշխատավարձի չափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, ինչը, սակայն, չի կարող որակվել որպես իրավունքի վերականգնմանն ուղղված փոխհատուցում, քանի որ հիշյալ գումարն անձն ստանում է այն պատճառով, որ նրա աշխատանքային պայմանագիրը լուծված է համարվում դատարանի ակտն ուժի մեջ մտնելու օրը, եւ, հետեւաբար, այդ գումարն ըստ էության հանդիսանում է աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետում վճարվող աշխատավարձ: Ավելին, հիշյալ գումարը չի կարող դիտարկվել որպես փոխհատուցում նաև այն պատճառով, որ անօրինականորեն աշխատանքից ազատված անձն այդ գումարն ստանում է նաև աշխատանքում վերականգնվելու դեպքում:

Ելնելով նրանից, որ վիճարկվող նորմը, աշխատանքում վերականգնելու անհնարինության պայմաններում, չի նախատեսում աշխատանքի իրավունքի

խախտման բացասական իրավական հետեւանքները վերացնելու որեւէ միջոց, այդ թվում խախտված իրավունքի դիմաց փոխհատուցման տրամադրում, սահմանադրական դատարանը գտնում է, որ անձի համար չի ապահովվում իրավական պաշտպանության արդյունավետ միջոց:

Միաժամանակ, սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2010թ. հունիսի 24-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով փոփոխություններ են կատարվել նաեւ վիճարկվող 265-րդ հոդվածում: Մասնավորապես, հոդվածի 2-րդ մասում հանվել են «կամ այլ» բառերը եւ «աշխատավարձի» բառից հետո լրացվել է «ոչ պակաս քան կրկնապատիկի, բայց ոչ ավելի քան տասներկուապատիկի» բառերով: Այս փոփոխության միջոցով ըստ էության փորձ է արվում հաղթահարել հնարավոր անորոշությունը եւ լուծել խախտված իրավունքի՝ փոխհատուցման միջոցով արդյունավետ իրավական պաշտպանության հարցը:

7. Վիճարկվող դրույթի՝ իրավական օրենքին ներկայացվող պահանջներին, այն է՝ կանխատեսելիության, որոշակիության եւ հստակության պահանջներին համապատասխանությունը սահմանադրական դատարանը հարկ է համարում գնահատել նաև իրավակիրառական պրակտիկայի համատեքստում՝ հաշվի առնելով, մասնավորապես, այն բովանդակությունը, որն իրավակիրառական պրակտիկայում տրվել է «կամ այլ պատճառներով կամ գործատուի եւ աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության դեպքում» ձեւակերպմանը:

Վիճարկվող նորմի առնչությամբ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ձեւավորված իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ որպես գործատուի եւ աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինություն է դիտարկվում.

- աշխատողի զբաղեցրած հաստիքի կրճատումը. ընդ որում, որպես աշխատանքում վերականգնելու անհնարինության պատճառ հաստիքի կրճատման փաստը հիմք է ընդունվում ոչ միայն այն դեպքում, երբ անձն ազատվել է հաստիքի կրճատման արդյունքում, այլ նաեւ այն դեպքում, երբ հաստիքի կրճատումը հաջորդել է տվյալ աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունների անօրինական դադարեցմանը,

- աշխատանքից ազատված աշխատողի փոխարեն նոր աշխատողի կողմից նրա հաստիքի զբաղեցումը. ընդ որում, այս առնչությամբ իրավակիրառական պրակտիկան հակասական է, քանզի մի դեպքում իրավակիրառողն այդ հանգամանքը գնահատում է որպես աշխատանքի վերականգնման անհնարինությունը պայմանավորող պատճառ, մեկ այլ դեպքում այդ հանգամանքը չի դիտարկում որպես աշխատանքի վերականգնմանը խոչընդոտող հանգամանք,

- գործատուի եւ աշխատողի միջեւ լարված հարաբերությունների առկայությունը:

Իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ որպես գործատուի եւ աշխատողի հետագա աշխատանքային հարաբերություններ

րի վերականգնման անհնարինության պատճառ դիտարկվում են այնպիսի հանգամանքներ, որոնք որեւէ առնչակցություն չունեն տնտեսական, կազմակերպչական եւ տեխնոլոգիական պատճառների հետ: Մինչդեռ «կամ այլ պատճառներ» հասկացությունը ենթադրում է այնպիսի հանգամանքներ, որոնք իրենց բնույթով պետք է սերտորեն առնչվեն տնտեսական, կազմակերպչական կամ տեխնոլոգիական պատճառներին բնորոշ օբյեկտիվ հիմքերին: Դա է նաեւ թիվ 158 կոնվենցիայի պահանջը, որի 13-րդ հոդվածը թույլատրում է անօրինականորեն աշխատանքից ազատված անձանց չվերականգնել աշխատանքում, եթե աշխատանքում վերականգնելն անհնարին է տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական կամ այլ նույնաբնույթ պատճառներով:

Վիճարկվող դրույթի կիրառման պրակտիկայի առնչությամբ սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել նաեւ, որ այդ դրույթի իրավաչափ կիրառումը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավակիրառողից պահանջում է քննության առարկա դարձնել եւ ուսումնասիրել ազատման հիմքում ընկած տնտեսական, տեխնոլոգիական եւ կազմակերպչական պատճառները: Այս պահանջն է ներկայացնում իրավասու մարմիններին նաեւ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 25-րդ հոդվածին համապատասխան հիմնադրված Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն, ինչպես նաեւ ԱՄԿ թիվ 158 կոնվենցիայի 9-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված նորմը: Հարկ է ընդգծել նաեւ, որ որպես վիճարկվող դրույթի իրավաչափ կիրառման նախապայման նշված Կոնվենցիայի 9-րդ հոդվածն ամրագրում է նաեւ ազատման տնտեսական, տեխնոլոգիական եւ կազմակերպչական պատճառների առկայության ապացուցման բեռը գործատուին վերապահելը:

Հաշվի առնելով իրավակիրառական պրակտիկայի վերոհիշյալ այն առանձնահատկությունը, որ որպես աշխատանքի վերականգնման անհնարինության հիմնավորում են դիտարկվում անձին անօրինականորեն ազատելուց **հետո առաջացած** տնտեսական, տեխնոլոգիական կամ կազմակերպչական պատճառները, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ վիճարկվող դրույթը կիրառելիս յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավակիրառողը պետք է գնահատի նաեւ, թե արդյո՞ք տվյալ պատճառը գործատուի կողմից արհեստականորեն չի ստեղծվում՝ կանխելու համար անօրինական ազատված աշխատողի՝ դատարանի վճռի հիման վրա հնարավոր վերականգնումը:

Ելնելով իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրության վերոհիշյալ արդյունքներից, ինչպես նաեւ հաշվի առնելով Եվրոպական դատարանի այն իրավական դիրքորոշումը, որ օրենքի կանխատեսելիության, որոշակիության եւ հստակության սկզբունքի երաշխավորումը, ի թիվս այլոց, կոչված է նաեւ կանխելու, բացառելու «կամայականության վտանգը» (տե՛ս, մասնավորապես, Հիլդա Հաֆստեյնսդոտիրն ընդդեմ Իսլանդիայի գործով, Hilda Hafsteinsdottir v. Iceland, վճիռը, կետ 56)՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ աշխատանքում վերականգնելու անհնարինության պատճառներն օրենքով սպառնիչ կերպով չսահմանելը եւ վիճարկվող դրույթում՝ «այլ պատճառներ» ձեւակերպման առկայությունն ու դրան տրված լայն մեկնաբանությունը գործնականում ստեղծում են միեւնույն իրավիճակներում իրավունքի սուբյեկտների նկատմամբ տարբեր վերաբերմունքի դրսևորման եւ կամայական մտտեցման վտանգ:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի երկրորդ մասը՝ առաջին նախադասության «կամ այլ» բառակապակցության մասով, ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի եւ 32-րդ հոդվածի պահանջներին հակասող եւ անվավեր:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**7 հուլիսի 2010 թվականի  
ՍԳՈ-902**

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության  
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրության հասցեն՝  
Երևան Բաղրամյան 10  
Հեռախոս՝ 58-81-71  
E-mail: armlaw@concourt.am.  
<http://www.concourt.am>.

Ստորագրված է տպագրության՝ 10.01.2011 թ.  
Դասիչ՝ 77754  
Գրաչափը՝ 70x100 1/16  
Տպաքանակը՝ 500

*ՀՀ ՄԳ փեղեկագիրը ՀՀ  
քարձրագույն որակավորման  
հանձնաժողովի որոշմամբ ընդգրկված է  
սարկազմախոսությունների արդյունքների  
տպագրման համար ընդունելի  
պարբերականների ցանկում*

---

Вестник Конституционного Суда Республики Армения N 1(58) 2011  
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 1(58) 2011  
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie. N 1(58) 2011